1518
1826
82

# ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ

Տպեալ ըստ ընտիր օրինակաց ։

1820. ամին ։

'Ի ՎԷՆԷՏԻԿ.

'Ի վանս սրբոյն Ղազարու ։



Երգուաւ որ դաւթի ճշմարտունը.

# ԳԻՐՔ
# ՍԱՂՄՈՍԱՑ
# ԴԱՒԹԻ։

## ՍԱՂՄՈՍ. Ա։

1 ԵՐԱՆԵԱԼ է
այր որ ոչ գնաց
'ի խորհուրդս ամ-
պարշտաց. 'ի ճանապարհի մե-
ղաւորաց նա ոչ եկաց, եւ յա-
թոռս ժանտից նա ոչ նստաւ։
2 Այլ յօրէնս տն՟ են կամք
նր՟, եւ յօրէնս նր՟ խորհեսցի
նա 'ի տուէ եւ 'ի գիշերի. եւ
եղիցի նա որպէս ծառ, որ
տն-

տնկեալ է 'ի գնացս ջուրց։
Որ զպտուղ իւր 'ի ժամու 3
տացէ, և տերև նր̅ մի թա-
փեսցի. և զամենայն զոր ինչ
արասցէ, յաջողեսցի նմա։
Ո՛չ այսպէս են ամպարիշտք, 4
և ո՛չ այսպէս. այլ որպէս հողմ
զփոշի, զի հոսէ 'ի վր̅ երե-
սաց երկրի։
Վ̅ն այսորիկ ո՛չ յարիցեն ամ- 5
պարիշտք 'ի դատաստան, և
ո՛չ մեղաւորք 'ի խորհուրդս
արդարոց։
Քանզի ճանաչէ տ̅ր զճանա- 6
պարհս արդարոց. ճանա-
պարհք ամպարշտաց կորի-
ցեն։

## ՍԱՂՄՈՍ. Բ։

Անվերնագիր 'ի հեբրայեցւոց, երկոքին ուրեք ընդ մի համար էն։

Ընդէ՞ր խռովեցան հեթա- 1
նոսք. և ժողովուրդք խոր-
հե-

հեցան 'ի սնոտիս ։
2 Յանդիման եղեն թագաւորք
երկրի, և իշխանք ժողովե֊
ցան 'ի միասին՝ վասն տն̄ և
վասն օծելոյ նր̄ ։
3 Խզեսցո՛ւք զկապանս նց̄. և
ընկեսցուք 'ի մէնջ զլուծ նց̄։
4 Բնակեալն յերկինս ծիծա֊
ղեսցի զնոքօք. և տր̄ արհա֊
մարհեսցէ զնոսա ։
5 Յայնժամ խօսեսցի ընդ նս̄
բարկութբ̄ իւրով, և սրտ֊
մտութբ̄ իւրով խռովեցու֊
ցէ զնոսա ։
6 Ես կացի թագաւոր 'ի նմա֊
նէ, 'ի վերայ լերին սիոնի
սրբոյ նորա, 'ի պատմել ինձ
զհրամանս տն̄ ։
7 Տր̄ ասաց ցիս՝ որդի իմ ես
դու, և ես այսօր ծնայ զքեզ ։
8 Խնդրեա՛ յինէն, և տաց քեզ
զհեթանոսս 'ի ժառանգուլ̃,
և իշխանուլ̃ քեզ ընդ ամ̄
ծագս

ծագս երկրի։
Հովուեսցես զն̃ս գաւազա- 9
նաւ երկաթեաւ. և ոպ̃ զա-
նօթ բրտի փշրեսցես զն̃ս։
Արդ թագաւորք՝ զայս ՚ի 10
միտ առէք. և խրատեցա-
րուք ամենեքեան, որք դա-
տիք զերկիր։
Ծառայեցէք տ̃ն երկիւղիւ. 11
և ցնծացէք առաջի ն̃ր դո-
ղութ̃բ։
Ընկալարուք զխրատ ն̃ր՝ զի 12
մի բարկասցի տ̃ր. և կորն-
չիցիք ՚ի ճանապարհացն ար-
դարութե̃ն։
՚Ի ժամանակի, յորժամ բոր- 13
բոքեսցի բարկութի̃ն ն̃ր։
Երանի ամենեցուն՝ որք յու- 14
սացեալ են ՚ի տ̃ր։

# ՍԱՂՄՈՍ. Գ։

1 Սաղմոս ՚ի դաւիթ. ՚ի ժամանա_
կի՝ զի փախուցեալ էր նա յերե_
սաց աբիսողոմայ որդւոյ իւրոյ։

2 Տէ՛ր զի բազում եղեն նեղիչք
իմ. եւ բազումք յարեան ՚ի
վերայ իմ։

3 Բազումք ասէին զանձնէ իմ_
մէ, թէ չիք փրկութիւն սորա
առ ած իւր։

4 Այլ դու տր օգնական իմ
ես, փառք իմ եւ բարձրա_
ցուցիչ գլխոյ իմոյ։

5 Ձայնիւ իմով ես առ տր
կարդացի, եւ լուաւ ինձ ՚ի
լեռնէ սրբոյ իւրմէ։

6 Ես ննջեցի եւ ՚ի քուն եղէ.
զարթեայ՝ եւ տր ընդունելի
իմ է։

7 Ո՛չ երկեայց ես ՚ի բիւրուց
զօրաց նդ. որք շուրջանակի
պատեալ պաշարեալ պահէ_
ին

լին զիս։

Արի՛ տէր՝ և փրկեա՛ զիս ա՟ծ 8
իմ. զի դու հարեր զամենե-
սեան, որք էին ը՟դ իս թշնա-
մութ՟բ 'ի տարապարտուց.
և զատամունս մեղաւորաց
փշրեցեր։

Տեառն է փրկութ՟ին. 'ի վե- 9
րայ ժողովրդեան քոյ՝ օրհ-
նութ՟ին քո։

# ՍԱՂՄՈՍ. Դ։

'Ի կատարած օրհնութ՟է. սաղմոս 1
երգոյ 'ի Դաւիթ։

'Ի կարդալ իմում լուաւ 2
ինձ ա՟ծ ը՟դ արդարութ՟ե.
'ի նեղութ՟ե ինձ անդորր ա-
րարեր. ողորմեա՛ ինձ և լուր
աղօթից իմոց։

Որդիք մարդկան՝ մինչև յե՞րբ 3
էք խստասիրտք. ընդէ՞ր սի-
րէք զունայնութ՟ի, և խնդրէք
զստութ՟ին։

Ծա-

4 Ծաներո՛ւք զի սքանչելիս ա-
րար տ̄ր սրբոյ իւրում. և տ̄ր
լո՛ւիցէ ինձ 'ի կարդալ ի-
մում՝ առ նա:

5 Բարկանայք՝ և մի մեղանչէք.
զոր ինչ ասէք 'ի սիրտս ձեր,
յանկողինս ձեր զղջացարո՛ւք:

6 Մատուցէք պատարագ ար-
դարութ̄ե. և յուսացարո՛ւք
'ի տ̄ր:

7 Բազումք ասէին, թէ ո՛ ցուց-
ցէ մեզ զբարութի̄ տ̄ն. նշա-
նեցաւ առ մեզ լոյս երեսաց
քոց. և ետուր ուրախութի̄
սրտից մերոց:

8 'Ի պտղոյ ցորենոյ գինոյ՝ ձի-
թոյ իւրեանց լցուցեր զն̄ս:

9 Խաղաղութի̄ յայս և 'ի սոյն
ննջեսցուք և զարթիցուք. զի
դու տ̄ր միայն առանձին յու-
սով.քո բնակեցուցեր զմեզ:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. Ե:

Ի կատարած վասն վիճակելոյն. 1
սաղմոս 'ի դաւթի:

Բանից իմոց ունկն դիր տ̅ր 2
և 'ի միտ առ զաղաղակ իմ:
Նայեա՛ 'ի ձայն աղօթից ի- 3
մոց, Թագաւոր իմ և ա̅ծ իմ:
Ես զքեզ աղաչեմ տ̅ր, ընդ 4
առաւօտս լուիցես ձայնի ի-
մում. ընդ առաւօտս պատ-
րաստ եղէց, յանդիմանս լի-
նել առ քեզ:
Ո՛չ թէ դու ա̅ծ կամիս զա- 5
նօրէնութի̃. և ոչ բնակեսցեն առ
քեզ չարք, և անօրէնք մի՛ բն-
նակեսցեն առաջի աչաց քոց:
Ատեցեր զամենայն, որ գոր- 6
ծեն զանօրէնութի̃. կորու-
սանես զամենեսեան որք խօ-
սին սուտ:
Զայր արիւնահեղ և զնեն- 7
գաւոր պիղծ առնես դու տ̅ր.

այլ ես ի՟ բազում ողորմու-
թե՟ քում մտից ՚ի տուն քո.
և երկիր պագից ՚ի տաճար
ս՟բ քո երկիւղի՟ քո:
8 Տ՟ր առաջնորդեա́ ինձ յար-
դարութե՟ քում. վ՟ն թշնա-
մեաց իմոց՝ ուղիղ արա ա-
ռաջի իմ զճանապարհս քո:
9 Զի ո՛չ գոյ ՚ի բերանս նոցա
ճշմարտութի. և սիրտք նո-
ցա նանրեալ են:
10 Որպէս գերեզմանս բաց է կո-
կորդ նոցա. և լեզուօք իւ-
րեանց նենգաւորք եղեն:
11 Դատեա́ զնոսա ա՟ծ զի անկ-
ցին ՚ի խորհրդոց իւրեանց.
ըստ բազում ամբարշտութե՟
նոցա մերժեա́ զն՟ս. զի դառ-
նացուցին զքեզ:
12 Ուրախ լիցին ամենեքեան՝
որք յուսացեալ են ՚ի քեզ.
յաւիտեան ցնծասցեն. և
բնակեսցես դու ՚ի նոսա:

Պար-

Պարծեսցին 'ի քեզ սիրելիք 13
անուան քո, զի օրհնեսցես
դու զարդարն. Տր՟՝ որպէս
զինու հաճութե՟բ քո պսա֊
կեցեր զնոսա։

## ՍԱՂՄՈՍ. Զ։

'Ի կատարած ընդ օրհնութիւնս վա՟ն 1
ութերորդայ. սաղմոս 'ի Դաւիթ։

Տր՟ մի՛ սրտմտութե՟բ քով յան֊ 2
դիմաներ զիս. և մի՛ բար֊
կութե՟բ քով խրատեր զիս։
Ողորմեա ինձ Տր՟ զի հիւանդ 3
եմ ես. բժշկեա զանձն իմ,
զի խռովեցան ոսկերք իմ։
Անձն իմ յոյժ խռովեցաւ, 4
և դու Տր՟ մինչև յերբ։
Դարձիր Տր՟ և փրկեա զանձն 5
իմ. կեցո զիս Տր՟ վասն ողոր֊
մութեան քում։
Զի ոչ ոք է որ 'ի մահու յի֊ 6
շէ զքեզ. կամ 'ի դժոխս խոս֊
տովան առնի առ քեզ։

Վաստ֊

7 Վաստակեցայ ես 'ի հեծութե̃ իմում. լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի:

8 Խռովեցաւ 'ի սրտմտութե̃ ակն իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ամենայն թշնամեաց իմոց:

9 'Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութ̃ի:

10 Լուաւ տ̃ր ձայնի լալոյ իմոյ. լուաւ տ̃ր աղօթից իմոց. և տ̃ր զխնդրուածս իմ ընկալաւ:

11 Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին:

# ՍԱՂՄՈՍ. Է:

Սաղմոս ՚ի Դաւիթ. զոր ասաց Ա
Տեառն վասն բանին Քուսեայ որդւոյ
Յեմինեայ:

Տէր ա՟ծ իմ ՚ի քեզ յուսա- Բ
ցայ, փրկեա՛ զիս. և յա՟մ
հալածչաց իմոց ազատեա՛ զիս:
Գուցէ երբեք յափշտակիցէ Գ
որ՟պս առեւծ զանձն իմ. ոչ
ոք իցէ որ փրկիցէ, և ոչ
այն՝ որ ապրեցուցանիցէ:
Տ՟ր ա՟ծ իմ թէ արարի զայս. Դ
և թէ իցեն անօրէնութիւնք
՚ի ձեռս իմ:
Թէ հատուցի երբեք այնո- Ե
ցիկ, որք հատուցին ինձ չար.
անկեայց և ես ՚ի թշնամեաց
իմոց ընդունայն:
Հալածեսցէ ապա թշնամին Զ
զանձն իմ. հասցէ և կոխես-
ցէ յերկիր զկեանս իմ. և
զփառս իմ ՚ի հող բնակե-
ցուս-

ցուցէ:

7 Արի Տէր բարկութեամբ քով․ և բարձր լեր 'ի սահմանս թշնամեաց իմոց:

8 Զարթիր Տէր Աստուած իմ 'ի հրամանս քո՝ զոր պատուիրեցեր․ և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեւ:

9 Վասն այսորիկ 'ի բարձունս դարձ Տէր․ և Տէր դատի զժողովուրդս իւր:

10 Դատ արա ինձ Տէր ըստ արդարութեան իմում․ ըստ անմեղութեան իմում՝ որ յիս:

11 Կատարեսցին չարիք 'ի մէջ մեղաւորաց, և յաջողեսցես դու արդարոյն:

12 Որ քննէ զսիրտս և զերիկամունս Աստուած արդար․ յիրաւի է օգնութիւն ինձ յԱյ՝ որ ապրեցուցանէ զայնասիկ, որք ուղիղ են սրտիւք:

13 Աստուած դատաւոր արդար՝ հզօր

և երկայնամիտ. որ ոչ ածէ
զբարկութիւն իւր զօրհանապազ։
Այլ թէ ոչ դառնայք առ 14
նա, զսուր իւր սրեալ է՝ և
զաղեղն իւր լարեալ. 'ի նմա
պատրաստեալ է զանօթս մա-
հու. և զնետս իւր այրեցե-
լովք է գործեալ։
Ահաւասիկ երկնեաց զանօ- 15
րէնութիւն. յղացաւ զցաւս,
և ծնաւ զանիրաւութիւն։
Գուբն՝ զոր փորեաց և պե- 16
ղեաց, 'ի նոյն անկցի 'ի խոր-
խորատ՝ զոր և գործեաց։
Դարձցին ցաւք 'ի գլուխ 17
նորա. և 'ի վր̅ գագաթան
նորա անօրէնութիւնք իւր իջցեն։
Խոստովան եղէց տն̅ ըս̅ ար- 18
դարութե̅ նր̅. սաղմոս ասացից
անուան տն̅ բարձրելոյ։

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. Ը:

1 'Ի կատարած 'ի վ̅ր հնձանացն.
սաղմոս 'ի դաւիթ:

2 Տ̅ր տ̅ր մեր, զի՛ սքանչելի է
անուն քո 'ի վ̅ր ամ̅ երկրի:
3 Համբարձաւ մեծ վայելչու-
թիւն քո 'ի վերոյ քան զեր-
կինս. 'ի բերանոյ մանկանց
տղայոց ստընդիեցաց հաս-
տատեցեր զօրհնութի̅ն:
4 Վասն թշնամեաց քոց տ̅ր.
զի եղծցի թշնամին և հա-
կառակորդն:
5 Տեսից զերկինս զգործս մա-
տանց քոց, զլուսին և զաս-
տեղս՝ զորս դու հաստատե-
ցեր:
6 Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու
զնա. կամ որդի մարդոյ, թէ
այց ինչ արարցես դու նմա:
7 Փոքր ինչ խոնարհ արարեր
զնա քան զհրեշտակս քո.
փա-

փառօք եւ պատուով պսակե-
ցեր զնա․ եւ կացուցեր զնա
'ի վերայ ամենայն ձեռակեր-
տաց քոց։

Զամ ինչ հնազանդ արարեր 8
'ի ներքոյ ոտից նորա, զխաշն
եւ զարջառ՝ եւ զամենայն ինչ։
Եւս եւ զերէ վայրի․ զթռ- 9
չունս երկնից, եւ զձկունս
ծովու՝ որ շրջին ընդ շաւիղս
ծովու։
Տր տր մեր, զի՞ սքանչելի է 10
անուն քո յամենայն երկրի։

## ՍԱՂՄՈՍ․ Թ։

'Ի կատարած․ վասն գաղտնեաց 1
որդւոյ։

Գոհացայց զքեզ տր բո- 2
լորով սրտիւ իմով․
պատմեցից զամենայն սքան-
չելիս քո։
Ուրախ եղէց եւ ցնծացայց 3
'ի քեզ․ սաղմոս ասացից ան-
ուան

ուան քում բարձրեալ:
4 'Ի դառնալ յետս Թշնամեաց
իմոց, տկարասցին և կորի-
ցեն յերեսաց քոց:
5 Արարեր զդատաստան իմ,
և զիրաւունս. նստար յա-
Թոռ՝ դատաւոր արդարութեան:
6 Սաստեցեր 'ի հեԹանոսս, և
կորեաւ ամբարիշտն. զան-
ուանս նոցա ջնջեցեր յաւի-
տեանս յաւիտենից. և Թշ-
նամւոյն զէն սպառեալ մինչ
իսպառ:
7 Զքաղաքս աւերեցեր, և կո-
րեաւ յիշատակ նոցա աղա-
ղակաւ:
8 Եւ Տէր կայ՝ և մնայ յաւիտեան.
պատրաստ արար զաԹոռ իւր
'ի դատաստանի:
9 Նա է դատի զաշխարհս ար-
դարութեամբ, և զժողովուրդս
իւր ուղղութեամբ:
10 Եղև Տէր ապաւէն տնանկի,
օգ-

օգնական 'ի նեղութե 'ի դէպ
ժամանակի :
Յուսասցին 'ի քեզ ամենե 11
քեան՝ ոյք գիտեն զանուն
քո . զի ոչ թողցես զայնո-
սիկ , որք խնդրեն զքեզ Տր :
Սաղմոս ասացէք Տն՝ որ բնա- 12
կեալն է 'ի Սիոն . պատմեցէք
'ի հեթանոսս զգործս Նր :
'Ի խնդրել զարիւն Նց՝ յի- 13
շեաց . և ոչ մոռացաւ Տր
զաղօթս տնանկաց :
Ողորմեա ինձ Տր՝ և տես 14
զխոնարհութի իմ 'ի թշնա-
մեաց իմոց . ո բարձր արա-
րեր զիս 'ի դրանց 'ի մահ-
ուանէ :
Որպէս պատմեցից զամ օրհ- 15
նութիս քո 'ի դրունս դըս-
տեր Սիոնի , և ցնծացայց 'ի
փրկութե քում :
Ընկլան հեթանոսք յապա- 16
կանութե իւրեանց՝ զոր ա-
րա-

արին. և որոգայթ՝ զոր թա-
գուցին, առցէ զոտս նոցա:
17 Ծանաչի տէր յառնել զդա-
տաստանս իւր. և 'ի գործս
ձեռաց իւրեանց կալեացին
մեղաւորք:
18 Դարձցին մեղաւորք անդ-
րէն 'ի դժոխս. և ամենայն հե-
թանոսք որք մոռացան զԱստուած:
19 Ո՛չ իսպառ մոռանայ տէր
զաղքատն. համբերութիւն
տնանկաց մի կորիցէ իսպառ:
20 Արի՛ տէր՝ և մի՛ զօրասցի
մարդ. դատեսցին հեթա-
նոսք առաջի քո:
21 Կացո՛ տէր՝ օրէնսդիր 'ի վե-
րայ նոցա. և ծանիցեն հե-
թանոսք՝ թէ մարդիկ են:
22 Ընդէ՞ր տէր՝ կայցեր 'ի հե-
ռաստանէ. անտես արարեր
'ի դէպ նեղութեան ժամանակի:
23 Յամբարտաւանել ամբարշ-
տին՝ այրի աղքատն. արգել-
ցին

ցին 'ի խորհուրդս իւրեանց,
զոր և խորհեցան:
Զի գովի մեղաւորն 'ի ցան_ 24
կութիւն անձին իւրոյ. որ
զրկէն, և նա գովի:
Իսկ ընդէ՞ր բարկացոյց մե_ 25
ղաւորն զա՟ծ, ըստ բազում
բարկութե՟ իւրում, թէ ոչ
խնդրի:
Ո՛չ է ա՟ծ առաջի աչաց նո_ 26
րա. պղծեն ճանապարհք
նորա յամենայն ժամ:
Բարձեալ են իրաւունք յե_ 27
րեսաց նորա, 'ի վերայ ա՟մ
թշնամեաց իւրոց տիրեսցէ:
Ասաց 'ի սրտի իւրում, թէ 28
ոչ սասանեցայց ազգէ յազգ-
առանց չարի:
Անիծիւք և դառնութե՟ և 29
նենգութե՟ լի է բերան նր՟.
և 'ի ներքոյ լեզուի նր՟ ցաւք
և վաստակք:
Նստի դարանեալ ը՟ մեծա_ 30

մեծս

մեծս 'ի գաղտնիս՝ սպանա-
նել զամբիծն:

31 Աչք նորա 'ի տնանկս հային.
դարանի 'ի գաղտնիս, որ-
պէս զառիւծ 'ի մորւոջ իւ-
րում:

32 Դարանի յափշտակել զաղ-
քատն. յափշտակել զաղ-
քատն, և ձգել զնա:

33 Յորոգայթ իւր խոնարհե-
ցուցէ զնա. խոնարհեսցի
և անկցի 'ի տիրել իւրում
'ի վերայ տնանկաց:

34 Զի ասաց 'ի սրտի իւրում
թէ մոռացաւ ա̃ծ. դարձոյց
զերեսս իւր՝ զի մի տեսցէ
իսպառ:

35 Արի տ̃ր ա̃ծ իմ. բարձր
եղիցի ձեռն քո. և մի մո-
ռանար զտնանկս:

36 Խաչ՝ ընդէ՞ր բարկացոյց ամ-
բարիշտն զա̃ծ. զի ասաց 'ի
սրտի իւրում թէ ոչ քննի:

Տէ-

Տեսանես դու զնա 'ի ցաւս, 37
եւ 'ի սրտմտութիւն հայիս. 'ի
քեզ թողեալ է աղքատն, եւ
որբոյն դու ես օգնական:
Խորտակեսցի բազուկ մեղա- 38
ւորի՝ եւ չարի. խնդրեսցին
մեղք նր̅, եւ նա մի գտցի:
Տր̅ թագաւոր յաւիտեանս 39
յաւիտենից. կորիցեն հե-
թանոսք յերկրէ նորա:
Զցանկութ̅ն տնանկաց լուաւ 40
տր̅, 'ի պատրաստութ̅ն սրտից
նց̅ հայեցաւ ունկն քո:
Դատ առնել որբոյն եւ տը- 41
նանկի. զի մի եւս յաւելու-
ցու մարդ, 'ի մեծաբանել իւ-
րում 'ի վր̅ երեսաց երկրի:

## ՍԱՂՄՈՍ. Ժ.

'Ի կատարած. սաղմոս
'Ի Դաւիթ:

Ի տր̅ յուսացայ. որպէս 1
ասիցէք ցանձն իմ, փո-

փո-

փոխեայց 'ի լերինս որպէս
ճնճղուկ:
2 Զի ահա մեղաւորք լարեցին
զաղեղունս իւրեանց. պատ-
րաստ արարին զնետս 'ի կա-
պարճս, ձգել ընդ խաւար՝ այ-
նոցիկ ոյք ուղիղ են սրտիւք:
3 Զի զոր դու շինեցեր՝ նք
աւերեցին. իսկ արդարն զի՞
արար:
4 Տր 'ի տաճար սուրբ իւրում.
Տր յերկինս յաթոռ իւրում:
5 Աչք նր 'ի տնանկս հային,
արտեւանունք նր քննեն զոր-
դիս մարդկան:
6 Տր քննէ զարդարն և զամ-
բարիշտն. որ սիրէ զմեղս,
ատեայ զանձն իւր:
7 Տեղասցէ 'ի վր մեղաւորաց
որոգայթ՝ հուր և ծծումբ.
այս մրրիկ՝ բաժին բաժակի
նոցա:
8 Արդար է Տր՝ և զարդա-
րու-

րութն սիրէ. զուղղութիւն
տեսանեն երեսք նր̅։

## ՍԱՂՄՈՍ. ԺԱ։

՚Ի կատարած ՚ի վերայ ութերոր- 1
դին. սաղմոս ՚ի դաւիթ։

Փրկեա զիս Տր̅՝ զի նուա- 2
զեաց սր̅. նուազեցին ճշ-
մարտութիւնք յորդւոց ՚ի մարդ-
կանէ։

՚Ի նանիր խօսեցաւ այր ընդ 3
ընկերի իւրում. շրթամբք
նենգաւորօք սրտէ ՚ի սիրտ
խօսեցաւ։

Սատակէ Տր̅ զա̅մ շրթունս 4
նենգաւորս, և զլեզուս մե-
ծաբանս։

Որք ասացին, զլեզուս մեր 5
մեծ արասցուք, շրթունք
մեր առ մեզ են, և արդ՝
մեր ո̃վ է Տր̅։

Վասն տառապանաց աղքա- 6
տին՝ և հեծութեան տնանկին,
այժմ

այժմ յարիցից ասէ՝ Տ՟ր. ե-
դից զփրկութ՟ն իմ, եւ հա-
մարձակեցայց 'ի նոսա։
7 Բանք Տ՟ն են բանք Ս՟բ, որ՟պ
զարծաթ ընտրեալ եւ փոր-
ձեալ յերկրէ. սրբեալ եւ պար-
զեալ եօթնպատիկ 'ի հողոյ։
8 Դու Տ՟ր պահեսցեր զմեզ, եւ
ապրեցուցեր զմեզ յազգէ
յայսմանէ մինչեւ յաւ՟տեն։
9 Շուրջանակի ամբարիշտք
շրջին. ը՟ս բարձրութ՟ե քում
մեծ արարեր դու զորդիս
մարդկան։

## ՍԱՂՄՈՍ. ԺԲ։

'Ի կատարած. սաղմոս
'ի Դաւիթ։

1 Մինչեւ յերբ Տ՟ր՝ մոռանաս
զիս իսպառ. մինչեւ յերբ
դարձուցանես զերեսս քո յի-
նէն։
2 Մինչեւ յերբ դնեմ զխոր-
հուրդս

հուրդս յանձն իմ. և ցաւք
սրտի իմոյ զաւուրս:
Մինչև ցե՞րբ բարձրանայ 3
թշնամին 'ի վ̄ր իմ. նայեա՛
և լո՛ւր ինձ տ̄ր ա̄ծ իմ:
Լո՛յս տուր տ̄ր աչաց իմոց, զի 4
մի՛ երբէք ննջեցից 'ի մահ:
Մի՛ ասասցէ թշնամին՝ թէ 5
յաղթեցի նմա. կամ նեղիչք
իմ ցնծասցեն, թէ ես սա-
սանեցայց:
Ես յողորմութիւն քո տ̄ր յու- 6
սացայ, ցնծասցէ սիրտ իմ
'ի փրկութե̄ քում. օրհնեցից
զտ̄ր՝ զբարերարդ իմ:

## ՍԱՂՄՈՍ. ԺԳ:

'Ի կատարած. սաղմոս
'Ի Դաւիթ:

Ասաց անզգամն 'ի սրտի իւ- 1
րում, թէ ոչ գոյ ա̄ծ:
Ապականեցան և պղծեցան 2
յանօրէնութե̄ իւրեանց. և

ոչ

ոչ ո՛ք է՝ որ առնէ զքաղց-
րութիւն:
3 Տր̄ յերկնից նայեցաւ յա̄մ
որդիս մարդկան, տեսանել
թէ իցէ՞ ոք իմաստուն, որ
խնդրիցէ զա̄ծ:
4 Ամենեքեան խոտորեցան 'ի
միասին՝ և անպիտանացան:
5 Ոչ ո՛ք է որ առնէ զքաղց-
րութի̄. և չէ՛ ոք՝ մինչև 'ի մի:
6 Որպէս ո՛չ ծանիցեն ամենե-
քեան, որք գործեն զանօրէ-
նութիւն:
7 Որք ուտէին զժողովուրդ
իմ՝ ոպ̄ կերակուր հացի, և
առ Տր̄ ո՛չ կարդացին:
8 Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր
ո՛չ իցէ երկիւղ. զի Տր̄ է
յազգս արդարոց:
9 Զխորհուրդ աղքատի յա-
մօթ արարիք. զի Տր̄ է յոյս
նորա:
10 Ո՞ տացէ 'ի սիոնէ զփրկութի̄
իս-

իսրայէլի․ 'ի դարձուցանել
տ̅ն զգերութիւն ժողովրդեան
իւրոյ․ ցնծասցէ յակոբ՝ և
ուրախ եղիցի իսրայէլ։

## ՍԱՂՄՈՍ․ ԺԴ։

'Ի կատարած․ սաղմոս
'ի դաւթի։

Տր̅ ով կացցէ 'ի խորանի 1
քում․ կամ ով բնակես-
ցէ 'ի լեառն սուրբ քո ։
Որ գնայ անբիծ՝ գործէ զար- 2
դարութի, խօսի զճշմարտու-
թիւն 'ի սրտի իւրում։
Որ ոչ նենգաւորեաց լեզ- 3
ուաւ իւրով, և չար ընկե-
րի իւրում ոչ արար ։
Նախատինս 'ի մերձաւորաց 4
ոչ առնու ․ արհամարհեալ
է առաջի նր̅ չարագործն ։
Զերկիւղածս տ̅ն փառաւոր 5
առնէ․ որ երդնու ընկերի
իւրում, և ոչ ստէ ։

Զար-

6 Զարծաթ իւր 'ի վարձու ոչ
տայ, և կաշառս 'ի վ̃ր իրա-
ւանց ոչ առնու. որ զայս ա-
րասցէ, նա մի սասանեսցի
յաւիտեան:

## ՍԱՂՄՈՍ. ԺԵ.

1 Յարձանագիր 'ի Դաւիթ:
2 Պահեա զիս ա̃ծ իմ, զի ես
'ի քեզ յուսացայ. ասացի
տ̃ն, տ̃ր իմ ես դու՝ և բա-
րիք իմ ինձ 'ի քէն են:
3 Սրբոց քոց՝ որք են յերկրի
քում. սքանչելի արարեր
զա̃մ կամս իմ 'ի ն̃ս:
4 Յաճախեցին հիւանդութիւնք
նոցա. յետ այսորիկ ապա
վաղվաղեցին:
5 Ո՛չ ժողովեցայց 'ի ժողովս
ն̃ց յարեանց. և ոչ յիշեցից
զանուանս նոցա 'ի շրթունս
իմ:
6 Տ̃ր բաժին ժառանգութեան

իմոյ՝ և բաժակի իմոյ դու
ես, որ այսրէն դարձուցա-
նես զժառանգութիւն իմ յիս:
Վիճակք ելին ինձ ĩ ընտիրս, 7
և ժառանգութիւն իմ հաճոյ
եղև ինձ:

Օրհնեցից զՏր՝ որ իմաս- 8
տուն արար զիս, մինչ 'ի գի-
շերի ևս խրատեցին զիս ե-
րիկամունք իմ:

Յառաջագոյն տեսանէի զՏր 9
առաջի իմ յա̃մ ժամ. զի է
ընդ աջմէ իմմէ, զի մի սա-
սանեցայց:

Վասն այսորիկ ուրախ եղև 10
սիրտ իմ. և ցնծացաւ լե-
զու իմ, ևս և մարմին իմ
բնակեսցէ յուսով:

Զի ոչ թողցես զանձն իմ 'ի 11
դժոխս. և ոչ տացես սրբոյ
քում տեսանել զապակա-
նութիւն:

Ցուցեր ինձ զճանապարհս 12
քո

քո կենաց, լցուցեր զիս ու-
րախութե̃ երեսաց քոց 'ի
քաղցրութե̃ վայելչուն աջոյ
քո մինչև իսպառ։

## ՍԱՂՄՈՍ. ԺԶ.

### Աղօթք 'ի Դաւթի։

Լուր տ̃ր արդարութե̃. և 1
նայեա՛ 'ի խնդրուածս իմ.
ունկն դիր աղօթից իմոց՝ զի
ոչ շրթամբք նենգաւորօք։
Յերեսաց քոց իրաւունք ինձ 2
ելցեն, և աչք իմ տեսցեն
ուղղութիւն։
Փորձեցեր զսիրտ իմ, և քըն- 3
նեցեր 'ի գիշերի. փորձեցեր
զիս՝ և ոչ գտաւ յիս անի-
րաւութիւն։
Մի խօսեսցի բերան իմ ըստ 4
գործս որդւոց մարդկան. վ̃ն
բանից շրթանց քոց ես պա-
հեցից զճանապարհս խիստս։
Հաստատեա՛ զշաւիղս իմ 'ի 5
ճա-

Ճանապարհս քում. զի մի
գայթագղեսցին գնացք իմ։
Ես առ քեզ տ͞ր կարդացի՝ 6
զի լուար ինձ ա͞ծ, խոնար-
հեցո́ առ իս զունկն քո. և
լո́ւր բանից իմոց։
Սքանչելի արարեր զողոր- 7
մութիւնս քո՝ ո͞ փրկես զայ-
նոսիկ, որք յուսացեալ են
'ի քեզ՝ յայնցանէ, որք հա-
կառակ կան աջոյ քո։
Պահեա́ զիս ո͞պ բիբ ական. 8
ընդ հովանեաւ թեւոց քոց
ծածկեսցես զիս. յերեսաց
ամբարշտաց, որք տառապե-
ցուցին զիս։
Թշնամիք զանձն իմ պաշա- 9
րեցին. և 'ի Ճարպս իւրեանց
արգելին. և բերանք նոցա
խօսեցան զամբարտաւանու-
թիւն։
Մերժեցին զիս, և այժմ 10
դարձեալ պատեցան զինև.

ուշ

ուշ եդին խոնարհեցուցա-
նել զիս յերկիր:
11 Համարեցան ինձ որպէս ա-
ռիւծ՝ զի պատրաստ է յորս.
և ոպ̃ կորիւն առիւծու, զի
նստի դարանեալ:
12 Արի՛ Տր̃՝ ժամանեա՛ նց̃, և
խափանեա՛ զնոսա. փրկեա՛
զանձն իմ յամպարշտաց, 'ի
սրոյ՝ և 'ի ձեռաց թշնամ-
ւոյն:
13 Տր̃ կորո՛ զնս̃ յերկրէ. բա-
ժանեա՛ և խափանեա՛ զնս̃ 'ի
կեանս իւրեանց:
14 Գաղտնեօք քովք լցան որո-
վայնք նոցա. յագեցան կե-
րակրովք, և թողին զմնաց-
ուածս տղայոց իւրեանց:
15 Ես արդարութբ̃ երևեցայց
երեսաց քոց. յագեցայց յե-
րևել փառաց քոց:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ԺԷ։

'Ի կատարած 'ի ձեռս պատե- 1
րազմօղ նահապետին ծառային Տն
Դաւթի. որ խօսեցաւ ընդ Տն
զբանս օրհնութեան. յաւուր յո-
րում փրկեաց զնա Տր 'ի յձեռաց
ամենայն թշնամեաց, և 'ի յձեռաց
սաւուղայ. և ասէ.

*Սիրեցից զքեզ՝ Տր զօրու-* 2
*թիւն իմ. Տր հաստատիչ*
*իմ, ապաւէն իմ՝ և փրկիչ իմ։*
*Այ օգնական իմ, և ես յու-* 3
*սամ 'ի նա. ապաւէն իմ,*
*եղջիւր փրկութեան իմոյ՝ ըն-*
*դունելի իմ է։*
*Օրհնելով կարդացից առ* 4
*Տր, և 'ի թշնամեաց իմոց*
*ապրեցայց։*
*Շուրջ եղեն զինև երկունք* 5
*մահու. և ուղխք անօրէնու-*
*թեան խռովեցուցին զիս։*
*Վիշտք դժոխոց պաշարեցին* 6
*զիս*

զիս. եւ ժամանեցին ինձ ո-
րոգայթք մահու:
7 Ի նեղութեան իմում ես առ
Տր կարդացի, եւ առ Ած իմ
աղաղակեցի:
8 Լուաւ ինձ ՚ի տաճարէ սրբոյ
իւրմէ ձայնի աղօթից իմոց.
եւ աղաղակ իմ առաջի նր,
մտցէ յականջս նր:
9 Խռովեցաւ եւ դողաց երկիր՝
եւ հիմունք լերանց սասանե-
ցան եւ խռովեցան. զի բար-
կացաւ ՚ի վերայ նոցա Ած:
10 Ել ծուխ ՚ի բարկութէ նր.
եւ հուր յերեսաց նր բորբո-
քեցաւ, եւ փայլատակունք
հատան ՚ի նմանէ:
11 Խոնարհեցոյց զերկինս եւ էջ.
եւ մէգ ՚ի ներքոյ ոտից նր:
12 Ել ՚ի քրովբէս եւ թռեաւ.
սլացաւ նա ՚ի թեւս հողմոց:
13 Եդ զխաւար ՚ի ծածկոյթ
իւր, եւ շուրջ զնովաւ են
յարկք

յարկք իւր. և խաւարային
ջուրք՝ մինչև յամպս օդոց:
՚Ի փայլատակել նր̃ առաջի 14
նր̃, ամպք անցուցին զկար-
կուտ՝ և զկայծակունս հուր:
Որոտաց Տր̃ յերկնից, և 15
բարձրեալն ետ զձայն իւր
՚ի կարկուտ՝ և ՚ի կայծա-
կունս հուր:
Առաքեաց զնետս իւր և 16
ցրուեաց զնս̃. յաճախեաց
զփայլատակունս իւր՝ և խը-
ռովեցոյց զնոսա:
Երևեցան աղբերք ջուրց. 17
և յայտնեցան հիմունք Տի̃:
՚Ի սաստէ քումմէ Տր̃, և ՚ի 18
շնչել հողմոյ բարկուե̃ քո:
Առաքեաց ՚ի բարձանց՝ և 19
ընկալաւ զիս. ընկալաւ զիս
՚ի ջուրց բազմաց:
Փրկեսցէ զիս Տր̃ ՚ի Թշնա- 20
մեաց իմոց հզօրաց՝ և յատե-
լեաց իմոց, զի հզօր եղեն

քան

քան զիս:
21 Ժամանեցին ինձ յաւուր
չարչարանաց իմոց. եղև տր̄
հզօրիչ իմ, և եհան զիս յան_
դորր, և փրկեաց զիս տր̄՝
զի կամեցաւ զիս:
22 Հատուսցէ ինձ տր̄ ըստ ար_
դարութեան իմում. ը̄ս անմեղու_
թեան իմում հատուսցէ ինձ:
23 Զի պահեցից զճանապարհս
տն̄, և ոչ ամպարշտեցայց
յայ̄ իմմէ:
24 Ամենայն իրաւունք նր̄ ա_
ռաջի իմ են. և զարդարու_
թիւն իւր ոչ'ի բացէ արար
յինէն:
25 Եղէց և ես անբիծ ը̄ նմա.
և զգուշացայց յանօրէնու_
թէ իմմէ:
26 Հատուսցէ ինձ տր̄ ըստ ար_
դարութեան իմում. ը̄ սրբու_
թեան ձեռաց իմոց՝ առաջի ա_
չաց իւրոց:

Ընդ

Ընդ սրբոյն սբ՟ եղիցիս, ը՟ը 27
առն անմեղի՝ անմեղ եղիցիս,
ընդ ընտրելոյն ընտրեալ ե-
ղիցիս. և զԹիւրեալսն կործա-
նեսցես։
Դու զժողովուրդս խոնար- 28
հըս կեցուցանես. և զաչս
ամբարտաւանից դու խո-
նարհեցուցանես։
Դու լուսաւոր առնես ըղ- 29
ճրագ իմ Տր՟. Ած՟ իմ, լոյս
արա ինձ 'ի խաւարի։
Քև փրկեցայց 'ի փորձութէ՟. 30
աստուծով իմով անցից ընդ
պարիսպս։
Ած՟ իմ, անբիծ են ճանա- 31
պարհք նորա. և բանք տն՟
ընտրեալ են. և ապաւէն ա-
մենեցուն որք յուսան 'ի նա։
Վասն զի ո՞վ է ած՟ բաց 'ի 32
տնէ՟. կամ ո՞վ է ած՟, բաց յայ՟
մերմէ։
Ած՟, որ զգեցուցեր ինձ զօ- 33
րու-

րութին. և եդիր յանբծութե
զճանապարհս իմ:
34 Հաստատեցեր զոտս իմ որպ՟
զեղջերուէի. և 'ի վր՟ բար-
ձանց կացուցեր զիս:
35 Ուսուցեր զձեռս իմ 'ի պա-
տերազմ. և արարեր զբա-
զուկ իմ որպ՟ զաղեղն հաստ.
և ետուր ինձ զպաշտպանու-
թին փրկութե քո:
36 Աջ քո ընկալաւ զիս՝ և
խրատ քո կանգնեաց զիս իս-
պառ. և խրատ քո ուսու-
ցէ զիս:
37 Ընդարձակեցեր զգնացս իմ
'ի ստորև իմն. և ոչ տկա-
րացան շաւիղք իմ:
38 Հալածեցից զթշնամիս իմ՝
և հասից նց՟. և ոչ դարձայց
'ի նոցանէ՝ մինչև սպառեցից
զնոսա:
39 Նեղեցից զնս՟, և այլ մի կա-
րասցեն կեալ. և անկցին 'ի
ներ-

ներքոյ ոտից իմոց:
Զգեցուցեր ինձ զօրութի̄ 'ի 40
պատերազմի. զյարուցեալսն
'ի վերայ իմ՝ ներքոյ իմ ա-
րարեր:
Զթշնամիս իմ հալածականս 41
արարեր. և զատեցիս իմ
սատակեցեր:
Աղաղակեցին, և ոչ ոք էր 42
որ փրկէր զն̄ս. կարդացին
առ տ̄ր, և ո՛չ լուաւ նոցա:
Մանրեցից զն̄ս որպ̄ս փոշի 43
առաջի հողմոյ. և որպ̄ս կաւ-
գուեհաց կոխեցից զն̄ս:
Փրկեսցէ զիս տ̄ր 'ի հակա- 44
ռակութենէ ժողովրդոց. և
կացուսցէ զիս գլուխ հեթա-
նոսաց:
Ժողովուրդ՝ զոր ո՛չ գիտէի, 45
ծառայեաց ինձ. և 'ի լուր
ականջաց լուաւ ինձ:
Որդիք օտարաց ստեցին ինձ. 46
որդիք օտարաց մաշեցան,
և

և կաղացան 'ի շաւղաց իւ֊
րեանց ։
47 Կենդանի է տ̃ր և օրհնեալ
է ա̃ծ. և բարձր եղիցի ա̃ծ
փրկութ̃ե իմոյ ։
48 Ա̃ծ է որ խնդրէ զվրէժ իմ.
և հնազանդ առնէ զժողո֊
վուրդս ընդ ինև ։
49 Փրկիչ իմ 'ի թշնամեաց ի֊
մոց բարկացողաց. յայնցա֊
նէ որ յարուցեալ են 'ի վ̃ր
իմ՝ բարձր արարեր զիս. և
յառնէ անիրաւէ փրկեցեր
զիս ։
50 Վասն այսորիկ՝ խոստովան
եղէց քեզ 'ի հեթանոսս. և
անուան քում սաղմոս ասա֊
ցից ։
51 Մեծ արարեր զփրկութիւն
թագաւորի նորա. առնել
ողորմութ̃ի ընդ օծելոյ ն̃ր
ը̃նդ դաւթի. և ընդ զաւա֊
կի ն̃ր ազգէ մինչև յազգ ։

ՕՐՀ֊

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

## Մովսէսի եւ որդւոցն Իսրայէլի:

Օրհնեսցուք զՏ͞ր, զի փա- 1
ռօք է փառաւորեալ:
Զհեծեալս եւ զերիվարս ըն- 2
կէց ՚ի ծով. օգնական ըն-
դունելի իմ Տ͞ր, եւ եղեւ ինձ
՚ի փրկութիւն:
Սա՛ է իմ Ա͞ծ՝ եւ փառաւոր 3
առնեմ զսա. Ա͞ծ հօր իմոյ՝
եւ բարձր արարից զսա:
Տ͞ր խորտակէ զպատերազ- 4
մունս. եւ Տ͞ր է անուն Ն͞ր:
Զընտիրս արանց՝ եւ զըն- 5
տիրս ասպառազինաց, զկառս
եւ զերիվարս, եւ զա͞մ զօրուն
փարաւոնի ընկէց ՚ի ծով:
Ծով ծածկեաց զն͞ն. ընկ- 6
ղան յանդունդս խորոց իբ-

րեւ

րև զվէմս ։

7 Աջ քո տր̅՝ փառաւորեալ է
զօրութ̅ իւրով. և աջ քո տր̅՝
խորտակեաց զթշնամիս քո ։

8 Եւ մեծութ̅ փառաց քոց
մանրեցեր զհակառակորդս
քո. առաքեցեր զբարկութի
սրտմտուե̅ն քոյ. և եկեր զն̅ս
որպէս զեղէգն ։

9 Հոգւով զօրուե̅ն սրտմտուե̅ն
քո պատառեցան ջուրք. դէ֊
զան՝ կացին որպէս պարիսպ
քարեայ ջուրք ծովուն. և
պաղեցան դիզան ալիք ջուր֊
ցըն 'ի մէջ ծովուն ։

10 Ասաց թշնամին. աւաղ, հա֊
լածեցից՝ հասից՝ հարից. բա֊
ժանեցից զաւարն՝ և լցու֊
ցից 'ի նոցանէ զանձն իմ ։

11 'Ի սուր իմ արկից զն̅ս. տի֊
րեսցէ և բարձրասցի 'ի վե֊
րայ ն̅ց աջ իմ ։

12 Առաքեցեր զհողմն քո, և

ծած֊

ծածկեաց զն՟ս ծով. ընկղմե-
ցան, և իջին որպ՟ս կապար՝
՚ի ջուրս սաստիկս։
Ո՞ նման է քեզ յա՟ծս տ՟ր, 1
կմ՟ ո՞վ նմանիցի քեզ՝ փառա-
ւորեալդ ՚ի սուրբս։
Սքանչելի փառաւորեալ՝ որ 1
առնես զնշանս և զարուես-
տըս. ձգեցեր զձեռն քո, և
եկուլ զն՟ս երկիր։
Առաջնորդեցեր արդարու- 1
թե՟ ժողովրդեան քո այսմ,
զոր և փրկեցեր։
Մխիթարեցեր զն՟ս զօրութ՟ 1
քով ՚ի բնակեալ սրբութ՟
քո. լուան ազգք՝ և բար-
կացան, և երկունք կալան
զբնակիչսն փղշտացւոց։
Յայնժամ փութացան դա- 1
սաւորք եդովմայ, և իշ-
խանք մովաբացւոց։
Կալաւ զնոսա դողումն. հա- 1
լեցան ամենայն բնակիչք քա-
նա-

նանացւոյ :

19 Անկցի 'ի վերայ նոցա ահ և
դողումն . և 'ի զօրութենէ բազ-
կի քո քարասցին :

20 Մինչև անցցէ ժողովուրդ
քո Տր , մինչև անցցէ ժողո-
վուրդ քո այս՝ զոր ստացար :

21 Տարեալ տնկեսցես զնս 'ի
լերին ժառանգութեան քո , 'ի
պատրաստութեան բնակութեան
ժառանգութեան քո :

22 Զոր ստացար 'ի սկզբանէ
Տր , ստացար սրբութիւն՝ զոր
պատրաստեցին ձեռք քո .
Տր թագաւոր յաւիտեանս
յաւիտենից , և ևս :

23 Զի եմուտ փարաւոն կառօք
և երիվարօք , և ընտիր սպա-
ռազինօք 'ի մէջ ծովուն :

24 Եւ եած 'ի վր նր Տր զջուրս
ծովուն . և որդիքն իսրայէ-
լի գնացին ցմք 'ի մէջ
ծովուն :

# ՄԱՂԹԱՆՔ:

Սա է իմ Աստուած, և փառաւոր առնեմ զսա. Աստուած հօր իմոյ՝ և բարձր արարից զսա: Մարդասէր Տէր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի. և վասն խաչի քոյ պատուականի, Տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ:

## Քարոզ և աղօթք՝ Երանեալ և Իբրև կանոնացն:

Վասն ՚ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց՝ զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա: Վասն լսելի լինելոյ Տեառն Այ ձայնի աղաչանաց մերոց՝ զՏէր աղաչ: Վասն քաւիչ և ներող լինելոյ Այ ՚ի վերայ մեղաց մերոց՝ զՏէր աղաչ: Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, զկամայ և զակամայ, զՏէր

Վասն

Վասն՝ զի մի՛ ը̄ս խոստմանն դատա-
նիցիմք յաւուրն պատասխա-
նատուութեան, զ̄տր:
Վասն հոգւոյն հանգուցելոյ՝
որք ճշմարիտ և ուղիղ հաւա-
տով 'ի քս̄ ննջեցին. զ̄տր աղա-
չեսցուք:
Եւ եւս՝ միաբան վասն ճշմարիտ
և ու̄ղ հաւատոյս մերոյ զ̄տր:
Զանձինս մեր՝ և զմիմեանս, տ̄ն
ա̄յ ամենակալին յանձն արա-
ցուք:
Ողորմեա՛ց մեզ տ̄ր ա̄ծ մեր ըստ
մեծի ողորմութեան քում. ասա-
ցուք ամենեքեան միաբանութ̄բ:
Տ̄ր ողորմեա՛. տ̄ր ողորմեա՛. տ̄ր
ողորմեա՛:

## Ա̄ղօթք:

Տ̄ր տուընջեան՝ և գոյացուցիչ
գիշերոյ. որ արարեր զտիւ 'ի
վաստակս բարեգործութեան 'ի
փրկութիւն անձանց մերոց, և
զգի-

զգիշեր 'ի հանգիստ քնոյ՝ տկա-
րացեալ բնութեան մերոյ։ Իսկ
այժմ զարթուցեալ բացեր զբե-
րանս մեր յօրհնաբանութիւն՝
ահաւոր և փառաւորեալ ան-
ուանդ քում սրբոյ։ Ընկալ և
այժմ զաղաչանս մեր, և յաջո-
ղեա մեզ ուղիղ հաւատով և ա-
ռաքինասէր վարուք 'ի նոյն պաշ-
տօն քո կանխել միշտ, և նովին
կանոնիւն անդադար փառաւո-
րել զՀայր և զՈրդի և զՍուրբ
Հոգին․ այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից․ ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։
Աստուծոյ երկիր պագեսցուք՝

Օ քեզ, որ յամի գթած և
մարդասէր Տէր ես, աղաչեմք
հանապազ, զի զօրացուսցես
զմեզ զի ըստ օրէն կալ 'ի կարգի
կրօնաւորութեան մերում։ Թե-
թևացո տր՝ զբաղցր լուծ քո

զոր

Ղօր եղեր 'ի վ̄ր մեր. զի կա-
րասցուք կալ 'ի պատուիրանի
քում, և զհաճոյսն առնել ա-
ռաջի քո յա̄մ ժամ, 'ի տուէ և
'ի գիշերի: Հրեշտակային եր-
գակցութե̄ զքեզ օրհնել՝ զքեզ
գովել, և քեզ գոհութիւն և
փառս մատուցանել ամենազօր
տ̄րութեդ, այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն:

## Մաղթանք:

Աղմոսխուք և օրհնութե̄ և եր-
գօք հոգևորօք անդադար փա-
ռաւորեմք զհայր և զորդի և
զս̄բ հոգին, այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Օրհնեալ տ̄ր մեր յս̄ քս̄. ամէն:

Հայր մեր որ:



Երրորդութիւն մի աստուած միով բնութ.

# ՍԱՂՄՈՍ. ԺԸ.

1 'Ի կատարած սաղմոս 'ի Դաւթի:

2 ԵՐԿԻՆՔ ՊԱՏՄԵՆ զփառս Այ, և զարարածս ձեռաց նր պատմէ հաստատութիւն:

3 Օր աւուր բղխէ զբան. և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն:

4 Ո՛չ են բանք՝ և ո՛չ են խօսք, որոց ո՛չ լսին ձայնք նց:

5 Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նց:

6 Յարեւու եհար զխորան իւր. և ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յառագաստէ իւրմէ. և ցնծայ նա որպ սկայ յընթանալ զճանապարհս իւր:

'Ի

'Ի ծագաց երկնից են ելք 7
ն՟ր. և հանգիստ ն՟ր մինչև
'ի ծագս նորուն, և ոչ ոք լի-
ցի, որ թագիցի 'ի տապոյ ն՟ր:
Օրէնք տ՟ն ամբիծ են՝ և դար- 8
ձուցանեն զհոգիս. վկայու՟ն
տ՟ն հաւատարիմ, և իմաս-
տուն առնէ զտղայս:
Արդարութի՟ տ՟ն ուղիղ է, 9
և ուրախ առնէ զսիրտս.
պատուիրանք տ՟ն լոյս են,
և լոյս տան աչաց. երկիւղ
տ՟ն սուրբ է, և մնայ յաւի-
տեան:
Դատաստան տ՟ն ճշմարիտ 10
է, և արդար է 'ի նոյն:
Ցանկալի է նա քան զոսկի՝ 11
և քան զականս պատուա-
կանս բազումս. քաղցր է
նա քան զմեղու խորիսխ:
Քանզի՝ ծառայ քո պահես- 12
ցէ զայս. 'ի պահել՝ ն՟մ հա-
տուցումն բազում:
Զյան-

13 Զյանցուածս իւր ո՞վ կարէ
առնուլ՚ի միտ. ՚ի գաղտնեաց
իմոց սո՛ւրբ արա զիս Տ̃ր.
և յօտարէն պահեա՛ զծա_
ռայս քո։
14 Ապա թէ ոչ տիրեսցեն ինձ,
յայնժամ անբիծ եղէց՝ և
ս̃բ եղէց ՚ի մեղաց մեծաց։
15 Եղիցին քեզ հաճոյ բանք բե_
րանոյ իմոյ, և խորհուրդք
սրտի իմոյ առաջի քո յամե_
նայն ժամ. Տ̃ր օգնական իմ
և փրկիչ իմ։

## ՍԱՂՄՈՍ. ԺԹ։

1 ՚Ի կատարած. սաղմոս
՚Ի Դաւթի։

2 Լուիցէ քեզ Տ̃ր յաւուր
նեղութեան. օգնական եղի_
ցի քեզ անուն Ա̃յ յակոբայ։
3 Առաքեսցէ քեզ Տ̃ր օգնու_
թիւն ՚ի սրբութենէ իւրմէ. և՚ի
սի_

սիոնէ ընկալցի զքեզ։
Յիշեսցէ տ՟ր զա՟մ պատա֊ 4
րագս քո, և զուխտս քո ըն֊
դունելի արասցէ։
Տացէ քեզ տ՟ր ըստ սրտի 5
քում. և զա՟մ խորհուրդս
քո նա կատարեսցէ։
Ցնծասցուք մեք 'ի փրկուե՟ 6
քում. յանուն ա՟յ մերոյ՝ մեք
մեծք եղիցուք։
Լցուսցէ տ՟ր զա՟մ խնդր֊ 7
ուածս քո. այժմ ծանեաք,
զի կեցոյց տ՟ր զօծեալ իւր։
Լուաւ սմա յերկնից 'ի սր֊ 8
բութե՟ իւրմէ, 'ի զօրութե՟
փրկութե՟ աջոյ իւրոյ։
Սոքա կառօք՝ և սոքա երի֊ 9
վարօք. այլ մեք զանուն տ՟ն
ա՟յ մերոյ կարդասցուք։
Սոքա խափանեցան և ան֊ 10
կան. մեք յարեաք՝ և ու֊
ղիղ եղաք։
Տ՟ր կեցո՛ զթագաւորն, և 11
լո՛ւր

լուր մեզ. յաւուր յորում
կարդասցուք առ քեզ:

# ՍԱՂՄՈՍ. Ի:

1 'Ի կատարած. սաղմոս
'ի Դաւիթ:

2 Տէր 'ի զօրութեան քում ու-
րախ եղիցի թագաւորն. 'ի
փրկութեան քում ցնծասցէ
յոյժ:
3 Զցանկութիւն սրտի նորա ետուր
նմա. և զկամս շրթանց նորա
ոչ արգելեր 'ի նմանէ:
4 Քաման արարեր զնա յօրհ-
նութիւն քաղցրութեան քո. և
եդիր 'ի գլուխ նորա պսակ 'ի
քարէ պատուականէ:
5 Կեանս խնդրեաց 'ի քէն. և
ետուր նմա ընդ երկայն ա-
ւուրս՝ յաւիտեանս յաւի-
տենից:
6 Մեծ են փառք նորա 'ի փրկ-
կութեան քում. զփառս և զմեծ
վայ-

վայելչութ̄ն դիցես 'ի վր̄ նր̄ :
Ցայես զնա յօրհնութ̄ն յաւի- 7
տեանս յաւիտենից. և ու-
րախ արասցես զնա յուրա-
խութ̄ն երեսաց քոց :
Թագաւոր յուսացաւ 'ի տր̄, 8
յողորմութ̄ն բարձրելոյն նա
մի սասանեսցի :
Գտցի ձեռն քո 'ի վր̄ թշնա- 9
մեաց քոց. և աջ քո գտցէ
զամենայն ատելիս քո :
Դիցես զնս̄ որպ̄ զհնոց 'ի հուր' 10
'ի ժամանակի երեսաց քոց :
Տր̄ բարկութ̄բ իւրով խռո- 11
վեցուցէ զնս̄. և հուր կե-
րիցէ զնս̄ :
Պտուղ նց̄ յերկրէ կորիցէ. 12
և զաւակ նոցա յորդւոց 'ի
մարդկանէ :
Խորհեցան 'ի քեզ չարու- 13
թիւն. խորհեցան խորհուրդ,
զոր ոչ կարասցեն հաստա-
տել :

Ա-

14 Արասցես զնս հալածեալս․
'ի մնացուածս քո պատրաս-
տեսցես զերեսս նոցա։
15 Բա́րձր լեր տր 'ի զօրութե
քում․ օրհնեսցուք, և սաղ-
մոս ասասցուք զօրութեց քոց։

## ՍԱՂՄՈՍ· ԻԱ։

1 'Ի կատարած․ վս առաւօտին օգ-
նականութեան․ սաղմոս 'ի դաւիթ։

2 Ած ած իմ՝ նայեաց առ
իս․ ընդէր թողեր զիս․
հեռի եղէ 'ի փրկութենէ իմմէ՝
վն բանից յանցանաց իմոց։
3 Ած իմ, 'ի տուէ կարդացի
առ քեզ, և ինձ ոչ լուար․ 'ի
գիշերի, և ինձ ոչ անսացեր։
4 Դու 'ի սուրբս բնակեալ
ես․ և գովեալդ իսրայէլի։
5 'Ի քեզ յուսացան հարքն
մեր․ յուսացան 'ի քեզ՝ և
փրկեցեր զնոսա։
6 Առ քեզ աղաղակեցին, և
կե-

կեցին, 'ի քեզ յուսացան՝
եւ ոչ ամաչեցին:
Այլ ես որդն եմ, եւ ոչ եմ 7
մարդ. նախատինք մարդ-
կան՝ եւ արհամարհանք ժո-
ղովրդոց:
Ամենեքեան որք տեսանէին 8
զիս՝ արհամարհէին զինեւ.
խօսէին շրթամբք՝ եւ շար-
ժէին զգլուխս իւրեանց:
Յուսացաւ 'ի տր եւ փրկես- 9
ցէ զնա. կեցուսցէ զնա, զի
կամի զնա:
Դու ես՝ որ հաներ զիս յար- 10
գանդէ. յոյս իմ 'ի ստեանց
մօր իմոյ:
'Ի քեզ անկայ ես յարգան- 11
դէ. յորովայնէ մօր իմոյ դու
ես ած իմ:
Մի 'ի բացեայ առնիր յի- 12
նէն՝ զի նեղութիւնք մերձեալ
են. եւ ոչ ոք է՝ որ օգնէ ինձ.
Շուրջ եղեն զինեւ զուա- 13
րակք

րակք բազումք. եւ ցուլք
գէրք պաշարեցին զիս։
14 Բացին 'ի վերայ իմ զբե-
րանս իւրեանց, ո՟պ առիւծ՝
զի մռնչէ եւ յափշտակէ։
15 Ես որպէս ջուր հեղայ՝ եւ
ցրուեցան ա՟մ ոսկերք իմ.
եւ եղեւ սիրտ իմ ո՟պ մոմ հա-
լեալ 'ի մէջ որովայնի իմոյ։
16 Չորացաւ որպէս խեցւոյ զօ-
րութիւն իմ. լեզու իմ 'ի քիմս
իմ կցեցաւ. եւ 'ի հող մա-
հու իջուցին զիս։
17 Շուրջ եղեն զինեւ շունք բա-
զումք. եւ ժողովք չարաց
պաշարեցին զիս։
18 Ծակեցին զձեռս իմ՝ եւ զոտս
իմ. եւ թուեցին զամենայն
ոսկերս իմ. նոքա հայեցան
եւ տեսին զիս։
19 Բաժանեցան զհանդերձս իմ
'ի մէջ իւրեանց. եւ 'ի վ՟ր
պատմուճանի իմոյ վիճակս
ար-

արկանէին:

20 Դու տ՟ր մի հեռի առներ
զօգնութ՟ն քո յինէն. և տ՟ր
յօգնել ինձ նայեաց:
21 Փրկեա՛ 'ի սրոյ զանձն իմ,
և 'ի ձեռաց շանց՝ զմիամօ֊
րութ՟ն իմ:
22 Փրկեա՛ զիս 'ի բերանոյ ա֊
ռիւծու, յեղջերէ միեղջե֊
րոյ զխոնարհութիւն իմ:
23 Պատմեցից զանուն քո եղ֊
բարց իմոց. 'ի մէջ եկեղեց֊
ւոյ օրհնեցից զքեզ:
24 Երկիւղածք տ՟ն օրհնեցէք զտ՟ր'
ա՟մ զաւակն յակովբեան փա֊
ռաւոր արասցեն զնա:
25 Երկիցէ 'ի տ՟նէ ա՟մ զաւակն
իսրայէլի, զի ոչ արհամար֊
հեաց՝ և ոչ անարգեաց տ՟ր
զաղօթս աղքատիս, և ոչ
դարձոյց զերեսս իւր յինէն.
այլ 'ի կարդալ իմում առ
նա՝ լուաւ ինձ:

'Ի

26 'Ի քէն է գովուն իմ, յեկե֊
ղեցիս մեծս օրհնեցից զքեզ:
27 Զուխտս իմ կատարեցից ա֊
ռաջի տն երկիւղածաց նր:
28 Կերիցեն տնանկք` և յագե֊
սցին. օրհնեսցեն զտր` որ
խնդրեն զնա:
29 Կեցցեն սիրտք նոցա յաւի֊
տեանս յաւիտենից. յիշե֊
սցեն, և դարձցին առ տր
ամենայն ծագք երկրի:
30 Երկիր պագցեն նմա ամ
տոհմք ազանց. զի տն է ար֊
քայութիւն, և նա տիրէ 'ի
վր ամենայն հեթանոսաց:
31 Կերան և երկիրպագին նմա
ամ պարարտք երկրի. առա֊
ջի նր անկցին ամենեքեան`
որ իջանեն 'ի հող:
32 Անձն իմ նովաւ կեայ. և
զաւակ իմ ծառայեսցէ նմ,
33 Պատմեսցի տն ազգ` որ գա֊
լոցն է. պատմեսցեն զարդա֊

րութն նր ժողովրդեան , որ
ծնանելոցն է՝ զոր արար Տր ։

## ՍԱՂՄՈՍ. ԻԲ ։

'Ի կատարած . սաղմոս 1
'Ի Դաւիթ ։

Տր հովուեսցէ զիս . և ինձ 2
ինչ ոչ պակասեսցի ։
'Ի վայրի դալարւոջ՝ անդ 3
բնակեցոյց զիս . և առ ջուրս
հանգստեան սնոյց զիս ։
Դարձոյց զանձն իմ առ իս . 4
և առաջնորդեաց ինձ 'ի շա֊
ւիղս արդարութե վն
անուան իւրոյ ։
Թէպէտ և գնայցեմ ես 'ի 5
մէջ ստուերաց մահու , ոչ
երկեայց 'ի չարէ , զի դու
Տր ընդ իս ես ։
Ցուպ քո և գաւազան՝ նո֊ 6
քա մխիթարեսցեն զիս ։
Պատրաստ արարեր առաջի 7
իմ սեղան՝ ակն յանդիման
նեղ֊

նեղչաց իմոց :

8 Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս :

9 Ողորմութի քո որ զհետ իմ եկեսցէ՝ զամ աւուրս կենաց իմոց. բնակել ինձ ՚ի տան տն ը երկայն աւուրս :

## ՍԱՂՄՈՍ. ԻԳ. :

1 Սաղմոս ՚ի դաւիթ. միաշաբաթուոյն :

2 Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ՝ և ամ բնակիչք նորա :

3 Նա ինքն ՚ի վր ծովու հիմունս արկ նմա. ՚ի վերայ գետոց պատրաստեաց զնա :

4 Ո՞վ ելցէ ՚ի լեառն տն. կմ ով կացցէ ՚ի տեղւոջ սրբութե նորա :

5 Որ սբ է ձեռօք և սրբին սրտիւ, որ ոչ էառ զնան-

րու

րուն յանձն իւր՝ և ոչ երդ֊
ուաւ նենգութ՟ ընկերի իւ֊
րում:
Սա առցէ զօրհնութ՟ 'ի տ՟նէ, 6
զողորմութիւն յա՟յ փրկչէ
իւրմէ:
Այս ազգ է՝ որ խնդրէ 7
զտէր. խնդրէ տեսանել զե֊
րեսս ա՟յ յակոբայ:
Համբարձէք իշխանք ըզ֊ 8
դրունս ձեր 'ի վեր. համ֊
բարձցին դրունք յաւիտե֊
նից և մտցէ թագաւոր փա֊
ռաց:
Ո՞վ է սա թագաւոր փա֊ 9
ռաց. տէր հզօր զօրութ՟ իւ֊
րով. տէր հզօր 'ի պատե֊
րազմի:
Համբարձէք իշխանք ըզ֊ 10
դրունս ձեր 'ի վեր. համ֊
բարձցին դրունք յաւիտե֊
նից, և մտցէ թագաւոր փա֊
ռաց:

Ո՞վ

11 Ո՞վ է սա Թագաւոր փա֊
ռաց. տէր զօրութեանց՝ սա
ինքն է Թագաւոր փառաց։

## ՍԱՂՄՈՍ. ԻԴ.

1 'Ի կատարած. սաղմոս
'ի Դաւիթ։

2 Առ քեզ տէր համբարձի
զանձն իմ. ած իմ 'ի
քեզ յուսացայ, մի՛ ամաչե֊
ցից. և մի՛ ծիծաղեսցին զի֊
նեւ թշնամիք իմ։
3 Ամենեքեան որ համբերեն
քեզ՝ մի՛ ամաչեսցեն. այլ
ամաչեսցեն անօրէնք յու֊
նայնութեան իւրեանց։
4 Զճանապարհս քո տէր ցո՛յց
ինձ, և զշաւիղս քո ուսո՛ ինձ։
5 Առաջնորդեա՛ ինձ 'ի ճշմար֊
տութիւն քում և ուսո զիս, զի
դու ես ած փրկիչ իմ. և ես
քեզ համբերի զօրհանապազ։
6 Յիշեա՛ տէր՝ զգթութիւնս քո.
և

և զողորմութիւնս քո՝ որ են
յաւիտենից:
Զմեղս մանկութե՟ն իմոյ՝ և 7
զանգիտութե՟ն իմոյ՝ մի յի-
շեր. այլ յիշեա՛ զիս Տ՟ր ը՟ս
ողորմութե՟ն քում՝ վ՟ն քաղց-
րութե՟ն քոյ. զի քաղցր և ու-
ղիղ ես:
Վ՟ն այսորիկ օրէնսդէտ առ- 8
նես զմեղաւորս ՚ի ճանա-
պարհի. առաջնորդես հե-
զս ՚ի դատաստանի. և ու-
սուցանես հեզոց զճանա-
պարհս քո.
Ամենայն ճանապարհք Տ՟ն 9
ողորմութ՟ի և ճշմարտութ՟ի
են այնոցիկ, որ խնդրեն
զուխտ՝ և զվկայութ՟ն նորա:
Վ՟ն անուան քոյ տէր քաւեա՛ 10
զմեղս իմ, զի բազում եղեն.
Ո՞վ է մարդ որ երկնչի ՚ի
տեառնէ. օրէնսդէտ առնէ
զնա ՚ի ճանապարհի՝ յոր և
հա-

հաճեցաւ:

11 Անձն նորա 'ի բարութեան հան-
գիցէ. և զաւակ նորա ժա-
ռանգեսցէ զերկիր:
12 Զօրութիւն է տէր երկիւղա-
ծաց իւրոց. և զկտակարանս
իւր ուսուսցանէ նց:
13 Աչք իմ յա̃մ ժամ առ տէր.
և նա հանէ յորոգայթէ զոտս
իմ:
14 Նայեաց առ իս՝ և ողորմեաց
ինձ. զի միամօր և աղքատ
եմ ես:
15 Նեղութիւնք սրտի իմոյ բա-
զում եղեն յոյժ. և 'ի վշտաց
իմոց հան զիս:
16 Տես զխոնարհութիւն իմ և
զվաստակ իմ. և թող ինձ
զա̃մ զմեղս իմ:
17 Տես զթշնամիսն իմ, զի բա-
զում եղեն, ատելութ՝ զոր
'ի նանիր ատեցին զիս:
18 Պահեա զանձն իմ՝ և փր-

կեա

կեա զիս. զի մի՛ յամօթ ե-
ղէց՝ զի յուսացայ ՚ի քեզ:
Ամբիծք և ուղիղք կցորդ- 19
եղեն ինձ. և ես քեզ համ-
բերի. փրկեա ա՟ծ զիսրայէլ
յամենայն նեղութեանց ն՟ր:

## ՍԱՂՄՈՍ. ԻԵ:

'Ի կատարած. սաղմոս 1
'Ի Դաւթի:

Դատ արա ինձ տէր՝ զի ես 2
յամբծութեան իմում գնացի,
՚ի տէր յուսացայ՝ զի մի՛ ե-
ղէց հիւանդ:
Փորձեա զիս տէր և քննեա 3
զիս. փորձեա զերիկամունս
իմ և զսիրտ իմ:
Ողորմութիւն քո ա՟ռ առաջի 4
աչաց իմոց. և հաճոյ եղէց
ճշմարտութեան քում:
Ո՛չ նստայց ես յաթոռս նան-5
րաց. և ը՟ա անօրէնս ես ո՛չ
մտից:

6 Ատեցի ես զժողովս չարաց,
և ընդ ամբարիշտս ես ոչ
նստայց ։
7 Լուացայց սրբութ̅ե զձեռս
իմ. և շուրջ եկեց զսեղա-
նովդ քո Տ̅ր ։
8 Լսել ինձ զձայն օրհնութ̅ե
քո, և պատմել զա̅մ սքան-
չելիս քո։
9 Տ̅ր սիրեցի զվայելչութ̅ի տան
քո, և զտեղի յարկի փա-
ռաց քոց ։
10 Մի՛ կորուսաներ ը̅ ամպա-
րիշտս զանձն իմ. և մի՛ ընդ
արս արիւնահեղ զկեանս իմ։
11 Որոց ձեռք իւրեանց յանօ-
րէնութ̅ե են. և աջ նոցա լի
է կաշառօք ։
12 Ես յամբծութ̅ե իմում գնա-
ցի. փրկեա՛ զիս Տ̅ր և ողոր-
մեա՛ ինձ ։
13 Ոտն իմ կացցէ յուղղութ̅ե. յե-
կեղեցիս մ̅ծս օրհնեցից զքեզ։
ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ԻԶ.

Սաղմոս ՚ի դաւիթ. մինչև 1
օծեալ էր:

Տէր լոյս իմ և կեանք իմ՝ 2
ես յումմէ՞ երկեայց. տէր ա-
պաւէն կենաց իմոց՝ ես յում-
մէ՞ դողացայց:
՚Ի մերձենալ առ իս չարաց 3
ուտել զմարմին իմ. նեղիչք
իմ և թշնամիք իմ, նոքա
տկարացան և անկան:
Թէ պատրաստեսցի ՚ի վր 4
իմ պատերազմ, ոչ երկիցէ
սիրտ իմ. թէ յարիցէ ՚ի վր
իմ Ճակատամարտ, սակայն
և այսուէիկ ՚ի քեզ տր յու-
սացայց:
Զմի խնդրեցի ՚ի տնէ, և 5
զնոյն աղաչեմ. բնակել ինձ
՚ի տան տն զամ աւուրս կե-
նաց իմոց:
Տեսանել ինձ զվայելչութի 6
տն,

տն̃, և հրաման տալ 'ի տա-
ճարի նորա:

7 Ծածկեաց զիս 'ի խորանի
իւրում յաւուր չարի. ընդ
յարկաւ արար զիս 'ի ծած-
կոյթ խորանի իւրում:

8 'Ի վիմէ բարձր արարեր զիս.
և այժմ բա՛րձր արա զգլուխ
իմ 'ի վերայ թշնամեաց իմոց:

9 Շուրջ եղէց՝ և մատուցից
'ի խորանի նորա պատարագ
օրհնութեան. օրհնեցից և
սաղմոս ասացից տն̃:

10 Լո՛ւր տր̃ ձայնի իմում, զի
կարդացի առ քեզ. ողորմեա՛
ինձ և լո՛ւր ինձ, զի քեզ ա-
սաց սիրտ իմ. և խնդրեցին
երեսք իմ, զերեսս քո տր̃
խնդրեցին:

11 Մի դարձուցաներ զերեսս
քո յինէն. և մի խոտորիր
բարկութեամբ 'ի ծառայէ
քումմէ:

Օգ-

Օգնական իմ լե́ր տ̄ր՝ և մի 12
անարգեր զիս, և մի թողուր
զիս ա̄ծ փրկիչ իմ։
Հայր իմ և մայր իմ թողին 13
զիս. և տ̄ր իմ ընկալաւ զիս։
Օրէնսդրեա́ արա զիս տ̄ր 'ի 14
ճանապարհի քում. և ա-
ռաջնորդեա́ ինձ 'ի շաւիղս
քո ուղիղս։
Վասն թշնամեաց իմոց, մի 15
մատներ զիս 'ի ձեռս նեղ-
չաց իմոց։
Յարեան 'ի վերայ իմ վկայք 16
մեղաց. և ստեցին ինձ յա-
նօրէնութե̄ իւրեանց։
Հաւատացի տեսանել զբա- 17
րութի̄ տ̄ն՝ յերկրին կենդա-
նեաց, համբե́ր տ̄ն և քաջա-
լերեա́ց. զօրասցի սիրտ քո
և համբե́ր տ̄ն։

# ՍԱՂՄՈՍ. ԻԷ.

Սաղմոս 'ի Դաւիթ:

1 Առ քեզ Տ՟ր կարդացի Ա՟ծ
իմ, մի լռեր յինէն, նմա-
նիցեմ այնոցիկ՝ որ իջանեն
'ի գուբ:
2 Լուր Տ՟ր ձայնի խնդրուա-
ծաց իմոց՝ յաղաչել ինձ առ
քեզ. 'ի համբառնալ ձեռաց
իմոց 'ի տաճար սուրբ քո:
3 Մի համարիր ընդ ամպա-
րիշտս զանձն իմ. եւ մի ընդ
այնոսիկ՝ որ գործեն զանօ-
րէնութիւն, կորուսաներ զիս:
4 Ոյք խօսէին զխաղաղութիւն
ը՟ ընկերս իւրեանց. եւ չա-
րութիւն է 'ի սիրտս ն՟ց:
5 Տուր ն՟ց Տ՟ր ը՟ս գործս ն՟ց.
ըստ անօրէնութեն գնացից
ն՟ց, հատո ն՟ց:
6 Ըստ գործոց ձեռաց նոցա
հատո ն՟ց՝ զհատուցումն նո-
ցա

ցա նոցին:

Ո՛չ խմացան նոքա զգործս 7
տն. և ո՛չ 'ի գործս ձեռաց
նր հայեցան. կործանեցես
զնոսա, և այլ մի՛ շինեսցին:
Օրհնեալ է տր՝ զի լուա՛ւ 8
ձայնի աղօթից իմոց. տր օգ-
նական իմ և պաշտպան իմ:
'Ի նա յուսացաւ սիրտ իմ. 9
օգնեցաւ և զուարճացաւ
մարմին իմ. և ես կամօք ի-
մովք խոստովան եղէց նմա:
Տէր զօրութն ժողովրդեան 10
իւրոյ, ապաւէն փրկութն
օծելոյ իւրոյ:
Փրկեա՛ զժողովուրդ քո. և 11
օրհնեա՛ զժառանգութն քո.
հովուեա՛ և բարձրացո՛ զնոսա
մինչև յաւիտեան:

## ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ԻԸ։

1 Սաղմոս ՚ի Դաւիթ. օրհնութ՟եց
նաւակատեաց տաճարին։

2 Մատուցէք տ՟ն՝ որդիք ա՟յ.
մատուցէք տ՟ն զորդիս խոյոց։
3 Մատուցէք տ՟ն զփառս և
զպատիւ. մատուցէք տ՟ն զփառս անուան նորա. և եր-
կիր պագէք տ՟ն ՚ի սրահս սրբու-
թ՟ե նորա։
4 Ձայն տ՟ն ՚ի վերայ ջուրց՝
և ա՟ծ փառաց որոտաց. և
տէր ինքն ՚ի վերայ ջուրց
բազմաց։
5 Ձայն տ՟ն զօրութեամբ, և
ձայն տ՟ն մեծ վայելչութեամբ։
6 Ձայն տ՟ն փշրէ զմայրս, և
մանրէ տէր զմայրսն Լիբա-
նանու։
7 Մանրեսցէ զն՟ս որպէս մա-
տաղատունկն Լիբանանու. որ
սիրելին է որպէս զորդիս
միեղջ-

մեղջերոյ։

Զայն տն հատանէ զբոց 'ի 8
հրոյ․ ձայն տն շարժէ զա-
նապատն, և խռովեցուցա-
նէ տր զանապատն կադէս։
Զայն տն հաստատէ զեղջե- 9
րուս․ և յայտնի առնէ զան-
տառս։
'ի տաճարի նորա ամենայն 10
որ ասեն զփառս նորա։
Տր զջրհեղեղս նստուցանէ և 11
ցածուցանէ․ թագաւորեսցէ
տէր յաւիտեան։
Տէր զօրութիւն ժողովրդեան 12
իւրոյ տացէ․ և օրհնեսցէ
զժողովուրդ իւր 'ի խաղա-
ղութիւն։

## ՍԱՂՄՈՍ․ ԻԹ։

Սաղմոս օրհնութեաց նաւակատեաց 1
տաճարին 'ի դաւիթ։

Բարձր առնեմ զքեզ տէր, 2
զի ընկալար զիս․ և ոչ ու-
րախ

րախ արարեր զթշնամին իմ
յիս։
3 Տէր ած իմ՝ կարդացի առ
քեզ, և բժշկեցեր զիս. տր
հաներ 'ի դժոխոց զանձն իմ.
փրկեցեր զիս յայնցանէ, որ
իջանեն 'ի գուբ։
4 Սաղմոս ասացէք տն սրբք նո-
րա. խոստովան եղերուք յի-
շատակի սրբութե նորա։
5 Սրտմտութին է 'ի բարկութե
նորա. և կեանք են 'ի կա-
մաց նորա։
6 Ընդ երեկոյս հանգիցեն լա-
լիք. առաւօտու եղիցի ու-
րախութիւն։
7 Ես ասացի 'ի բարեկենդա-
նութե իմում, թէ ոչ սա-
սանեցայց յաւիտեան։
8 Տէր 'ի կամս քո ետուր գե-
ղոյ իմոյ զօրութիւն, դար-
ձուցեր զերեսս քո յինէն՝ և
ես եղէ խռովեալ։

Առ քեզ տ̅ր կարդացի, և ց
առ ա̅ծ իմ աղաչեցի․ զի՞նչ
օգուտ է քեզ յարենէ իմմէ,
թէ իջանեմ ես յապակա-
նութիւն:

Միթէ հող խոստովան ա- 1
նիցի առ քեզ․ կամ պատմես-
ցէ զճշմարտութիւնս քո:

Լուաւ ինձ տ̅ր՝ և ողորմե- 1
ցաւ և տ̅ր եղև ինձ օգնա-
կան:

Դարձոյց զսուգ իմ յուրա- 1
խութի̅, զերծ յինէն զքուրձ․
և ինձ զգեցոյց զուրախութի̅:

Որպէս սաղմոս ասասցեն 1
քեզ փառք իմ․ և այլ մի ևս
զղջացայց․ տ̅ր ա̅ծ իմ յաւի-
տեան խոստովան եղէց քեզ:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. Լ:

1 'Ի կատարած. Նահապաշտութեան
Գողութէ. սաղմոս 'ի դաւթի:

2 'Ի քեզ տր̅ յուսացայ, մի
ամաչեցից յաւիտեան.
յարդարութե̅ քում փրկեա
զիս՝ և ապրեցո զիս:
3 Խոնարհեցո առ իս զունկն
քո. վաղվաղեա կեցուցա-
նել զիս:
4 Լեր ինձ ած̅ պաշտպան՝ և
տուն ապաւինի ապրեցու-
ցանել զիս. զի հզօրիչ իմ և
ապաւէն իմ դու ես:
5 Վասն անուան քոյ տր̅ ա-
ռաջնորդեցեր ինձ, և սնու-
ցեր զիս. և հանցես զիս յո-
րոգայթէ յայսմանէ, որ թա-
գուցան ինձ:
6 Դու ես պաշտպան իմ տր̅.
և 'ի ձեռս քո յանձն առ-
նեմ զհոգի իմ:

Փրկե-

Փրկեցեր զիս տր̅ ա̅ծ ճշմար- 7
տութե̅ քով. ատեցեր զայ-
նոսիկ որ պահէին զերկիւղ
՚ի սնոտիս:

Ես ՚ի տր̅ յուսացայ, ցնծա- 8
ցայց և ուրախ եղէց ՚ի փըր-
կութե̅ քում:

Հայեցար ՚ի խոնարհութիւն 9
իմ. և փրկեցեր ՚ի վշտաց
զանձն իմ. և ո՛չ մատնեցեր
զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց.
և կացուցեր յանդորրու-
զոտս իմ:

Ողորմեա ինձ տր̅, զի նե- 10
ղեալ եմ ես. խռովեցաւ ՚ի
սրտմտութե̅ ակն իմ՝ անձն
իմ և փոր իմ:

Պակասեցան ՚ի ցաւոց կեանք 11
իմ. և ամք իմ յոգւոց եղա-
նելոյ:

Աղքատացաւ ՚ի տկարութե̅ 12
զօրութիւն իմ. և ոսկերք իմ
խռովեցան:

13 Քան զամ թշնամիս իմ եղէ
ես նախատ դրացեաց իմոց,
յոյժ ահ և երկեղ ծանօ-
թից իմոց:
14 Ամենեքեան որք տեսանէին
զիս, արտաքս փախչէին յի-
նէն:
15 Մոռացեալ եղէ ես ոպ̃ մե-
ռեալ 'ի սրտէ. և եղէ ոպ̃
զանօթ կորուսեալ:
16 Զի լուայ ես զբամբասանս
բազմաց՝ որ շուրջ էին զինև.
'ի ժողովել նոցա 'ի միասին,
առնուլ զանձն իմ խորհե-
ցան. այլ ես 'ի քեզ տր̃ յու-
սացայ:
17 Ասացի դու ես ած̃ իմ. և
'ի ձեռս քո է ժառանգու-
թիւն իմ:
18 Փրկեա՛ զիս 'ի ձեռաց թշնա-
մեաց իմոց, և 'ի հալածչաց
իմոց:
19 Երևեցո՛ զերեսս քո 'ի ծա-

ռայս

ռայս քո. ապրեցո զիս տէր
ըստ ողորմութեան քում. տէր
մի յամօթ եղէց, զի կար-
դացի առ քեզ:

Ամաչեսցեն ամպարիշտք, և 20
իջցեն 'ի դժոխս. և համր
եղիցին շրթունք նենգա-
ւորք, որք խօսէին զարդա-
րոյ զանիրաւութիւն, յամբար-
տաւանել և յանարգանել իւ-
րեանց:

Որպէս զի բազում է ողոր- 21
մութիւն քաղցրութեան քո
տէր. զոր պահեցեր երկիւղա-
ծաց քոց:

Արարեր դու այնոցիկ, որք 22
յուսացեալ են 'ի քեզ. ա-
ռաջի որդւոց մարդկան:

Ամրացուցեր զնոսա 'ի ծած- 23
կոյթ երեսաց քոց 'ի խռո-
վութենէ մարդկան:

Ծածկեցեր զնոսա 'ի խորանի 24
քում, 'ի հակառակութենէ
լեզ-

լեզուաց:
25 Օրհնեալ է տ̅ր, զի սքան-
չելիս արար, զողորմութիւն
իւր 'ի քաղաք ամուր:
26 Ես ասացի 'ի զարմանալ ի-
մում, թէ ընկեցայ ուրեմն
յերեսաց աչաց քոց:
27 Վասն այսորիկ լուար ձայ-
նի աղօթից իմոց. յաղաղա-
կել իմում առ քեզ:
28 Սիրեցէք զտ̅ր ա̅մ ս̅րք ն̅ր,
զի ստուգութ̅ն խնդրէ տ̅ր.
և հատուցանէ այնոցիկ, որ
առաւել առնեն զամբար-
տաւանութ̅ն:
29 Քաջալերեցարուք՝ և զօ-
րասցին սիրտք ձեր, ամենե-
քեան՝ որք յուսացեալ էք
'ի տէր:

## ՍԱՂՄՈՍ. ԼԱ:

1 Իմաստութ̅ն 'ի Դաւիթ:

2 Երանի՛, ում թողութ̅ն եղև

ան-

մեղաց. և ծածկեցան ա̃մ
յանցանք ն̃ր :
Երանի՛ առն՝ որում ոչ հա- 3
մարեսցի տ̃ր զմեղս նորա. և
ո՛չ գոյ նենգութի̃ ՚ի բերան
նորա :
Լռեցի ես՝ և մաշեցան ա̃մ 4
ոսկերք իմ, առ աղաղակել
ինձ առ տ̃ր զօրհանապազ ՚ի
տուէ և գիշերի :
Ծանրացաւ ձեռն քո ՚ի վ̃ր 5
իմ. դարձայ ՚ի թշուառութի̃,
զի հարան յիս փուշք :
Զմեղս իմ ցուցից քեզ, և 6
զանօրէնութիս իմ ոչ ծած-
կեցից ՚ի քէն :
Ասացի՝ թէ պատմեցից ին- 7
ձէն զմեղս իմ. և դու թող-
ցես զա̃մ ամբարշտութիս մե-
ղաց իմոց :
Վ̃ն այսորիկ յաղօթս կաց- 8
ցեն առ քեզ ա̃մ սուրբք, ՚ի
ժամ ընդունելի :

Բայց

9 Բայց միայն 'ի ջուրցն հե-
ղեղաց բազմաց. որ առ նմ̃
ինչ ոչ մերձեսցի:
10 Դու ես ապաւէն իմ 'ի նե-
ղութենէ յայսմանէ, որ շուրջ
եղեն զինև:
11 Ցնծութիւն իմ, փրկեա զիս
յայնցանէ՝ որ պաշարեցին
զիս:
12 Իմաստուն արարից զքեզ՝
և խելամուտ 'ի ճանապարհ,
յոր և գնասցես. և հաս-
տատեցից 'ի վերայ քո զաչս
իմ:
13 Մի լինիք ոպ̃ ձի և ջո-
րի. զի ոչ գոյ 'ի նս̃ իմաս-
տութիւն. 'ի սանձս և 'ի դան-
դանաւանդս ճմլեսցես զ-
կզակս նց̃, որ առ քեզ ինչ
ոչ մերձեսցին:
14 Բազում տանջանք են մե-
ղաւորաց. բայց որք յուսան
'ի տր̃՝ ողորմութիւն տն̃ շուրջ
եղի-

եղիցի զնովօք :
Ուրախ եղերուք և ցնծացէք 15
արդարք, 'ի տէր պարծեցա֊
րուք ամենեքեան՝ որք ուղիղ
էք սրտիւք :

## ՍԱՂՄՈՍ. ԼԲ:

Սաղմոս 'ի Դաւիթ :

Ցնծացէք արդարք 'ի տէր, 1
ուղղոց վայել է օրհնու֊
թիւն . խոստովան եղերուք
տն օրհնութբ . տասնաղեա֊
սաղմոսարանաւ սաղմոս ա֊
սացէք նմա :
Օրհնեցէք զնր յօրհնութին 2
նոր՝ զի բարի է . սաղմոս ա֊
սացէք նմա օրհնութբ :
Ուղիղ են պատգամք տն . 3
և ամ գործք նր հաւատովք
են . և սիրէ զողորմութին և
զիրաւունս տր :
Ողորմութբ տն լի եղև եր֊ 4
կիր, և բանիւ տն երկինք
հաս֊

հաստատեցան . և հոգւով
բերանոյ նր ամ զօրութիւնք
նոցա :
5 Ժողովեաց որպէս 'ի տիկս
զջուրս ծովու . և եդ 'ի
խորս զգանձս իւր :
6 Երկիցէ 'ի տնէ ամ երկիր .
և 'ի նմանէ դողասցեն ամ
բնակիչք աշխարհի :
7 Զի նա ասաց՝ և եղեն .
ինքն հրամայեաց՝ և հաս-
տատեցան :
8 Տր ցրուէ զխորհուրդս հե-
թանոսաց . անարգէ տր զխ-
խորհուրդս ժողովրդոց . և
արհամարհէ տր զխորհուրդս
իշխանաց :
9 Խորհուրդ տն յաւիտեան
մնայ , խորհուրդ սրտի նորա
ազգէ մինչև յազգ :
10 Երանի ազգի՝ որոյ տր իւր
օգնական է նմա . ժողովուրդ
զոր ընտրեաց 'ի ժառանգու-
թիւն

թիւն իւր։
Յերկնից նայեցաւ տր յամ 11
որդիս մարդկան 'ի պատ֊
րաստ բնակութէ իւրմէ հայե֊
ցաւ յամ բնակիչս աշխարհի։
Որ ստեղծ առանձին զսիրտս 12
նոցա, 'ի միտ առնու զամ
գործս նոցա։
Ո՛չ թէ 'ի բազում զօրս իւր 13
ապրեսցի թագաւոր, և ոչ
սկայ 'ի բազում զօրութե
իւրում։
Սուտ է ձի 'ի փրկութե իւ֊ 14
րում. 'ի բազում զօրութե
իւրում ոչ ապրեցուցանէ
զհեծեալն։
Աչք տն 'ի վերայ երկիւ֊ 15
ղածաց իւրոց. և որք յու֊
սան յողորմութի նր։
Փրկել 'ի մահուանէ զան֊ 16
ձինս նոցա. կերակրել զնս
'ի սովի։
Անձինք մեր համբերեսցեն 17
տն.

տն. զի օգնական և պաշտ-
պան մեր է:
18 'Ի նա ուրախ եղիցին սիրտք
մեր, և յանուն սբ նր յու-
սացուք:
19 Եղիցի ողորմութիւն քո տէր
'ի վերայ մեր. որպէս յու-
սացաք 'ի քեզ:

## ՍԱՂՄՈՍ. ԼԳ:

1 Սաղմոս 'ի Դաւիթ. 'ի ժամանա-
կի ուր այլագունեաց զերեսս իւր
առաջի աբիմելեքայ. և արձա-
կեաց զնա, և գնաց:
2 Օրհնեցից զտր յամ ժամ,
յամ ժամ օրհնութիւն նորա
'ի բերան իմ:
3 'Ի տր պարծեսցի անձն իմ.
լուիցեն հեզք, և ուրախ
եղիցին:
4 Մեծ արարէք զտր ինև. և
բարձր արասցուք զանուն նո-
րա 'ի միասին:

Խնդ-

Խնդրեցի ՚ի տ̃նէ և լուաւ 5
ինձ. յա̃մ նեղութ̃ե իմոց
փրկեաց զիս:
Մատի՛ք առ տէր՝ և առէ՛ք 6
զլոյս. և երեսք ձեր մի ա-
մաչեսցեն:
Այս աղքատ կարդաց առ 7
տ̃ր, և տ̃ր լուաւ սմա. յա̃մ
նեղութ̃է սորա փրկեաց զսա:
Բանակ հրեշտակաց տեառն 8
շուրջ է զերկիւղածովք ի-
րովք, և պահէ զնոսա:
Ճաշակեցէ՛ք և տեսէ՛ք, զի 9
քաղցր է տէր. երանեալ է
այր՝ որ յուսայ ՚ի նա:
Երկերո՛ւք ՚ի տ̃նէ ամենայն 10
սուրբք ն̃ր. զի ոչինչ է պա-
կասութ̃ի երկիւղածաց ն̃ր:
Մեծամեծք աղքատացան և 11
քաղցեան. բայց ոյք խնդ-
րեն զտէր, մի պակասեսցէ
՚ի նոցանէ ա̃մ բարութ̃ի:
Եկա՛յք որդեակք իմ՝ և 21
լուա՛-

լուարո՛ւք ինձ. և զերկիւղ
տն ուսուցից ձեզ:
13 Ո՞վ է մարդ՝ որ կամի ըզ-
կեանս, սիրէ զաւուրս իւր
տեսանել 'ի բարութեն:
14 Լռեցո՛ զլեզու քո 'ի չարու-
թէ. և շրթունք քո մի խօ-
սեսցին զնենգութիւն:
15 Խոտորեա՛ 'ի չարէ՝ և արա՛
զբարի. խնդրեա՛ զխաղա-
ղութի, և երթ զհետ նր:
16 Աչք տն 'ի վերայ արդա-
րոց, և ականջք նորա 'ի վե-
րայ աղօթից նոցա:
17 Երեսք տն 'ի վերայ չարա-
գործաց. սատակել յերկրէ
զյիշատակս նոցա:
18 Կարդացին արդարքն առ
տէր, և տէր լուաւ նց. յա
մենայն նեղութէ նց փըր-
կեաց զնոսա:
19 Մերձ է տէր առ այնոսիկ
որ մաշեալ են սրտիւք. և
զխո-

զխոնարհս հոգւով կեցու-
ցանէ ։
20 Բազում նեղութիւնք են ար-
դարոց ․ յամենայնէ փրկէ
զնոսա տէր ․ և պահէ զամե-
նայն ոսկերս նոցա ․ և մի 'ի
նոցանէ մի փշրեսցի ։
21 Մահ մեղաւորին չար է ․
բայց որ ատեայ զարդարն,
զղջասցի ։
22 Փրկէ տէր զանձինս ծառայից
իւրոց ․ մի զղջասցին ամենե-
քեան՝ ոյք յուսացեալ են
'ի նա ։

## ՍԱՂՄՈՍ․ ԼԴ։

1 'Ի չարչարանս ․ սաղմոս
'Ի Դաւիթ ։

2 Դատեա տէր զայնոսիկ՝
ոյք դատին զիս ․ մար-
տիր ընդ այնոսիկ, որ մար-
տնչին ընդ իս ։
3 Առ զզէն և զասպար քո ․
և

և արի յօգնել ինձ. Հան
զսուր քո ընդդէմ հալածչաց
իմոց, արգել զնոսա. և ասա
դու ցանձն իմ, թէ փրկու-
թիւն քո ես եմ։
4 Ամաչեսցեն և յամօթ լիցին՝
որք խնդրեն զանձն իմ.
դարձցին յետս և ամաչես-
ցեն, որ խորհէին ինձ չար։
5 Եղիցին նոքա որպէս փոշի
առաջի հողմոյ. և հրեշտակ
տ̃ն նեղեսցէ զնոսա։
6 Եղիցին ճանապարհք նոցա
՚ի խաւար և ՚ի գայթագ-
ղութիւն, և հրեշտակ տ̃յ
հալածեսցէ զնոսա։
7 ՚Ի նանիր թագուցին ինձ
որոգայթ յապականութեան
իւրեանց, և ՚ի նանիր նախա-
տեցին զանձն իմ։
8 Հասցէ ՚ի վերայ նոցա որո-
գայթ, զոր ոչ գիտասցեն. և
որս՝ զոր թագուցին, առցէ

զոտս նոցա. և յորոգայթ 'ի
նոյն անկցին:
Այլ անձն իմ ցնծասցէ 'ի 9
Տէր. ուրախ եղիցի 'ի փըր-
կութեն նորա, և ամենայն ոս-
կերք իմ ասասցեն, Տէր ո՞
նման է քեզ:
Զի փրկեաց զաղքատն 'ի 10
ձեռաց հզօրի, զաղքատն և
զտնանկն յայնցանէ՝ որ յա-
փըշտակէին զնա:
Յարեան 'ի վերայ իմ վկայք 11
չարեաց. զոր ինչ ոչ գիտէի՝
հարցանէին ցիս:
Հատուցին ինձ չար փոխա- 12
նակ ընդ բարւոյ. անժառան-
գել զանձն իմ խորհեցան
յորդւոց 'ի մարդկանէ:
Ես 'ի նեղել նոցա քուրձ ըզ- 13
գենուի, խոնարհ առնէի պա-
հօք զանձն իմ. և աղօթք իմ
'ի ծոց իմ դարձցին:
Որպէս զեղբայր և զընկեր՝ 14
այս-

այսպէս հաճոյ լինէի. որպէս
սգաւոր և տրտում, այնպէս
խոնարհ առնէի:
15 'Ի վերայ իմ ուրախ եղեն՝
և ժողովեցան. ժողովեցան
յիս տանջանք, և ես ոչ ծա-
նեայ. ցրուեցան, և ոչ զղ-
ջացան:
16 Փորձեցին զիս՝ և արհամար-
հեցին արհամարհանօք. կրճ-
տեցին 'ի վերայ իմ զատա-
մունս իւրեանց. տէր երբ
տեսցես:
17 'Ի բաց արա զանձն իմ 'ի
խորամանկութենէ նոցա, և յա-
ռիւծուց զմիամօրութիւն իմ:
18 Խոստովան եղէց քեզ տէր՝
յեկեղեցիս մեծս, և 'ի ժո-
ղովս բազմաց օրհնեցից զ-
քեզ:
19 Մի ուրախ եղիցին յիս թշ-
նամիք իմ, որք ատէին զիս
'ի տարապարտուց. ակնար-

կի առնէին յիս աչօք իւ-
րեանց ։
Ընդ իս զխաղաղութ̄ն խօ- 20
սէին. և ինքեանք բարկու-
թե̄ զնենգութիւն խորհէին։
Բացին 'ի վերայ իմ զբե- 21
րանս իւրեանց, և ասացին՝
այո՛ այո՛ տեսին աչք մեր։
Տեսեր տէր՝ և մի՛ լռեր. տէր՝ 22
մի 'ի բացեայ առնիր յինէն։
Զարթի՛ր և հայեա՛ց տէր՝ յի- 23
րաւունս իմ. ա̄ծ իմ և տէր
իմ 'ի դատաստանս իմ. և
իրա՛ւ արա ինձ ըստ արդա-
րութե̄ քում, տէր ա̄ծ իմ։
Մի՛ ուրախ եղիցին յիս թշ- 24
նամիք իմ. և մի՛ ասասցեն
'ի սիրտս իւրեանց, թէ վա՛շ
վա՛շ անձանց մերոց, զի ընկ-
լուզաք զնա ։
Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ 25
որք խնդային ընդ չար իմ.
զգեցցին զամօթ և զանար-
գանս՝

դանս՝ որք մեծաբանեն ՚ի
վերայ իմ։
26 Ցնծասցեն և ուրախ լիցին
՚ի քեզ ամենեքեան, որք կա-
մին ընդ արդարութիւն իմ։
27 Ասասցեն յամենայն ժամ,
մեծ է Տր. և որք կամին ըղ-
խաղաղութիւն ծառայի քո։
28 Լեզու իմ խօսեսցի զարդա-
րութիւնս քո. զօրհանապազ
զգովութիւնս քո։

## ՍԱՂՄՈՍ. ԼԵ։

1 ՚Ի կատարած, ծառայի Տն.
սաղմոս ՚ի Դաւիթ։
2 Ասէ անօրէնն ՚ի մեղանչել
ընդ միտս իւր, թէ չիք եր-
կիւղ Այ առաջի աչաց նր։
3 Նենգեաց առաջի նր, գտա-
նել զանօրէնութիւն, և ա-
տել զնա։
4 Բանք բերանոյ նորա՝ անօրէ-
նութիւն և նենգութիւն են։

Ո՛չ կամեցաւ նա իմանալ ըզ- 5
բարի. զանօրէնութիւն խոր-
հեցաւ յանկողնի իւրում:
Եկաց նա յամենայն ճանա- 6
պարհ, որ ո՛չ է բարի. և ՚ի
չարէ նա ո՛չ ձանձրացաւ:
Տէր՝ յերկինս է ողորմութի 7
քո ճշմարտութիւն քո մինչև
յամպս:
Արդարութիւն քո որպէս 8
լերինք ա͞ծ. իրաւունք քո որ-
պէս խորս բազում. զմար-
դիկ և զանասունս կեցուցա-
նես դու տէր:
Որպէս զի բազում արարեր 9
զողորմութիւն քո ա͞ծ. այլ
որդիք մարդկան ՚ի հովանի
թևոց քոց յուսասցին:
Արբեսցին նոքա ՚ի պարար- 10
տութ͞է տան քո. և զուխս
փափկութ͞ե քո տացես ըմ-
պել նոցա:
՚Ի քէն է աղբիւր կե- 11
նաց.

նաց · և լուսով երեսաց քոց
տեսանեմք զլոյս :
12 Ձգեա՛ զողորմութիւնս քո՛
որք ճանաչեն զքեզ, զար-
դարութիւնս քո՛ որ ուղիղ
են սրտիւք :
13 Մի՛ եկեսցէ 'ի վերայ մեր
ոտն ամբարտաւանից, և
ձեռք մեղաւորաց մի՛ դողա-
ցուսցեն զմեզ :
14 Անդ անկցին ամենեքեան՝
որք գործեն զանօրէնութի ·
մերժեսցին, և այլ մի՛ կարա-
սցեն հաստատիլ :

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

### ՄԵԾԻՆ ՄՈՎՍԷՍԻ ԱՍՏՈՒԱԾԱ-
### ՏԵՍԻՆ ՄԱՐԳԱՐԷԻՆ :

1 Նայեցարո՛ւք երկինք, և
խօսեցայց · լուիցէ երկիր ըզ-
պատգամս բերանոյ իմոյ :
Ըն-

Ընդունելի լիցի ող̅ անձրև 2
բարբառ իմ. և իջցէ որպէս
ցօղ պատգամք իմ:
Որպէս զանձրև 'ի վերայ սի- 3
զոյ, և որպէս տարափ 'ի վե-
րայ խոտոյ. զի զանուն տ̅ն
կարդացուք. և տուք օրհ-
նութիւն տ̅ն ա̅յ մերոյ:
Ա̅ծ՝ որոյ ճշմարտութ̅ե են 4
գործք նորա. և ամենայն ճա-
նապարհք ն̅ր իրաւամբք են:
Ա̅ծ հաւատարիմ է, և ոչ 5
գոյ 'ի նմա անիրաւութիւն.
արդար և ճշմարիտ է տէր:
Մեղան՝ և ոչ նմա՝ որդիքն 6
արատոյ. ծնունդք խոտո-
րեալք և թիւրեալք:
Ո՞չ այդ այն է՝ զոր տ̅ն հա- 7
տուցանէիք դուք՝ ժողո-
վուրդք յիմարք և ոչ իմաս-
տունք:
Ո՞չ սա ինքն է հայր քո, որ 8
ստացաւ զքեզ, արար զքեզ՝

և.

և ստեղծ զքեզ։

9 Յո՛ւշ լիցին քեզ աւուրքն
յաւիտենից․ իմացարո՛ւք
զամս ազգաց մինչև յազգս։

10 Հարցջիր դու ցհայր քո,
և պատմեսցեն քեզ․ ցծերս
քո՝ և ասասցեն քեզ։

11 ՚Ի ժամանակի՝ յորժամ բա-
ժանեաց բարձրեալն զազգս
ամենայն․ որպէս սփռեաց նա
զորդիսն ադամայ։

12 Կացոյց սահմանս հեթանո-
սաց, ըստ թուոյ հրեշտա-
կաց այ̃։

13 Եղև բաժին տ̃ն ժողովուրդ-
իւր յակոբ․ և վիճակ ժա-
ռանգութ̃ե իւրոյ իսրայէլ։

14 Բաւական եղև նմա յանա-
պատի․ ՚ի ծարաւ տօթոյ
յանջրդւոջ պաշտպանեաց
զնա։

15 Խրատեաց զնա, և պահեաց
որպէս բիբ ական․ որպէս

զար-

զարծու՛ի 'ի Թեւս իւր ընկա֊
լաւ զնա . և որպէս 'ի վերայ
ձագուց իւրոց գԹացաւ ։
Տարածեաց զԹեւս իւր, և 16
ընկալաւ զնա . և բարձեալ
բերէր զնա 'ի վերայ միջնո֊
ղանց իւրոց ։
Տէր միայն ածէր զնոսա . և 17
ոչ գոյր ը՟ նոսա աստուածս
օտարս ։
Ած եհան զնոսա 'ի զօրու֊ 18
Թիւնս երկրի . և կերակրեաց
զնոսա արդեամբք անդաս֊
տանաց ։
Դիեցոյց նոցա մեղր 'ի վիմէ, 19
և իւղ յապառաժ վիմէ ։
Իւղ կովուց՝ և կաԹն մա֊ 20
քեաց , Ճարպով հանդերձ
խոյոց որԹուց ցլուց և նո֊
խազաց ։
Զպարարտութիւն երիկա֊ 21
մանց ցորենոյ . և զարիւն
խաղողոյ արբ գինի ։

22 Եկեր յակոբ և յագեցաւ.
և անդուշեաց զսիրելին:
23 Գիրացաւ՝ ստուարացաւ՝
լայնացաւ, եթող զա̃ծ
զարարիչ իւր. և յետս եկաց
յա̃յ փրկչէ իւրմէ:
24 Բարկացուցին զիս օտարո-
տիւք իւրեանց և կռովք իւ-
րեանց դառնացուցին զիս:
25 Զոհեցին դիւաց՝ և ոչ ա̃յ.
դիցն՝ զորս ոչ գիտէին. նորք
և առժամեայք, զորս բնաւ
ոչ ճանաչէին հարք նոցա:
26 Թողին զտէր՝ որ ծնաւ զնո-
սա. մոռացան զա̃ծ՝ որ կե-
րակրեաց զնոսա:
27 Ետես տէր և նախանձեցաւ.
սրտմտեցաւ ՚ի վերայ ուս-
տերաց և դստերաց նոցա-
և ասէ:
28 Դարձուցից զերեսս իմ ՚ի
նոցանէ. և ցուցից նոցա զինչ
լինելոց իցէ յապայ ժամա-
նա-

նակի :

Զի ազգ մի թիւր են նոքա՝ 29
և որդիք անհաւանք. նոքա
նախանձեցուցին զիս՝ի չաստ-
ուածս իւրեանց, և դառ-
նացուցին զիս 'ի կուռս իւ-
րեանց :
Արդ՝ և ես նախանձեցու- 30
ցից զնոսա յազգ անպիտան.
և անմիտ ազգաւ զկծեցու-
ցից զնոսա :

## ՄԱՂԹԱՆՔ :

Տուք փառս ա̃յ, տուք օրհ-նութիւն մարդասիրին թագաւորին յաւիտենից, որ փրկ-կէ զծառայս իւր և կեցուցանէ : Մարդասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի. և վասն խաչի քո պատուականի, տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո́ զմեզ :

Քա-

Քարոզ և աղօթք՝ Երկինք պատ-մեն և Տէր ապաւէն կանոնացն:

Վասն 'ի գիշերի և 'ի տուըն-ջեան, և յամենայն ժամու խօ-սել մեզ զբան ճշն, զՏէր աղա-չեսցուք. Տէր ողորմեա:

Վասն չանկանելոյ մեզ 'ի փոր-ձութեն, որում ոչ կարեմք հան-դուրժել, զՏէր աղ:

Վասն ամբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին քսի, զՏէր աղաչ:

Վասն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստ կենացն անվախ-ճանից, զՏէր աղաչ:

Վասն արժանի լինելոյ մեզ վե-րին կոչմանն՝ և երկնից ար-քայութեն, զՏէր:

Վասն հոգւոյն: Եւ ևս միա-բան: Զանձինս: Ողորմեայ:

Աղօթք:

## Աղօթք :

'Ի գիշերի և 'ի տուընջեան և
յամ ժամու զքեզ աղաչեմք, և
'ի քէն խնդրեմք մարդասէր տէր:
Լո՛ւր մեզ ած փրկիչ մեր. խո-
նարհեցի ունկն քո 'ի խնդրը-
ուածս մեր. զի մի ունայն լի-
ցին վաստակք ծառայից քոց'
այլ համարեա՛ զաշխատութիւ
մեր 'ի գործ արդարութե՛, և
'ի պտուղ ածպաշտութե՛: Ըն-
կա՛լ տէր զաղօթս և զերկրպա-
գութիւս մեր, և հաստ մեզ զո-
ղորմութիւն քո առատապէս.
ծածկեա՛ զմեզ ընդ հովանեաւ
ամենազօր աջոյ քոյ. զօրացո՛
զմեզ տր՝ զօրութբ տր հոգւոյդ'
պահեա՛ զմեզ ոպ բիբ ական:
Տո՛ւր արա՛ առ մեզ նշան բարի'
'ի գովեստ և 'ի փառաբանութի
անուանդ քում սրբոյ: Զի 'ի
քո փառս կատարի ամ արա-

րա-

րածոց մշտնջենաւոր փառաբանութիւն 'ի բարձունս, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Հովիւ քաջ՝ հովիւ բարի՝ և յաւիտենական, նայեա՛ և այց արա բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ գթութեամբ քով: Զի քո առաջի կամք տէր, և առ 'ի քէն ողորմութեանց և գթութեանց ակն ունիմք: Զամենեսեան օրհնեա՛. զամենեսեան խնամատնացո՛. զամենեսեան լուսաւորեա՛. և ամենեցուն պարգևեա՛ զերկնից արքայութիւնդ: Վասն զի դու ես տէր կենաց, և ա̃ծ ողորմութեանց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ, ⌟

միշտ, և յաւիտեանս յաւիտե-
նից ։ Ամէն ։

Մաղթանք ։

Ի գիշերի և 'ի տունջեան՝ և յա՟մ ժամու անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍ՟ր Հոգին, այժմ և միշտ, և յաւիտեանս ։

Օրհնեալ տէր մեր յս՟. ք՟ս. ամէն ։
Հայր մեր որ ։

---



Ուրախացիր որբուհի զարմանալի ուն։

# ՍԱՂՄՈՍ. ԼԶ։

Սաղմոս ՚ի Դաւիթ։

1 ՄԻ՛ ՆԱԽԱՆՁԻՐ ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ՝ որ գործեն զանօրէնութիւն։
2 Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին. որպէս դալարի խոտոյ վաղվաղակի անցցեն։
3 Յուսա՛ ՚ի տէր՝ և արա՛ ըզքաղցրութիւն. բնակեա՛ յերկրի, և հովուեսցիս ՚ի մեծութեան նորա։
4 Փափկեա՛ ՚ի տէր, և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛ առաջի տեառն զճանապարհս քո, և յուսա՛ ՚ի նա։

Նա

Նա արասցէ և հանցէ որպէս 5
զլոյս զարդարութիւն քո. և
զիրաւունս քո որպէս զօր
հասարակ:

Հնազանդ լեր Տն՝ և ծա- 6
ռայեա՛ նմա. և մի՛ նախան-
ձիր ընդ այնոսիկ՝ որոց ո-
ւղեալ լինեն ճանապարհք
իւրեանց, ընդ մարդոյ՝ որ
գործէն զանօրէնութիւն:

Լռեա՛ 'ի բարկութէ, և համ- 7
գի՛ր 'ի սրտմտութէ, և մի՛
նախանձիր ընդ չարս:

Զի չարք վաղվաղակի սա- 8
տակեսցին. բայց որք համ-
բերեն Տն, նոքա ժառան-
գեսցեն զերկիր:

Փոքր մի՝ և այլ ո՛չ ևս իցէ 9
ամբարիշտն. խնդրեսցես ըզ-
տեղի նր, և ո՛չ գտցես:

Այլ որ հեզքն են՝ նոքա 10
ժառանգեսցեն զերկիր. և
փափկասցին 'ի բազում խա-

ղա-

զաղութն իւրեանց ։
11 Սպասէ մեղաւոր արդարոյ,
և կրճտէ ՚ի վերայ նր զա֊
տամունս իւր. այլ տէր ծի֊
ծաղեսցի զնովաւ ։
12 Քանզի յառաջագոյն տեսա֊
նէ. զի հասանալ է օր նր ։
13 Սուր հանին մեղաւորք, և լա֊
րեցին զաղեղունս իւրեանց՝
հարկանել զաղքատն և զտը֊
նանկն. սպանանել զայն՝ որ
խոնարհն է սրտիւ ։
14 Սուրք նց մտցեն ՚ի սիրտս
նց, և աղեղունք նց փշրեսցին ։
15 Լաւ է սակաւիկ ինչ արդա֊
րոյ, քան զբազում մեծութե
մեղաւորաց. և բազուկք ամ֊
պարշտաց խորտակեսցին ։
16 Հաստատէ տէր զարդարս,
և ճանաչէ զաւուրս ամբը֊
ծից, ժառանգութի նց յա֊
ւիտեան եղիցի ։

Մի

Մի՛ ամաչեսցեն նք 'ի ժա- 17
մանակս չարութե՛ն. այլ յա-
ւուրս սովոյ յագեսցին:
Ահա մեղաւորք կորիցեն. 18
այլ թշնամիք տեառն 'ի փա-
ռաւորել և 'ի բարձրանալ
իւրեանց՝ պակասեսցին որպ
ծուխ, զի պակասէ:
Փոխ առնու մեղաւորն՝ և 19
ոչ հատուցանէ. այլ որ ար-
դարն է՝ ողորմի և տայ:
Ոյք օրհնեն զտէր՝ ժառան- 20
գեսցեն զերկիր. և ոյք ա-
նիծանեն, սատակեսցին 'ի
նմանէ:
'Ի տեառնէ ուղղին գնացք 21
առն. զճանապարհս նր նա
կամի յոյժ:
Թէպէտ և գայթագղեսցի. 22
նա մի կործանեսցի. զի տէր
ձեռնկալու է նորա:
Մանուկ էի ես՝ և ծերա- 23
ցայ. և ոչ տեսի զարդարն

ար-

արհամարհեալ, և ոչ զաւակ
նո՛ր՝ թէ մուրանայ հաց:
24 Զօրհանապազ ողորմի և տայ
փոխ. զաւակ նորա օրհնեալ
եղիցի յաւիտեան:
25 Խոտորեա՛ ՚ի չարէ, և արա՛
զբարի. բնակեսցես յաւի-
տեանս յաւիտենից ՚ի նմա:
26 Տէր սիրէ զիրաւունս, և ոչ
ընդ վայր հարկանէ զսուրբս
իւր. այլ յաւիտեան պահէ
զնոսա:
27 Անօրէնք հալածեսցին՝ ՚ի միա-
սին. և զաւակ ամբարշտաց
սատակեսցի:
28 Այլ արդարք ժառանգես-
ցեն զերկիր. և բնակեսցեն
յաւիտեանս յաւիտենից ՚ի
նմա:
29 Բերան արդարոյ խորհի զի-
մաստութի՛ն, և լեզու նորա
խօսեսցի զիրաւունս:
30 Օրէնք այ՟ իւրոյ են ՚ի սրտի
իւ-

իւրում. և մի՛ գայթագղես-
ցին գնացք նորա:
Հայի մեղաւորն ը̅ արդար, 31
և խնդրէ սպանանել զնա.
այլ Տէր ոչ թողու զնա ՚ի
ձեռս նր̅, և ո՛չ դատապար-
տէ զնա՝ յորժամ դատի զնա:
Համբե՛ր տեառն՝ և պահեա՛ 32
զճանապարհս նր̅. և բարձր
արասցէ զքեզ ՚ի ժառան-
գել զերկիր, և զսատակումն
մեղաւորաց տեսցես:
Տեսի զամպարիշտն վերա- 33
ցեալ, և բարձրացեալ որ̅պս
զմայրսն լիբանանու:
Անցի՝ և ահա ոչ էր. խնդ- 34
րեցի՝ և ոչ գտաւ տեղի նր̅:
Պահեա՛ զամբծութիւն, և 35
տե՛ս զուղղութի̅. զի գոն մնաց-
ուա՛ծք այն խաղաղարարի:
Անօրէնք հալածեսցին՝ ՚ի միա- 36
սին. և զաւակ ամպարշտաց
կորիցէ:

Փրկ-

37 Փրկութիւն արդարոց ՚ի տեառնէ
է, վերակացու է նոցա ՚ի ժա-
մանակս նեղութեան:
38 Օգնեսցէ նոցա տէր՝ և փրկես-
ցէ զնոսա. ապրեցուսցէ ՚ի
մեղաւորաց՝ և կեցուսցէ զնոսա,
զի յուսացան ՚ի նա:

## ՍԱՂՄՈՍ. ԼԷ:

1 Սաղմոս ՚ի Դաւիթ. առ ՚ի յի-
շատակ շաբաթու:

2 Տէր մի սրտմտութեամբ քով
յանդիմաներ զիս. և մի
բարկութեամբ քով խրատեր զիս:
3 Զի նետք քո հարան յիս. և
յիս հաստատեցաւ ձեռն քո:
4 Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ
իմոյ յերեսաց բարկութեան քոյ.
5 Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց
իմոց. յերեսաց մեղաց իմոց:
6 Անօրէնութիւնք իմ բարձրա-
ցան քան զգլուխ իմ. որպէս
բեռն ծանր ծանրացան ՚ի

վե-

վէրայ իմ:
Նեխեցան և փտեցան վէրք 7
իմ, յերեսաց անզգամութե
իմոյ:
Ցաւալեցայ և խոնարհ եղէ 8
յոյժ, զօրհանապազ տըր-
տում գնայի, զի անձն իմ
լի եղև չարչարանօք. և ոչ
գոյ բժշկուն մարմնոյ իմոյ:
Չարչարեցայ և խոնարհ եղէ 9
մինչև յոյժ. մռնչէի առ հե-
ծութե սրտի իմոյ:
Տէր առաջի քո է ամ ցան- 10
կութն իմ. և հեծութն իմ
'ի քէն ոչ ծածկեցաւ:
Սիրտ իմ խռովեցաւ յիս, 11
և եթող զիս զօրութն իմ.
Լոյս աչաց իմոց, և այս ոչ
եղև ընդ իս:
Բարեկամք իմ և մերձաւորք 12
իմ առաջի իմ մերձեցան և
կացին. և մերձաւորք իմ
հեռի եղեն յինէն:
Բըռ-

13 Բռնադատէին զիս և խնդ-
րէին զանձն իմ. որք խոր-
հէին չար 'ի վերայ իմ, խօ-
սեցան զանօրէնութիւն, և
զնենգութիւն զօրհանապազ
խորհեցան:
14 Այլ ես որպէս խուլ՝ զի
ոչ լսէ. որպէս համր՝ որ ոչ
բանայ զբերան իւր:
15 Եղէ ես որպէս մարդ, որ
ոչ լսէ. և ոչ գոն խօսք 'ի
բերան նորա:
16 Ես 'ի քեզ տէր յուսացայ, և
դու լուիցես ինձ տէր ա͞ծ իմ:
17 Ասացի՝ թէ մի ուրախ եղի-
ցին յիս թշնամիք իմ. 'ի սա-
սանել ոտից իմոց՝ 'ի վերայ
իմ մեծամեծս խօսեցան:
18 Ես 'ի տանջանս պատրաստ
եմ. և ցաւք իմ առաջի իմ
են յա͞մ ժամ:
19 Զանօրէնութիւնս իմ պատ-
մեցից. և հոգացայց վասն

մեղաց իմոց:
Իսկ արդ՝ թշնամիք իմ կեն- 20
դանի են, և զօրացեալ են
քան զիս. և բազում էին,
որք ատէին զիս 'ի տարա-
պարտուց:
Որք հատուցին ինձ չար փո- 21
խանակ ընդ բարւոյ. չար
խօսէին զինէն, զի ես եր-
թայի զհետ արդարութե̃:
Մի թողուր զիս տէր ած̃ 22
իմ. և մի 'ի բացեայ առնիր
յինէն, հայեա՛ց յօգնել ինձ
տէր փրկութե̃ իմոյ:

## ՍԱՂՄՈՍ. ԼԸ:

'Ի կատարած. յիդիթովմայ օրհ- 1
նութի̃. 'ի դաւիթ սաղմոս:

Ասացի՝ թէ պահեցից զճա- 2
նապարհս իմ. զի մի մեղայց
լեզուաւ իմով:
Եդի պահապան բերանոյ ի- 3
մոյ՝ 'ի հակառակել մեղաւո-
րին

րին առաջի իմ:
4 Խուլ եղէ և խոնարհեցայ.
լռեցի 'ի բարուէ, և ցաւք
իմ նորոգեցան յիս:
5 Ջեռաւ սիրտ իմ 'ի փորի
իմում. և 'ի խորհուրդս իմ
վառեցաւ հուր:
6 Խօսեցայ լեզուաւ իմով և
ասացի. ցո՛յց ինձ տէր զկա-
տարած իմ, և զթիւ աւուրց
իմոց՝ քանի՞ն է, զի գիտա-
ցից թէ որչափ ինչ պակա-
սեալ է յինէն:
7 Ահա չափով եդիր զաւուրս
իմ. և կար զօրութեան իմոյ
որպէս ոչինչ է առաջի իմ.
սակայն ամենևին ընդունայն
է ա՛մ մարդ մնեալ:
8 Այսպէս որպէս 'ի պատկե-
րի շրջի մարդ, սակայն 'ի
զուր խռովի. գանձէ՝ և ո՛չ
գիտէ ու՛մ ժողովէ:
9 Իսկ արդ ո՞վ է համբերութն̃
իմ.

իմ, թէ ոչ դու տէր. կամ
կար զօրութեան իմոյ՝ թէ ոչ
՚ի քէն։
Յամենայն անօրէնութենէ իմմէ 10
փրկեսցես զիս. նախատինս
անզգամաց արարեր զիս։
Խուլ եղէ, և ո՛չ բացի զբե- 11
րան իմ, զի դու արարեր։
՚Ի բա՛ց արա յինէն զտան- 12
ջանս իմ. զի ՚ի զօրութենէ
ձեռին քո ես պակասեցայ։
Կշտամբութեամբ վասն մեղաց 13
խրատեցեր զմարդ, մաշե-
ցեր որպէս սարդոստայն
զանձն նորա. սակայն ըն-
դունայն է ամենայն մարդ։
Լո՛ւր տէր աղօթից իմոց. 14
ունկնդիր խնդրուածոց ի-
մոց, արտասուաց իմոց մի
լռեր։
Պանդուխտ եմ ես առաջի 15
քո, նժդեհ և անցաւոր որ-
պէս ամենայն հարք իմ։

Թոյլ

16 Թոյլ արա ինձ զի հան-
գեայց. մինչև երթեալ ի-
ցեմ, ուստի ոչ ևս դառնի-
ցիմ:

1 ## ՍԱՂՄՈՍ. ԼԹ:

'Ի կատարած. սաղմոս
'Ի Դաւիթ:

2 Համբերելով համբերի տ͞ն,
և նայեցաւ առ իս. և լուաւ
աղօթից իմոց:
3 Եհան զիս 'ի գբոյ տառա-
պանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ:
4 Հաստատեաց 'ի վերայ վիմի
զոտս իմ. և ուղղեաց զգ-
նացս իմ:
5 Արկ 'ի բերան իմ օրհնութ͞ն
նոր. զօրհնութ͞ն ա͞յ մերոյ:
6 Տեսցեն բազումք՝ և երկի-
ցեն, և յուսասցին 'ի տէր.
երանեալ է այր՝ որոյ անուն
տեառն յոյս է ն͞ր:
7 Ո՛չ հայեցաւ նա 'ի նանրու-
թիւն.

թիւն. և ո՛չ 'ի մոլութ̃ սուտ։
Բազում արարեր դու՝ տէր 8
ա̃ծ իմ զսքանչելիս քո. խոր-
հրդոց քոց՝ ո՛չ ոք է որ նմա՛ն
է քեզ։
Պատմեցի և խօսեցայ՝ և բա- 9
զում եղեն քան զթիւ. ընդ
զոհս և ընդ պատարագս ո՛չ
հաճեցար. լսելիս հաստա-
տեցեր ինձ. զողջակէզս և
զվասն մեղաց ո՛չ խնդրեցեր։
Յայնժամ ասացի՝ թէ ահա- 10
ւասիկ գամ ես. 'ի գլուխ
գրոց գրեալ է վասն իմ։
Առնել զկամս քո ա̃ծ իմ 11
կամեցայ, և զօրէնս քո 'ի
մէջ որովայնի իմոյ։
Աւետարանեցից զարդարու- 12
թիս քո յեկեղեցիս մեծս.
ահա շրթունս իմ ո՛չ արգե-
լից 'ի քէն։
Տ̃ր դու գիտացեր, զի զար- 13
դարութիւնս քո ոչ ծածկե-
ցի

ցի 'ի սրտի խմում. զճշմար-
տուն քո՝ և զփրկութն քո։
14 Ասացի՝ և ոչ թագուցի զո-
ղորմութիւնս քո. և զճշմար-
տութիւնս քո 'ի ժողովրդե-
նէ մեծէ։
15 Այլ դու տէր մի հեռի ա-
նէր զգթութիւնս քո յինէն.
զի ողորմութիւն քո, և ճըշ-
մարտութիւն քո յամենայն
ժամ ընկալցի զիս։
16 Շուրջ եղեն զինև չարք՝ ո-
րոց ոչ էր նց թիւ. հասին
ինձ անօրէնութիւնք իմ, և
ես ոչ կարացի տեսանել։
17 Բազում եղեն քան զհեր
գլխոյ իմոյ. և սիրտ իմ ե-
թող զիս։
18 Կամեաց տէր՝ փրկել զիս. և
տէր յօգնել ինձ նայեաց։
19 Ամաչեսցեն և յամօթ լի-
ցին, որք խնդրեն զանձն
իմ բառնալ զնա. դարձցին

յետս և ամաչեսցեն՝ որք
խորհէին ինձ չար:
Կրեսցեն զամօթ առ ժա- 20
մայն վաղվաղակի, որ ասէին
ինձ վա՜շ վա՜շ:
Ցնծասցեն և ուրախ լիցին 21
'ի քեզ ամենեքեան, որք
խնդրեն զքեզ տէր:
Ասասցեն յամ ժամ, մեծ է 22
ա̃ծ, և որք սիրեն զփրկու-
թիւնս քո:
Ես աղքատ և տնանկ եմ, 23
ա̃ծ խորհեա՛ զիս. օգնական
և պաշտպան իմ ես. և ա-
ա̃ծ մի յամենար:

## ՍԱՂՄՈՍ. Խ:

1 'Ի կատարած. սաղմոս
'ի Դաւիթ:

Երանի որ խորհի զաղ- 2
քատն և զտնանկն. յա-
ւուր չարի փրկէ զնա տէր: 3
Տէր փրկէ զնա և կեցուցա-
նէ.

նէ. Երանելի առնէ զնա ՚ի
վերայ երկրի. և ոչ մատնէ
զնա ՚ի ձեռս թշնամեաց իւ-
րոց:
4 Տր օգնական է նմա ՚ի մահ-
ճին ցաւոց իւրոց. զամ
անկողինս նր դարձուցանէ
՚ի հիւանդութե նորա:
5 Ես ասացի տէր ողորմեա
ինձ. բժշկեա զանձն իմ, ես
մեղայ քեզ:
6 Թշնամիք իմ ասացին ինձ
չար. Երբ իցէ՝ զի մեռցի,
և կորիցէ անուն նորա:
7 Մտանէր տեսանել զնան-
րութիւն. խօսէր ՚ի սրտի
իւրում. և ժողովէր զանօրէ-
նութիւնս յանձն իւր:
8 Արտաքս ելանէր և զնոյն
խօսէր. զինէն շշնջէին ամ
թշնամիք իմ:
9 Խորհեցան չար ՚ի վերայ իմ.
բան անօրէնութե եդին ՚ի
վե-

վերայ իմ։
Մի թէ որ ննջիցէն, և այլ 10
ոչ եւս յաւելուցու յառնել.
քանզի և այրն խաղաղութեան
իմոյ, յոր և ես յուսացայ։
Որ ուտէր զհաց իմ, յաճա- 11
խեաց առնել ինձ խաբէու-
թիւն։
Այլ դու տէր ողորմեա ինձ, 12
և կանգնեա զիս. և ես հա-
տուցից նոցա։
Յայսմ ծանեայ՝ թէ հաճե- 13
ցար ընդ իս. զի մի ուրախ
եղիցին յիս թշնամիք իմ։
Այլ զիս յամբծութեան իմում 14
ընկալար. և հաստատեցեր
զիս առաջի քո յաւիտեան։
Օրհնեալ տէր ած իսրայէլի 15
յաւիտենից յաւիտենից, և-
ղիցի եղիցի։

# ՍԱՂՄՈՍ. ԽԱ:

1 'Ի կատարած. իմաստութեն որդ-
ւոցն Կորխայ. սաղմոս
'ի Դաւթի:

2 Որպէս փափաքէ եղջերու-
աղբերս ջուրց, այնպէս փա-
փաքէ անձն իմ առ քեզ ած:
3 Ծարաւի է անձն իմ առ
քեզ ած, հզօր և կենդա-
նի. երբ եկից երևեցայց ե-
րեսացդ այ:
4 Եղեն ինձ արտասուք իմ
կերակուր 'ի տուէ և 'ի գի-
շերի. և այն զի ասէին ցիս
զօրհանապազ՝ թէ ուր է
ած քո:
5 Զայս որպէս յիշէի, տառա-
պէր յիս անձն իմ. քաջալե-
րէի զի մտից ընդ յարկա-
սքանչելեաց տանն այ:
6 'Ի ձայն ցնծութեն խոստո-
վանութեն, և 'ի ձայն բա-
րե-

ընկենդանութեն :

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես 7
անձն իմ, կամ ընդէ՞ր խռո-
վես զիս. յուսա՛ առ՛ ա՟ծ,
խոստովանեամ նմա՝ փրկիչ
երեսաց իմոց ա՟ծ է :

Անձն իմ յոյժ խռովեցաւ. 8
վասն այսորիկ յիշեցի զքեզ
յերկրէն յորդանանու, 'ի
հերմոնէ 'ի լեռնէ փոքունէ :
Խորք 'ի խորոց կարդայցին 9
առ քեզ, 'ի ձայն սահանաց
քոց :

Ամենայն զբօսանք քո, և 10
ալիք քո անցին 'ի վ՟ր իմ :
'Ի տուէ պատուէրեաց տէր 11
զողորմութիւն իւր, 'ի գիշե-
րի զօրհնութիւն նոր. և ա-
ղօթք իմ առ ա՟ծ վ՟ն կենաց
իմոց :

Ասացի ա՟յ՝ ընդունելի իմ 13
ես. ընդէ՞ր մերժեցեր զիս.
ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի
նե-

նեղել թշնամւոյ իմոյ:
13 'Ի փշրել ոսկերաց իմոց նա-
խատեցին զիս թշնամիք իմ.
յասել ցիս զօրհանապազ,
թէ ո՞ւր է ա̃ծ քո:
14 Արդ՝ ընդէ՞ր տրտում ես
անձն իմ, կամ ընդէ՞ր խռո-
վես զիս. յուսա՛ առ ա̃ծ,
խոստովանեա՛ նմա՝ փրկիչ
երեսաց իմոց ա̃ծ է:

## ՍԱՂՄՈՍ. ԽԲ:

Սաղմոս 'ի Դաւիթ:

1 Դատ արա ինձ ա̃ծ. և ի-
րաւ արա ինձ 'ի դատաստա-
նի իմում:
2 Յազգէ որ ոչ է սուրբ, 'ի
մարդոյ մեղաւորէ նենգաւո-
րէ փրկեա զիս:
3 Դու ա̃ծ հզօրիչ իմ ես. ըն-
դէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր
տրտում գնամ ես 'ի նեղել
թշնամւոյ իմոյ:

Առաքեա՛ տէր զլոյս քո և 4
զճշմարտութիւն քո. զի ա-
ռաջնորդեսցեն ինձ, և հան-
ցեն զիս 'ի լեառն նր. և 'ի
յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ այ 5
առ ած. որ ուրախ առնէ
զմանկութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ օրհ- 6
նութբ ած ած իմ:

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես 7
անձն իմ, կամ ընդէր խռո-
վես զիս. յուսա՛ առ ած,
խոստովանեսցուք նմա՝ փրկիչ
երեսաց իմոց ած է:

## ՍԱՂՄՈՍ. ԽԴ.

'Ի կատարած, իմաստութիւն որդ- 1
ւոցն կորխայ. սաղմոս 'ի
դաւիթ:

Ած ականջօք մերովք լու- 2
ուաք. զոր հարքն մեր
պատմեցին մեզ:

Զգործն

3 Զգործն՝ զոր գործեցեր յա-
ւուրս նոցա, յաւուրսն ա-
ռաջինս։
4 Ձեռն քո խլեաց զհեթա-
նոսս, և զնոսա տնկեցեր.
չարչարեցեր զժողովուրդս
քո, և հաներ զնոսա։
5 Ո՛չ թէ սրով իւրեանց ժա-
ռանգեցին զերկիր. և ո՛չ
բազուկ նոցա թէ փրկեաց
զնոսա։
6 Այլ աջ քո՝ և բազուկ քո՝
և լոյս երեսաց քոց. զի հա-
ճեցար դու ընդ նոսա։
7 Դու ինքն ես՝ թագաւոր
իմ և ա՟ծ իմ, որ հրամայե-
ցեր զփրկութիւն յակոբայ։
8 Քև զթշնամիս մեր հարցուք
և անուամբ քով արհամար-
հեսցուք զյարուցեալսն ՚ի
վերայ մեր։
9 Ո՛չ թէ յաղեղն իմ յուսա-
ցեալ եմ, և ոչ սուր իմ կե-
ցու.

ցուցանէ զիս։
Այլ դու փրկեցեր զմեզ ի 10
թշնամեաց մերոց. և զա-
տելիս մեր յամօթ արարեր։
Աստուծով պարծեսցուք 11
զօրհանապազ. և անուան քո
խոստովան եղիցուք յաւի-
տեան։
Բայց արդ մերժեցեր և ա- 12
նարգեցեր զմեզ. և ոչ ելեր
ած ընդ զօրս մեր։
Դարձուցեր զմեզ յետս քն 13
զթշնամիս մեր. և ատելիք
մեր յափշտակեցին զմեզ։
Ետուր զմեզ որպ զոչխար ի 14
զենումն. և ընդ հեթանոսս
ցրուեցեր զմեզ։
Վաճառեցեր զժողովուրդ 15
քո առանց գնոց. և ոչ գոյ
թիւ աղաղակի մերոյ։
Արարեր զմեզ նախատինս 16
դրացեաց մերոց. ծաղր և
այպն կատականաց այնոցիկ,
որ

որ շուրջ էին զմեօք ։
17 Աւարեր զմեզ յառաւօտ հե-
թանոսաց. 'ի շարժել ըզ-
գլուխս ժողովրդոց ։
18 Զօր ա̃մ Նախատինք իմ ա-
ռաջի իմ են. և ամօթ երե-
սաց իմոց ծածկեաց զիս ։
19 'Ի ձայնէ Նախատողին և
չարախօսի, յերեսաց թշնամ-
ւոյն և հալածչի ։
20 Այս ա̃մ եկն 'ի վերայ մեր,
և մեք զքեզ ոչ մոռացաք.
և ոչ ստեցաք ուխտի քում,
և ոչ դարձաք յետս սրտիւք
մերովք ։
21 Դարձուցեր զշաւիղս մեր 'ի
ճանապարհաց քոց, խոնարհ
արարեր զմեզ 'ի տեղի չար-
չարանաց. և ծածկեցին ըզ-
մեզ ստուերք մահու ։
22 Թէ մոռացեալ իցէ մեր զա-
նուն ա̃յ մերոյ. կամ ձգեալ
իցէ զձեռս մեր առ աստ-
ուածս

ունայն օտարս :
Սակայն ած խնդրէ զայս. 23
զի նա քննէ զգաղտնիս սր-
տից մերոց :
Վասն քո մեռանիմք զօրհա- 24
նապազ. համարեցաք որպս
զոչխար 'ի զենումն :
Զարթի՛ր ընդէ՞ր ննջես տէր. 25
արի՛ և մի՛ մերժեր զմեզ իս-
պառ :
Զմէ՞ դարձուցանես զերեսս 26
քո 'ի մէնջ. մոռանաս զաղ-
քատութի և զնեղութիս մեր:
Խոնարհ եղեն մինչև 'ի հող 27
անձինք մեր. և յերկիր կցե-
ցան մէջք մեր :
Արի՛ տէր օգնեա՛ մեզ, և 28
փրկեա՛ զմեզ վն անուան քո:

# ՍԱՂՄՈՍ. ԽԴ:

1 'Ի կատարած. վասն անցելոց ժա_
մանակաց, որդւոցն Կորխայ իմաս_
տութ̅ե. սաղմոս օրհնութ̅ե վասն
սիրելւոյն:

2 Բղխեսցէ սիրտ իմ զպատ_
գամս քո բարիս. և ասացից
զգործս իմ Թագաւորի:
3 Լեզու իմ որպէս գրիչ արա_
գագիր դպրի, գեղեցիկ տե_
սանելով քան զա̅մ որդւոց
մարդկան:
4 Սփռեցան շնորհք 'ի շրթանց
քոց. վ̅ն այսորիկ օրհնեաց
զքեզ ա̅ծ յաւիտեան:
5 Ա՛ծ զսուր ը̅ մէջ քո հզօր,
վայելչութ̅ե և գեղոյ քոյ:
6 Լարեա՛ ուղղեա՛ և Թագա_
ւորեա՛ վասն ճշմարտութ̅ե
հեզութ̅ե և արդարութ̅ե, և
առաջնորդեսցէ քեզ սքան_
չելապէս աջ քո:

Նետք

Նետք քո սրեալ են հզօր, 7
և ժողովուրդք 'ի ներքոյ քո
անկցին, 'ի սիրտս թշնա֊
մեաց թագաւորի։
Աթոռ քո ա͞ծ յաւիտեանս 8
յաւիտենից, գաւազան ուղ֊
ղութեան՝ գաւազան արքայու֊
թեան քո։
Սիրեցեր զարդարութիւն, և 9
ատեցեր զանօրէնութիւն։
Վասն այսորիկ օծ զքեզ ա͞ծ 10
ա͞ծ քո իւղով ուրախութեան,
առաւել քան զընկերս քո։
Զմուռս և ստաշխին և կա֊ 11
սիայ 'ի զգեստէ քումմէ, 'ի
տաճարաց փղոսկրեաց, ուս֊
տի ուրախ արարին զքեզ
դստերք թագաւորաց 'ի պա֊
տուի քո։
Կացցէ դշխոյ ը͞ն աջմէ քում֊ 12
մէ 'ի հանդերձս ոսկեհուռս
զարդարեալ և պաճուճեալ։
Լուր դուստր և տես՝ խո֊ 13
նար֊

նարհեցո՛ զունկն քո. մոռա՛
զժողովուրդ քո, և զտուն
հօր քո. զի ցանկացաւ թա-
գաւոր գեղոյ քո:
14 Սա լինի՛ն է տէր քո՝ երկիր-
պագցես սմա. և դուստր
Ծուրայ երկիր պագցէ սմա.
և պատարագօք զերեսս սո-
րա պաշտեսցեն մեծամեծք
՚ի ժողովրդոց:
15 Ամենայն փառք դստեր թա-
գաւորի ՚ի ներքոյ. ՚ի վեր-
ջաւորս ոսկեհուռս զարդա-
րեալ և պաճուճեալ:
16 Տարցին թագաւորի կու-
սանք զհետ նր. և զընկերս
նր տարցին նմա:
17 Ածցեն ցնծութբ և ուրա-
խութբ. և տարցին ՚ի տա-
ճար թագաւորի. և փոխա-
նակ հարց քոց եղիցին որ-
դիք քո:
18 Կացուսցես զնս իշխանս ը-
ամե-

ամենայն երկիր . և յիշեսցի
անուն քո ը̄ ամենայն ազգս
ազգաց :
Վասն այսորիկ ժողովուրդք 19
խոստովան եղիցին առ քեզ
յաւիտեան , և յաւիտեանս
յաւիտենից :

## ՍԱՂՄՈՍ . ԽԵ :

'Ի կատարած . որդւոցն կորխայ 1
'Ի վերայ գաղտնեաց :

ԱԾ մեր ապաւէն և զօրու- 2
թի՛ւն . օգնական 'ի վերայ նե-
ղութեանց , որ գտին զմեզ
յոյժ :
Վասն այսորիկ ոչ երկիցուք 3
մեք 'ի խռովել երկրի . 'ի
փոփոխել լերանց 'ի սիրտս
ծովու :
Գոչեցին և խռովեցան ջուրք 4
նոցա . խռովեցան լերինք 'ի
զօրութէ՛ ն՛ր :
Գնացք գետոց ուրախ առ- 5
նեն

նեն զքաղաքն ա՟յ. և սուրբ
արար զյարկս իւր բարձ-
րեալն:
6 Տ՟ր 'ի մէջ նորա, և նոքա մի՛-
սասանեսցին. օգնեսցէ նոցա
ա՟ծ 'ի վաղորդայնէ մինչև 'ի
վաղորդայն:
7 Խռովեցան հեթանոսք, և
խոնարհեցան թագաւորու-
թիւնք. ետ զձայն իւր բարձ-
րեալն՝ և խռովեցաւ երկիր:
8 Տ՟ր զօրութ՟եց ընդ մեզ. ըն-
դունելի է մեր ա՟ծ յակով-
բայ:
9 Եկա՛յք և տեսէք զգործս ա՟յ,
որ արար զնշանս և զար-
ուեստս 'ի վերայ երկրի:
10 Եհար զպատերազմ 'ի ծա-
գաց մինչ 'ի ծագս երկրի.
զաղեղունս փշրեաց, զզէնս
խորտակեաց, և զասպարս
այրեաց հրով:
11 Կանխեցէք և ծանիրուք, զի

Ես եմ ա̃ծ. բարձր եղէց ՚ի
հեթանոսս, և բարձրացայց
՚ի վերայ երկրի:
12 Տ̃ր զօրութե̃ց ընդ մեզ. ըն-
դունելի է մեր ա̃ծ յակով-
բայ:

## ՍԱՂՄՈՍ. ԽԶ:

1 ՚Ի կատարած. վասն որդւոյն կոր-
խայ. սաղմոս ՚ի դաւիթ:

2 Ծափս հարէք ամենայն
հեթանոսք, աղաղա-
կեցէք առ ա̃ծ ՚ի ձայն ցըն-
ծութեան:
3 Տէր բարձրեալ և ահարկու,
թագաւոր մեծ ՚ի վերայ ա̃մ
երկրի:
4 Հնազանդ արար զժողովուր-
դըս ը̃ մեզ. և զհեթանոսս
՚ի ներքոյ ոտից մերոց:
5 Ընտրեաց զմեզ իւր ՚ի ժա-
ռանգութի. գեղեցկութե̃ցն
յակովբայ՝ զոր և սիրեաց:
Համ-

6 Համբարձաւ ած օրհնութբ.
և տր մեր ձայնիւ փողոյ:
7 Սաղմոս ասացէք այ մերում.
սաղմոս ասացէք թագաւո֊
րին մերում. սաղմոս ասա֊
ցէք:
8 Թագաւոր մեծ 'ի վերայ ամ
երկրի ած է, սաղմոս ասա֊
ցէք նմա իմաստութբ:
9 Թագաւորեաց ած 'ի վերայ
հեթանոսաց. ած նստաւ յա֊
թոռ սրբութն իւրոյ:
10 Իշխանք ժողովրդոց ժողո֊
վեցան առ ած աբրահամու,
զի այ զօրութիւնք յերկրէ
յոյժ համբարձան:

## ՍԱՂՄՈՍ. ԽԷ:

1 Սաղմոս օրհնութբ որդւոցն կո֊
րխայ. երկրորդ շաբաթու:
2 Մեծ է տէր, և օրհնեալ է
յոյժ 'ի քաղաքի այ մերոյ, 'ի
լերան սուրբ նր:

Հաստատրմամ ցնծացէ ցըն- 3
ծութ̃ք ա̃մ երկիր. լերինք
սիօնի, կողմանք հիւսիսոյ՝
քաղաք թագաւորի մեծի:
Ա̃ծ 'ի տաճարի խորում 4
յայտնի. 'ի ժամանակի ն̃ղ
օգնական լինէր ն̃ց:
Ահաւասիկ թագաւորութիւնք 5
երկրի ժողովեցան, և ան-
ցին 'ի միասին:
Ինքեանք տեսին այսպէս՝ և 6
զարմացան. խռովեցան տա-
տանեցան, և դողումն կա-
լաւ զնոսա:
Անդ երկունք ո̃չ 'ի ծնըն- 7
դեան. 'ի հողմ սաստիկ փըշ-
րեսցէ զնաւս 'ի թարսիս:
Որպէս լուաք, այնպէս և 8
տեսաք 'ի քաղաք տեառն զօ-
րութ̃ց՝ 'ի քաղաք ա̃յ մերոյ:
Ա̃ծ հիմնեաս արկ նմա յա- 9
ւիտեան. ընկալաք ա̃ծ զո-
ղորմութ̃ի քո 'ի մէջ ժողո-

վըր-

վրդեան քոյ:
10 Ըստ անուան քում, այն֊
պէս և օրհնութիւն քո ը͞ ա͞մ
աշխարհս. և արդարութե͞
լի է աջ քո:
11 Ուրախ եղիցի լեառն սիոն.
և ցնծասցեն դստերք յու֊
դայ, վ͞ն իրաւանց քոց տէր:
12 Շրջեցարո՛ւք զսիովնիւ, պա֊
շարեցէք զնա. և պատմեցէք
զաշտարակս ն͞ր:
13 Դի՛ք զսիրտ ձեր ՚ի վերայ
զօրութե͞ ն͞ր. բաժանեցէք
զամուրս նորա, զի պատմել
կարասջիք յազգ յայլ:
14 Սա է ա͞ծ, ա͞ծ մեր յաւի֊
տեանս յաւիտենից. և սա
հովուեսցէ զմեզ՝ մինչև յա֊
ւիտեան:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ԽԸ:

'Ի կատարած որդւոցն Կորխայ. 1
սաղմոս օրհնութե՛ 'ի դաւիթ:

Լուարո՛ւք զայս ամենայն 2
ազգք, ունկնդիր լերուք ա-
մենեքեան, որք բնակեալ էք
յաշխարհի:
Ծնունդք երկրի և որդիք 3
մարդկան, 'ի միասին մեծա-
մեծք և տնանկք:
Բերան իմ խօսեսցի զիմաս- 4
տութիւն, և խորհուրդք սրտ-
ти իմոյ զհանճար:
Խոնարհեցուցից յառակումն 5
զունկն իմ. բացից զառակս
օրհնութե՛ 'ի սկզբանէ:
Ընդէր բնաւ երկնչիմ ես 6
յաւուր չարի. զի անօրէ-
նութիւնք գնացից իմոց շուրջ
եղեն զինև:
Յուսացեալք 'ի զօրութիւն իւ- 7
րեանց, 'ի բազմութիւն մեծու-
թե՛

թէ իւրեանց պարծեսցին:
8 Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ
մարդ, և ոչ տայ Ա՟յ զփրը-
կանս իւր. և ոչ զգինս փըր-
կանաց անձին իւրոյ:
9 Վաստակեաց յաւիտեան, և
կեցցես մինչ իսպառ. և ոչ
տեսցես զապականութիւն:
10 Յորժամ տեսցես՝ թէ իմաս-
տունք մեռանին, 'ի միասին
անզգամք և անմիտք կորի-
ցեն. և թողցեն օտարաց
զմեծութիւն իւրեանց:
11 Գերեզմանք տունք նոցա եղի-
ցին յաւիտեան, և յարկք
նոցա ազգէ մինչև յազգ. և
կարդասցեն անուանք նոցա
'ի հողս իւրեանց:
12 Մարդ 'ի պատուի էր՝ և
ոչ իմացաւ, հաւասարեաց
անասնոց անբանից՝ և նմա-
նեաց նոցա:
13 Այս ճանապարհ է գայ-
թակ-

Թագաւորութի՛ նց̃ նոյին. յետ
այսորիկ բերանովք իւրեանց
հաճեսցին։

Որ̃ խաշն 'ի դժոխս մատ- 14
նեսցին, եւ մահ հովուեսցէ
զնոսա. եւ տիրեսցեն նց̃ ու-
ղիղք ընդ առաւօտս։

Օգնութիւնք նց̃ մաշեսցին 15
'ի դժոխս. եւ 'ի փառաց իւ-
րեանց անկցին։

Բայց սակայն՝ Ած̃ փրկես- 16
ցէ զանձն իմ 'ի ձեռաց դժո-
խոց, յորժամ ըն̃ունին զիս։

Մի՛ երկնչիր՝ յորժամ մե- 17
ծանայ մարդ, եւ յորժամ բա-
զում լինին փառք տան նր̃։

Զի ոչ թէ 'ի մեռանել իւ- 18
րում առցէ ընդ իւր զա̃մ.
եւ ոչ թէ իջցեն փառք տան
նորա ընդ նմա։

Այլ անձն նորա 'ի կեանս 19
իւրում օրհնեսցի. խոստո-
վան եղիցի քեզ՝ յորժամ բա-

րի

րի արասցես դու նմա:
20 Մտցէ նա մինչեւ յազգ հարց
իւրոց. մինչեւ յաւիտեան
զլոյս մի՛ տեսցէ:
21 Մարդ 'ի պատուի էր՝ եւ
ոչ իմացաւ, հաւասարեցաւ
անասնոց անբանից՝ եւ նմա-
նեցաւ նոցա:

## ՍԱՂՄՈՍ. ԽԹ.

Սաղմոս 'ի դաւիթ:

1 Ա̃Ծ աստուծոց տէր խօսե-
ցաւ, կոչեաց զերկիր՝
յարեւելից մինչեւ 'ի մուտս
արեւու:
2 'Ի սիոնէ մեծ վայելչութիւն
փրկութեան գեղոյ նորա:
3 Ա̃Ծ մեր յայտնապէս եկես-
ցէ. եւ ա̃ծ մեր մի՛ դադա-
րեսցէ:
4 Հուր առաջի ն̃ր բորբոքես-
ցի, եւ շուրջ զնովաւ մրրիկ
յոյժ:

Կո.

Կոչեսցէ զերկինս 'ի վե- 5
րուստ՝ և զերկիր, 'ի դա-
տել զժողովուրդ իւր, ժո-
ղովել առ ինքն զսուրբս իւր,
և ուխտ դնեն զպատարագս
ուխտից 'ի վ͞ր սեղանոյ ն͞ր :
Պատմեսցեն երկինք զարդա- 6
րութիւն նորա, զի ա͞ծ դա-
տաւոր է :
Լո՛ւր ժողովուրդ իմ, և խօ- 7
սեցայց ը͞ քեզ. և Իսրայէլ՝
քեզ վկայեցից. զի ա͞ծ ա͞ծ
քո ես եմ:
Ո՛չ թէ վասն պատարագաց 8
քոց կշտամբեմ զքեզ. զի
ողջակեզք քո առաջի իմ են
յամենայն ժամ:
Ո՛չ ը͞ունիմ 'ի տանէ քումմէ 9
զուարակս. և ո՛չ 'ի հօտից
քոց նոխազս :
Իմ է ա͞մ գազան անտառի, 10
երէ լերանց և ա͞մ անասուն:
Գիտեմ ես զա͞մ թռչունս 11
երկ-

երկնից. գեղեցկութիւն վայ-
րի ընդ իս է:
12 Թէ քաղցեայց, քեզ ինչ ոչ
ասացից. զի իմ է աշխարհ
լրիւ իւրով:
13 Ո՛չ ուտեմ ես զմիս զուա-
րակաց քոց. և ոչ զարիւն
նոխազաց քոց ըմպեմ:
14 Մատո՛ ծ̃յ պատարագ օրհ-
նութե̃ն. կատարեա՛ բարձրե-
լոյն զուխտս քո:
15 Կարդասջիր առ իս յաւուր
նեղութե̃ն քո. ես փրկեցից
զքեզ՝ և դու փառաւոր ա-
րասցես զիս:
16 Սակայն մեղաւորին ասէ ա̃ծ.
իսկ դու ընդէ՞ր ընաւ պատ-
մես զարդարութիւն իմ. կա՞մ
առնուս զուխտս իմ 'ի բե-
րան քո:
17 Զի դու ատեցեր զխրատ
իմ. մերժեցեր, և յետս ըն-
կեցեր զամենայն բանս բե-
րա-

բանից իմոց ։
Թէ տեսանէիր զգող՝ ըն- 18
թանայիր ընդ նմա . եւ ընդ
շունս դնէիր զբաժին քո ։
Բերան քո յաճախէր զչա- 19
րութիւն, եւ լեզու քո նիւ-
թէր զնենգութիւն ։
Նստեալ՝ զեղբօրէ քումմէ 20
չարախօսէիր . եւ ՚ի վերայ
որդւոյ մօր քո դնէիր զգայ-
թագղութիւն ։
Զայս ամ՟ արարեր, եւ լռե- 21
ցի քեզ . կարծեցեր անօրէնդ
՚ի միտ քում, թէ եւ ես քեզ
նմանեցեմ ։
Արդ յանդիմանեցից եւ կա- 22
ցուցից զայս ամ՟ առաջի քո .
իմացարուք ամենեքեան՝ ո-
րոց մոռացեալ իցէ զա՟ծ ։
Գուցէ երբեք յափշտակի- 23
ցէք, եւ ոչ ոք իցէ՝ որ փրկիցէ ։
Պատարագ օրհնութեան փա- 24
ռաւոր արասցէ զիս . եւ անդ
է

է ճանապարհ, ուր ցուցից
նմա զփրկութիւն իմ։

# ՍԱՂՄՈՍ. Ծ։

1 'Ի կատարած. սաղմոս 'ի դաւթի.
'ի ժամանակի զի էին առ նա Նա-
թան մարգարէ. յորժամ մտեալ
էր նա առ Բերսաբէէ։

2 Ողորմեա՛ ինձ ա՛ծ ըստ մեծի
ողորմութե. քում. ըստ բա-
զում գթութեան քում. քա-
ւեա՛ զանօրէնութիւնս իմ։
3 Առաւել լուա՛ զիս յանօրէ-
նութենէ իմմէ. և 'ի մեղաց
իմոց սուրբ արա զիս։
4 Զանօրէնութիւնս իմ ես ին-
քն գիտեմ. և մեղք իմ ա-
ռաջի իմ են յա՛մ ժամ։
5 Քեզ միայն մեղայ տէր. և
չար առաջի քո արարի։
6 Որպէս արդար եղիցես 'ի
բանս քո. և յաղթող 'ի դա-
տել քեզ։

Անօ-

Անօրէնութե՟բ յղացայ, և 'ի 7
մեղս ծնաւ զիս մայր իմ։
Դու տէր զճշմարտութիւն 8
սիրեցեր. զանյայտս և զծած-
կեալս իմաստութե՟ քով յայտ-
նեցեր ինձ։
Ցօղեա՛ յիս մշտկաւ, և ս՟բ 9
եղէց, լուա՛, և քան զձիւն
սպիտակ եղէց։
Լսելի՛ արա ինձ զցնծութիւն 10
և զուրախութիւն, և ցնծաս-
ցեն ոսկերք իմ տառապեալք։
Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց 11
իմոց. և զա՟մ անօրէնութիւնս
իմ քաւեա՛ յինէն։
Սիրտ ս՟բ հաստատեա՛ յիս 12
ա՟ծ, և հոգի ուղիղ նորոգեա՛
'ի փորի իմում։
Մի՛ ընկեներ զիս տէր յե- 13
րեսաց քոց, և զհոգի քո ս՟բ
մի՛ հաներ յինէն։
Տո՛ւր ինձ ցնծութե՟ն փրկու- 14
թե՟ն քոյ. և հոգւով պետու-
թե՟ն

ԹԷ քոյ հաստատեա զիս։
15 Ուսուցից անօրինաց զճա-
նապարհս քո. և ամպարիշտք
առ քեզ դարձցին։
16 Փրկեա զիս յարենէ Ած Ած
փրկութեան իմոյ. ցնծասցէ
լեզու իմ յարդարութիւն քում։
17 Տր եթէ զշրթունս իմ բա-
նաս, բերան իմ երգեսցէ
զօրհնութիւնս քո։
18 Թէ կամեցեալ էիր, պատա-
րագս մատուցանէաք. բայց
դու ընդ ողջակէզս ոչ
հաճեցար։
19 Պատարագ Այ հոգի խոնարհ.
Զսիրտ սբ և զհոգի խոնարհ
Ած ոչ արհամարհէ։
20 Բարի արա Տր կամօք քովք
զՍիոն. և շինեսցին պա-
րիսպք Երուսաղէմի։
21 Յայնժամ հաճեսցիս ընդ պա-
տարագս արդարութեան. ող-
ջակէզս պատարագս հանցեն 'ի
սե-

սեղան քո զգանձարանս:

## ՍԱՂՄՈՍ. ԾԱ:

'Ի կատարած իմաստութեան, սաղ- 1
մոս 'ի Դաւիթ. 'ի ժամանակին գա-
լոյն Դովեկայ Եդովմայ, պատմեաց
Սաւուղայ, թէ անկաւ Դաւիթ
'ի տուն Աքիմելեքայ է:

Զի՞ պարծիցիս 'ի չարութեան 2
հզօր՝ զանօրէնութիւն. զօրհա-
նապազ զանիրաւութիւն խոր-
հեցաւ 'ի լեզուի իւրում:
Որպէս ածելի սուր՝ սրեաց 3
զնենգութիւն. սիրեաց զչա-
րութիւն քան զբարութիւն.
զանօրէնութիւն քան զխօսս
արդարութեան:
Սիրեաց նա զամ՝ խօսս կոր- 4
ծանմանն, և զլեզուս նեն-
գաւորս:
Վասն այսորիկ ած կործա- 5
նեսցէ զնա իսպառ. խլեսցէ
և հանցէ զնա յարկաց իւ-
րոց,

րոց, և զարմատս նր̅ յերկ-
րէն կենդանեաց:
6 Տեսցեն արդարք և երկի-
ցեն. զնովաւ ծիծաղեսցին,
և ասասցեն:
7 Այս այր է, որ ոչ արար
զա̃ծ իւր օգնական. այլ յու-
սացաւ նա 'ի բազում մե-
ծութիւն իւր, և զօրացաւ
'ի նանրութեն իւրում:
8 Այլ ես որպ̃ ձիթենի պտղա-
ւորից 'ի տան ա̃յ. յուսա-
ցայ յողորմութիւն ա̃յ յա-
ւիտեան՝ և յաւիտեանս յա-
ւիտենից:
9 Խոստովան եղէց քեզ յաւի-
տեան, զի արարեր. և համ-
բերից անուան քում, զի
քաղցր ես առաջի սրբոց քոց:

# ՍԱՂՄՈՍ. ԾԲ։

'Ի կատարած. վն մաղաղէթայ. 1
Իմաստութն̄ 'ի Դաւիթ ։

Ասաց անզգամն 'ի սրտի 2
իւրում թէ ո՛չ գոյ Ա̄ծ.
ապականեցան և պղծեցան
յանօրէնութիւնս իւրեանց. և
ո՛չ ոք է որ առնէ զքաղցրու-
թիւն ։
Ա̄ծ յերկնից նայեցաւ յա̄մ 3
որդիս մարդկան, տեսանել
թէ իցէ ոք իմաստուն՝ որ
խնդրիցէ զԱ̄ծ ։
Ամենեքեան խոտորեցան 'ի 4
միասին, և անպիտանացան։
Ո՛չ ոք է որ առնէ զբարի, 5
և չէ ոք մինչև 'ի մի ։
Որպէս ո՛չ ծանիցեն ամենե- 6
քեան, որ գործեն զանօրէ-
նութիւն ։
Ոյք ուտէին զժողովուրդ 7
իմ ոպ̄ կերակուր հացի. և

առ

առ Ած ոչ կարդացին:
8 Անդ երկիցեն երկիւղ՝ ուր
ոչ լիցի երկիւղ. զի Ած ցրը-
ուեսցէ զոսկերս մարդահա-
ճոյից:
9 Ամաչեսցեն և յամօթ լիցին,
զի Ած անարգեաց զնոսա:
10 Ո՞ տացէ ՚ի Սիովնէ զփրկու-
թիւն Իսրայէլի. ՚ի դարձու-
ցանել Տն զգերութիւն ժո-
ղովրդեան իւրոյ, ցնծասցէ
Յակոբ, և ուրախ եղիցի
Իսրայէլ:

## ՍԱՂՄՈՍ. ԾԳ:

1 ՚Ի կատարած. ընդ օրհնութիւնս
իմաստութեան ՚ի Դաւթի. ՚ի ժա-
մանակին զի եկին Զիփացիքն, և
ասէին ցՍաւուղ՝ ահաւասիկ Դա-
ւիթ թագուցեալ նստի առ մեզ:
2 Ած յանուն քում կեցո՛
զիս, և ՚ի զօրութեան քում
իրաւունս արա ինձ:

Ած լուր աղօթից իմոց. 3
ունկն դիր բանից բերանոյ
իմոյ:
Օտարք յարեան 'ի վերայ 4
իմ. և հզօրք խնդրեցին զանձն
իմ, և ոչ համարեցան զքեզ
Ած առաջի իւրեանց:
Ահա Ած օգնական իմ. և 5
Տր ընդունելի հոգւոյ իմոյ:
'ի դարձուցանել զչարն 'ի 6
թշնամիս իմ, ճշմարտութբ
քով սատակեա զնս:
Ես կամօք իմովք պատա- 7
րագս մատուցից քեզ. խոս-
տովան եղէց անուան քում
Տէր, զի բարի է:
Յամ նեղութէ իմմէ փրկե- 8
ցեր զիս. և 'ի թշնամիս իմ
ետես ակն իմ:

# ՍԱՂՄՈՍ. ԾԴ:

1 'Ի կատարած. ընդ օրհնութիւնս
իմաստութե̄. սաղմոս 'ի Դաւիթ:

2 Ունկնդիր ա̄ծ աղօթից ի-
մոց. և մի անտես առներ
զխնդրուածս իմ:
3 Նայեաց առ իս և լո՛ւր ինձ.
զի տրտմեցայ ես 'ի հանճ-
րանալ իմում, և խռովեցայ,
4 'Ի ձայնէ թշնամւոյն և 'ի
նեղել մեղաւորին, խոտորե-
ցան յիս անիրաւութեամբ.
բարկութե̄ ոխս պահէին ինձ:
5 Սիրտ իմ խռովեցաւ յիս,
և երկիւղ մահու անկաւ 'ի
վերայ իմ:
6 Ահ և դողումն եկն 'ի վ̄ր
իմ, և ծածկեաց զիս խաւար:
7 Ասէի տայր ոք ինձ թևս
ո̄պ զաղաւնւոյ. զի թռչէի՝
վերանայի, և հեռացեալ դա-
դարէի յանապատի:

Ակն

Այն ունէի ա͞յ, որ փրկէր 8
զիս 'ի կարճմտութ͞է 'ի զայ-
րանալոյ՝ 'ի մրրկեալ նեղսր-
տութենէ:
Ընկլմ տէր և բաժանեա զլե- 9
զուս ն͞ց. զի տեսի զանօրէ-
նութիւն, և զհակառակու-
թիւն 'ի քաղաքի:
'Ի տուէ և 'ի գիշերի շուրջ 10
եղեն զպարսպօք նորա՝ անօ-
րէնութիւնք. չարիք և մեղք
են 'ի մէջ նոցա. և ո՛չ պակա-
սեաց 'ի հրապարակաց նոցա
վաշխ և նենգութիւն:
Զի թէ թշնամւոյն նախա- 11
տեալ էր, համբերէի ար-
դեօք. կամ ատելւոյն մեծա-
բանեալ էր 'ի վերայ իմ,
թաքչէի արդեօք 'ի նմանէ:
Իսկ դու մարդ հաւասար 12
իմ, առաջնորդ իմ և ծա-
նօթ իմ:
Այլաքէն 'ի նոյն քաղցրա- 13
ցու

ցուցեր ինձ և քեզ կերա_
կուր. զի գնայաք միաբա_
նութեամբ ՚ի տան այ:
14 Եկեսցէ մահ ՚ի վր նց, և
կենդանւոյն իջցեն ՚ի դժոխս.
զի չարութիւն է ՚ի բնակութն
նց՝ և ՚ի մէջ նց:
15 Ես առած կարդացի, և
լուաւ ինձ յերեկոյս՝ ՚ի վա_
ղորդայն՝ և ՚ի հասարակ ա_
ւուր:
16 Պատմեցի և ասացի և լուի_
ցէ ձայնի իմում. փրկեսցէ
խաղաղութեամբ զանձն իմ ՚ի
մերձաւորաց իմոց. զի կա_
րեօք հասին ՚ի վերայ իմ:
17 Լուիցէ ած՝ և խոնարհ ա_
րասցէ զնս. որ յառաջն է
քան զյաւիտեանս:
18 Զի ոչ գոյր նց փոխանակ.
և ոչ երկեան յայ:
19 Ձգեաց զձեռն իւր ՚ի հա_
տուցանել նց. և նք պղծե_
ցին

ցի՛ն զօրէ՛նս նորա։
Բաժանեցա՛ն ՚ի սրտմտութէ՛ 20
երեսաց նորա. և եհաս ՚ի
սիրտս նոցա։
Կակուղ է՛ին բանք նոցա ք̃ 21
զձէթ, և ինքեանք որպէս
սլաք։
Ընկեա՛ ՚ի տէր զհոգս քո՝ և 22
նա կերակրէ զքեզ. և ո՛չ
տայ յաւիտեան սասանու-
թիւն արդարոյ։
Դու ա̃ծ իջուսցես զն̃ս ՚ի 23
գուբ ապականութե̃. արք
արիւնահեղք և նենգաւորք
մի՛ հասարակեսցեն զաւուրս
իւրեանց. այլ ես ՚ի քեզ
տ̃ր յուսացայ։

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Մեծին մովսէսի աստուածատեսի
մարգարէին։

31 Զի հուր բորբոքեցաւ 'ի
բարկութենէ իմմէ. այրեսցէ
և իջցէ մինչ 'ի դժոխս ներ-
քինս ։
32 Կերիցէ զերկիր՝ և զա̃մ բոյս
երկրի նր̃. վառեսցին հրով.
բորբոքեսցին հիմունք լե-
րանց նոցա ։
33 Կուտեցից չարիս ա̃մ 'ի վ̃ր
նր̃. և նետիւք իմովք սպա-
ռեցից զն̃ս ։
34 Մաշեալք և հիւծեալք 'ի
սովոյ, գազանաբեկ դէշ ան-
կեալ ամենայն թռչնոց երկ-
նից ։
35 Վէրս առանց բժշկութեան ար-
ձակեցից 'ի վերայ նր̃՝ զգա-
ղանս

զանս անապատի. որ այսր՝
և անդր քարշեսցեն զնոսա
ընդ երկիր։

Արտաքուստ մանկակտորս 36
արասցէ զնոսա սուր, և 'ի
ներքուստ շտեմարանաց նց
անտի արհաւիրք ահից։

Զերիտասարդս կուսանօք 37
հանդերձ, և զալեայս հա-
տակելօք ծերովք հանդերձ։

Ասացի թէ ցրեցից զնս. և 38
դադարեցուցից զյիշատակս
նոցա յազգաց։

Թէ ոչ վն բարկութե սրա- 39
մտութե թշնամւոյն. զի մի
երկայնակեացք եղիցին, և
մի բարձրասցին հպարտա-
ցեալ թշնամիքն, և ասասցեն։

Թէ ձեռն մեր բարձր է, և 40
բազուկ մեր հզօր. և ոչ տր
ած արար զայս ամ։

Զի ազգ մի խորհրդակորոյս 41
են նոքա. և ոչ գոյ 'ի նոսա

իմաստութիւն, և ոչ խորհե-
ցան 'ի միտ առնուլ զայս
ա̃մ. և արդ՝ ընկալցին զա-
մօթ յանձինս իւրեանց ։
42 Զարմանք մի մեծ այս են.
զիա՛րդ մի զհազարս հալա-
ծեսցէ. կամ երկուք զբիւրս
շարժեսցեն ։
43 Թէ ոչ ա̃ծ ա̃յ մատնեալ էր
զնա, և տուեալ իցէ զնոսա
'ի ձեռս թշնամեաց նոցա ։
44 Զի ոչ են դիք նոցա որպէս
զա̃ծ մեր, այլ թշնամիք մեր
դատախորհուրդք ։
45 Յայգւոյն սոդոմայ էր որթ
նոցա, և տունկ նոցա 'ի գո-
մորայ ։
46 Խաղող նոցա խաղող դառ-
նութե̃ն և ողկոյզ ն̃ց 'ի դառ-
նութե̃ն լեղւոյ ։
47 Սրտմտութիւն քարբուե̃ն վի-
շապաց գինի ն̃ց. սրտմտու-
թիւն իժից՝ անհնարին ա-
ռանց

ռանց բժշկութիւն ։
Ո՛չ այս ա̅մ ժողովեալ է առ 48
իս. և կնքեալ պահի 'ի գան-
ձի իմում։
Յաւուր վրիժուց հատուց- 49
ման հատուցից ն̅ց. 'ի ժա-
մանակի յորում հարցի ըդ-
քարի ոտն նոցա ։
Մերձ է օր կորստեան ն̅ց. 50
հասեալ է պատրաստութ̅ք
տէր 'ի վերայ նոցա ։
Դատէ տէր զժողովուրդ- 51
իւր. և 'ի ծառայս իւր մխի-
թարի ։
Զի ետես զն̅ն լքեալս լու- 52
ծեալս, և մատնեալս 'ի գե-
րութիւն ։
Եւ ասիցէ տ̅ր, ուր են դիքն 53
ձեր՝ յորս յուսացեալ էիք
դուք 'ի ն̅ս. զորոց զճարպ
սպանդիցն ուտէիք, և ըմ-
պէիք զգինի զոհիցն։
Արդ՝ յարիցեն օգնեսցեն, 54
և

և եղիցին ձեզ թիկունք ։

## ՆՈՐԻՆ ՄՈՎՍԷՍԻ ։

55 Ո՝ անկրօւք և տեսէք զի
ես եմ. և ոչ գոյ այլ ա̄ծ
բաց յինէն ։
56 Ես սպանանեմ՝ և ես կե-
ցուցանեմ. հարկանեմ՝ և
ես բժշկեմ. և ոչ ոք իցէ՝
որ հանիցէ զձեզ 'ի ձեռաց
իմոց ։
57 Համբարձի յերկինս զձեռս
իմ. երդուեայ աջով իմով,
և ասացի թէ կենդանի եմ
ես յաւիտեան ։
58 Սրեցից ոպ̄ փայլակն զսու-
սեր իմ, և 'ի խնդիր վրի-
ժուց արձակեցից զաջ իմ ։
59 Հատուցից զհատուցումն
թշնամեաց իմոց. և ատե-
լեաց իմոց հատուցից զհա-
տուցումն նոցա նոցին ։
60 Արբեցուցից զնետս իմ յա-

րենէ նց̃ . և սուր իմ̃ կերի-
ցէ միս , յարենէ վիրաւորե-
լոց գերելոց գլխոց իշխա-
նաց՝ թշնամեաց նոցա :
Ուրախ եղիցին երկինք նո- 61
վաւ . և երկիր պագցեն նմա
ամ̃ որդիք այ̃ :
Ուրախ եղերուք հեթանոսք 62
ընդ ժողովրդեան նորա . և
զօրացուսցեն զնա ամ̃ հրեշ-
տակք այ̃ :
Խնդրելով խնդրեցաւ վրէժ 63
արեան որդւոց նոցա . հա-
տուցումն թշնամեաց նոցա՝
հատուցաւ նց̃ :
Հատուցումն ատելեաց նց̃ 64
հատուցաւ նոցա . սրբեսցէ
տր̃ զերկիր ժողովրդեան իւ-
րոյ :

ՄԱՂ.

# ՄԱՂԹԱՆՔ։

Դու ես տէր մեր՝ դու ես քն փրկիչ մեր, զքեզ օրհնեն անձինք մեր։ Մարդասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի. և վն խաչի քոյ պատուականի, տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո զմեզ։

Քարոզ և աղօթք՝ Մի նախանձիր, և Խոստովան կանոնացն։

Վասն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեն, զտէր աղաչեսցուք։ Տր ողորմեա։

Վասն ցրելոյ ՚ի մէնջ զամ խորհուրդս չարին, զտէր աղաչեսցուք։

Վասն պարգևելոյ մեզ առողջ խոր֊

խորհուրդս՝ և տառապէնին վարս
զոհէր աղ:
Վասն սպանելոյ զմեզ ընդ հա-
մանեաւ ամենազօր աջոյն խ-
րոյ, զոր ասաց:
Վասն խորտակելոյ զհակառա-
կորդն վաղվաղակի ընդ ոտիւք
մերովք, զոր ասա:
Վասն հոգւոյն հանդուցելոյ՝
որք Ճշմարիտ և ուղիղ հաւա-
տով ՚ի քս՛ննջեցին, զոհէր աղա-
չեսցուք:
Եւ ևս միաբան վասն Ճշմարիտ
և ուր: Զանձինս: Ողորմեաց՝

## Աղօթք:

Տէր երկնի և երկրի՝ արարիչ
ամ՛ արարածոց երևելեաց և
աներևութից: Առ քեզ կար-
դամք յամ՛ ժամ. զի ընդ ամե-
նայն տեղիս է տէրութիւն քո
և արքայութիւն քո ամենեցուն
ու-

տիրէ ։ Շնորհեա՛ մեզ երկիւ-
ղիւ ՚ի պաշտօն քո կանխել հա-
նապազ․ սիրել զքեզ ՚ի բոլոր
սրտէ՝ և ՚ի բովանդակ մտաց․
և յամ զօրութենէ մերմէ պա-
հել զպատուիրանս քո ։ Համ-
բառնալ առ քեզ զձեռս մեր ՚ի
սրբութիւն առանց բարկութեան և
երկմտութեան․ և գտանել ՚ի քէն
զշնորհս և զողորմութիւն, և զա-
ռաքինասէր գործոյն յաջողու-
թիւն ։ Վասն զի դու ես տէր
կենաց՝ և ա̃ծ ողորմութեանց․ և քեզ
վայելեն փառք իշխանութիւն
և պատիւ․ այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից․ ամէն ։

Խաղաղութիւն ամենեցուն ։
Աստուծոյ երկիրպագեսցուք ։

Քում ամենազօր և յաղթող
տէրութեանդ կրկնի ա̃մ ծունր
յերկրպագութիւն․ և փառաւո-

րի յամենեցունց Թագաւորութի քո: Նոյնպէս յերկրպագութիւնս մեր, և ուսո՛ մեզ առնել զարդարութիւն ճշմարտութե: Վասն զի դու ես ա̃ծ խաղաղութեան, որ բարձեր զԹշնամութիւն 'ի միջոյ, և արարեր խաղաղութիւն յերկինս և յերկրի. Հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգեւս քոյին բարեաց: Որում և զմեզ մեծի շնորհացդ արժանի արասցես, դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո. ա̃ծ մեր՝ և տէր մեր, և փրկիչ յս̃ քս̃: Որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ ս̃բ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Մաղթանք:

Յերգս օրհնութեան և 'ի ձայն սաղմոսաց անդադար փառա-

ւո

որեմք զՀայր եւ զորդի եւ զս̃բ Հոգիդ, այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տ̃ր մեր յ̃ն ք̃ն. ամէն:
Հայր մեր որ:



Անբաւելին երկնի եւ երկրի ի մսուր·

# ՍԱՂՄՈՍ. ԾԵ:

1 'Ի կատարած. վասն ժողովր-
դեանն, որ 'ի սրբոյն հեռացեալ
էին. 'ի ժամանակի զի կալան
զնա այլազգիքն 'ի Գեթ: Յար-
ձանագիր. սաղմոս 'ի Դաւիթ:

2 ՈՂՈՐՄԵԱ՛ ԻՆՁ
ա՛ծ, զի կոխեաց զիս
մարդ. զօրհանապազ պատե-
րազմունք նեղեցին զիս:
3 Կոխեցին զիս թշնամիք իմ
զօրհանապազ. բազում եղեն՝
Որք մարտնչէին ընդ իս 'ի
բարձանց:
4 'Ի տուէ ես ոչ երկեայց, զի
'ի տէր յուսացայ. Աստուա-
ծով գովեցից զբանս իմ.
յա՛ծ յուսացայ՝ և ոչ եր-
կեայց, զի արասցէ ինձ մարդ:
Զօր-

Զօրհանապազ զբանս իմ առ- 5
նարգեցին · զինէն էին խոր-
հուրդք նց՟ 'ի չարութե՟ :
Պանդուխտք եղիցին, և թաք- 6
թաքուրք շրջեսցին · նոքա
դարշապարի իմում սպասես-
ցեն՝ որպէս և սպասէին ան-
ձին իմոյ :
Որպէս առ ոչինչ մերժես- 7
ցես զնս՟ · բարկութ՟ զժող-
ովուրդս հնազանդեցուսցես :
Ած՟՝ զկեանս իմ պատմեցից 8
քեզ · եդից զարտասուս իմ
առաջի քո, ոպ՟ խոստացար
դու ինձ :
Դարձցին թշնամիք իմ յետս 9
իւրեանց · յաւուր յորում
կարդացից առ քեզ :
Ահա ծանեայ զի Ած՟ իմ ես 10
դու · զԱծ՟ օրհնեցից 'ի բանս
իմ, և զՏր՟ գովեցից 'ի խօսս
իմ · յԱծ՟ յուսացայ և ոչ եր-
կեայց, զի արասցէ ինձ մարդ :

Յև

11 Յինէն են ուխտք իմ. զոր
տաց քեզ օրհնութեամբ ած
ած իմ։
12 Փրկեցեր զանձն իմ 'ի մահ-
ուանէ, զաչս իմ յարտասու-
աց, և զոտս իմ 'ի գայ-
թագղութենէ. հաճոյ եղէց
առաջի տեառն յերկրին կեն-
դանեաց։

## ՍԱՂՄՈՍ. ԾԶ։

1 'Ի կատարած մի ապականեր. 'ի
Դաւիթ յարձանագիր. 'ի ժամա-
նակին՝ զի փախուցեալ թաքու-
ցեալ էր նա յերեսաց Սաւուղայ՝
յայրն անդ։

2 Ողորմեա ինձ ած՝ ողորմեա
ինձ, զի 'ի քեզ յուսացաւ
անձն իմ։
3 'Ի հովանի թևոց քոց յու-
սացայց, մինչև անցցէ անօ-
րէնութի՛։
4 Աղաղակեցի առ ած բարձ-
րեալ,

րեալ, առ ա՜ծ բարերար իմ։
Առաքեաց յերկնից՝ և կե- 5
ցոյց զիս. ետ 'ի նախատինս
որ կոխէին զիս։
Առաքեաց ա՜ծ զողորմութի՜ն 6
և զճշմարտութիւն իւր. և
փրկեաց զանձն իմ 'ի միջոյ
գաղանաց, զի ննջէի ես
խռովեալ։
Որդւոց մարդկան ատամունք 7
իւրեանց զէն և նետք են,
և լեզուք նոցա որպէս սուր
սուսերի։
Բարձրեալ ես դու յերկինս 8
ա՜ծ. և յա՜մ երկրի են փառք
քո։
Որոգայթ պատրաստեցին ո- 9
տից իմոց. խոնարհ արարին
զանձն իմ. փորեցին առաջի
իմ խորխորատ, և անկան
ինքեանք 'ի նոյն։
Պատրաստ է սիրտ իմ ա՜ծ, 10
պատրաստ է սիրտ իմ. օրհ-
նել

նել և սաղմոս ասել քեզ
փառօք իմովք:
11 Զարթի՛ր փառք իմ, զար-
թի՛ր սաղմոսիւք և օրհնու-
թեամբ. և ես զարթեայց
առաւօտուց:
12 Խոստովան եղէց քեզ 'ի ժո-
ղովուրդս տէր. և սաղմոս
ասացից քեզ յազգս:
13 Մեծ եղև մինչև յերկինս
ողորմու̅ն քո. մինչև յամպս
ճշմարտութիւն քո:
14 Բարձրեալ ես դու յերկինս
ա̅ծ. և յա̅մ երկրի են փառք
քո:

## ՍԱՂՄՈՍ. ԾԷ:

1 'Ի կատարած. մի ապականեր.
յարձանագիր. սաղմոս 'ի
դաւիթ:
2 Թէ արդարև զարդարու-
թիւն խօսէիք. և ուղիղս դա-
տէիք որդիք մարդկան:
Քան-

Քանզի և արդ խոկ 'ի սրտի 3
ձերում զանօրէնութ̄ն գոր-
ծէիք յերկրի. անիրաւու̄ն
ձեռք ձեր նիւթեն:
Օտար եղեն մեղաւորք 'ի մօ- 4
րէ. խաբեցան յարգանդէ,
և խօսեցան սուտ:
Սրտմտութիւն նց̄ ըստ նմա- 5
նութ̄ե օձի. որպէս իժի և
քարբի, զի խցեալ է զա-
կանջս իւր:
Զի մի լուիցէ նա զձայն 6
թովչի հմայողի. և մի առցէ
դեղ 'ի դեղատուէ իմաստնոյ:
Ած̄ փշրեսցէ զատամունս 7
նոցա 'ի բերանս իւրեանց.
և զծնօտս առիւծուց խոր-
տակեսցէ տէր:
Անարգ եղիցին նոքա որ̄պ 8
ջուր՝ զի հեղու. 'ի լարել
աղեղան նոցա՝ տկարասցին
ո̄պ մոմ զի հալի, և սպա-
ռեսցին:

Ան-

9 Անկաւ հուր՝ և ոչ տեսին
զարև, մինչև 'ի միտ առեալ
էր փշուշս իւրեանց. որպս
զմնիկ բարկութե՝ կենդա֊
նւոյն կլլեսցէ զնոսա:
10 Ուրախ եղիցի արդարն՝ յոր֊
ժամ տեսցէ զհատուցումն.
և զձեռս իւր լուասցէ յա֊
րեան մեղաւորի:
11 Եւ ասասցէ մարդ. թէ ար֊
դարև գուցէ պտուղ արդա֊
րոյ, և է ած որ դատի զնս
յերկրի:

## ՍԱՂՄՈՍ. ԾԸ.

1 'Ի կատարած. մի ապականեր.
արձանագիր. 'ի ժամանակին զի
առաքեաց սաւուղ, և պահեաց
զտունն նորա, զի սպանցէ զնա.
սաղմոս 'ի Դաւիթ:

2 Փրկեա զիս 'ի թշնամեաց
իմոց ած, յայնցանէ որ
յարուցեալ են 'ի վերայ իմ,

ապր

ապրեցո՛ զիս ։
Փրկեա՛ զիս յայնցանէ, որք 3
գործեն զանօրէնութիւն. յա֊
րանց արիւնահեղաց ապրե֊
ցո՛ զիս ։
Որսալ զանձն իմ կամեցան. 4
և հասին ՚ի վ̄ր իմ հզօրք ։
Ո՛չ մեղք իմ՝ և ո՛չ յան֊ 5
ցանք. առանց մեղաց ընթա֊
ցայ՝ և ուղիղ եղէ ։
Զարթի՛ր ընդ առաջ իմ, և 6
տես դու տէր զօրուեց ա̃ծ
իսրայէլի ։
Նայեա՛ց և այց արա ամենայն 7
հեթանոսաց, մի՛ ողորմիր ա֊
մենեցուն, որք գործեն զա֊
նօրէնութիւն ։
Դարձցին ընդ երեկոյս. սո֊ 8
վեսցին որ̄պս շունք, և շր֊
ջեսցին զքաղաքաւ ։
Նոքա զօղանջեսցեն բերա֊ 9
նոք իւրեանց, և սուր է ՚ի
շրթունս նոցա ։

Իսկ

10 Իսկ արդ՝ ո՞վ լուեաւ զայս.
զի դու Տր ծիծաղեսցիս ըզ-
նոքօք, և արհամարհեսցես
զամ հեթանոսս:
11 Զզօրութիւն իմ առ քեզ պա-
հեցից, զի Ած օգնական իմ է:
12 Ած իմ, ողորմութիւն նորա
կանխեսցէ առ իս. և Ած իմ
ցուցցէ ինձ 'ի թշնամիս իմ:
13 Մի սպանաներ զնոսա, զի
մի մոռասցին զժողովուրդս
քո:
14 Ցրուեա զնն զօրութբ քով,
և ընկեցեա զնն. զի դու ես
պաշտպան իմ Տր:
15 Մեղք բերանոյ նց՝ և բանք
շրթանց նոցա, ըմբռնեսցին նո-
քա յամբարտաւանութեան
իւրեանց:
16 Յանէծս և 'ի ստուն պատ-
մեսցին, 'ի կատարածի բար-
կութեան սպառեսցին և մի
գոյցին:

Գիտասցեն՝ զի ա՛ծ տիրէ յա- 17
կոբայ, և ա՛մ ծագաց երկրի:
Դարձցին ընդ երեկոյս. սո- 18
վեսցին որպ՟ շունք, և շրջես-
ցին զքաղաքաւ:
Նոքա սփռեսցին յուտել. 19
ապա թէ ոչ յագեսցին,
տրտնջեսցեն:
Ես օրհնեցից զօրհնութիւնս 20
տեառն. և ցնծացայց առա-
ւօտուց յողորմութիւն քում:
Զի եղեր իմ պաշտպան՝ և 21
տուն ապաւինի, յաւուր
նեղութեան իմոյ օգնական իմ:
Քեզ սաղմոս ասացից՝ ա՛ծ 22
ապաւէն իմ. ա՛ծ ողորմութիւն
իմոյ:

ՍԱՂ-

# ՍԱՂՄՈՍ. ԾԹ.

1 'Ի կատարած. վասնանշելոց ժա-
մանակաց առ ոսամանէ. 'Ի ժա-
մանակին զի հրծիգ արար նա զՄի-
ջագէտս և զասորէստանն սոփո-
ղայ, և 'ի դարձին հարկանէր յո-
վաբ զձորն աղից յերկոտասան
հազարս: Յարձանագիր. սաղմոս
'ի դաւիթ:

2 Ա՟Ծ մերժեցեր և աւերե-
ցեր զմեզ. բարկացար, և
գթացիր 'ի մեզ:
3 Շարժեցեր զերկիր, և խռո-
վեցուցեր զսա. բժշկեա՛ ըզ-
հարուածս սորա՝ զի սասա-
նեցաւ:
4 Ցուցեր ժողովրդեան քում
խստութիւն. և ետուր ըմպել
մեզ գինի յիմարութեան:
5 Ետուր երկիւղածաց քոց նը-
շան, զի ապրեսցին յերե-
սաց աղեղան:

Որ-

Որպէս փրկեցան սիրելիքն քո. 6
կեցո՛ աջով քո, և լո՛ւր մեզ:
Ա՛ծ խօսեցաւ 'ի սրբութենէ 7
իւրմէ. բարձր եղէց՝ բաժա-
նեցայց զսիւքէմ. և զհո-
վիտսն յարկաց չափեցից:
Իմ է գաղայադ, և իմ է մա- 8
նասէ. եփրեմ հզօրիչ գլխոյ
իմոյ:
Յուդայ թագաւոր իմ. մո- 9
վաբ աւազան յուսոյ իմոյ:
Յեդովմ ուղղեցից զգնացս 10
իմ. և ինձ այլազգիք հնա-
զանդ եղեն:
Ո՞ տայցէ զիս 'ի քաղաք ա- 11
մուր. կամ ո՛ առաջնորդես-
ցէ ինձ մինչև յեդովմ:
Եթէ ոչ դու Ած, որ մեր- 12
ժեցեր զմեզ, և ո՛չ ելեր Ած
ընդ զօրս մեր:
Տուր մեզ օգնութիւն 'ի նե- 13
ղութեան. զի ընդունայն է
փրկութիւն մարդոյ:

14 Աստուծով արասցուք զօ-
րութիւն. և նա արհամար-
հեսցէ զայնոսիկ՝ որ նեղեն
զմեզ:

## ՍԱՂՄՈՍ. Կ:

1 'Ի կատարած ընդ օրհնութիւնս.
սաղմոս 'ի դաւիթ:

2 Լուր ա̃ծ աղօթից իմոց.
և նայեա՛ առ յաղօթս իմ:
3 'Ի ծագաց երկրէ կարդացի
առ քեզ, մինչև 'ի վաստա-
կել սրտի իմոյ:
4 'Ի վիմէ բարձր արարեր զիս.
առաջնորդեցեր ինձ, և իմ
եղեր յոյս՝ և աշտարակ հզօր
եղեր ինձ յերեսաց թշնամ-
ւոյն:
5 Բնակեցայց 'ի յարկս քո յա-
ւիտեան. և ծածկեցայց ընդ
հովանեաւ թևոց քոյ:
6 Դու ա̃ծ, լուա՛ր աղօթից
իմոց. ետուր ժառանգու-

թիւն, որք երկնչին յանուա-
նէ քումմէ:

7 Աւուրս յաւուր յաւելեր
թագաւորի ամաց նորա, ա-
ւուրս ազգաց մինչեւ յազգս
նորա:

8 Կայ եւ մնայ յաւիտեան ա-
ռաջի այ ողորմութիւն եւ
ճշմարտութի, որք խնդրես-
ցեն 'ի նմանէ:

9 Այսպէս սաղմոս ասացից
քեզ յաւիտեանս յաւիտե-
նից. եւ տաց քեզ զաղօթս
իմ օր ըստ օրէ:

## ՍԱՂՄՈՍ. ԿԱ:

1 'ի կատարած. 'ի վերայ Իդի-
թունայ. սաղմոս 'ի Դաւիթ:

2 Ոչապաց միայն այ հնազանդ
լեր անձն իմ. զի 'ի
նմանէ է ինձ փրկութիւն:

3 Նա է ած իմ եւ փրկիչ իմ.
ապաւէն իմ, զի մի սասա-
նե-

նեցայց առաւել:

4 Մինչև յերբ յառնէք 'ի վե-
րայ մարդոյ՝ սպանանել ա-
մենեքեան. որպէս յորմոյ
թիւրելոյ՝ և 'ի ցանկոյ մեր-
ժելոյ:
5 Բայց միայն զպատիւ իմ
խորհեցան մերժել յինէն. և
ընթացան 'ի ծարաւ իւ-
րեանց:
6 Բերանովք իւրեանց օրհնէին
և սրտիւք անիծանէին:
7 Բայց սակայն այ հնազանդ
լեցի անձն իմ. զի 'ի նմանէ
է ինձ համբերութիւն:
8 Նա է ած իմ և փրկիչ իմ,
ապաւէն իմ. զի մի սասա-
նեցայց:
9 Յայ է զօրութիւն իմ և փառք
իմ. ած օգնութեան իմոյ, յոյս
իմ է առ ած:
10 Յուսացարուք 'ի նա ամ ժո-
ղովք ժողովրդոց. սփռեցէք
ա-

առաջի ն՟ր զսիրտս ձեր, զի
Ա՟ծ օգնական է մեր յաւի֊
տեանս ժամանակաց:
Սակայն ընդունայն են որ֊ 11
դիք մարդկան. սուտ են որ֊
դիք մարդկան, ՚ի կշիռս խա֊
բեանց մեղանչեն, և նոքեանք
յունայնութե՟ն են ՚ի միասին:
Մի յուսայք յանիրաւութե՟ն, 12
յափշտակութե՟ն մի ցանկայք.
և մեծութե՟ն թէ առհ՟ն գայ֊
ցէ, մի յօժարեսցին սիրտք
ձեր:
Միանգամ խօսեցաւ Ա՟ծ, 13
և երկուս զայս լուայ:
Ցոյց է զօրութե՟ն, և քո Տէր 14
ողորմութիւն. և դու հա֊
տուցանես իւրաքանչիւր ը՟
գործս ՚նոցա:

# ՍԱՂՄՈՍ. ԿԲ։

1 Սաղմոս 'ի Դաւիթ. մինչդե-
ռէր նա յանապատին անդ Հրէ-
աստանի։

2 Ա՛ծ ա՛ծ իմ, ես առ քեզ ա-
ռաւօտ առնեմ. ծարաւեաց
առ քեզ հոգի իմ. քանիկպա-
տիկ ևս և մարմին իմ։
3 Որպէս երկիր անապատ և
անջուր. ուր ոչ գոյ 'ի նմա
ճանապարհ։
4 Այսպէս 'ի սրբս երևեցայց
քեզ, տեսանել ինձ զզօրու-
թիւն քո և զփառս քո։
5 Վասն զի լաւ է ինձ ողոր-
մութիւն քո քան զկեանս իմ.
և շրթունք իմ գովեսցեն
զքեզ։
6 Այսպէս օրհնեցից զքեզ 'ի
կեանս իմ, և յանուն քո
համբարձից զձեռս իմ։
7 Որպէս 'ի ճարպոյ պարար-
տու-

տութ՟է լցցի անձն իմ, շըր-
թամբք ցնծութ՟ե օրհնեսցէ
զքեզ բերան իմ:
Զի թէ յիշէի զքեզ յան- 8
կողնի իմում, ը՟ առաւօտս
կանխեալ խօսէի ընդ քեզ:
Զի եղեր իմ օգնական, 'ի 9
հովանի թեւոց քոց ցնծա-
ցայց:
Եկն զկնի քո անձն իմ. և 10
զիս ընկալաւ աջ քո. և նք՟
'ի նանիր խնդրեցին զանձն
իմ:
Մտցեն 'ի ներքոյ անդնդոց 11
երկրի. մատնեսցին 'ի ձեռս
սրոյ, և բաժինք աղուեսուց
եղիցին:
Թագաւոր յուսացաւ 'ի տր՟. 12
գովեսցին ամենեքեան՝ որ
երդնուն նովաւ. խցցին բե-
րանք այնոցիկ՝ որք խօսէին
զանիրաւութիւն:

ՍԱՂ-

# ՍԱՂՄՈՍ. ԿԳ:

1 'Ի կատարած. սաղմոս
Դաւթի:

2 Լուր ած աղօթից իմոց յա-
ղաչել ինձ առ քեզ. յերկիւ-
ղէ թշնամւոյն փրկեա զանձն
իմ:
3 Ծածկեսցես զիս 'ի ժողո-
վոց չարաց. 'ի բազմութենէ՝
Որք գործեն զանօրէնութիւն:
4 Որք սրեցին որպէս սուսեր
զլեզուս իւրեանց. լարեցին
զաղեղունս իւրեանց յիրս
դառնութե:
5 Զգել 'ի գաղտնիս այնոցիկ՝
Որք ուղիղ են սրտիւք. յան-
կարծակի ձգեսցեն 'ի նոսա,
և մի երկիցեն:
6 Որք զօրացուցին յանձինս
իւրեանց զբանս չարութե.
խորհեցան թագուցանել ինձ
որոգայթ. և ասացին ոչ տե-
սա-

սանէ զայս տէր ։
Քննեցին զանօրէնութիւն, 7
պատրաստեցան ՚ի քննել
զքննութիւն ։
Մատիցէ այր ՚ի խորութիւն 8
սրտի իւրոյ, և բարձր եղի
ցի ած ։
Նետք տղայոց եղեն վէրք 9
նոցա. տկարացան ՚ի նմ լե
զուք իւրեանց, և խռովեա
ցին ամենեքեան՝ որք հայէին
ընդ նմ ։
Երկեաւ ամ մարդ. և պատ 10
մեցին զգործս այ, և զարա
րածս նր ՚ի միտ առին ։
Ուրախ եղիցի արդար ՚ի տր 11
և յուսասցի ՚ի նա. նովաւ
գովեսցին ամենեքեան, որք
ուղիղ են սրտիւք ։

# ՍԱՂՄՈՍ. ԿԴ:

1 'Ի կատարած . սաղմոս 'ի դա-
ւիթ : Օրհնութի՛ էր մայր՝ եկե-
ղեցւոյ՝ և ժողովրդեանն , յորժամ
'ի պանդխտութէն կամէին ելանել:

2 Քեզ վայելէ օրհնութիւն
ած 'ի սիոնի . և քեզ
տացին աղօթք յերուսաղէմ :
3 Լո՛ւր աղօթից իմոց , զի առ
քեզ ամ մարմին եկեսցէ :
4 Բանք անօրինաց զօրացան 'ի
վ՟ր մեր . զամբարշտութիւնս
մեր դու քաւեսցես :
5 Երանի զոր ընտրեցեր և ըն-
կալար , և բնակեսցեն 'ի դա-
ւիթս քո :
6 Լցցուք մեք 'ի բարութենէ
տան քո . սուրբ է տաճար քո՝
սքանչելի արդարութբ :
7 Լո՛ւր մեզ ած փրկիչ մեր ,
յոյս ամ ծագաց երկրի , և
որ

որ ՚ի ծով հեռի։

Որ պատրաստէ զլերինս զօ- 8
րութ̃բ իւրով. և զգեցեալ
է զօրութիւն։

Որ խռովեցուցանէ զմեծու- 9
թիւն ծովու, և զձայն ալեաց
նորա ցածուցանէ։

Խռովեսցին հեթանոսք, և 10
երկիցեն բնակիչք երկրի ՚ի
նշանաց քոց։

Յելս առաւօտու՝ ընդ երե- 11
կոյս զուարճասցին. Հայե-
ցար յերկիր՝ արբեցուցեր
զնա, և բազում արարեր ըն
մեծութիւն նր̃։

Գետն ա̃յ լի եղև ջուրբ. 12
պատրաստ արարեր զկերա-
կուր նորա, զի այսպէս է
պատրաստութիւն։

Զակօս նր̃ արբեցուցեր, և 13
բազում արարեր զարմտիս
նորա։

՚Ի ցօղել նր̃ զուարթ եղիցի 14
բոյս

բոյս նորա. օրհնեսցի պսակ
տարւոյ քաղցրութե՟ն քոյ:
15 Դաշտք քո լցցին պարար-
տութե՟բ. պարարտասցին գե-
ղեցկութիւնք անապատի:
16 Բլուրք ցնծութե՟ն զգեցցին,
եւ զգեցցին խոյք մաքեաց:
17 Հովիտք բազում արասցեն
ցորեան, աղաղակեսցեն եւ
օրհնեսցեն:

## ՍԱՂՄՈՍ. ԿԵ:

1 'Ի կատարած. սաղմոս 'ի դա-
ւիթ. յարութե՟ն:
2 Աղաղակեցէք առ Ա՟ծ ա՟մ
երկիր. սաղմոս ասացէք ան-
ուան ն՟ր, եւ տուք զփառս
օրհնութե՟ն ն՟ր:
3 Ասացէք ա՟յ, որպէս զի ա-
հեղ են գործք քո. 'ի բա-
զում զօրութե՟ն քում ստե-
ցին քեզ թշնամիք քո:
4 Ամենայն երկիր երկիրպագ-
ցեն

ցեն քեզ. սաղմոս ասասցեն
քեզ, և սաղմոս ասասցեն
անուա՛ն քում:
Եկա՛յք և տեսէք զգործս 5
ա̃յ. որպէս զի ահեղ են խոր-
հըրդովք՝ քան զամենայն
որդւոց մարդկան:
Ո դարձոյց զծո՛վ 'ի ցա- 6
մաք. և ընդ գետս անցցեն
յոտանաւորք:
Անդ ուրախ եղիցուք մեք 7
'ի նա, որ տիրէ՛ն զօրութե̃
իւրով յաւիտենից:
Աչք նորա՛ 'ի հեթանոսս հայ- 8
յին. ոյք դառնացուցին զնա՛
մի բարձրասցին յանձինս իւ-
րեանց:
Օրհնեցէք հեթանոսք զա̃ծ 9
մեր. լուելի արարէք զձայն
օրհնութե՛ն նորա:
Այն որ ետ զանձն իմ 'ի 10
կեանս, և ո՛չ ետ դողութե՛ն
ոտից իմոց:

Փոր-

11 Փորձեցեր զմեզ ա՟ծ և քննե-
ցեր, որպէս և քննի արծաթ։
12 Իջուցեր զմեզ յորոգայթ,
եդիր նեղութ՟ն 'ի թիկունս
մեր. և անցուցեր զմարդիկ
'ի վերայ գլխոց մերոց։
13 Անցաք մեք ընդ հուր և ը՟դ
ջուր, և հաներ զմեզ 'ի
հանգիստ։
14 Մտից 'ի տուն քո պատա-
րագօք. տաց քեզ զուխտ
իմ, զոր խոստացան քեզ
շրթունք իմ, զոր բերան
իմ խօսեցաւ 'ի նեղութ՟ե։
15 Զողջակէզս ուղղալիցս մա-
տուցից քեզ՝ խոյօք և խըն-
կօք. և քեզ մատուցից զուա-
րակս և նոխազս։
16 Եկա՛յք լուարո՛ւք ինձ՝ և
պատմեցից ձեզ ամենեքեան՝
որք երկնչիք յա՟յ, զոր ինչ
արար անձին իմոյ։
17 Ա՛ռ նա բերանով իմով կար-
դա-

գացի . և բարձր արարից
զնա լեզուաւ իմով:
Զմեղս թէ տեսանէի 'ի սըր- 18
տի իմում, միթէ լուէր ինձ
տէր:
Վասն այսորիկ լուաւ ա̃ծ, 19
և նայեցաւ 'ի ձայն խնդրը-
ուածաց իմոց:
Օրհնեալ է ա̃ծ՝ որ ոչ 'ի 20
բացեայ արար զաղօթս իմ,
և ոչ զողորմութիւն իւր յի-
նէն:

## ՍԱՂՄՈՍ. ԿԶ:

'Ի կատարած. ընդ օրհնութիւնս. 1
սաղմոս երգոյ:

Ա̃Ծ ողորմեսցի մեզ և օրհ- 2
նեսցէ զմեզ. երևեսցի զերեսս
քո 'ի մեզ՝ և ողորմեսցի մեզ:
Ճանաչել յերկրի զճանա- 3
պարհս քո, յազգիս ամ̃ ըզ-
փրկութիւնս քո:
Խոստովան եղիցին առ քեզ 4
ժո-

ժողովուրդք ա̃ծ, խոստովան
եղիցին առ քեզ ժողովուրդք
ամենայն:
5 Ուրախ եղիցին և ցնծաս-
ցեն ազինք. զի դու դատիս
զժողովուրդս յուղղութի̃.
և ազգաց երկրի դու առաջ-
նորդես:
6 Խոստովան եղիցին առ քեզ
ժողովուրդք ա̃ծ. գոհասցին
զքեզ ժողովուրդք ամենայն:
7 Երկիր ետ զպտուղ իւր, և
օրհնեաց զմեզ ա̃ծ ա̃ծ մեր:
8 Ա̃ծ մեր օրհնեսցէ զմեզ, և
'ի նմանէ երկիցեն ա̃մ ծագք
երկրի:

## ՍԱՂՄՈՍ. ԿԷ:

1 'Ի կատարած. սաղմոս
'ի դաւիթ:

2 Յարիցէ ա̃ծ՝ և ցրուես-
ցին ամենայն թշնամիք
ն̃ր; փախիցեն ատելիք ն̃ր

յե-

յերեսաց նր՟։

Ոպ՟ պակասէ ծուխ՝ պակա- 3
սեսցին. ոպ՟ հալի մոմ ա-
ռաջի հրոյ՝ այնպս՟ կորիցեն
մեղաւորք յերեսաց այ՟։

Արդարք ուրախ եղիցին՝ և 4
ցնծասցեն առաջի նորա, և
զուարճասցին յուրախութե՟ն
իւրեանց։

Օրհնեցէք զած՟՝ և սաղմոս 5
սացէք անուան նր՟. ճա-
նապարհ արարէք այնմիկ՝
որ նստի ընդ արեմուտս.
և տէր է անուն նր՟։

Ցնծասցեն առաջի նորա, և 6
խռովեսցին յերեսաց նորա։

Որ հայրն է որբոց՝ և դա- 7
տաւոր այրեաց, ած՟ 'ի տեղ-
ւոջ սրբութե՟ն իւրում։

Ած՟ բնակեցուցանէ զմիա- 8
կրօնս 'ի տան, և հանէ զկա-
պեալս քաջութեամբ իւրով.
սոյնպէս և զդառնացօղս՝ որ
բնա-

բնակեալ են 'ի գերեզմանս:
9 Ած ընդ ելանել քեզ առա֊
ջի ժողովրդեան քո · ընդ
անցանել քեզ ընդ անապատ՝
երկիր շարժեցաւ:
10 Քանզի և երկինք ցօղեսցին
յերեսաց այ 'ի սինէ՝ առա֊
ջի այ իսրայէլի:
11 Անձրև կամաց պատրաստե֊
ցեր ած ժառանգութեան
քում · թէպէտ հիւանդա֊
ցաւ, սակայն դու հաստա֊
տեցեր զնա, և գաղանք քո
բնակեսցեն 'ի նմա:
12 Պատրաստ արարեր քաղց֊
րութբ քո աղքատի ած ·
տէր տացէ զբան, որք աւե֊
տարանեն զօրութբ բազմաւ:
13 Թագաւոր զօրութեց սի֊
րելւոյ, զգեղեցկութի տան
քո բաժանեալ յաւարի · թէ֊
պէտ և ննջեսջիք 'ի մէջ վի֊
ճակաց:

Թեւք աղաւնւոյ արծաթա- 14
պատ, և թիկնամէջք նր 'ի
գոյն ոսկւոյ:
'Ի գումարել երկնաւորին 15
զթագաւորս 'ի վր նր, ձիւ-
նասցին 'ի Սաղմոն:
Լեառն այ լեառն պարարտ, 16
լեառն մածեալ, և լեառն
պարարտ. և զի՞նչ կարծէք
լերինք հպարտացեալք:
Լեառն, զ որ հաճեցաւ ած 17
բնակել 'ի նմա. քանզի և
տէր իսկ բնակեսցէ 'ի նմա
իսպառ:
Կառք այ բիւրապատիկք, 18
հազարք ուղղիչք, և տէր 'ի
նոսա 'ի սինէ սրբութենէ
իւրմէ:
Ել 'ի բարձունս՝ և գերեաց 19
զգերութի. առ տուր՝ բաշ-
խեաց պարգևս՝ և ետ որդ-
ւոց մարդկան. քանզի թե-
րահաւատից ես բնակել
եղե

եղիցի 'ի նմա ։
20 Տէր ա̃ծ օրհնեալ՝ օրհնեալ
տէր զօրհանապազ, առաջ-
նորդեսցէ մեզ ա̃ծ փրկիչ
մեր ։
21 Ա̃ծ մեր ա̃ծ կենարար, և
'ի տ̃նէ են ելք մահու ։
22 Բայց սակայն՝ ա̃ծ փշրեսցէ
զգլուխ թշնամեաց մերոց .
և զհերն կարճնովլն, որ
գնան յանօրէնութեան իւ-
րեանց ։
23 Ասաց տէր՝ 'ի խորոց անդըն-
դոց դարձուցից, և 'ի միջոյ
ծանեաց զայն 'ի գուբս կոր-
զեցից ։
24 Որպէս թացցի ոտն քո յա-
րեան, և լեզուք շանց քոց
յարենէ թշնամեաց քոց ։
25 Երևեցան գնացք քո ա̃ծ,
գնացք ա̃յ թագաւորին մե-
րոյ սրբոյ ։
26 Կանխեցին իշխանք հանեալ
զօրհ-

զօրհնութիւն, 'ի մէջ կուսա-
նայց և գովչաց ։
Ցնկնելեցիս օրհնեցէք զա՟ծ. 27
և զանէր յաղթերացն խարայ-
էլի ։
Ընդ բէնիամին 'ի տղայու- 28
թեան զարմանալի, իշխանք
յուդայ առաջնորդք նորա՛
իշխանք զաբուղոնի, և իշ-
խանք նեփթաղիմայ ։
Հրամայեա՛ ա՟ծ զօրութ՟քով. 29
զօրացո՛ զայս, զոր հաստա-
տեցեր 'ի մեզ ։
'Ի տաճարէ քումմէ յերու- 30
սաղեմէ, քեզ մատուսցեն
թագաւորք զպատարագս ։
Սաստեա՛ 'ի գազան եղեգան, 31
'ի ժողովս զուարակաց՝ և 'ի
գառս երինջոց ։
Խոտեսցին այնոքիկ՝ որ ընտ- 32
րեալ են արծաթով. ցրուեա՛
զհեթանոսս՝ և որք կամին
ընդ պատերազմ ։

Ե-

33 Եկեսցեն հրեշտակք յեգիպ-
տոսէ. հնդիկք յառաջագոյն
ձեռնտու լիցին առ ած:
34 Թագաւորութիւնք երկրի օրհ-
նեցէք զած, և սաղմոս ա-
սացէք տն:
35 Ճանապարհ արարէք այն-
միկ, որ նստի յերկինս երկ-
նից ընդ յարևելս:
36 Ահա տացէ զձայն իւր 'ի
ձայն զօրութե. և տուք ըզ-
փառս տն:
37 'Ի վերայ իսրայէլի մեծ վայ-
ելչութի նորա. զօրութի նր
մինչև յամպս երկնից:
38 Սքանչելի է ած 'ի վերայ
սրբոց իւրոց, ած իսրայէլի:
39 Նա տացէ զօրութի հաստա-
տութի ժողովրդեան իւրոյ.
օրհնեալ է ած:

# ՍԱՂՄՈՍ. ԿԸ։

'Ի կատարած. վասն զարտուղե- 1
լոցն. սաղմոս 'ի Դաւիթ։

Կեցո՛ զիս ա՛ծ, զի հասին 2
ջուրք յանձն իմ. ընկլայ
ես 'ի խորս անդնդոց, ուր
ո՛չ գոյ ինձ հանդիստ։
Եկի ես 'ի խորս ծովու, և 3
շրջանք ընկղմեցին զիս։
Վաստակեցի ես առ աղաղա- 4
կել, և կերկերեցաւ կոկորդ
իմ։
Նուաղեցին աչք իմ, առ 5
յուսալ ինձ առ տէր ա՛ծ իմ։
Բազումեղեն քան զհեր գլու- 6
խոյ իմոյ, ոյք ատէին զիս
'ի տարապարտուց։
Զօրացան յիս թշնամիք իմ 7
և ատելիք իմ 'ի նանիր.
ինչ զոր ո՛չ յափշտակեալ էր՝
տուժէի նոցա։
Ա՛ծ դու ծանեար զանզգա- 8
մու‿

մութն իմ. և յանցանք իմ
'ի քէն ոչ ծածկեցան:
9 Մի ամաչեսցեն վասն իմ,
որք համբերեն քեզ տէր՝ տէր
զօրութեց. մի պատկառես-
ցեն վասն իմ, որք խնդրեն
զքեզ ած իսրայէլի:
10 Վասն քո համբերի նախա-
տանաց, և ծածկեաց ամօթ
զերեսս իմ:
11 Օտար եղէ ես յեղբարց ի-
մոց, և հիւր որդւոց մօր
իմոյ:
12 Նախանձ տան քո եկեր զիս.
նախատինք նախատչաց քոց
անկան 'ի վերայ իմ:
13 Խոնարհեցուցի պահօք զանձն
իմ, և եղեն ինձ այս նախա-
տինք. արարի զհանդերձս
իմ քուրձ, և եղէ առակ նց:
14 Զինեն խորհէին, որք նըս-
տէին առ դրունս. զիս այպն
առնէին, որք ըմպէին գինի:

Ես

Ես յաղօթս կայի առ քեզ 15
Տէր, 'ի ժամանակ ընդու-
նելի։

Ած 'ի բազում ողորմութեն 16
քում լո՛ւր ինձ, 'ի ճշմար-
տութեն փրկութեն քո։

Ապրեցո՛ զիս 'ի կաւոյ՝ զի 17
մի ընկլայց. ապրեցայց ես
յատելեաց իմոց, և 'ի խո-
րոց ջուրց բազմաց։

Մի՛ ընկլցեն զիս ստոյաք 18
ջուրց, և մի ընկղմեսցեն զիս
անդունդք խորոց. ջրհոր մի
կափուսցէ զբերան իւր 'ի
վերայ իմ։

Լո՛ւր ինձ Տէր, զի քաղցր է 19
ողորմութին քո. ըստ բազում
գթութեն քո հայեա՛ց յիս, և
մի դարձուցաներ զերեսս քո
'ի ծառայէ քումմէ. զի նե-
ղեալ իմ ես, վաղվաղակի
լո՛ւր ինձ։

Հայեա՛ց յանձն իմ, և փր- 20
կեա՛

կեա՛ զիս. և վասն թշնամեաց
իմոց ապրեցո՛ զիս:
21 Զի դու գիտես զնախատինս
իմ, զամօթ իմ, և զպատ-
կառանս իմ:
22 Առաջի քո են ա՛մ նեղիչք
անձին իմոյ. նախատանաց
համբերեր սիրտ իմ, և թշուառ-
ութեն:
23 Ակն ունէի՝ թէ ո տրտմես-
ցի ընդ իս, և ո՛չ ոք էր. և
մխիթարիչ ինձ ոք ո՛չ գտաւ:
24 Ետուն 'ի կերակուր ինձ լե-
ղի, և 'ի ծարաւ իմ արբու-
ցին ինձ քացախ:
25 Եղիցին սեղանք նոցա առա-
ջի նոցա յորոգայթ, 'ի հա-
տուցումն և 'ի գայթագղութ:
26 Խաւարեսցին աչք նոցա, զի
մի՛ տեսցեն. և զթիկունս
ն՛ց հանապազ կորացո՛:
27 Արկցես 'ի վերայ ն՛ց ըզ-
բարկութի քո. սրտմտութի
բար-

բարկութեան քոյ հասցէ 'ի
վերայ նոցա :
Եղիցին բնակութիւնք նոցա ա- 28
ւերակ. և 'ի յարկս նոցա մի
ոք լիցի՝ որ բնակեսցէ :
Զի զոր դուն հարեր, հա- 29
լածեցին. և 'ի վերս ցաւոց
իմոց յաւելին :
Դիր զմեղս 'ի վերայ մեղաց 30
նց, զի մի մտցեն յարդա-
րութիւն քո :
Ջնջեսցին նոքա 'ի դպրութէ 31
քումմէ կենաց. և ընդ ար-
դարս քո մի գրեսցին :
Աղքատ և ցաւած եմ ես, 32
փրկութիւն քո ած ընկալցի
զիս :
Օրհնեսցից զանուն այ իմոյ 33
օրհնութբ, և բարձր արա-
րից զնա գովութբ :
Հաճոյ եղիցի այ քան զորթ 34
մատաղ, որ բերէ եղջիւրս
և կճղակս :

Տես-

35 Տեսցեն աղքատք՝ և ուրախ
եղիցին. խնդրեցէք զա՟ծ, և
կեցցեն անձինք ձեր:
36 Զի լուաւ Տէր անանկաց.
և զկապեալս իւր ոչ արհա-
մարհեաց:
37 Օրհնեսցեն զնա երկինք և
երկիր, ծով և ա՟մ որ զե-
ռայ 'ի նոսա:
38 Ա՟ծ փրկէ զսի՟ոն, և շինես-
ցին քաղաքք Հրէաստանի.
շինեսցեն բնակեսցեն՝ և ժա-
ռանգեսցեն 'ի նմա:
39 Զաւակ ծառայից քոց հաս-
տատեսցի անդ. և որք սի-
րեն զանուն քո, բնակեսցեն
'ի նմա:

## ՍԱՂՄՈՍ. ԿԹ:

1 'Ի կատարած. 'Ի դաւիթ՝ առ
'Ի յիշատակ փրկելոյ զնա
տ՟ն. սաղմոս:
2 Ա՟Ծ յօգնել ինձ նայեաց.
և

և տէր յընկերել ինձ փութա՛:
Ամաչեսցեն և յամօթ լիցին, 3
որ խնդրեն զանձն իմ. դարձ-
ցին յետս և ամաչեսցեն,
որք խորհէին ինձ չար:
Դարձցին առ ժամայն ամա- 4
չեցեալ. որ ասէին ինձ վա՛շ
վա՛շ:
Ցնծասցեն և ուրախ լիցին 5
'ի քեզ ամենեքեան, որ խնդ-
րեն զքեզ տէր:
Ասասցեն յամ ժամ, մեծ է 6
տծ, և որք սիրեն զփրկու-
թիս քո:
Ես աղքատ և տնանկ եմ, 7
տծ օգնեա՛ ինձ. օգնական
և փրկիչ իմ ես և տէր իմ՝
մի յամենար:

# ՍԱՂՄՈՍ· Հ։

1 'Ի կատարած․ որդւոցն յովնա-
դաբայ․ յետ առաջնոյ գե-
րութեան․ սաղմոս 'ի դաւիթ։

2 'Ի քեզ տէր յուսացայ, մի
ամաչեցից յաւիտեան․
յարդարութե քում փրկեա
զիս և ապրեցո զիս։
3 Խոնարհեցո առ իս զունկն
քո, և կեցո զիս։
4 Լեր իմ ած ապաւէն, և տե-
ղի ամուր կեցուցանել զիս․
զի հաստատութի իմ և ապա-
ւէն իմ դու ես։
5 Ած իմ, փրկեա զիս 'ի ձե-
ռաց մեղաւորի, 'ի ձեռաց
անօրինի և անիրաւի։
6 Դու ես համբերութի իմ
տէր, տէր յոյս իմ 'ի մանկու-
թէ իմմէ։
7 'Ի քեզ հաստատեցայ ես յոր-
կանդէ, յորովայնէ մօր իմոյ
դու

դու ես ապաւէն իմ, և առ
'ի քէն է օգնութիւն իմ յամե-
նայն ժամ:
Որպէս զի նշաւակ եղէ ես 8
բազմաց . և դու օգնական
իմ և հզօրիչ իմ:
Լցցի բերան իմ գովութեամբ, 9
որպէս օրհնեցից զփառս քո.
զօրհանապազ զմեծ վայել-
չութիւնս քո:
Մի ընկենուր զիս տէր 'ի 10
ժամանակս ծերութեան. 'ի պա-
կասել զօրութեան իմոյ մի թո-
ղուր զիս:
Ասացին թշնամիք իմ ինձ. 11
և որ պաշարեցին զանձն իմ,
խորհեցան 'ի միասին և ա-
սացին:
Ած եթող զնա, հալածես- 12
ցուք և հասցուք նմա. զի ոչ
ոք է որ փրկէ զնա:
Ած իմ, մի հեռի առնիր յի- 13
նէն. և ած յօգնել ինձ նայ-
եաց:

եայց ։

14 Ամաչեսցեն և պակասեսցին՝
Որք չարախօս կային զանձնէ
իմմէ. զգեցցին զամօթ և ըզ-
պատկառանս, որք խնդրէին
ինձ չար ։

15 Ես յամ ժամ յուսացայց, և
յաւելից յօրհնութիւն քո ։

16 Բերան իմ պատմեսցէ զար-
դարութիւն քո, զօրհանապազ
զգովութիւնս քո ։

17 Որպէս ոչ թէ խարդախութն
ինչ գիտէի ես դպրութեան.
այլ մտից 'ի զօրութիւն տն.
և տէր յիշեցի զարդարութիւն
քո միայն ։

18 Ած իմ, ուսուցեր զիս 'ի
մանկութէ իմմէ. և ցարդ
ես պատմեցից զարդարու-
թիւնս քո ։

19 Մինչև յալևորել և 'ի ծե-
րանալ, ած իմ մի թողուր
զիս ։

Մին-

Մինչև պատմեսցէ բազուկ 20
քո՝ ազգի ամենայնի որ գա-
լոցն է։

Զզօրութիւնս քո և զարդա- 21
րութիւնս մինչ'ի բարձունս,
զոր արարեր մեծամեծս. ած
ո՞ նմանէ քեզ։

Որչափ ցուցեր ինձ նեղութիւն 22
բազում և չարչարանս, դար-
ձար և մխիթարեցեր զիս. և
'ի խորոց անդնդոց երկրէ
հաներ զիս։

Յաճախեցեր 'ի զօրութիւնս 23
քո, դարձար մխիթարեցեր
զիս, և 'ի խորոց երկրէ միւ-
անգամ հաներ զիս։

Արդ և ես խոստովան եղէց 24
քեզ 'ի պատրաստութեն սաղ-
մոսաց ճշմարիտդ ած. սաղ-
մոս ասացից քեզ օրհնութեն
սուրբդ իսրայէլի։

Ցնծասցեն շրթունք իմ, յոր- 25
ժամ սաղմոս ասիցեն քեզ.

և անձն իմ՝ զոր և փրկեցեր։
26 Եւս՝ և լեզու իմ՝ զօրհանա-
պազ խօսեսցի զարդարու-
թիւնս քո։
27 'Ի ժամանակի որպէս յամօթ-
լիցին և ամաչեսցեն, որք
խնդրէին ինձ չար։

## ՍԱՂՄՈՍ. ՀԱ։

'Ի սողոմոն սաղմոս։

1 ԱԾ զիրաւունս քո արքայի
տուր, և զարդարութիւնս քո
որդւոյ թագաւորի։
2 Դատել զժողովուրդս քո
արդարութբ, և զաղքատս
քո իրաւամբք։
3 Առցեն լերինք զխաղաղութի
ժողովրդեան, և բլուրք զար-
դարութիւն։
4 Իրաւ արասցէ աղքատաց
ժողովրդեան. և կեցուսցէ
զորդիս անանկաց, և խո-
նարհեցուսցէ զամբարտա-
ւանս։

ւանս :

Կացցէ և մնասցէ ը՟ արևու, 5
յառաջ քան զլուսին ազգէ
մինչև յազգ :

Իջցէ որպէս զանձրև 'ի վր՟ 6
գեղման, որպէս ցօղ զի ցօղէ
յերկիր :

Ծագեսցէ յաւուրս նր՟ ար- 7
դարութիւն. բազում խաղա-
ղութիւն մինչև կատարեսցի
լուսին :

Տիրեսցէ նա 'ի ծովէ մինչև 8
'ի ծով. 'ի գետոց մինչև 'ի
ծագս աշխարհի :

Առաջի նորա նախ հնդիկք 9
անկցին. և թշնամիք նորա
հող լիզցեն :

Թագաւորք Թարսիս և կղզ- 10
ղեաց՝ պատարագս մատու-
ցեն նմա. Թագաւորք արա-
բայ և սաբայ՝ պատարագս
բերցեն նմա :

Երկիր պագցեն նմա ամ՟ թա- 11

գա-

գաւորք երկրի. և ա՟մ ազգք
ծառայեսցեն նմա:
12 Զի փրկեաց զաղքատն 'ի
հզօրէ. զաղքատն և զտը-
նանկն, որոյ ոչ է իւր օգ-
նական:
13 Անխայեսցէ նա յաղքատն
և 'ի տնանկն. և զանձինս
տնանկաց կեցուսցէ. 'ի վաշ-
խից չարեաց փրկեսցէ զան-
ձինս ն՟ց:
14 Պատուական է անուն նո-
րա առաջի նոցա. կեցցէ.
և տացի նմա յոսկւոյն արա-
բացւոց:
15 Յաղօթս կացցեն առ նա
յա՟մ ժամ. և զօրհանապազ
օրհնեսցեն զնա:
16 Եղիցի հաստատութիւն ընդ
ա՟մ երկիր. և 'ի վ՟ր գլխոց
լերանց:
17 Բարձրասցի քան զլերանան
պտուղ նորա. ծաղկեսցի 'ի
քա-

քաղաքի տեառն որպէս խոտ
երկրի:
Եղիցի անուն տն օրհնեալ 18
յաւիտեան. զի յառաջ քան
զարև է անուն նր:
՚Ի նա օրհնեսցին ամ ազգք 19
երկրի, և ամ ազինք երանի-
ցեն նմա:
Օրհնեալ տէր ած իսրայէլի 20
որ առնէ սքանչելիս միայն.
և օրհնեալ է անուն նր փա-
ռաց նր յաւիտեան, լցցի
փառօք նր ամ երկիր. եղի-
ցի եղիցի:

## ԱՂՕԹՔ

### Աննայի մօրն Սամուէլի:

Հաստատեցաւ սիրտ իմ 1
՚ի տէր, և բարձրացաւ
եղջիւր իմ յած փրկիչ իմ:
Ընդարձակեցաւ բերան իմ 2
՚ի

'ի վ՟ր թշնամեաց իմոց. ու-
րախ եղէց 'ի փրկութի՟ն քում:
3 Զի ոչ գոյ ս՟բ ո՟պ զտէր, և
ոչ արդար ո՟պ զա՟ծ մեր. և
չիք ս՟բ բաց յա՟յ մերմէ:
4 Մի պարծիք և մի խօսիք
զամբարտաւանս. և մի ելցէ
ընդ բերանս ձեր բան հպարտ
մեծաբանութե՟ն:
5 Ա՟ծ գիտութեց՝ տէր ա՟ծ պատ-
րաստէ իւրով իմաստութ՟բ՝
զգնացութի՟ն յարարածս իւր:
6 Հզօրաց հաստ աղեղունք
թուլացան, և տկարք վա-
ռեցան զօրութ՟բ:
7 Յագք և լիք հացիւ՝ նուա-
ղեցին. և քաղցեալք լցին
զերկիր:
8 Ամուլն ծնաւ եօթն, և բազ-
մածինն նուաղեաց 'ի ծննդոց:
9 Տէր մեռուցանէ, և տէր կե-
ցուցանէ. իջուցանէ 'ի դը-
ժոխս՝ և հանէ:

Տէր

Տէր աղքատացուցանէ՝ և ն͞ր 10
մեծացուցանէ. խոնարհ առ-
նէ զամբարտաւանս մինչև
յերկիր, և բարձր առնէ
զտառապեալս յաղբեաց:
Հաստուցանէ զն͞մ իշխանս՝ ը͞ն 11
իշխանս ժողովրդեան. և ա-
թոռ փառաց ժառանգեցու-
ցանէ ն͞ց:
Կատարէ զուխտս ուխտաւո- 12
րաց. և օրհնեաց զամս ար-
դարոց:
Զի ոչ թէ իւրով զօրութ͞ե 13
զօրանայ հզօր. այլ տէր տկար
առնէ զհակառակորդս իւր.
տէր սուրբ է:
Մի պարծեսցի խորհրդա- 14
կանն 'ի խորհուրդս իւր. և
մի պարծեսցի հզօրն 'ի զօ-
րութեն իւրում. և մի պար-
ծեսցի մեծն 'ի մեծութեն իւ-
րում:
Այլ որ պարծին, 'ի տէր 15
պար-

պարծեսցի․ 'ի խորհուրդս
գիտութե՛ն զտէր ճանաչել:
16 Առնել զիրաւունս, և գոր-
ծել զարդարութիւն 'ի մ̅ջ
երեսաց երկրի:
17 Տէր եւ յերկինս՝ և որոտաց․
և ինքն դատի առանց բար-
բառելոյ:
18 Տայ զօրութի՛ւն թագաւորաց
մերոց․ և բարձր առնէ զեղ-
ջիւր օծելոյ իւրոյ:

## ՄԱՂԹԱՆՔ:

Բարձրացաւ եղջիւր իմ յա՛ծ փրկիչ իմ․ հաստատեցաւ սիրտ իմ 'ի տէր՝ տերամբ և հաւատով:

Մարդասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի․ և վ̅ն խաչի քոյ պատուականի, տէր ընկալ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ:

Քարոզ և աղօթք՝ Ողորմեայ, 'ի նեղութե կանոնացն ։

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար տէն մերմէ, զտէր աղաչեսցուք ։ Տր ողոր ։

Վասն փրկելոյ զմեզ 'ի զրպարտութե մարդկան՝ և յորոգայթից սատանայի, զտէր աղաչեսցուք ։

Վասն ամ անձանց քրիստոնէից, և տանց հաւատացելոց՝ զտէր աղաչեսցուք ։

Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր, զտէր աղաչեսցուք ։

Վասն որք սաղմոսիւք և օրհնութե կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, զտէր աղաչեսցուք ։

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով

տուլ՝ ի քո ննջեցելն · զՏէր աղաչեսցուք :

Եւ եւս՝ միաբան վասն ճշմարիտ եւ ս̃ր հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք : Զանձինս :

Ողորմեա՛ :

Աղօթք :

Գոհանամք զքէն Տէր Ած մեր, որ զարթուցեր զմեզ ՚ի հանգըստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո : Զարթո՛ զմիտս մեր արդարութիւն առ քեզ Տէր Ած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո : Եկեսցէ եւ բնակեսցէ առ մեզ Ածութիւն քո · եւ ողորմութիւն քո հովանի եւ պահապան լիցի ՚ի վերայ պաշտօնէից քոց : Եւ զմեզ զծառայքս քո արժանի արա ՚ի տուէ եւ ՚ի գիշերի եւ յամ ժամու միշտ խորհել ՚ի մեր պատուիրանաց քոց : Եւ գոհանալով փառաւորել զՏէր

եւ

և զորդի և զս̃բ հոգին, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն:

Խաղաղութի ամենեցուն:
Աստուծոյ երկիրպագեսցուք:

Կենդանարար զօրութիւն և
աղբիւր անմահութե̃, դու ես
քս̃ ա̃ծ փրկիչ մեր: Որ շնոր-
հեցեր մեզ 'ի մէջ գիշերի յառ-
նել՝ և խոստովան լինել առ
քեզ՝ վասն երախտեաց և արդա-
րութեան քո: Եւ այժմ աղա-
չեմք զքեզ տէր ա̃ծ մեր, որ
զմեզ արթունս և պատրաստս
'ի ժամ առաւօտու ընդ ո̃ր
քո: Եւ ընդ նոսին գոհանա-
լով փառաւորեսցուք զքեզ ը̃
հօր և ը̃ հոգւոյդ ս̃բյ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից. Ամէն:

Մաղ

## Մաղթանք։

Գոհութիւն և ճշմարիտ խոստովանութիւն անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զս̃բ Հոգին, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տ̃ր մեր յ̃ս ք̃ս. ամէն։
Հայր մեր որ։



Մկրտեալ քո և որդին իմ՝ սիրելիդ·

# ՍԱՂՄՈՍ. ՀԲ։

1 Սաղմոս յասափ. օրհնութիւն։

2 ԻԲՐԵՒ ԶԻ ԲԱ-
րի է իսրայէլի ած,
և որք ուղիղ են սրտիւք։
3 Բայց զի իմ փոքր մի և սա-
սանեալ էին ոտք. սակա-
ւիկ մի՝ և գայթագղեալ էին
գնացք իմ։
4 Նախանձեցայ ես ընդ անօ-
րէնս. զխաղաղութիւն մեղա-
ւորաց որպէս տեսանէի, զի
ո՛չ գոյր վրէպ մահու նց։
5 Հաստատուն էին տանջանք
նց, 'ի վաստակս մարդկան
չէին նոքա. և ը մարդկան
ո՛չ տանջեսցին։
6 Վասն այսորիկ կալաւ զնս
ամբարտաւանութիւն. արկան
զիւ-

զնուրեամբք զամբարշտութիւն
և զանիրաւութիւն իւրեանց։
Ելցէ որպէս 'ի ճարպոյ անի- 7
րաւութիւնք նոցա · զի գնացին
նոքա ընդ խորհրդոց սրտից
իւրեանց։
Խորհեցան և խօսեցան չա- 8
րութիւն · զանիրաւութիւն 'ի
բարձունս խորհեցան։
Եդին յերկինս զբերանս իւ- 9
րեանց, և զլեզուս իւրեանց
ածէին զերկրաւ։
Վասն այսորիկ ժողովուրդ 10
իմ դարձցի այսրէն · և ա-
ւուրք իմ լի կատարեալ
գտցին 'ի նոսա։
Ասացին՝ զիա՞րդ գիտաց Աստուած · 11
կամ գուցէ՞ արդեօք գիտու-
թիւն առ 'ի բարձրելոյն։
Ահա մեղաւորք են և յաջո- 12
ղեալ է նոցա · կան՝ և ունին
զմեծութիւն աշխարհի։
Ասացի՝ 'ի զո՞ւր ուրեմն ար- 13
դա-

դարացուցի զսիրտ իմ. լը-
ուացայց սրբութ̅ը զձեռս
իմ. և եղէ ես խոշտանգեալ
զօրհանապազ. և կշտամ-
բանք իմ ը̅ առաւօտս:
14 Թէպէտ և ասէի՝ թէ այս-
պէս պատմեցից. ահաւա-
սիկ յազգ որդւոց քոց՝ որոց
և ուխտեցի:
15 'Ի միտ եդի, թէ սակայն և
այս ջան է առաջի իմ, մին-
չև մտից 'ի սրբութն ա̅յ. և
'ի միտ առից զկատարած ն̅ց:
16 Սակայն վ̅ն նենգութ̅ն ն̅ց
տարադիր արարեր զն̅ն. և
կործանեցեր զն̅ն յամբար-
տաւանութ̅ն իւրեանց:
17 Իսկ զիա՞րդ եղեն յաւեր
յանկարծակի, սատակեցան
պակասեցան կորեան վասն
անօրէնութ̅ն իւրեանց, և
եղեն որպէս երազք զար-
թուցելոց:

Տէ՛ր 'ի քաղաքի քում զպատ- 18
կերս նց անարգեսցես. զի
հուր բորբոքեցաւ 'ի սրտի
իմում, և երիկամունք իմ
այլայլեցան:
Ես արհամարհեալ եղէ, և 19
ո՛չ գիտացի. որպ զանասուն
համարեցայ առաջի քո, և
ես յամ ժամ ը քեզ եմ:
Կալար զաջոյ ձեռանէ իմ- 20
մէ, 'ի խորհուրդս քո առաջ-
նորդեցեր ինձ, և փառօք
ընկալար զիս:
Զի՞նչ կայ իմ բնաւ յեր- 21
կինս, կամ 'ի քէն զի՞նչ ես
խնդրեցից յերկրի:
Նուաղեաց սիրտ իմ և մար- 22
մին իմ. ած սրտի իմոյ, բա-
ժին իմ ած յաւիտեան:
Ահաւասիկ ոյք հեռի արա- 23
րին զանձինս իւրեանց 'ի
քէն, կորիցեն. սատակես-
ցես զամենեսեան՝ որ ապըս-
տամբ

տամբ եղեն ՚ի քէն :
24 Ինձ մերձենալ առ Ած բարի
է, և դնել առ տէր զյոյս իմ:
25 Պատմել զամ օրհնութիւնս քո,
՚ի դրունս դստեր սիոնի :

## ՍԱՂՄՈՍ· ՀԳ·:

1 Իմաստութիւն յասափ :
2 Ընդէ՞ր մերժեցեր Ած ՚ի սպառ, բարկացաւ սրտմտութիւն քո ՚ի վերայ խաշին արօտի քո :
3 Յիշեա՛ զժողովուրդ քո, զոր ստացար ՚ի սկզբանէ · փրկեցեր զվիճակ ժառանգութեան քո :
4 Լեառն սիոնի այս՝ ուր բնակեցեր դու ՚ի սմա · համբարձ զձեռն քո ՚ի վր ամբարտաւանութե նց իսպառ :
5 Որ ինչ անիրաւեցաւ թշնամին ՚ի սրբութե քում· պարծեցան ատելիք քո ՚ի մէջ

բարեկենդանութեան իւրեանց։
Եդին զնշանս իւրեանց 'ի 6
նշանս. և ինքեանք ոչ ծա-
նեան զելս 'ի վերուստ։
Որպէս յանտառի՝ փայտատովք 7
կոտորեցին զդրունս նր̄, 'ի
միասին փայտատովք և մուր-
ճովք կործանեցին զնա։
Այրեցին 'ի հուր զսրբութիւն 8
քո յերկրի. պղծեցին զխո-
րան անուան քո։
Ասացին 'ի սիրտս իւրեանց 9
ազգք նորա 'ի միասին, ե-
կայք լուծուսցուք զամենայն
տօնս այ̄ յերկրէ։
Նշանս մեք ինչ ոչ տեսաք, 10
և ոչ ևս գուցէ մարգարէ.
և զմեզ ինչ ոք ոչ ճանաչիցէ։
Մինչև յե՛րբ ած̄՝ նախատէ 11
թշնամին, բարկացուցանէ
հակառակորդն զանուն տր̄
քո։
Ընդէ՞ր դարձուցանես զձ- 12
ձեռն

ձեռն քո, և զաջ քո 'ի միջոյ
ծոցոյ քումմէ ի սպառ։
13 Ած թագաւոր մեր յառաջ
քան զյաւիտեանս. որ ա-
րարեր զփրկութիւն 'ի մէջ
երկրի։
14 Դու հաստատեցեր զօրութե̃
քով զծով. դու խորտակե-
ցեր զգլուխս վիշապաց 'ի վե-
րայ ջուրց։
15 Դու փշրեցեր զգլուխս վի-
շապին, և ետուր զնա կե-
րակուր զօրացն հնդկաց։
16 Դու բղխեցուցեր զաղբիւ-
րս և զվտակս, դու ցամա-
քեցուցեր զգետս սաստիկս։
17 Քո է տիւ, և քո է գիշեր.
զլոյս և զարև դու հաստա-
տեցեր. և դու հաստատե-
ցեր զամենայն սահմանս եր-
կրի. զգարուն և զամառն դու
ստեղծեր։
18 Այս յուշ լիցի քեզ՝ զի
թշն-

Թշնամին նախատեաց զՏէր։
ժողովուրդ՝ անզգամ բարկա-
ցոյց զանուն Տր̃ քո։
Մի՛ մատներ գազանաց զան- 19
ձըն՝ որ խոստովան առնի
առ քեզ․ և զանձինս տը-
նանկաց քոց մի՛ մոռանար
իսպառ։
Հայեա՛ յուխտ քո․ զի լցան 20
տունք ափշելոց յերկրի ա-
նիրաւութե̃։
Մի՛ դարձցի տնանկն ամա- 21
չեցեալ․ այլ աղքատն և տը-
նանկ օրհնեսցեն զանուն Տր̃
քո։
Արի՛ Ած̃, և դատեա՛ զդա- 22
տաստանս քո․ յիշեա՛ զնախա-
տինս՝ որ յանզգամէն զօր-
հանապազ։
Մի՛ մոռանար զձայն պաշ- 23
տօնէից քոց․ ամբարտաւա-
նութիւն ատելեաց քոց վե-
րասցի հանապազ։

# ՍԱՂՄՈՍ. ՀԴ:

1 'Ի կատարած. մի՛ ապականեր.
ընդ օրհնութիւն: Սաղմոս յասափ.
երգ առ ասորեստանեայս:

2 Խոստովան եղիցուք առ
քեզ ա̃ծ, խոստովան ե-
ղիցուք և կարդասցուք զա-
նուն ո̃ր քո:
3 Պատմեցից զա̃մ սքանչելիս
քո. յորժամ ժամ առից՝ ես
ուղիղ դատեցայց:
4 Մաշեցաւ երկիր՝ և ա̃մ բը-
նակիչք ն̃ր. ես հաստատե-
ցի զսիւնս ն̃ր:
5 Ասացի անօրինաց, թէ մի՛
անօրինիք. և մեղաւորաց,
թէ մի՛ բարձրացուցանէք
զեղջիւրս ձեր:
6 Մի՛ համբառնայք 'ի բար-
ձունս զեղջիւրս ձեր. և մի՛
խօսիք զա̃յ անիրաւութիւն:
7 Զի ո՛չ յարևելից՝ և ո՛չ յա-

րև-

րեւմտից, եւ ոչ յանապատէ
լերանց. այլ ած դատաւոր է։
Զայս խոնարհ առնէ, եւ զս- 8
սոյն բարձրացուցանէ. բա-
ժակ 'ի ձեռին տն գինի լի
անապակ արկեալ. եւ խոնար-
հեցոյց յայսմանէ յայս։
Սակայն մրուր նր ոչ սպա- 9
ռեսցի. եւ արբցեն զնա ամ
մեղաւորք երկրի։
Ես ցնծացայց յաւիտեան. 10
սաղմոս ասացից այ յակով-
բայ։
Զամ եղջիւրս մեղաւորաց 11
փշրեսցես. եւ բարձր եղիցի
եղջիւր արդարոյ։

## ՍԱՂՄՈՍ. ՀԵ։

'Ի կատարած. ընդ օրհնութիւն. 1
մի ապականեր։ Սաղմոս յասափ.
երգ առ ասորեստանեայս։

Յայտնի է 'ի Հրէաստանի 2
ած, եւ յիսրայէլ մեծ է ա-
նուն

նուն ն͞ր ։
3 Եղեւ խաղաղութի͞ տեղի ն͞ր ·
եւ բնակութի͞ ն͞ր ի սիոն ։
4 Անդ խորտակեաց տէր զզօ-
րութիւն աղեղան, զզէն ըզ-
սուր եւ զճակատամարտ ։
5 Լուսատու ես դու սքանչե-
լապէս լերանցն յաւիտենից ·
խռովեսցին ամենեքեան որ
անմիտ են սրտիւք · Ննջեցին
զքունս իւրեանց՝ եւ ինչ ոչ
գտին ։
6 Ամենայն արք՝ 'ի մեծութե͞
ձեռաց իւրեանց · 'ի սաս-
տէ քումմէ ա͞ծ յակոբայ
ննջեցին, եւ որք հեծեալ էին
'ի ձիս ։
7 Դու ահաւոր ես՝ եւ ո՞վ կա-
րէ կալ առաջի քո · որպէս
երեւեցար դու յերկնից, յայտ-
նի եղեւ բարկութի͞ քո ։
8 Երկիր երկեաւ եւ սարսեաց
ընդ յառնելն ա͞յ 'ի դատաս-
տան ·

տան. ընդ ապրեցուցանել
զամ հեզս երկրի:
Խորհուրդք մարդկան խոս- 9
տովան առնին առ քեզ. և
ծածկեալք իմաստութե օրհ-
նեսցեն զքեզ:
Ուխտս դիք՝ և կատարեցէք 10
տն այ մերոյ, ամենեքեան
որ շուրջ էք զնովաւ:
Մատուցէք պատարագս ա- 11
հաւորին. ո քաղէ զհոգիս
իշխանաց, ահաւոր է նա ք
զամ թագաւորս երկրի:

## ՍԱՂՄՈՍ. ՀԶ:

՚Ի կատարած. վն Իդիթովմայ. 1
սաղմոս յասափ:

Ձայնիւ իմով ես առ տէր 2
կարդացի. ձայնիւ իմով առ
ած, և նայեցաւ առ իս:
Յաւուր նեղութե իմոյ զած 3
խնդրեցի ձեռօք իմովք. ՚ի
գիշերի առաջի նր ոչ խա-

բե-

բեցայ ։
4 Ո՛չ կամէր մխիթարել անձն
իմ. յիշեցի զա̃ծ՝ և ուրախ
եղէ. հոգայի, և նուաղէր
յիս հոգի իմ։
5 Կանխեցին պահուց աչք
իմ. խռովեցայ և ո՛չ խօսե-
ցայ. խորհեցայ զաւուրսն
զառաջինս. և զամս յաւի-
տենից յիշեցի։
6 Խօսեցայ 'ի գիշերի ը̃ սրտի
իմում. հոգայի՝ և տառապէր
յիս հոգի իմ։
7 Մի թէ յաւիտենից մեր-
ժեսցէ զիս Տէր. և ո՛չ ևս
յաւելուցու 'ի հաճել և ևս։
8 Կամ իսպառ արգելցէ զո-
ղորմութիւն իւր յինէն. կամ
կատարեաց զբան իւր ազգէ
մինչև յազգ։
9 Կամ մոռասցի գթալ ա̃ծ
իմ և ևս. կամ արգելցէ
զգթութիւն իւր՝ բարկութե̃
իւ-

իւրով:
Ասացի՝ թէ այժմ սկսայ. 10
այս է նորոգումն աջոյ բարձ-
րելոյն:
Յիշեցի զգործս տն 'ի սկզ- 11
բանէ. յիշեցի զսքանչելիս
նորա:
Խորհեցայ յամ գործս քո, 12
և 'ի ձեռագործս քո խոր-
հեցայ:
Ած՝ 'ի սրբութեան են ճանա- 13
պարհք քո. ով է ած մեծ՝
որպէս զած մեր. դու ես
ած, որ առնես զսքանչելիս:
Ցուցեր ժողովրդեան քում 14
զզօրութիւն քո. փրկեցեր
բազկաւ քով զժողովուրդս
քո, զորդիսն յակոբայ՝ և
յովսեփու:
Տեսին զքեզ ջուրք ած, տե- 15
սին զքեզ ջուրք՝ և երկեան.
և խորք խռովեցան 'ի ձայ-
նէ ջուրց բազմաց:
Ձայն

16 Զայն ետուն ամպք․ քան-
զի և նետք քո գնան ՚ի ձայ-
նէ որոտալոյ քո անուոյն:
17 Երևեցան փայլատակունք քո
տիեզերաց, խռովեցաւ և
դողաց երկիր:
18 ՚Ի ծովու են ճանապարհք
քո, շաւիղք քո ՚ի ջուրս
բազումս․ և հետք քո ոչ
երևին:
19 Առաջնորդեցեր ոպ̃ խաշին
ժողովրդեան քո․ ՚ի ձեռն
Մովսէսի և Ահարոնի:

## ՍԱՂՄՈՍ․ ՀԷ:

1 ՚Ի կատարած․ իմաստութե̃
յասափ:
2 Նայեցարո՛ւք ժողովուրդք
յօրէնս իմ․ խոնարհե-
ցուցէ՛ք զունկն ձեր ՚ի բանս
բերանոյ իմոյ:
3 Բացից առակաւ զբերան
իմ, խօսեցայց զառակս ՚ի
սկըզ-

սկզբանէ։
Որպէս լուաք՝ և ծանեաք 4
զայս, և հարքն մեր պատ-
մեցին մեզ։
Ոչ ինչ ծածկեցաւ յորդւոց 5
նոցա յազգ յայլ, պատմել
զօրհնութիւնս տ՟ն, զզօրու-
թի և զսքանչելիս իւր՝ զոր
արար։
Հաստատեաց զվկայութիւն 6
իւր առ յակոբ, և օրէնս
եդ ՚ի վերայ իսրայէլի։
Որ ինչ միանգամ պատուէի- 7
րեաց հարցն մերոց, ցուցա-
նել զայս որդւոց իւրեանց.
զի ծանիցեն յազգ յայլ։
Որդիք որ ծնանիցին՝ յարիցեն 8
և պատմեսցեն զայս որդւոց
իւրեանց. զի դիցեն առ ա՟ծ
զյոյս իւրեանց, և մի մո-
ռասցին զգործս ա՟յ։
Զպատուիրանս ն՟ր խնդրե- 9
լով խնդրեսցեն. և մի եղի-
ցին

ցին ոպ̅ և հարք իւրեանց:
10 Ազգ չար և դառնացող. ազգ որ ո՛չ ուղղեաց զսիրտ իւր, և ո՛չ հաստատեաց առ ա̅ծ զհոգի իւր:
11 Որդիք Եփրեմի լարաձիգք և պնդաձիգք, յաւուր պատե-րազմի կապարճս դարձուցին:
12 Ո՛չ կացին նոքա յուխտի տ̅ն. և ըստ իրաւանց ն̅ր ո՛չ կա-մեցան գնալ:
13 Մոռացան զերախտիս ն̅ր, և զսքանչելիսն՝ զոր եցոյց նոցա:
14 Առաջի հարց ն̅ց զոր արար զսքանչելիս իւր, յերկրին եգիպտացւոց՝ և 'ի դաշտին տայանու:
15 Հերձ զծովն՝ և անցոյց զն̅ս. կացոյց զջուրսն որպէս 'ի տիկս:
16 Առաջնորդեաց ն̅ց ամպով 'ի տուէ. և զա̅մ գիշեր 'ի
լոյս

լոյս հրոյ ։

Հերձ զվէմն յանապատի, և 17
ետ ըմպել նոցա ո͞պ 'ի խո-
րոց մեծէ ։

Հան զջուրն 'ի վիմէն . և 18
հոսեաց ո͞պ զգետս զջուրսն ։

Սակայն յաւելին 'ի մեղան- 19
չել . և ևս բարկացուցին ըզ-
բարձրեալն յանջրդի ։

Փորձեցին զա͞ծ 'ի սիրտս իւ- 20
րեանց, 'ի խնդրել զկերա-
կուր անձանց իւրեանց ։

Տրտնջեցին զնո͞յ՝ և ասացին . 21
միթէ կարօ՞ղ իցէ ա͞ծ պատ-
րաստել սեղան յանապատի .

Քանզի հարկանէր զվէմն՝ և 22
հոսէին ջուրք, և վտակք խա-
ղային 'ի նմանէ ։

Ա՛րդ հա՞ց ևս կարասցէ տալ 23
նա մեզ . կամ պատրաստես-
ցէ՞ սեղան ժողովրդեան իւ-
րոյ ։

Վասն այսորիկ լռեաց զայս 24
տէր,

ռէր, և յապաղեաց․ հուր
բորբոքեցաւ 'ի յակոբ, և
բարկութիւն ել 'ի վերայ իս֊
րայէլի ։
25 Զի ոչ հաւատացին յա̃ծ, և
ոչ յուսացան 'ի փրկութ̃ն նր̃։
26 Հրաման ետ ամպոց 'ի վե֊
րուստ, և զդրունս երկնից
եբաց․ և տեղեաց 'ի նոսա
մանանայ 'ի կերակուր ։
27 Զհաց երկնից ետ նց̃, զհաց
հրեշտակաց կերան մարդիկ․
և իջոյց 'ի նոսա կերակուր
'ի լիութիւն ։
28 Հան զհողմ հարաւոյ, և ա̃ծ
զօրութ̃ իւրով զհիւսիսին̃,
29 Տեղեաց 'ի նոսա միս որպէս
զհող․ որպէս զաւազ ծովու
զթռչունս թեւաւորս ։
30 Արկ 'ի մէջ բանակի նոցա,
և շուրջ զխորանօք նոցա ։
31 Կերան և յագեցան յոյժ․
զցանկութիւն նց̃ ետ նց̃․ և

ոչ֊

ոչինչ կարօտ եղեն ի ցան-
կութենէ իւրեանց :
Մինչդեռ կերակուրք 'ի բե- 32
րանս իւրեանց էին, բարկու-
թիւն այ ել 'ի վերայ նց :
Սպան զբազումս 'ի նոցանէ · 33
և զընտիր ընտիրս յիսրայէ-
լէ սատակեաց :
Յայսմ ամի մեղան և ևս · 34
ոչ հաւատացին սքանչելեաց
նորա :
Պակասեցան յունայնութե 35
աւուրք նց · և ամք նց փու-
թապէս անցին :
Յորժամ սպանանէր զնոսա, 36
խնդրէին զնա · դառնային և
առաւօտ առնէին առ ած :
Յիշեցին՝ զի ած օգնական 37
էր նոցա · ած բարձրեալ փր-
կիչ էր նց :
Սիրեցին զնա բերանօք իւ- 38
րեանց, և լեզուօք իւրեանց
ստեցին նմա · և սիրտք նց

ոչ

ոչ էին ուղիղ ընդ նմա, և
ոչ հաւատացին ուխտի նր̃:
39 Այլ նա ինքն գթած էր,
քաւէր զմեղս նց̃՝ և ոչ ա-
պականէր:
40 Յաճախէր դարձուցանել
զբարկութիւն իւր. և ոչ բոր-
բոքեաց զամենայն սրտմտու-
թիւն իւր:
41 Յիշեաց՝ թէ մարմին են նո-
քա. հոգի որ ելանէ՝ այլ
ոչ ևս դառնայ:
42 Քանիցս անգամ դառնա-
ցուցին զնա յանապատի.
բարկացուցին զբարձրեալն
յանջրդի:
43 Դարձան՝ և փորձեցին զա̃ծ.
և զսր̃ն իսրայէլի զայրացու-
ցին:
44 Ո՛չ յիշեցին զձեռն նր̃. յա-
ւուր յորում փրկեաց զն̃ս
՚ի ձեռաց նեղչաց նց̃:
45 Որպէս արար զնշանս՝ և

զարուեստս իւր յերկրին Ե-
գիպտացւոց, և 'ի դաշտին
տայանու:
Դարձոյց յարիւն զգետս 46
նց. և զանձրևս նց, զի մի
արբցեն:
Առաքեաց 'ի նս շանաճանճ 47
և եկեր զնս, և գորտս ա-
պականեաց զնս:
Ետ ժանկոյ զպտուղ նց, և 48
զվաստակս նց մարախոյ:
Հար կարկտիւ զայգիս նց, 49
և զթզենիս նց եղեամբ:
Մատնեաց 'ի կարկուտ զա- 50
նասունս նոցա. և զստաց-
ուածս նց հրով դատեցաւ:
Առաքեաց 'ի նս զսրտմտու- 51
թիւն բարկութեան իւրոյ,
զսրտմտութիւն բարկութե
և զնեղութիւն:
Առաքեաց 'ի նս տանջանս 52
'ի ձեռն հրեշտակի չարի.
գխմեցոյց 'ի նս զսրտմտութի
բար-

բարկութեն իւրոյ:
53 Ո՛չ անխնայեաց 'ի մահուա_
նէ զանձինս նց. և զանա_
սունս նց 'ի մահ մատնեաց:
54 Եհար զմն անդրանիկս ե_
գիպտացւոց, զսկիզբն նմ
վաստակոց նց 'ի յարկս քա_
մոյ:
55 Հորդան եւ ոպ խաշին ժո_
ղովրդեան իւրոյ. և եհան
զնս ոպ հօտ յանապատ:
56 Առաջնորդեաց նց յուսով,
և ո՛չ երկեան, և զԹշնամիս
նց ծով ծածկեաց:
57 Եհան զնս 'ի լեառն սրբու_
Թե իւրոյ, լեառն այն՝ զոր
ստացեալ էր աջոյ նր:
58 Մերժեաց յերեսաց նց զհե_
Թանոսս. վիճակեցոյց 'ի նս
զվիճակ ժառանգութե իւ_
րոյ, և բնակեցոյց 'ի յարկս
նց զազգն իսրայէլի:
59 Փորձեցին՝ զառնացուցին
զած

զա̃ծ բարձրեալն, և զվկայ-
ութիւն նր̃ ոչ պահեցին :
Դարձան խոտորեցան ոպ̃ և 60
հարքն իւրեանց, դարձան՝ և
եղեն ոպ̃ զաղեղն թիւր :
Դարձան բարկացուցին զնա 61
'ի բագինս իւրեանց. և զխօ-
շելովք իւրեանց նախանձ
արկին նմա :
Լուաւ ա̃ծ, և արհամար- 62
հեաց զնս̃. և անարգեաց
յոյժ զիսրայէլ :
Մերժեաց յիւրմէ զխորանն 63
'ի սելով. խորան, զոր բնա-
կեցոյց 'ի մէջ մարդկան :
Մատնեաց 'ի գերութիւն զզօ- 64
րութիւն նց̃. և զգեղ նց̃ 'ի
ձեռս թշնամեաց նց̃ :
Արգել 'ի սուր զժողովուրդ 65
իւր. և զժառանգութիւն
իւր անտես արար :
Զերիտասարդս նոցա եկեր 66
հուր, և կն̃ կուսանաց նց̃

ոչ

ոչ ո՛ք ողբացաւ :

67 Քահանայք նոցա անկան 'ի սուր. և զայրիս նց̄ ո՛չ ոք էր՝ որ լայր :

68 Զարթեաւ ոպ̄ 'ի քնոյ տէր, ոպ̄ հզօր զի թափէ զգինի :

69 Եհար յետս զթշնամիս իւր, նախատինս յաւիտենից ա֊րար զնս̄ :

70 Մերժեաց նա զխորանն յով֊սեփայ, և զազգն եփրեմի նա ո՛չ ընտրեաց :

71 Այլ ընտրեաց նա զազգն յուդայ. զլեառն սիոն, զոր և սիրեաց :

72 Շինեաց ոպ̄ միեղջերոյ զսր֊բութիւն նր̄. յերկրի հաս֊տատեաց զնա յաւիտեան :

73 Ընտրեաց զդաւիթ ծառայ իւր, և ընկալաւ զնա 'ի հօ֊տէ խաշանց. 'ի վերջին ծնե֊լոցն ընկալաւ զնա :

74 Հովուել զյակոբ ծառայ իւր,

իւր, և զիսրայէլ ժառան֊
գութիւն իւր:
Արածէր զնոսա իմաստու֊ 72
թ՟բ սրտի իւրոյ, յանմեղու֊
թ՟ն ձեռաց իւրոց առաջնոր֊
դէր նոցա:

## ՍԱՂՄՈՍ. ՀԸ:

Սաղմոս յասափ: 1

Ա՟Ծ մտին հեթանոսք՝ ի ժա֊ 2
ռանգութիւն քո. պղծ֊
ծեցին զտաճար ս՟ր քո:
Արարին զերուսաղէմ որպ՟ս 3
հիւղ մրգապահաց. արկին
զդիակունս ծառայից քոց՝
կեր թռչնոց երկնից, և զմ֊
մարմինս սրբոց քոց՝ գազա֊
նաց երկրի:
Հեղին զարիւն ն՟ց որ՟պ զջուր՝ 4
շուրջ զերուսաղէմաւ, և ոչ
ոք էր՝ որ թաղէր զն՟ս:
Եղաք մեք նախատինք դրա֊ 5
ցեաց մերոց. ծաղր և այպն
կա֊

կատականաց այնոցիկ, որ
շուրջ են զմեօք:
6 Մինչև յե՞րբ տէր՝ բարկա_
նաս դու իսպառ. բորբո_
քեսցի որպէս հուր նախանձ քո:
7 Հեղ զբարկութիւն քո ՚ի վ՟ր
ազգաց՝ որ զքեզ ոչ ճանա_
չեցին. ՚ի վ՟ր թագաւորաց
որ զանուն քո ոչ կարդացին.
զի կերան զյակոբ, և զտե_
ղի նր՟ա աւերեցին:
8 Մի յիշեր զմեղս մեր զառա_
ջինս. վաղվաղ եկեսցէ առ
մեզ ողորմութիւն քո տէր.
զի աղքատացաք յոյժ:
9 Օգնեա մեզ ա՟ծ փրկիչ մեր,
վասն փառաց անուան քոյ:
10 Տ՟ր փրկեա զմեզ՝ և քաւեա
զմեղս մեր վ՟ն անուան քոյ:
11 Մի երբեք ասասցեն ՚ի հե_
թանոսս, թէ ուր է ա՟ծ ն՟ց:
12 Այլ յայտնի լիցի ՚ի
վերայ հեթանոսաց, առա_
ջի

ջի աչաց մերոց . առ 'ի խնդ-
րել զվրէժ արեան ծառայից
քոց՝ որ և հեղաւ :
Մտցէ առաջի քո հեծութիւն 13
կապելոց . ըստ մեծութեան
բազկի քո՝ շահեա՛ դու զոր-
դիս սպանելոց :
Հատո՛ դրացեաց մերոց եօ- 14
թնպատիկ 'ի ծոց նոցա ,
նախատինս զոր նախատեցին
զքեզ տէր :
Մեք ժողովուրդք և խաշն 15
արօտի քոյ , խոստովան եղի-
ցուք առ քեզ յաւիտեան .
ազգէ յազգ պատմեսցուք
զօրհնութիւնս քո :

## ՍԱՂՄՈՍ . ՀԹ :

'Ի կատարած , 'ի վերայ զատու- 1
ցելոցն վկայութիւն . Ասափայ սաղ-
մոս . 'ի վերայ Եթովպացւոցն :
Ո հովուեսդ իսրայէլի՝ նայ- 2
եա՛ց , որ առաջնորդես որպէս
խա-

խաշին յովսեփու ։
3 Որ նստիս ՚ի քրովբէս՝ յայտ-
նեա՛ առաջի եփրեմի, բենիա-
մենի և մանասէի ։
4 Զարթո՛ զզօրութիւն քո, և
եկ ՚ի կեցուցանել զմեզ ։
5 Ած զօրուեց դարձո՛ զմեզ,
երևեցո՛ զերեսս քո ՚ի մեզ՝ և
կեցցուք ։
6 Տէր Ած զօրութեանց՝ մինչև
յե՞րբ բարկանաս յաղօթս
ծառայից քոց ։
7 Ջամբեցեր մեզ հաց արտա-
սուաց. և արբուցեր մեզ ար-
տասուս չափով ։
8 Արարեր զմեզ նախատինս
դրացեաց մերոց, այպն կա-
տականաց թշնամեաց մերոց ։
9 Ած զօրութեց դարձո՛ զմեզ,
երևեցո՛ զերեսս քո ՚ի մեզ՝
և կեցցուք ։
10 Այգի յեգիպտոսէ փոխե-
ցեր. հաներ զհեթանոսս՝ և

զնո-

զնոսա տնկեցեր, և առաջ-
նորդեցեր նմա:
Հաստատեցեր զարմատս նո- 11
րա՝ և ելից զերկիր. ծած-
կեաց զլերինս հովանի նր՟,
և բարունակ նր՟ զմայրս այ՟:
Ձգեաց զոստ իւր մինչև 'ի 12
ծով. մինչև 'ի գետս են շա-
ռաւիղք նորա:
Ընդէ՞ր քակեցեր զցանկ նր՟, 13
և կթեն զնա անցաւորք ճա-
նապարհի:
Ապականեաց զնա խոզ ան- 14
տառի, և էրէ վայրի արա-
ծեցաւ 'ի նմա:
Ած՟ զօրութեանց՝ դարձ, հայ- 15
եաց յերկնից և տես. այց
արա այգւոյս այսմիկ, և դար-
ման արա սմա, զոր տնկեաց
աջ քո:
'Ի վր՟ որդւոյ մարդոյ՝ զոր 16
զօրացուցեր զնա 'ի քեզ.
այրեցեալ 'ի հուր և տա-
պալեալ,

բեալ, 'ի սաստէ քումմէ կո-
րիցէ:
17 Եղիցի ձեռն քո 'ի վերայ
առն, աջ քո 'ի վերայ որդ-
ւոյ մարդոյ, զոր զօրացու-
ցեր դու 'ի քեզ:
18 Ո՛չ եւս 'ի բացեայ եղիցուք
մեք 'ի քէն. կեցուսցես դու
զմեզ, և զանուն քո տ͞ր կար-
դասցուք:
19 Ա͞Ծ զօրութեանց դարձո՛ զմեզ,
երեւեցո՛ զերեսս քո 'ի մեզ՝ և
կեցցուք:

## ՍԱՂՄՈՍ. Ձ:

1 'Ի կատարած. վասն հնձանաց,
սաղմոս յասափ. հինգերորդ շա-
բաթուոյ:

2 Ցնծացէք առ ա͞ծ, օգնա-
կան է մեր. աղաղակեցէք առ
ա͞ծ յակոբայ:
3 Առէք սաղմոս, և տուք օր-
հնութիւն. սաղմոս ասացէք
նմա

Նմա 'ի ձայն քաղցրութե՜։
Փո՛ղ հարէք 'ի գլուխս ամ- 4
սոց. յաւուր նշանաւորի տօ-
նեկանաց մերոց։
Հրաման է այս Իսրայէլի, և 5
իրաւունք են ա՜յ յակովբայ։
Վկայութիւն յովսեփու՝ զոր 6
եդ ընդ նմա. որպէս ելանէր
նա յերկրէն եգիպտացւոց,
լեզու զոր ո՛չ գիտէր՝ լուաւ։
'Ի բաց արար 'ի բեռանց 7
զթիկունս ն՜ր. և զձեռս ն՜ր
յորթ և 'ի թի ծառայելոյ։
'Ի նեղութե՜ կարդացեր առ 8
իս՝ և փրկեցի զքեզ. լուայ
քեզ 'ի գաղտնուե՜ մրրկին,
և փորձեցի զքեզ 'ի վերայ
Ջուրցն հակառակութե՜։
Լո՛ւր ժողովուրդ իմ՝ և վը- 9
կայեմ քեզ, և Իսրայէլ՝ թէ
լուիցես ինձ։
Մի եւ եղիցին քեզ աստ- 10
ուածք առժամեայք. և մի
եր-

Երկիր պագանիցես դու աս-
տուծոյ օտարի:
11 Ես եմ տէր ա̃ծ քո՝ որ հանի
զքեզ յերկրէն եգիպտաց-
ւոց· բաց զբերան քո՝ և լցից
զդա:
12 Ժողովուրդ իմ ոչ լուաւ
ձայնի իմում, և իսրայէլ
յիս ինչ ոչ նայեցաւ:
13 Բարձի թողի զնոսա երթալ
զհետ կամաց սրտից իւ-
րեանց· զի գնասցեն նք ըստ
կամս անձանց իւրեանց:
14 Զի թէ ժողովրդեան իմոյ
լուեալ էր ինձ, կամ իսրայ-
էլի զճանապարհս իմ գնա-
ցեալ էր:
15 Որպէս զոչինչ խոնարհ արա-
րեալ էր իմ զթշնամիս նց,
'ի վերայ նեղչաց նորա ար-
կեալ էր զձեռն իմ:
16 Թշնամիք տեառն ստեցին
նմա, և եղիցին ժամանակք
նո-

Նոցա յաշխարհի :
Կերակրեաց զն՟ն ՚ի պարար- 17
տութ՟է ցորենոյ, և ՚ի վիմէ
մեղր յագեցոյց ՚ի ն՟ն :

## ՍԱՂՄՈՍ. ՁԱ։

Սաղմոս յասափ : 1

Ա՟ծ եկաց ՚ի ժողովս աստ- 2
ուածոց . և ՚ի մէջ ն՟ց դա-
տէր զնոսա :
Մինչև յե՞րբ դատիք անի- 3
րաւութ՟ք, և ակն առնուք
մեղաւորաց :
Դատ արարէք որբոյն և այր- 4
ւոյ . իրաւունս արարէք տը-
նանկին և խոնարհի :
Ապրեցուցէք զաղքատն և 5
զտնանկն, ՚ի ձեռաց մեղա-
ւորի փրկեցէք զնոսա :
Ո՛չ իմացան և ո՛չ ՚ի միտ ա- 6
ռին . ՚ի խաւարի գնային .
և շարժեսցին ամենայն հի-
մունք երկրի :

Ե"

7 Ես ասացի՝ թէ աստուածք
իցէք, կամ որդիք բարձրե_
լոյ ամենեքեան:
8 Դուք ահաւադիկ ո̃պ մար_
դիկ մեռանիք. եւ որ̃պս զմի
յիշխանաց անկանիք:
9 Արի Ա̃ծ, եւ դատեա զեր_
կիր. զի դու ժառանգեսցես
զա̃մ հեթանոս:

## ՍԱՂՄՈՍ. ՁԲ:

1 Օրհնութի̃. սաղմոս յասափ:
2 Ա̃Ծ ո՞ քեզ նմանիցէ. մի
լռեր եւ մի դադարեր Ա̃ծ:
3 Զի ահա թշնամիք քո գոչե_
ցին, եւ ատելիք քո համբար_
ձին զգլուխս իւրեանց:
4 'Ի վերայ ժողովրդեան քո
խորամանկեցին զխուութն.
խորհեցան 'ի վերայ սրբոց
քոց եւ ասացին:
5 Եկա՛յք սատակեսցուք զն̃ս
յազգաց, եւ մի յիշեսցի ա_
նուն

Նուն իսրայէլի և ես:
Խորհեցան միաբանութ՟ ՚ի 6
միասին. վն՟ քո ուխտ արա-
րին:
Բանակք Եդովմայեցւոց՝ և 7
Իսմայելացիք, Մովաբ և Հա-
գարացիք:
Գեբաղ՝ Ամոն՝ Ամաղէկ, և 8
այլազգիքն ամ՟ բնակչօքն հան-
գերձ Ծուրայ:
Նաև Ասուր եկեալ էր ընդ 9
նս՟. ամենեքեան սոքա զօրա-
վիգն էին որդւոցն Ղովտայ:
Արա զնոսա որպ՟ Մադիամ, 10
որպ՟ Սիսարայ, որպ՟ս զՅաբին՝
՚ի ծործորան Կիսոնի:
Սատակեցան նոքա յականն 11
դովրայ. և եղեն որպ՟ զաղբ
երկրի:
Արա զիշխանս նց՟ որպ՟ զո- 12
րէբն, զԶէբն, զԶեբէէ. զՍաղ-
մանա, և զամենայն իշխանս
նոցա:

Ոյք

13 Ոյք ասացին՝ ժառանգես-
ցուք 'ի մեզ զսրբութն̄ այ̄ :
14 Ած̄ իմ՝ արա զնոսա որպէս
զանիւ՛, ոպ̄ զեղէգն առաջի
հողմոյ :
15 Որպէս հուր՝ զի այրէ զան-
տառս, որպէս բոց՝ զի կի-
զու զլերինս :
16 Այնպէս հալածեսցես զն̄ս
մրրկաւ քով . և բարկութ̄ք
քով խռովեցուսցես զն̄ս :
17 Լից զերեսս նոցա անարգա-
նօք, և խնդրեսցեն զանուն
քո տէր :
18 Ամաչեսցեն և խռովեսցին
յաւիտեանս յաւիտենից, և
ամօթալից կորիցեն :
19 Ծանիցեն զի անուն քո տէր
է . և դու միայն բարձրեալ
ես 'ի վերայ ամ̄ երկրի :

# ՍԱՂՄՈՍ. ՁԳ։

'Ի կատարած. վասն հնձանացն. 1
որդւոցն Կորխայ սաղմոս։

Որպէս սիրելի են յարկք 2
քո Տր̅ զօրութ̃նց. ցանկայ
և փափագէ անձն իմ 'ի գա-
ւիթս քո։
Սիրտ իմ և մարմին իմ՝ ցըն- 3
ծացին առ Ած̅ կենդանի։
Քանզի ճնճղուկ եգիտ իւր 4
տուն. տատրակ բոյն՝ ուր
դիցէ զձագս իւր։
Սեղանք քո Տր̅ զօրութեանց, 5
թագաւոր իմ և Ած̅ իմ։
Երանի ամենեցուն՝ որ բնա- 6
կեալ են 'ի տան տն̅. յաւի-
տեանս յաւիտենից օրհնես-
ցեն զքեզ։
Երանեալ է այր՝ որոյ օգ- 7
նութիւն իւր 'ի քէն է. ելս
եդ 'ի մտի իւրում 'ի հով-
տէս արտասուութ̃ 'ի տեղւոջ

յո-

յորում ուխտեաց :
8 Զօրհնութիւն տասցի՝ որ զօ-
րէնս դնէ . գնասցէ նա 'ի զօ-
րութէ 'ի զօրութի . եւ երեւեսցի
ած հրեշտակաց 'ի սիոնի :
9 Տէր ած զօրութենց՝ լուր ա-
ղօթից իմոց . ունկն դիր ած
յակոբայ :
10 Ընդունելի ես դու մեր .
տես ած եւ նայեա՛ յերեսս
օծելոյ քո :
11 Վասն զի լաւ է ինձ մի օր
'ի դաւիթս քո , քան զհա-
զարս :
12 Ընտրեցի ընդ աղբ գալ 'ի
տան այ առաւել , քան բնա-
կանալ 'ի յարկս մեղաւորաց :
13 Զողորմութիւն սիրէ տր ած
մեր . զշնորհս եւ զփառս տացէ :
14 Տր ոչ պակաս առնէ զողոր-
մութիւն իւր յայնցանէ , որ
գնան յանբծութեն :
15 Տր ած զօրութենց , երանեալ
է

է այր՝ որ յուսայ 'ի քեզ։

## ՍԱՂՄՈՍ. ՁԴ։

'Ի կատարած. որդւոցն Կորխայ 1
սաղմոս։

Հաճեցար Տէր ընդ երկիր 2
քո, եւ դարձուցեր զգերու-
թիւն Յակոբայ։
Թողեր զանօրէնութիւն ժո- 3
ղովրդեան քոյ, ծածկեցեր
զամենայն մեղս նոցա։
Լռեցուցեր զա՟մ սրտմտու- 4
թիւնս քո, դարձար 'ի բար-
կութէ սրտմտութե. քո։
Դարձ առ մեզ ա՟ծ փրկիչ 5
մեր, եւ դարձո զսրտմտու-
թիւնս քո 'ի մէնջ։
Մի յաւիտեան բարկանար 6
մեզ Տէր. եւ մի ձգեր զբար-
կութիւն քո ազգէ մինչեւ յազգ։
Ա՟յ դու դարձեալ կեցուս- 7
ցես զմեզ. ժողովուրդ ք՟ո
ուրախ եղիցի 'ի քեզ։

Ցոյց

8 Ցո՛յց մեզ տ՟ր զողորմութ՟իւ
քո, և զփրկութ՟իւ քո տո՛ւր
մեզ:
9 Լուա՛ք զի՞նչ խօսի տէր ա՟ծ
մեր. խօսեսցի զխաղաղու-
թիւն ժողովրդեան իւրոյ առ
սուրբս իւր՝ և առ այնո-
սիկ, որ դարձեալ են առ
նա սրտիւք:
10 Սակայն մերձ է առ երկիւ-
ղածս իւր փրկութ՟ի նորա.
բնակել փառաց նորա յերկ-
րի մերում:
11 Ողորմութ՟ի և ճշմարտութ՟ի
պատահեսցին. արդարութ՟ի
և խաղաղութիւն համբու-
րեսցին:
12 Ճշմարտութ՟ի յերկրէ բու-
սաւ. արդարութ՟ի յերկնից
երևեցաւ:
13 Տէր տացէ զքաղցրութիւն,
և երկիր մեր տացէ զպտուղ
իւր. արդարութիւն առաջի
նո-

նորա գնասցէ · դիցէ 'ի ճա-
նապարհի զգնացս իւր :

## ՍԱՂՄՈՍ· ՁԵ:

Սաղմոս 'ի Դաւիթ. աղօթք :

Խոնարհեցո՛ տէր զունկն 1
քո՝ և լո՛ւր ինձ · զի
աղքատ և տնանկ եմ ես :
Պահեա՛ զանձն իմ սուրբ տր· 2
փրկեա՛ զծառայս քո ած իմ,
որ 'ի քեզ յուսացայ :
Ողորմեա՛ ինձ տէր, զի առ 3
քեզ աղաղակեցի զօրհանա-
պազ · ուրախ արա զանձն
ծառայի քո, զի առ քեզ տր
համբարձի զանձն իմ:
Զի դու տէր քաղցր և ու- 4
ղիղ ես, բազումողորմ առ
ամենեսեան, որ կարդան առ
քեզ :
Ո՛ւնկն դիր տէր աղօթից ի- 5
մոց, և նայեա՛ 'ի ձայն խըն-
դրուածաց իմոց :

Յա-

6 Յաւուր նեղութեան իմոյ կար-
դացի առ քեզ, և լուար ինձ:
7 Ո՛չ ոք է նման քեզ յաստ-
ուածս տր. և ո՛չ ոք է ըստ
գործս քո:
8 Ամենայն ազգս զոր արա-
րեր՝ եկեսցեն և երկիր պագ-
ցեն առաջի քո, և փառա-
ւոր արասցեն զանուն քո
յաւիտեան:
9 Մեծ ես դու տր՝ և առնես
սքանչելիս. և դու միայն
ես ած:
10 Առաջնորդեա ինձ 'ի ճա-
նապարհի քում, և գնացից
'ի ճշմարտութեան քում, և
ուրախ եղիցի սիրտ իմ՝ յեր-
կնչել յանուանէ քումմէ:
11 Խոստովան եղէց առ քեզ
տէր ած իմ բոլորով սրտիւ
իմով. փառաւոր արարից զա-
նուն քո յաւիտեան:
12 Մեծ եղև 'ի վր իմ ողոր-
մու-

մութի̄ն քո, փրկեցեր զանձն
իմ 'ի դժոխոց ներքնոց:
Ած̄, անօրէնք յարեան 'ի 13
վր̄ իմ. եւ ժողովք հզօրաց
խնդրեցին զանձն իմ. եւ ոչ
համարեցան զքեզ ած̄ առա_
ջի իւրեանց:
Այլ դու տր̄ ած̄ իմ, գը_ 14
թած ես եւ ողորմած, եր_
կայնամիտ բազումողորմ եւ
ճշմարիտ. նայեա՛ առ իս եւ
ողորմեա՛ ինձ:
Տո՛ւր զօրութի̄ն ծառայի քո. 15
կեցո՛ զորդի աղախնոյ քո.
եւ արա՛ առ իս նշան բարութե̄:
Տեսցեն ատելիք իմ եւ ամա_ 16
չեսցեն. զի դու տէր օգնե_
ցեր ինձ, եւ մխիթարեցեր զիս:

## ՍԱՂՄՈՍ. ՁԶ:

Սաղմոս օրհնութեան. որդւոցն 1
Կորխայ:

Հիմունք նորա 'ի լեառն որ 2

նու

նորա. սիրէ տէր զդրունս
սիովնի առաւել քան զամ՟
յարկսն Յակոբայ:
3 Փառաւորեալն խօսեցաւ վն՟
քո, ահաւադիկ քաղաքդ այ՟:
4 Յիշեցի զռահաբ և զբաբե-
լոնի՝ որք ճանաչեն զիս. ա-
հա այլազգիք և Ծուր՝ և ժո-
ղովուրդք Հնդկաց, սոքա ե-
ղեն անդ:
5 Սիովնի ասի մայր, և մարդ
ծնաւ 'ի նմա. և ինքն հի-
մունս արկ 'ի նմ՟ բարձրեալն:
6 Տէր պատմեսցէ գրովք ժո-
ղովրդեան, իշխանացս այսո-
ցիկ որ եղեն անդ:
7 Որպէս զի ուրախ լիցին 'ի
քեզ ամենեքեան. որոց բնա-
կութին խորհեանց 'ի քէն է:

# ՍԱՂՄՈՍ. ՁԷ:

'Ի կատարած. վասն մաղաղթայ 1
իմաստութե̅. դէ̅ էփ պատասխա-
նի եման իմաստութե̅ իսրայէլի :

Տէր ա̅ծ փրկութե̅ իմոյ, 'ի 2
տուէ կարդացի և գիշերի
առաջի քո :

Մտցեն աղօթք իմ առաջի 3
քո տ̅ր, խոնարհեցո ունկն
քո 'ի խնդրուածս իմ:

Զի լցաւ չարչարանօք անձն 4
իմ, և կեանք իմ 'ի դժոխս
մերձեցաւ. և համարեցայ
ես ընդ այնոսիկ, որք իջա-
նեն 'ի գուբ :

Եղէ ես որ̅պս մարդ առանց 5
օգնականի, և 'ի մեռեալս
ազատ :

Որպէս վիրաւորս, որ ննջեն 6
'ի գերեզմանս :

Զորս դու ոչ յիշեցեր, նո- 7
քա 'ի ձեռանէ քումմէ մեր-
ժե-

ժեցան :

8 Եդին զիս 'ի դրի ներքնումն՝
'ի խաւարի և 'ի ստուերս
մահու :

9 Յիս հաստատեցաւ սրտ֊
մտութի քո . զա̃մ զբօսանս
քո ածեր 'ի վերայ իմ :

10 Հեռի արարեր յինէն զծա֊
նօթս իմ, և եդին զիս նշա֊
ւակ իւրեանց :

11 Մատնեցայ՝ և ոչ ելանէի .
աչք իմ տկարացան յաղքա֊
տութէ :

12 Աղաղակեցի առ տ̃ր զօրհա֊
նապազ, և համբարձի առ
քեզ զձեռս իմ :

13 Մի թէ մեռելո̂ց առնիցես
զքանչելիս . կամ բժիշկք յա֊
րուցանիցեն՝ խոստովան առ֊
նիցին առ քեզ :

14 Մի թէ պատմեսցէ ոք եր֊
բէք 'ի գերեզմանի զողոր֊
մութիւնս քո, կամ զճշմար֊
տու֊

տութիւնս քո 'ի կորստեան:
Մի թէ ճանաչիցի՞ն 'ի խա- 15
ւարի սքանչելիք քո, կամ
արդարութիւն քո յերկիր
մոռացելոյ:
Ես առ քեզ տէր աղաղակե- 16
ցի. առաւօտու աղօթք իմ
ժամանեսցեն առ քեզ:
Ընդէ՞ր տէր մերժես զանձն 17
իմ. կամ դարձուցանես զե-
րեսս քո յինէն:
Տնանկ և վաստակաւոր եմ 18
ես 'ի մանկութենէ իմմէ, 'ի
բարձրութ͞է խոնարհեցայ և
ափշեցայ:
Ցիս հաստատեցաւ բարկու- 19
թի քո. արհաւիրք քո խռո-
վեցուցին զիս:
Շրջեցան զինև որպ͞ս ջուր, 20
զօր ամենայն պաշարեցին զիս
'ի միասին:
Հեռի արարեր յինէն զբա- 21
րեկամս իմ և զծանօթս իմ,
վասն

վասն Թշուառութեան իմոյ։

## ՍԱՂՄՈՍ. ՁԸ։

1 Իմաստութի՟ Եմանայ Իզրայէ-
լացւոյ։

2 Ողորմութիւն քո տէր յաւի-
տեան օրհնեցից, ազգէ
յազգ պատմեցից զճշմար-
տութիւն քո բերանով իմով։
3 Ասացեր՝ թէ աշխարհս ո-
ղորմութի՟ շինեսցի. յերկինս
պատրաստ եղիցի ճշմարտու-
թի քո։
4 Եդի ուխտ ընտրելոց իմոց.
երդուայ դաւթի ծառայի
իմոյ։
5 Յաւիտեան հաստատեցից
զզաւակ քո. և շինեցից ազ-
գէ յազգ զաթոռ քո։
6 Խոստովան եղիցին երկինք
զքանչելեաց քոց տէր, և ճշ-
մարտութիւն քո յեկեղեցիս
սրբոց։

Ո՞վ է յամպս որ հաւասարէ 7
քեզ, կամ ո՞վ նմանիցէ տ՟ն
յորդիս ա՟յ։
Ա՟ծ փառաւորեալ է 'ի խոր֊ 8
հուրդս սրբոց իւրոց. մեծ
և ահաւոր 'ի վերայ այնո֊
ցիկ որ շուրջ են զնովաւ։
Տէր ա՟ծ զօրութե՟ց, ո՞ նման 9
է քեզ. հզօր ես դու տ՟ր՝ և
ճշմարտութիւն քո շուրջ է
զքև։
Դու տիրես զօրութե՟ց ծո֊ 10
վու. և զխռովութ՟ն ալեաց
ն՟ր դու ցածուցանես։
Դու խոնարհեցուցանես ո՟պ 11
վիրաւորս զամբարտաւանս.
'ի զօրութ՟ն բազկի քո ցր֊
ուեցեր զթշնամիս քո,
Քո են երկինք՝ և քո է եր֊ 12
կիր. զաշխարհս լրիւ իւրով
դու հաստատեցեր, զհիւսիս
և զհարաւ դու արարեր.
Թաբոր և Հերմոն յանուն
քո

քո ցնծասցեն։
13 Քո է բազուկ՝ և քո է զօ-
րութի, զօրասցի աջ քո՝ և
բարձր եղիցի ձեռն քո։
14 Յարդարութի և յիրաւունս
հաստատեալ է աթոռ քո.
ողորմութիւն և ճշմարտու-
թիւն գնասցէ առաջի երե-
սաց քոց։
15 Երանի ժողովրդեան, որ գի-
տեն զօրհնութիւնս քո տր.
'ի լոյս երեսաց քոց գնաս-
ցեն, և յանուն քո ցնծաս-
ցեն զօրհանապազ, և յար-
դարութե քում բարձր եղի-
ցին։
16 Պարծանք զօրութեց մերոց
դու ես տէր, և 'ի կամս քո
բարձր եղիցի եղջիւր մեր։
17 'Ի տնէ է օգնութիւն սրբոյն
Իսրայէլի՝ Թագաւորին մերոյ։
18 Յայնժամ խօսեցար տես-
լեամբ ընդ որդիս քո, և ա-
սա

սացեր. Եդից զօգնութիւն
իմ 'ի վր̄ հզօրին, և բարձր
արարից զընտրեալն 'ի ժո-
ղովրդենէ իմմէ:
Գտի զդաւիթ ծառայ իմ, 19
իւղով սրբով իմով օծի զնա:
Ձեռն իմ ընկալցի զնա. և 20
բազուկ իմ զօրացուսցէ զնա:
Մի մեղիցէ նմա թշնամի, 21
և որդի անօրէնութեան մի չար-
չարեսցէ զնա:
Հարից առաջի նր̄ զթշնա- 22
միս նորա, և զատելիս նր̄ 'ի
պարտութիւն մատնեցից:
Ճշմարտութիւն իմ և ողոր- 23
մութիւն իմ ը̄ նմա. և յա-
նուն իմ բարձր եղիցի եղ-
ջիւր նորա:
Եդից 'ի ծովու զձեռն նր̄. 24
և 'ի վերայ գետոց զաջ նր̄:
Նա կարդասցէ առ իս՝ հայր 25
իմ ես դու, ած̄ ընդունելի
փրկութեան իմոյ:

Ես

26 Եւ անդրանիկ արարից զնա,
և բարձր քան զա̃մ թագա֊
ւորս երկրի:
27 Յաւիտեան պահեցից նմա
զողորմութիւն իմ, և ուխտ
իմ հաւատարիմ է̃ նմա:
28 Հաստատեցից յաւիտեանս
յաւիտենից զզաւակ նորա.
և զաթոռ նորա որպէս զաւ֊
ուրս երկնից:
29 Թէ թողցեն որդիք նո̃ր զօ֊
րէնս իմ, և յիրաւունս իմ
ոչ կամեսցին գնալ:
30 Թէ զարդարութիւնս իմ անար֊
գեսցեն, և զպատուիրանս
իմ ոչ պահեսցեն:
31 Հարից գաւազանաւ զանօ֊
րէնութիւնս նց̃, տանջանօք
զանիրաւութիւնս նց̃:
32 Բայց զողորմութիւն իմ ոչ
արգելից 'ի նոցանէ. և ոչ
նենգեցից ճշմարտութե̃ ի֊
մում, և ոչ անարգեցից

զուխտ իմ, և ինչ որ ելա-
նէ ընդ շրթունս իմ, զայն
ոչ արհամարհեցից:
Մի անգամ երդուեայ 'ի սրբ- 33
ութեան իմ, թէ դաւթի ես
ոչ ստեցից:
Զաւակ ն՟ր յաւիտեան կաց- 34
ցէ. և աթոռ ն՟ր ո՟պ արե-
գակն առաջի իմ. ո՟պ լու-
սին, զի հաստատեալ է յա-
ւիտեան վկայ հաւատարիմ
յերկինս:
Իսկ արդ՝ դու մերժեցեր և 35
անարգեցեր. և ընդ վայր
հարեր զօծեալ քո:
Դարձուցեր զուխտ 'ի ծա- 36
ռայէ քումմէ. պղծեցեր
յերկիր զսրբութիւն ն՟ր:
Քակեցեր զ՟մ պարիսպս 37
ն՟ր, և եդիր զամուրս ն՟ր 'ի
դողումն:
Յափշտակեցին զնա անցա- 38
ւորք ճանապարհի. եղև նա

նա.

նախատ դրացեաց իւրոց ։
39 Բարձր արարեր զաջ նեղ֊
չաց նորա․ ուրախ արարեր
զա̃մ թշնամիս ն̃ր ։
40 Դարձուցեր զօգնութիւն 'ի
սրոյ նորա, և ոչ ընկալար
զնա 'ի պատերազմի ։
41 Անարգեցեր զսրբութիւն նո֊
րա, և զաթոռ ն̃ր յերկիր
կործանեցեր ։
42 Նուաղ արարեր զաւուրս
ժամանակաց նորա․ և հեղեր
զնովաւ զամօթ ։
43 Մինչև յերբ դարձուցանես
զերեսս քո իսպառ․ բորբո֊
քեսցի որպէս հուր բարկու֊
թիւն քո ։
44 Իսկարդ յիշեա և տես՝ թէ
ո՞վ է իմ հանգիստ․ միթէ 'ի
զո՞ւր ինչ ստեղծեր զա̃մ որ֊
դիս մարդկան ։
45 Ո՞վ է մարդ որ կեցցէ՝ և ոչ
տեսցէ զմահ․ կամ փրկեսցէ
զանձն

զանձն իւր՚ի ձեռաց դժոխոց:
Ո՞ւր են ողորմութիւնք քո
տր̃ առաջինք, զոր երդուար 46
դաւթի ճշմարտութե̃ քով:
Յիշեա՛ զնախատինս ծառայի
քոյ, զոր ընկալայ՚ի ծոց իմ 47
յազգաց բազմաց:
Զոր նախատեցին թշնամիք 48
քո տր̃. նախատեցին փոխա-
նակ օծելոյ քոյ:
Օրհնեալ տր̃ ած̃ յաւիտեանս
յաւիտենից, եղիցի եղիցի: 49

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Եսայեայ որդւոյն Ամովսայ:

’Ի գիշերաց կանխէ հոգի 1
իմ՝ առաւօտ առնել առ
քեզ ած̃:
Վասն զի լոյս են հրամանք 2
քո ՚ի վերայ երկրի, ուսա-
րուք զարդարութիւն բնա-
կիչք երկրի:

Կար-

3 Կարկեցաւ ամպարիշտն, և
այլ ոչ եւս ուսցի առնել
յերկրի զարդարութիւն ճշ-
մարտութեան:
4 Բարձցի ամպարիշտն յերկ-
րէ, և մի տեսցէ զփառս տ̅յ:
5 Տ̅ր բարձր ես՝ և բազուկ քո
հզօր. և նոքա ոչ գիտացին:
6 Ծանիցեն՝ ամաչեսցեն, և
նախանձ անկցի անխրատ ժո-
ղովրդեան. և արդ հուր
զթշնամիս քո կերիցէ:
7 Տ̅ր ա̅ծ մեր՝ տուր մեզ զխա-
ղաղութիւն քո. զի ը̅ս ամե-
նայն գործոց մերոց հատու-
ցաւ մեզ:
8 Տ̅ր ա̅ծ մեր՝ ստացիր զմեզ.
զի բաց ՚ի քէն զայլ ոք ոչ
գիտեմք. և զանուն քո ան-
ուանեմք զօրհանապազ:
9 Խաւարդ՝ մեռեալք զկենդա-
նուն այլ ոչ տեսանիցեն, և
ոչ բժիշկք յարուցանիցեն:
Վասն

Վասն այսորիկ ածեր հա- 10
րեր՝ սատակեցեր ջնջեցեր՝
զա՟մ արու մանուկ ն՟ց:
Յաւէլ տ՟ր զչար 'ի վերայ 11
չարի նոցա. և ած զչար 'ի
վ՟ր անօրինաց երկրի:
Տէր 'ի նեղութե՟ յիշեցաք 13
զքեզ. զի փոքր մի նեղութի՟
է խրատ քո 'ի վերայ մեր:
Որպէս երկունք յղւոյ՝ զի 13
հասեալ իցէ ժամանակ ծնա-
ղեան. և առ ցաւս խրճչիցէ:
Այնպէս եղաք սիրելւոյ 14
քում. յահ և յերկիւղ քո
յղացեալ երկնեցաք, և ծը-
նաք զհոգի փրկութե՟ քո:
Ո՛չ ևս կործանեսցուք մեք, 15
այլ կործանեսցին բնակիչք
երկրի:
Յարիցեն մեռեալք. և կեն- 16
դանասցին ամենեքեան, որ
եղեալ են 'ի գերեզմանս:
Զարթիցեն ցնծասցեն, և 17

ու-

ուրախ եղիցին դադարեալք
յերկրի:

Վասն զի ցօղդ որ ցօղէ 'ի 18
քէն, այդ բժշկութիւն է
նց. բայց երկիրն ամբարշ-
տեալ սատակեսցի:

Խոյս տուր ժողովուրդ իմ. 19
մուտ 'ի շտեմարանս
քո. փակեա զդրունս քո
առաջի երեսաց քոց:

Փախիր և թաքիր առ ժա- 20
մանակ մի՝ մինչև անցցէ բար-
կութիւն տն:

## ՄԱՂԹԱՆՔ:

Խաղաղութեանց տուող քո՝
զխաղաղութիւն և զերկ-
նային ողորմութիւն քո պար-
գևեա յարարածս քո:

Մարդասէր տէր՝ վասն սր-
բուհւոյ:

Զքարոզն և զաղօթս 'ի վերջն Երա-
նեալ կանոնին գտցես 'ի 50. երեսն:




Յօղէր արտօսր ցաւագին մայր ին·

# ՍԱՂՄՈՍ. ՁԹ։

Աղօթք ՚ի Մովսէսի յառն այ̃։

1 ՏԷՐ ԱՊԱՒԷՆ
եղեր մեր ազգէ մին-
չև յազգ. մինչև լերինք հաս-
տատեալ էին, մինչև ստեղ-
ծեալ զերկիր՝ և զամենայն
տիեզերս։
2 Յաւիտենից մինչև յաւի-
տեանս դու ես. և մի դար-
ձուցաներ զմարդ ՚ի տառա-
պանս. և ասացեր, դարձա-
րո՛ւք առիս որդիք մարդկան։
3 Հազար ամ յաչս տն̃ որպէս
օր երեկի՝ զի անց. որպէս
պահ մի գիշերոյ. և ամք
նոցա անարգութք̃ եղիցին։
4 Ընդ առաւօտս որպէս դա-
լար բուսցին. ընդ առա-
ւօտս

ւօտս ոպ̄ դալարի զուար-
ճասցին եւ ծաղկեսցին. ընդ
երեկոյս թարշամեսցին՝ չո-
րասցին եւ անկցին։
՛Նուաղեցաք մեք 'ի բարկու- 5
թէ քումմէ, եւ 'ի սրտմտու-
թէ քումմէ խռովեցաք։
Եդիր զմեղս մեր առաջի քո, 6
եւ զկեանս մեր 'ի լոյս երե-
սաց քոց։
Ամենայն աւուրք մեր նուա- 7
ղեցան. եւ 'ի բարկութենէ
քումմէ խռովեցաք։
Ժամանակ ամաց մերոց ան- 8
դադար ոպ̄ սարդի. եւ թիւ
աւուրց ամաց մերոց 'ի նմ̃՝
եօթանասուն ամ։
Ապա թէ առաւել եւս՝ ութ- 9
սուն ամ. որ ինչ աւելի է̄
զայն, ցաւօք եւ հեծութբ̄։
Եկն 'ի վերայ մեր հեծութի՛ւն, 10
եւ խրատեցաք. իսկարդ՝ ո՞
գիտասցէ զզօրութիւն բար-
կու-

կուն քո, կամ յահէ քումմէ զսրտմտութիւն քո համարեսցի։
11 Այսպէս ցո՛յց ինձ զաջ քո. և որ խոնարհ են սրտիւք, զիմաստութիւնս քո։
12 Դարձ տէր՝ մինչև յե՞րբ. մխիթարեա՛ 'ի ծառայս քո։
13 Լցաք առաւօտու ողորմութ̃ քո. ցնծացաք և ուրախ եղաք՝ զա̃մ աւուրս կենաց մերոց։
14 Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, որ խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս։
15 Հայեա՛ տէր 'ի ծառայս քո՝ և 'ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա՛ որդւոց նոցա. և եղիցի լոյս տ̃ն ա̃յ 'ի վերայ մեր։
16 Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա 'ի մեզ տ̃ր. զգործս

ձե-

Ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ:

## ՍԱՂՄՈՍ. Ղ:

Օրհնութի̃ գովութե̃ 'ի դաւթի:

Որ բնակեալն է յօգնութիւն 1
բարձրելոյն, ընդ հովանեաւ
այ յերկնից հանգիցէ:
Ասասցէ տն՝ ընդունելի իմ 2
ես, ապաւէն իմ ած, և ես
յուսամ 'ի նա:
Նա փրկեսցէ զիս յորոգայ- 3
թէ որսողին, և 'ի բանից
խռովութե̃:
'Ի թիկնամէջս իւր ընկալցի 4
զքեզ. 'ի հովանի թեւոց նր
յուսասցիս:
Որպ զէն շուրջ եղիցի զքև՝ 5
ճշմարտութիւն նր:
Ո՛չ երկիցես դու յերկիւղէ 6
գիշերի, և ո՛չ 'ի նետէ՝ որ
թռչի 'ի տուէ:
Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 7
'ի գայթագղութէ̃ դիւէ 'ի
հա-

հասարակ աւուր:
8 Անկցին 'ի կողմանէ քումմէ
հազարք, և բիւրք ընդ աջմէ
քումմէ. որ առ քեզ ինչ ոչ
մերձեսցին:
9 Բայց միայն աչօք քով հայ-
եսցես դու, և զհատուցումն
մեղաւորաց տեսցես. զի դու
Տէր յոյս իմ ես:
10 Զբարձրեալն արարեր քեզ
ապաւէն. ոչ հասցեն առ քեզ
չարք, և տանջանք մի մեր-
ձեսցին 'ի յարկս քո:
11 Հրեշտակաց իւրոց պատ-
ուիրեալ է վս̃ քո, պահել
զքեզ յա̃մ ճանապարհս քո:
12 'Ի բազուկս իւրեանց ընկալ-
ցին զքեզ. զի մի երբէք հար-
ցես զքարի զոտն քո:
13 'Ի վերայ իժից և քարբից
գնասցես դու. և առ ոտն
կոխեսցես զառիւծն և զվի-
շապն:

Քան-

Քանզի յիս յուսացաւ, և 14
փրկեցից զնա. հովանի ե-
ղէց նմա, զի ծանեաւ զա-
նուն իմ։
Կարդասցէ առ իս՝ և ես 15
լուիցից նմա. և առ նմա ե-
ղէց 'ի նեղութեան։
Փրկեցից և փառաւոր ա- 16
րարից զնա. երկայն աւուրբք
լցուցից, և ցուցից նմա զփ-
րկութիւն իմ։

## ՍԱՂՄՈՍ. ՂԱ։

Սաղմոս օրհնութեան աւուր շաբա- 1
թուոյ 'ի Դաւիթ։

Բարի է խոստովան լինել 2
տն̄, սաղմոս ասել անուան
քում բարձրեալ։
Պատմել առաւօտու զողոր- 3
մութիւնս քո, և զճշմարտու-
թիւնս քո 'ի գիշերի։
Տասնաղեաւ սաղմոսարա- 4
նաւ, 'ի ձայն օրհնութեան

գո-

գովել։
5 Ուրախ արարեր զիս Տր̃ յա-
րարածս քո, և 'ի գործս
ձեռաց քոց ցնծացայց։
6 Որչափ զի մեծ են գործք քո
Տր̃, և յոյժ խոր են խոր-
հուրդք քո։
7 Այր անզգամ զայս ոչ ծա-
նիցէ. և անմիտն զայս ոչ
առնու 'ի միտ։
8 'Ի բուսանել մեղաւորաց ոպ̃
խոտ. 'ի ծաղկել այնոցիկ՝ որ
գործեն զանօրէնութիւն։
9 Սատակեսցին յաւիտեանս
յաւիտենից. և դու բարձ-
րեալ ես յաւիտեանս Տր̃։
10 Զի ահա թշնամիք քո տէր.
զի ահա թշնամիք քո կորի-
ցեն, ցրուեսցին ամենեքեան՝
Ոք̃ գործեն զանօրէնութ̃։
11 Բարձր եղիցի ոպ̃ միեղջե-
րոյ եղջիւր իմ. և ծերութ̃
իմ 'ի հեղթ պարարտութ̃։

Եւ

Եւ տես ակն իմ 'ի թշնամիս 12
իմ, ովք յարուցեալ են 'ի
վր̃ իմ չարութք̃, 'ի նոսա
լուիցէ ունկն իմ:
Արդարքն ոպ̃ զարմաւենիս 13
ծաղկեսցին. ոպ̃ մայրքն լի-
բանանու բազումք եղիցին:
Տնկեալք եղիցին 'ի տան տն̃, 14
և 'ի գաւիթս այ̃ մերոյ ծաղ-
կեսցին:
Եւս և բազումք եղիցին 'ի 15
ծերութիւն պարարտութն̃.
գէրք և փափուկք եղիցին՝
'ի պատմել, ուղիղ է տր̃ ած̃
մեր, և ոչ գոյ 'ի նմա անի-
րաւութիւն:

## ՍԱՂՄՈՍ. ՂԲ:

Յաւուրն առաջին շաբաթու,
յոր հաստատեցաւ երկիր. օրհնութն̃
Գովութն̃ 'ի Դաւթի:

Տր̃ թագաւորեաց՝ վայել- 1
չութիւն զգեցաւ, զգե-
ցաւ

ցաւ տր զօրութիւն՝ ը մէջ
իւր ածաւ:

2 Հաստատեաց զաշխարհ՝ զի
մի սասանեսցի, պատրաստ
է աթոռ քո՝ ՚ի սկզբանէ յա-
ւիտենից դու ես:

3 Ամբարձան գետք տր, եւ ամ-
բարձին գետք զձայնս իւ-
րեանց. յարիցեն գետք ՚ի
գնացս իւրեանց:

4 ՚Ի ձայնէ ջուրց բազմաց,
սքանչելի եղեն զբօսանք ծո-
վու:

5 Սքանչելի ես դու տր ՚ի բար-
ձունս. վկայութեանց քոց
մեք յոյժ հաւատացաք:

6 Տան քում վայելէ սրբութի
տր՝ ընդ երկայն աւուրս:

## ՍԱՂՄՈՍ. ՂԳ:

Սաղմոս ՚ի Դաւիթ. չորեքշա-
բաթու:

1 Ած վրէժխնդիր. տր ած՝

վրէժխնդիր յայտնեցար։
Բարձր լեր որ դատես զեր- 2
կիր․ հատո զհատուցումն
ամբարտաւանից։
Մինչեւ յե՞րբ մեղաւորք Տէր, 3
մինչեւ յե՞րբ մեղաւորք պար-
ծեսցին։
Բարբառեալ խօսէին զանի- 4
րաւութիւն․ խօսեսցին ամե-
նեքեան՝ որ գործեն զանօ-
րէնութիւն։
Զժողովուրդս քո Տէր խո- 5
նարհ արարին, եւ զժառան-
գութիւն քո չարչարեցին։
Զայրին՝ եւ զպանդուխտն 6
սպանին, զորբան կոտորե-
ցին, եւ ասացին․ ոչ տեսա-
նէ զայս Տէր, եւ ոչ 'ի միտ
առնու Ած յակոբայ։
Իմացարուք անզգամք ժողո- 7
վրդոց՝ եւ անմիտք, մինչեւ
յե՞րբ ոչ առնուք 'ի միտ։
Որպէս զի թէ որ տնկեաց 8
զունկն

զունկն՝ ինքն ոչ լուիցէ .
կամ որ ստեղծ զակն՝ ինքն
ոչ տեսանիցէ :
9 Ո խրատէ զազգիս , ոչ թէ
ոչ յանդիմանեսցէ . ո ուսու_
ցանէ մարդոյ զգիտութիւն .
Տէր ճանաչէ զխորհուրդս
մարդկան՝ զի են ընդունայն :
10 Երանի մարդոյ՝ զոր խրա_
տես դու Տէր . և յօրինաց
քոց ուսուցանես դու նմա :
11 Ցածուցանես դու նմա զա_
ւուրս չարութեան , մինչև փո_
րեսցի խորխորատ մեղաւորի :
12 Ո՛չ մերժէ Տէր զժողովուրդ
իւր , և զժառանգութիւն
իւր ոչ առնէ անտես :
13 Մինչև դարձցին իրաւունք
յարդարութիւն . ընկալցին
զնա ամենեքեան որ ուղիղ
են սրտիւք :
14 Ո՞ յարիցէ ընդ իս ի վերայ չա_
րաց . կամ ո՞ հաստատեսցէ
ինձ

ինձ 'ի վր այնոցիկ որ գոր-
ծեն զանօրէնութիւն։
Թէ ոչ Տր օգնեալ էր ինձ, 15
փոքր մի և ես բնակեալ էր
անձն իմ 'ի դժոխս։
Եթէ ասէի՝ թէ ահա սասա- 16
նեցան ոտք իմ, ողորմութի
քո Տր օգնէր ինձ։
Ըստ բազում ցաւոց սրտի 17
իմոյ՝ մխիթարութիւնք քո ու-
րախ առնէր զանձն իմ։
Մի՞թէ հաւասարեսցէ քեզ ա- 18
թոռ անօրէնութեան, ո պատ-
ճառէ զվաստակս ընդդէմ
հրամանի։
Որսացան զանձն արդարոյ. 19
և զարիւն անբիծ պարտա-
ւոր առնէին։
Եղև Տր ապաւէն իմ. ած 20
օգնական յուսոյ իմոյ։
Հատուսցէ նց Տր ըս անօրէ- 21
նուե նց. ըս չարուե նց կոր-
ծանեսցէ զնս տէր ած մեր։
ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՂԴ:

Օրհնութիւն գովութեան 'ի դաւիթ:

1 Եկայք ցնծասցուք 'ի տէր,
աղաղակեսցուք առ ած փըր-
կիչ մեր:
2 Կանխեսցուք առաջի նորա
խոստովանութբ. սաղմոսիւք
աղաղակեսցուք առ նա:
3 ԱԾ մեծ է տէր. Թագաւոր
մեծ 'ի վր ամ երկրի:
4 'Ի ձեռս նր են ամ տիեզերք
երկրի, և բարձրութիւնք լե-
րանց նր են:
5 Նորա է ծով՝ և նա արար
զնա, և զցամաք ձեռք նորա
ստեղծին:
6 Եկայք երկրպագեսցուք նմա.
անկցուք և լացցուք առաջի
տն արարչին մերոյ:
7 Նա ինքն է տէր ած մեր.
մեք ժողովուրդք ձեռին նր,
և խաշն արօտի նր:

Այ

Այսօր եթէ զձայն նորա 8
լուիջիք, մի խստացուցանէք
զսիրտս ձեր՝ որպէս 'ի դառ-
նութեան:
Յաւուր փորձութեան յանա- 9
պատին, ուր փորձեցին զիս
հարքն ձեր. քննեցին զիս՝
և տեսին զգործս իմ զքա-
ռասուն ամ:
Զզուեցայ ընդ ազգին ընդ այն- 10
միկ, և ասացի՝ միշտ մոլորե-
ալ են սրտիւք. և նոքա ոչ ծա-
նեան զճանապարհս իմ:
Որպէս երդուայ 'ի բարկութեան 11
իմում. թէ մտցեն 'ի հան-
գիստ իմ:

## ՍԱՂՄՈՍ. ՂԵ:

Սաղմոս 'ի Դաւիթ. 'ի ժամանակի 1
զի տաճարն շինէին:

Օրհնեցէք զՏէր յօրհնու- 2
թիւն նոր. օրհնեցէք
զՏէր ամ երկիր:

Օրհ-

3 Օրհնեցէք զՏր և օրհնեցէք
զանուն նորա . աւետարա-
նեցէք օր ըստ օրէ զփրկու-
թիւն նորա :
4 Պատմեցէք 'ի հեթանոսս ըզ-
փառս նորա , յամ ժողո-
վուրդս սքանչելիս նր :
5 Մեծ է Տր և օրհնեալ է
յոյժ . ահաւոր է նա 'ի վր
ամ կռոց :
6 Ամենայն կուռք հեթանո-
սաց դևք են . և Տր զերկինս
արար :
7 Խոստովանութիւն և վայել-
չութիւն է առաջի նր . սըր-
բութիւն և մեծվայելչութիւն
'ի սրբութեան նորա :
8 Մատուցէք Տն տոհմք ա-
զանց . մատուցէք Տն զփառս
և զպատիւ . մատուցէք Տն
զփառս անուան նր :
9 Առէք պատարագս՝ և մտէք
'ի սրահս նր . երկիր պագէք
Տն

տն 'ի գաւիթս սրբութեան
նր. և խռովեսցի յերեսաց
նորա ամ երկիր:
Ասացէք 'ի հեթանոսս՝ թէ 10
տր թագաւորեաց. հաստա-
տեաց զաշխարհս զի մի սա-
սանեսցի. և դատէ զժողո-
վուրդս իւր ուղղութբ:
Ուրախ եղիցին երկինք՝ և 11
ցնծասցէ երկիր. զուարճա-
ցի ծով լրիւ իւրով. ցըն-
ծասցեն դաշտք՝ և ամ որ է
'ի նոսա:
Յայնժամ ցնծասցեն ամե- 12
նայն ծառք անտառի յերե-
սաց տն՝ զի գայ, և գայ նա
'ի դատել զերկիր:
Դատի զաշխարհս իրաւամբք, 13
և զժողովուրդս ամ ճշմար-
տութբ իւրով:

# ՍԱՂՄՈՍ. ՂԶ:

1 Սաղմոս ՚ի դաւիթ. ՚ի ժամանա-
ԿԻՆ ԶԻ ԵՐԿԻՐՆ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ:

2 Տէր թագաւորեաց՝ ցըն-
ծասցէ երկիր. ուրախ
եղիցին կղզիք բազումք:
3 Ամպ և մէգ շուրջ է զնո-
վաւ. յիրաւունս և յար-
դարութիւն ուղղեալ է ա-
թոռ նորա:
4 Հուր առաջի նորա գնաս-
ցէ, այրեսցէ շուրջ զթշնա-
միս նր̄:
5 Երևեցան փայլատակունք նո-
րա տիեզերաց. ետես՝ և սա-
սանեցաւ երկիր:
6 Լերինք որ̄պս մոմ հալեցին
յերեսաց տ̄ն, յերեսաց տ̄ն
ա̄մ երկիր:
7 Պատմեցեն երկինք զարդա-
րութիւն նր̄. տեսին ամենայն
ժողովուրդք զփառս նր̄:
Ամն.

Ամաչեսցեն ամենեքեան որ 8
երկիր պագանեն կռոց, և
ոյք պարծին 'ի դրօշեալս
իւրեանց։
Երկիրպագցեն նմա ամ հրեշ- 9
տակք նր, զի լուաւ և ու-
րախ եղև սիոն. և ցնծաս-
ցեն դստերք յուդայ վասն
իրաւանց քոց տր։
Զի դու բարձրեալ ես 'ի 10
վր ամենայն երկրի. յոյժ
բարձրացար 'ի վերայ ամե-
նայն կռոց։
Ոյք սիրէք զտր՝ ատեցէք 11
զչարութիւն. պահէ տր զան-
ձինս սրբոց իւրոց, 'ի ձե-
ռաց մեղաւորի փրկեսցէ զն-
նոսա։
Լոյս ծագեաց արդարոց. 12
ուղղոց սրտից եղև ուրա-
խութիւն։
Ուրախ եղերուք արդարք 'ի 13
տր. խոստովան եղերուք յի-
շա-

շատակի սրբութեան նորա.

## ՍԱՂՄՈՍ. ՂԷ։

Սաղմոս ՚ի Դաւթի օրհնութեան։

1 Օրհնեցէք զտր̃ յօրհնութիւն
նոր. զի սքանչելիս արար։
2 Փրկեաց զնա աջ իւր, և
բազուկ սուրբ իւր։
3 Եցոյց տր̃ զփրկութիւն իւր,
առաջի ազգաց յայտնեաց
զարդարութիւն իւր։
4 Յիշեաց ողորմութե̃ իւրում
Յակոբայ, ճշմարտութե̃ իւ-
րում տանն Իսրայէլի. և
տեսին ամ̃ ծագք երկրի զփ-
րկութիւն այ̃ մերոյ։
5 Աղաղակեցէք առ տր̃ ամ̃
երկիր. օրհնեցէք ցնծացէք՝
և սաղմոս ասացէք։
6 Սաղմոս ասացէք այ̃ մերում
օրհնութե̃, օրհնութե̃ և ՚ի
ձայն սաղմոսաց։
7 ՚Ի ձայն օրհնութե̃ կոկոջոյ

փո-

փողոյ. օրհնութ̄բ ցնծութ̄բ՝
և 'ի ձայն եղջեր փողոյ. և
աղաղակեցէք առաջի Թա-
գաւորին տ̄ն:
Խռովեսցի ծով լրիւ իւրով. 8
տիեզերք և ա̄մ բնակիչք նո-
րա. և գետք ծափս հարցեն
'ի միասին ձեռամբ:
Լերինք ցնծասցեն առաջի 9
տ̄ն, զի գայ և հասեալ է
տ̄ր 'ի դատել զերկիր:
Դատի զաշխարհս արդարու- 10
թ̄բ, և զժողովուրդս ուղ-
ղութ̄բ:

## ՍԱՂՄՈՍ. ՂԸ:

Սաղմոս 'ի դաւթի:

Տէր Թագաւորեաց, բար- 1
կացան ժողովուրդք՝ որ
նստիս 'ի քրովբէս, սասա-
նեսցաւ երկիր:
Տ̄ր 'ի սիովն մեծ է, և բարձր 2
է 'ի վ̄ր ա̄մ ժողովրդոց:

Խաս-

3 Խոստովան եղիցուք անուան
քում մեծի, զի ահաւոր և
սուրբ է. և պատիւ թա-
գաւորի զիրաւունս սիրէ:
4 Դու պատրաստեցեր զուղ-
ղութիւն. և զիրաւունս և
զարդարութիւն յակովբայ դու
արարեր:
5 Բարձր արարէք զՏէր ած՟
մեր. երկիր պագէք պատ-
ուանդանի ոտից նորա՝ զի
սուրբ է:
6 Մովսէս և Ահարոն երի-
ցունք նր՟. Սամուէլ ընդ այ-
նոսիկ, որ կարդան զանուն
նորա:
7 Կարդային առ Տէր, և նա
լսէր նց՟. և 'ի սեան ամպոյ
խօսէր ընդ նոսա:
8 Պահէին զվկայութիւն նր՟,
և զհրամանս՝ զոր ետ նց՟:
9 Տր՟ ած՟ մեր՝ դու լսէիր նո-
ցա, ած՟՝ դու քաւիչ լինէիր.
վրէժ-

վրէժխնդիր 'ի վ՟ր ամենայն
գործոց նոցա:
Բա՛րձր արարէք զտէր ա՟ծ 10
մեր. երկի՛ր պագէք 'ի լեառն
սուրբ ն՟ր. զի սուրբ է տէր
ա՟ծ մեր:

## ՍԱՂՄՈՍ. ՂԹ:

Սաղմոս խոստովանութեան 'ի
դաւիթ:

Աղաղակեցէք առ տէր ա՟մ 1
երկիր. ծառայեցէ՛ք տ՟ն ու-
րախութ՟բ:
Մտէ՛ք առաջի ն՟ր ցնծութ՟բ. 2
ծանի՛րուք զի նա է տ՟ր ա՟ծ
մեր:
Նա՛ արար զմեզ, և ոչ մեք 3
էաք. մեք ժողովուրդք և
խաշն արօտի ն՟ր.
Մտէ՛ք ընդ դրունս ն՟ր խոս- 4
տովանութ՟բ, և օրհնութ՟բ
'ի յարկս նորա:
Խոստովանի՛ եղերուք տ՟ն, և 5

օրհնեցէք զանուն նր՟:
6 Քաղցր է տէր, յաւիտեան
է ողորմութի՟ն նր՟. ազգէ մին-
չև յազգ է ճշմարտութի՟ն նր՟:

## ՍԱՂՄՈՍ. Ճ:

Սաղմոս ՚ի Դաւիթ:

1 Զողորմութի՟ն և զիրաւունս
օրհնեցից զքեզ տր՟. սաղմոս
ասացից, և ՚ի միտ առից:
2 Ճանապարհ անբիծ մինչև ե-
կեսցես առ իս. զի գնայի ես
յանբծութի՟ն սրտի իմոյ՝ ՚ի
մէջ տան իմոյ:
3 Ո՛չ եդի առաջի աչաց իմոց
իրս անիրաւութե՟. ոյք առ-
նէին զուրացութի՟ն, ատեցի:
4 Ոչ մերձեցաւ առ իս՝ որ
թիւրն էր սրտիւ. խոտո-
րեալ յինէն անզգամին, և
ես ինչ ոչ փոյթ առնէի:
5 Որ խօսէր գաղտ զընկերէ
իւրմէ, զնա բացէ ՚ի բաց
հա-

հալածէի ։

Որ ամբարտաւան էր աչօք՝ 6
և ագահ սրտիւ, ընդ նմա
և հաց ո՛չ ուտէի ։
Աչք իմ ՚ի հաւատացեալս 7
երկրի, զի նստցին նք ը̄ իս ։
Որ գնայր ՚ի ճանապարհ ամ֊ 8
բիծ, նա պաշտէր զիս ։
Ո՛չ բնակէր ՚ի մէջ տան ի֊ 9
մոյ՝ որ առնէր զամբարտա֊
ւանութիւն. որ խօսէր զանի֊
րաւութիւն, չէր յաջողեալ
նմա առաջի աչաց իմոց ։
Ընդ առաւօտս սպանանէի 10
զամենայն մեղաւորս երկրի.
սատակեցի ՚ի քաղաքէ տն̄
զամենեսեան՝ որ գործեն զա֊
նօրէնութիւն ։

# ՍԱՂՄՈՍ. ՃԱ:

1 Աղօթք տնանկի. իբրեւ յանձրանայի՝
առաջի Տեառն հեղուցէ զ-
խնդրուածս իւր:

2 Տէր՝ լուր աղօթից իմոց.
աղաղակ իմ առ քեզ ե-
կեսցէ. մի դարձուցաներ զե-
րեսս քո յինէն:
3 Յաւուր նեղութեան իմոյ խո-
նարհեցո առ իս զունկն քո.
յորում աւուր կարդամ առ
քեզ՝ վաղվաղակի լուր ինձ:
4 Սպառեցան որ͞պ ծուխ ա-
ւուրք իմ. եւ ոսկերք իմ որ͞պ
խանձ չորացան:
5 Հարաւ որպէս խոտ՝ եւ ցա-
մաքեաց սիրտ իմ. մոռացայ
ուտել զհաց իմ ՚ի ձայնէ հե-
ծութեան իմոյ:
6 Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին
իմ. նմանեցայ ես հաւալուսն
յանապատի:

Եղէ ես որպէս բու յաւե- 7
րակի. տքնեցայ՝ եւ եղէ ես
որպէս ճնճղուկ միայն ՚ի
տանիս:

Նախատեցին զիս թշնամիք 8
իմ զօրհանապազ, եւ գովիչք
իմ ինեւ երդնուին:

Զմոխիր որ̄պս հաց կերայ. 9
եւ զըմպելի իմ արտասուօք
խառնեցի:

Յերեսաց բարկութ̄ե սրտմ- 10
տութ̄ե քո. զի դու բարձրա-
ցուցեր, եւ խոնարհեցուցեր
զիս:

Աւուրք իմ ոպ̄ հովանի ան- 11
ցին. եւ ես որպէս խոտ ցա-
մաքեցայ:

Դու տէր յաւիտեան կաս 12
եւ յիշատակ քո ազգէ մինչեւ
յազգ:

Դու յարուցեալ գթասցիս 13
՚ի վերայ սիոնի. ժամանակ
գթալոյ նր̄ հասեալ է ժամ:

Հա-

14 Հաճեցան ծառայք քո ընդ-
քարինս նր, և 'ի հողս նր
գթասցին :
15 Երկիցեն հեթանոսք յան-
ուանէ քումմէ. և ամենայն
թագաւորք երկրի 'ի փա-
ռաց քոց :
16 Շինէ տր զսիոն, և երե-
ւեսցի փառօք իւրովք 'ի նմ :
17 Հայեցաւ նա յաղօթս խո-
նարհաց, և ոչ արհամար-
հեաց զխնդրուածս նց :
18 Գրեսցի այս յազգ յայլ.
ժողովուրդ զոր ստացեալ է՝
օրհնեսցէ զտր :
19 Հայեցաւ նա 'ի բարձանց 'ի
սրբութենէ իւրմէ. տր յերկ-
նից յերկիր հայեցաւ :
20 Լսել զհեծութիւն կապելոց,
և արձակել զորդիս մահա-
պարտաց :
21 Պատմել 'ի սիոն զանուն տն,
և զօրհնութիւնս նորա յե-
րու-

բուսաղեմ։
ժողովել ժողովրդոց ՚ի միա- 22
սին, եւ թագաւորաց ծա-
ռայել տն։
Պատասխանի ետ նմ ՚ի ճա- 23
նապարհի զօրութե իւրոյ.
զնուազութի աւուրց իմոց
ասա ինձ, եւ մի հաներ զիս
՚ի կէս աւուրց իմոց. զի ազ-
գէ յազգ են ամք քո։
Իսկզբանէ տր զհիմունս երկ- 24
րի հաստատեցեր. եւ գործք
ձեռաց քոց երկինք են։
Նք անցանեն, եւ դու կաս՝ 25
եւ մնաս յաւիտեան։
Ամենեքեան ոպ ձորձս մա- 26
շեսցին. ոպ վերարկուս փո-
խեսցես զնս, եւ փոխեսցին։
Բայց դու նոյն իսկ ես, եւ 27
ամք քո ոչ անցանեն. որդիք
ծառայից քոց բնակեսցեն ՚ի
նմա. եւ զաւակի նոցա յա-
ւիտեան յաջողեսցի։

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԲ։

Սաղմոս ՚ի Դաւիթ ։

1 Օրհնեա անձն իմ զՏ̄ր, և
և ամ̄ ոսկերք իմ՝ զանուն
ս̄բ նորա ։
2 Օրհնեա անձն իմ զՏէր. և
մի մոռանար զամ̄ տուրս ն̄ր։
3 Որ քաւէ զմեղս քո. բժշկէ
զամենայն հիւանդութիւնս քո ։
4 Որ փրկէ յապականութենէ ըզ-
կեանս քո. պսակէ զքեզ ո-
ղորմութ̄բ և գթութ̄բ ։
5 Որ լնու ՚ի բարութ̄է զցան-
կութն քո. նորոգեսցի ոպ̄
արծուոյ մանկութիւն քո ։
6 Առնէ ողորմութիւնս Տ̄ր, և
իրաւունս ամենայն զրկելոց ։
7 Եցոյց Տ̄ր զճանապարհս իւր
մովսէսի, և որդւոցն իսրայ-
էլի զկամս իւր ։
8 Գթած ողորմած է Տ̄ր, եր-
կայնամիտ և բազումողորմ։

Ո՛չ

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ 9
տ՟ր, եւ ո՛չ յաւիտեան պահէ
ոխս։
Ո՛չ ըստ մեղաց մերոց արար 10
մեզ, եւ ո՛չ ըստ անօրէնութե՟ն
մերում հատոյց մեզ։
Այլ ո՟պ բարձր են երկինք 11
յերկրէ, այնպէս զօրացոյց
տ՟ր զողորմութիւն իւր 'ի վ՟ր
երկիւղածաց իւրոց։
Որչափ հեռի են արեւելք յա_ 12
րեւմտից, այնպէս հեռի ա_
րար 'ի մէնջ զանօրէնութի՟ս
մեր։
Ո՟պ գթայ հայր 'ի վ՟ր որդ_ 13
ւոց իւրոց, այնպէս գթա_
ցի տ՟ր յերկիւղածս իւր։
Զի նա գիտաց զստեղծ_ 14
ուածս մեր, եւ յիշեաց թէ
հող եմք։
Մարդոյ ո՟պ խոտոյ են ա_ 15
ւուրք իւր. ո՟պ ծաղիկ վայ_
րի՝ այնպէս ծաղկէ։

Շնչէ

16 Ընչէ ՚ի նմա հողմ, և ոչ է՝
և ոչ ևս երևի տեղի նր՟:
17 Բայց ողորմութին տն՟ յաւի-
տեանս յաւիտենից ՚ի վերայ
երկիւղածաց իւրոց, և ար-
դարութիւն նորա յորդւոց
մինչև յորդիս:
18 Ոյք պահեն զուխտս նորա,
յիշեն զպատուիրանս նր՟՝ և
առնեն զնա:
19 Տր՟ յերկինս պատրաստեաց
զաթոռ իւր, արքայուի նր՟
ամենեցուն տիրէ:
20 Օրհնեցէք զտէր ամենայն
հրեշտակք նր՟՝ հզօրք զօրութ՟.
որ առնէք զբան նր՟ ՚ի լսել
ձայնի պատգամաց նորա:
21 Օրհնեցէք զտր՟ ամենայն զօ-
րութիւնք նորա, պաշտօնեայք
և արարօղք կամաց նր՟:
22 Օրհնեցէք զտր՟ ամ՟ գործք
նր՟. ընդ ամենայն տեղիս է
տէրութին նր՟. օրհնեա անձն
իմ

իմ զտէր ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԳ ։

Սաղմոս ՚ի Դաւիթ. ՚ի վերայ աշ- 1
խարհագործ արարածոց ։

Օրհնեա անձն իմ զտէր. 2
տէր ա՟ծ իմ մեծ եղեր
յոյժ ։
Խոստովանութիւն և մեծ- 3
վայելչութի՟ զգեցար. ար-
կար զլոյս ո՟պ զօթոց, ձգե-
ցեր զերկինս ո՟պ խորան. և
յարկար ՚ի վ՟ր ջուրց զվեր-
նայարկս նորա ։
Որ դնէ յամպս զգնացս իւր. 4
և շրջի նա ՚ի վերայ թևոց
հողմոց ։
Որ արար զհրեշտակս իւր հո- 5
գիս, և զպաշտօնեայս իւր
՚ի հուր կիզելոյ ։
Հաստատեաց զերկիր ՚ի վ՟ր 6
հաստատութե՟ իւրոյ, զի մի՟
սասանեսցի յաւիտեան ։

Խորք

7 Խորք ոպ՟ զգեստ վերարկու֊
է նր՟· 'ի վր՟ լերանց կաց֊
ցեն ջուրք ։
8 'Ի սաստէ քումմէ փախի֊
ցեն, և 'ի ձայնէ որոտալոյ
քումմէ սարսիցեն ։
9 Ելանեն լեռնանան՝ և իջա֊
նեն դաշտանան, 'ի տեղի
յոր հաստատեցեր զնս՟ ։
10 Սահման եդիր՝ և ոչ անցա֊
նեն, և ոչ ևս դառնան 'ի
ծածկել զերկիր ։
11 Առաքեցեր զաղբիւրս ընդ
ծործորս · 'ի մէջ լերանց
գնասցեն ջուրք ։
12 Արբուցանել զա՟մ գազանս
վայրի · յագեսցին ցիռք 'ի
ծարաւս իւրեանց ։
13 Ընդ Թռչունք երկնից բոյնս
դիցեն · և 'ի միջոյ վիմաց տա֊
ցեն զձայնս իւրեանց ։
14 Արբուցանէ զլերինս 'ի շտե֊
մարանաց իւրոց · 'ի պտղոյ
գոր֊

գործոց իւրոց լցցի երկիր ։

Բուսուցեր զխոտ 'ի լերինս , 15
զդալարի 'ի ծառայութիւն
մարդկան ։

Հաներ զհաց յերկրէ ․ գի- 16
նի ուրախ առնէ՝ իւղ զը-
ւարթ , և հաց հաստատէ
զսիրտ մարդոյ ։

Յագեսցին ծառքն տ̃ն , և 17
մայրքն լիբանանու՝ զորս դու
տնկեցեր ։

Անդ թռչունք երկնից ձագս 18
հանցեն ․ և բոյն արագլի ա-
պաւէն է նոցա ։

Լերինք բարձունք են եղջեր- 19
ուաց , և վէմք ապաւէնք
նապաստակաց ։

Արարեր զլուսին վ̃ ժա- 20
մանակի ․ արեգակն ծանեաւ
զժամ մտանելոյ իւրոյ ։

Արարեր զխաւար՝ և եղև 21
գիշեր ․ 'ի նմ̃ գնան ամ̃ գա-
զանք անտառի ։

22 Կորիւնք առիւծուց մռնչեն՝
և յափշտակեն. և խնդրեն
յԱյ զկերակուրս իւրեանց։
23 'Ի ծագել արեւու ժողովին,
և 'ի մորս իւրեանց դադա-
րեն։
24 Ելանէ մարդ 'ի գործս իւր,
և 'ի վաստակս ձեռաց իւրոց
մինչև յերեկոյ։
25 Որչափ զի մեծ են գործք քո
Տէր. զամենայն իմաստութեամբ
արարեր. և լցաւ երկիր
ստեղծուածովք քովք։
26 Այս ծով մեծ և անդորր.
'ի նմա են սողունք, որ ոչ
գոյ թիւ, գազանք մեծա-
մեծք և մանունք. 'ի նմա և
նաւք գնան. վիշապն զոր
ստեղծեր խաղալ նմա։
27 Ամենեքեան քեզ սպասեն.
և դու տաս կերակուր նոցա
'ի ժամու։
28 Տաս դու նոցա՝ և կերակ-
րին.

րին. բանաս զձեռն քո, կե-
րակրես զամենեսեան կամօք
քովք:
Դարձուցանես զերեսս քո 29
'ի նոցանէ՝ և խռովին. հա-
նես զոգի 'ի նոցանէ, պա-
կասին և 'ի հող դառնան:
Առաքես զոգի քո՝ և ստա- 30
նաս զն̃ն. և նորոգես զե-
րեսս երկրի:
Եղիցին փառք տ̃ն յաւի- 31
տեան. տ̃ր ուրախ եղիցի յա-
րարածս իւր:
Ո հայի յերկիր, և տայ դո- 32
ղալ սմա. մերձի 'ի լերինս՝
և ծխեսցին:
Օրհնեցից զտէր 'ի կեանս 33
իմ. սաղմոս ասացից ա̃յ ի-
մոյ մինչև եմ ես:
Քաղցր եղիցի նմա օրհնու- 34
թի̃ իմ. և ես ուրախ եղէց 'ի տ̃ր:
Պակասեսցին մեղաւորք յեր- 35
կրէ, և ամպարիշտ մի ևս

գոյցի

գոյն 'ի նմա. օրհնեա անձն
իմ զՏր ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԴ ։

Ալէլուիա ։

1 Խոստովան եղերուք Տն՝ եւ
կարդացէք զանուն նորա.
պատմեցէք 'ի հեթանոսս ըզ-
գործս նորա ։
2 Օրհնեցէք, եւ սաղմոս ա-
սացէք նմ. պատմեցէք զամ
զսքանչելիս նր. եւ գովեցա-
րուք յանուն սր նր ։
3 Ուրախ եղիցին սիրտք այնո-
ցիկ՝ որ խնդրեն զՏր. խնդ-
րեցէք զՏէր՝ եւ հզօրք եղե-
րուք. խնդրեցէք զերեսս նր
յամենայն ժամ ։
4 Յիշեցէք զսքանչելիս նորա՝
զոր արար. զարուեստս եւ
զիրաւունս բերանոյ նորա ։
5 Զաւակն աբրահամեան ծա-
ռայք նր, որդիք յակոբայ
ընտ-

ընտրեալք նր:
Նա ինքն է տէր ած մեր. 6
յամ երկրի են իրաւունք նր:
Յիշեաց յաւիտենից զուխտ 7
իւր, և զբանն զոր պատ-
ուիրեաց մինչև 'ի հազար ամ:
Զուխտն զոր եդ ընդ աբ- 8
րահամու. և զերդումն իւր
ընդ սահակայ:
Հաստատեաց առ յակոբ ըղ- 9
հրաման իւր. և առ իսրայէլ
զուխտ իւր յաւիտենից:
Ասէ՝ ձեզ տաց զերկիրն քա- 10
նանու, զվիճակ ժառանգու-
թե ձերոյ:
Զի էին նք թուով սակաւք, 11
նուաղք և պանդուխտք 'ի
նմա:
Անցին նոքա ազգէ յազգ. 12
'ի թագաւորութենէ 'ի ժո-
ղովուրդ յայլ:
Ո՛չ եթող մարդկան մեղան- 13
չել նց. կշտամբեաց զթա-
գա-

գաւորս վ՟ն ն՟ց։
14 Մի՛ մերձենայք ասէ՝ յօ-
ծեալս իմ. եւ 'ի մարգարէս
իմ մի՛ մեղանչէք։
15 Կոչեաց սով յերկիր նոցա.
զամենայն զօրութիւն հացի
եբեկ։
16 Առաքեաց առաջի ն՟ց այր.
'ի ծառայութիւն վաճառեցաւ
յովսէփ։
17 Խոնարհ արարին 'ի կապանս
զոտս ն՟ր. եւ անց ը՟ն երկաթս
անձն նորա։
18 Մինչեւ եկեսցէ բան նորա.
եւ բան տ՟ն փորձեաց զնա։
19 Առաքեաց թագաւորն՝ եւ
ելոյծ զնա. իշխան ժողովր-
դեան եթող զնա։
20 Կացոյց զնա տէր տան իւ-
րոյ. իշխան 'ի վերայ ամե-
նայն ստացուածոց իւրոց։
21 Խրատել զիշխանս ն՟ց որ՟պս
զինքն. եւ զծերս ն՟ց իմաս-
տունս

ստուն արասցէ:
Եմուտ իսրայէլ յեգիպտոս. 22
յակոբ պանդխտեցաւ յեր-
կիր քամայ:
Աճեցոյց զժողովուրդ իւր 23
յոյժ, և զօրացոյց զնա քան
զթշնամիս իւր:
Դարձոյց զսիրտս նոցա ատել 24
զժողովուրդ իւր, և 'ի նեն-
գել զծառայս իւր:
Առաքեաց զմովսէս ծառայ 25
իւր, և զահարոն ընտրեալ
իւր:
Ետ նոցա զբան նշանաց իւ- 26
րոց, և զարուեստս իւր յեր-
կիր քամայ:
Առաքեաց խաւար՝ և խա- 27
ւարեցոյց զնա. զի դառնա-
ցուցին զբան նորա:
Դարձոյց յարիւն զգետս նոցա. 28
և սպան զձուկն նոցա:
Եռաց յերկիր նոցա գորտ, և 29
'ի շտեմարանս թագաւորաց
նո-

նոցա:

30 Այսպ՝ և եկն շանաձանձ,
և մժեխ ընդ ամ սահմանս
նոցա:

31 Դարձոյց զանձրևս նոցա 'ի
կարկուտ. և հուր յերկիր
նց բորբոքեցաւ:

32 Եհար զայգիս և զթզենիս
նց. և փշրեաց զամ ծառս
սահմանաց նոցա:

33 Այսպ՝ և եկն մարախ, և
խառնիճ՝ զի ոչ գոյր թիւ:

34 Եկեր զամ խոտ երկրի նց.
սպառեաց զամ պտուղ ան-
դոյ նց:

35 Եհար զամ անդրանիկս Ե-
գիպտացւոց, զսկիզբն ամ
վաստակոց նոցա:

36 Եհան զնս ոսկւով և արծա-
թով. և ոչ գոյր յազգի նց
հիւանդ:

37 Ուրախ եղև Եգիպտոս ընդ
ելանել նց. զի անկաւ ահ

 նց

ա՟ն 'ի վերայ նոցա ։
Սփռեաց ամպ՝ հովանի առ֊ 38
նել նց՟ 'ի տուէ. եւ հրով
լոյս տալ նց՟ 'ի գիշերի ։
Խնդրեցին՝ եւ եկն լորամար֊ 39
գի. եւ հացիւ երկնից լցոյց
զնոսա ։
Եհար զվէմն՝ եւ բղխեցին 40
ջուրք, եւ գնացին գետք ը՟
անջրդիս ։
Յիշեաց զբան իւր սուրբ, 41
որ ը՟ Աբրահամու ծառայի
իւրում ։
Եհան զժողովուրդ իւր ցըն֊ 42
ծութե՟, եւ զընտրեալս իւր
ուրախութե՟ ։
Ետ նց՟ զգաւառս հեթանո֊ 43
սաց. 'ի վաստակս ժողովըր֊
դոց ժառանգեցոյց զնս՟ ։
Զի պահեսցեն զվկայութիս 44
նր՟. եւ զօրէնս նր՟ խնդրես֊
ցեն ։

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԵ։

## Ալէլուիա։

1 Խոստովան եղերուք տն՛
զի քաղցր է. զի յաւի-
տեան է ողորմութիւն նր։
2 Ո՞ խօսեսցի զզօրութիւնս տն.
լսելի արասցէ զմ՛ օրհնու-
թիւնս նորա։
3 Երանի՛ ոյք պահեն զիրա-
ւունս, և առնեն զարդա-
րութիւն յմ՛ ժամ։
4 Յիշեա՛ զմեզ տր ը հաճոյս
ժողովրդեան քո. և այց ա-
րա մեզ 'ի փրկութն քում։
5 Տեսցուք մեք զքաղցրութի ըն-
տրելոց քոց. ուրախ եղի-
ցուք յուրախութի ազգի քո.
և գովեսցուք մեք 'ի ժառան-
գութն քում։
6 Մեղաք մեք ը հարսն մեր,
անօրինեցաք և յանցեաք։
7 Հարքն մեր յեգիպտոս ոչ

իմացան զսքանչելիս քո. և
ոչ յիշեցին զբազում ողոր_
մութիւնս քո:
Բարկացուցին զՏէր յան_ 8
ցանելն իւրեանց ընդ ծով
կարմիր. փրկեաց զնս վասն
անուան իւրոյ. զի ծանիցեն
զզօրութիւն նորա:
Սաստեաց 'ի ծով կարմիր՝ և 9
ցամաքեցաւ. առաջնորդեաց
նոցա ընդ անդունդս որպս
ընդ անապատ:
Կեցոյց զնս 'ի ձեռաց ատե_ 10
լեաց նց, և փրկեաց զնս 'ի
ձեռաց թշնամեաց նց:
Ծածկեաց ծով զնեղիչս նց. 11
և մի 'ի նոցանէ ոչ ապրեցաւ:
Հաւատացին 'ի բան նր. և 12
օրհնեցին զօրհնութիւնս նր:
Վաղվաղեցին և մոռացան ըզ_ 13
գործս նր. և ոչ անսացին
խորհրդոց նորա:
Ցանկացան զցանկութիւն յա_ 14
նա_

նապատի. և փորձեցին զա͞ծ
յանջրդի:
15 Ետ նոցա զխնդրուածս նո֊
ցա. առաքեաց լիութիւն յան֊
ձինս նոցա:
16 Բարկացուցին զմովսէս 'ի
բանակին, և զահարոն սուրբ
տ͞ն:
17 Բացաւ երկիր՝ և եկուլ զդա֊
թան. և ծածկեաց զբա֊
նակն աբիրոնի:
18 Հուր վառեցաւ 'ի ժողովս
նոցա. և բոց մաշեաց զմե֊
ղաւորս:
19 Արարին զորթ 'ի քորեբ,
երկիր պագին պատկերի. և
փոխեցին զփառս իւրեանց
'ի նմանութիւն որթու խոտա֊
կերի:
20 Մոռացան զա͞ծ կենդանարար իւ֊
րեանց. որ արար զմեծամեծս
իւր յեգիպտոս, զքաջանչե֊
լիս իւր յերկիր քամայ, և
զահ

զահ իւր 'ի վերայ կարմիր
ծովուն :
Ասաց սատակել զն̄ս . եթէ 21
ոչ Մովսէս ընտրեալ կայր ա-
ռաջի նոցա :
Դարձաւ առ տ̄ր՝ եւ անցոյց 22
զբարկութիւն նորա . զի մի
սատակեսցին նոքա :
Անարգեցին զերկիրն ցան- 23
կալի . եւ ոչ հաւատացին բա-
նի նորա :
Տրտնջեցին 'ի բանակս իւ- 24
րեանց . եւ ոչ լուան ձայնի
տ̄ն :
Համբարձ զձեռն իւր 'ի վ̄ր 25
նոցա , հարկանել զն̄ս յանա-
պատի :
Ցրուեսցի զաւակ ն̄ց ընդ 26
հեթանոսս , ցրուեսցի զա-
ւակ նոցա ընդ գաւառս :
Պղծեցան նոքա 'ի բէլփե- 27
գովր . զի կերան զոհեալ եւ
զմեռելոտի :

Բար-

28 Բարկացուցին զնա 'ի գոր-
ծըս իւրեանց . յաճախեաց
'ի վերայ նց բեկումն :
29 Այս եկաց 'ի մէջ փենէ-
հէս, քաւեաց և արգելաւ
մահ . համարեցաւ նմ յար-
դարութիւն ազգէ յազգ մին-
չև յաւիտեան :
30 Բարկացուցին զնա 'ի Ջուրսն
Հակառակութե . չարչարե-
ցաւ Մովսէս վս նոցա, զի
դառնացուցին զոգի նորա :
31 Հրամայեաց չրթամբք իւ-
րովք . և ոչ սատակեցին զազ-
գըն՝ զոր ասաց նց տր :
32 Խառնակեցան ընդ հեթա-
նոսս, և ուսան զգործս նո-
ցա . ծառայեցին կռոց նց,
և եղև նոցա 'ի գայթագ-
ղութիւն :
33 Զոհեցին զուստերս և զդըս-
տերս իւրեանց դիւաց, և
հեղին արիւն ամբիծ :

Ա

Արին ուստերաց և դըս- 34
տերաց իւրեանց՝ զոր զոհե-
ցին կռոցն քանանու :
Շաղախեցաւ երկիր յարե- 35
նէ նց̅, և պղծեցաւ 'ի գոր-
ծոց նց̅ . զի պոռնկեցան 'ի
գնացս իւրեանց :
Բարկացաւ սրտմտութբ̅ տր̅ 36
'ի վր̅ ժողովրդեան իւրոյ .
և գարշեցոյց զժառանգու-
թիւն իւր յոյժ :
Մատնեաց զնս̅ 'ի ձեռս հե- 37
թանոսաց . տիրեցին նոցա
ատելիք իւրեանց, և թշնա-
միք իւրեանց նեղեցին զնս̅ .
և խոնարհ եղեն 'ի ներքոյ
ձեռաց նց̅ :
Բազում անգամ փրկեաց 38
զնս̅, և նոքա դառնացուցին
զնա 'ի խորհուրդս իւրեանց .
և կորացան յանօրէնութե̅
իւրեանց :
Հայեցաւ տր̅ 'ի նեղութի̅ս 39

նոցա, 'ի լսել ձայնի աղօ-
թից ն̃ց ։
40 Յիշեաց զուխտ իւր, և զղջ-
ջացաւ ըստ բազում ողոր-
մութեան իւրում. Ետ զնոսա
'ի գթութիւնս առաջի ամե-
նայն գերչաց նոցա ։
41 Փրկեա զմեզ տէր ա̃ծ մեր.
և ժողովեա զմեզ 'ի հեթա-
նոսաց ։
42 Խոստովան եղիցուք անուան
քում սրբոյ. և պարծեսս-
ցուք յօրհնութիւնս քո ։
43 Օրհնեալ տ̃ր ա̃ծ Իսրայէլի.
յաւիտեանս յաւիտենից ։
44 Եւ ասասցէ ամենայն ժողո-
վուրդն. եղիցի եղիցի ։

# ԱՂՕԹՔ

Եզեկիայ արքային յուդայ:

Ես ասացի 'ի վերանալ 1
յինէն աւուրց իմոց,
թէ գնացի ես 'ի դրունս
դժոխոց:
Թողի զամենայն յետին իմ, 2
և ասացի՝ թէ այլ ոչ ևս
տեսից զփրկութ̃ի տ̃ն յերկ-
րին կենդանեաց. և ոչ ևս
տեսից զմարդ բնակչօք իւ-
րովք հանդերձ:
Պակասեցայ ես յազգատոհ- 3
մէ իմմէ. այսուհետև թո-
ղի լքի զամենայն զկեանս իմ:
Ել գնաց՝ մեկնեցաւ յինէն 4
հոգի իմ. որպէս զայն՝ որ
քակէ զտաղաւար. և եղէ
ես

Եւ որպէս զոստայն սատա-
րայց՝ մերձ 'ի հատանել:
5 Յաւուր յայնմիկ՝ մատնեցայ
ես յառաւօտէ ող̄ 'ի ձեռս
առիւծու. այնպէս խորտա-
կեաց մանրեաց զոսկերս իմ.
զի յառաւօտէ մինչ 'ի գի-
շեր մատնեցայ:
6 Որ̄պս ծիծառն՝ այնպէս ճչէ-
ցի, որպէս զաղաւնի՝ այն-
պէս մնչեցի, զի նուաղեցին
աչք իմ 'ի տեսանելոյ:
7 Հայեցայ 'ի բարձունս առ
տր̄ ա̄ծ իմ, որ փրկեաց զիս.
և փարատեցոյց յինէն ըզ-
ցաւս անձին իմոյ:
8 Տր̄՝ վասն այսորիկ պատմե-
ցաւ քեզ. զարթուցեր զանձն
իմ, դարձուցեր զհոգի իմ.
մխիթարեցայ և կեցի:
9 Ահա 'ի խաղաղութի̄ դար-
ձաւ դառնութի̄ իմ. փրկե-
ցեր զանձն իմ, զի մի կո-
րեայց.

րեայց. և ընկեցեր յետոյ
զամենայն զմեղս իմ:
Զի ոչ թէ որ 'ի դժոխս են, 10
խոստովան առնին առ քեզ.
և ոչ մեռեալք օրհնեսցեն
զքեզ, և ոչ յուսասցին 'ի
ճշմարտութիւն քո ամենեքեան,
որ իջանեն 'ի դժոխս:
Այլ կենդանիքս օրհնես- 11
ցուք զքեզ՝ տր̃. որպէս և ես
այսուհետև մանկունս ծը-
նայց, որ պատմեսցեն զար-
դարութիւն քո՝ տր̃ փրկու-
թեան իմոյ:
Ես ոչ ևս դադարեցից օրհ- 12
նել զքեզ յօրհնութիւնս
զամենայն աւուրս կենաց ի-
մոց՝ յանդիման տաճարի-
տ̃ոյ:

# ՄԱՂԹԱՆՔ։

Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն փրկութեան որ յոյժ փրկես. փրկեա՛ և փարատեցո՛ ցաւս անձին իմոյ։
Մարդասէր որ՝ վասն սրբուհւոյ անարատ մօր քոյ և կուսի. և վասն խաչի քոյ պատուականի, որ ընկալ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ։

Զքարոզն և զաղօթս 'ի [illegible] Երկինք պատմեն կանոնին գտցես 'ի 109. երեսն։



Յարեաւ այն ՚ի մեռելոց հզօր զօր·

## ՍԱՂՄՈՍ. ՃԶ:

Ալէլուիա:

1 ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԵ-
րո՛ւք Տն՝ զի քաղցր
է, զի յաւիտեան է ողոր-
մութիւն նորա:
2 Ասասցեն փրկեալք Տն, զորս
փրկեաց ՚ի ձեռաց թշնամ-
ւոյն:
3 Յամենայն գաւառաց ժո-
ղովեաց զնս. յարեւելից եւ
յարեւմտից՝ ՚ի հիւսիսոյ եւ
՚ի ծովէ:
4 Մոլորեցան նոքա յանապա-
տի յանջրդի ճանապարհի.
քաղաք բնակութեան ոչ գտին:
5 Քաղցեան եւ ծարաւեցան.
եւ անձինք նց ՚ի նոսին նուա-
ղեցան:

Աղա-

Աղաղակեցին առ տր 'ի նե- 6
ղութե իւրեանց. 'ի վշտաց
նց փրկեաց զնն:
Առաջնորդեաց նց 'ի ճա- 7
նապարհ ուղիղ. զի երթի-
ցեն 'ի քաղաք բնակութեան
իւրեանց:
Խոստովան եղիցին տն ողոր- 8
մութեց նորա. սքանչելեաց
որդւոց մարդկան:
Զի յագեցոյց զանձինս քաղ- 9
ցեալս. և զանձինս կարօ-
տեալս լի արար բարուբ:
Ոյք նստէին 'ի խաւարի և 10
'ի ստուերս մահու. կապե-
էին յաղքատութե որպէս
յերկաթս:
Զի դառնացուցին զբանս 11
այ, և զխորհուրդս բարձրե-
լոյն բարկացուցին:
Խոնարհ եղեն 'ի ցաւոց 12
սրտք նց. տկարացան, և
ոչ ոք էր՝ որ օգնէր նց:

Աղա-

13 Աղաղակեցին առ Տ՟ր 'ի նե-
ղութ՟ե իւրեանց. 'ի վշտաց
նոցա եհան զն՟ս :
14 Փրկեաց զն՟ս 'ի խաւարէ՝ և
'ի ստուերաց մահու, և խզ-
զեաց զկապանս ն՟ց :
15 Խոստովան եղիցին տ՟ն ողոր-
մութեանց ն՟ր. սքանչելեաց
ն՟ր որդւոց մարդկան :
16 Զի փշրեաց զդրունս պղնձի-
նս, և զնիգս երկաթիս խոր-
տակեաց :
17 Օգնեաց ն՟ց 'ի ճանապարհէ
անօրէնութ՟ե իւրեանց. զի
վասն մեղաց իւրեանց խո-
նարհ եղեն յոյժ :
18 Յամենայն կերակրոց գար-
շէին անձինք ն՟ց. մերձեցան
մինչև 'ի դրունս մահու :
19 Աղաղակեցին առ Տ՟ր 'ի նե-
ղութ՟ե իւրեանց, 'ի վշտաց
ն՟ց ապրեցոյց զնոսա.
20 Առաքեաց զբան իւր՝ և բժշ-

կեաց զնս. եւ փրկեաց զնո-
սա յապականութէ իւրեանց ։
Խոստովան եղիցին տն ողոր- 21
մութեց նորա. սքանչելեաց
նորա որդւոց մարդկան ։
Մատուսցեն նմա պատա- 22
րագ օրհնութե. եւ պատմես-
ցեն զգործս նր ցնծութբ ։
Որք իջանէին ՚ի ծով նա- 23
ւօք. եւ առնէին զգործս ՚ի
ջուրս բազումս ։
Նոքա տեսին զգործս տն. 24
եւ զսքանչելիս նորա ՚ի խորս
անդնդոց ։
Ասաց՝ եւ յարեաւ հողմ եւ 25
մրրիկ. եւ բարձրացան ալիք
նորա ։
Ելանէին յերկինս՝ եւ իջա- 26
նէին յանդունդս. եւ անձինք
նոցա յանձինս իւրեանց մա-
շեցան ։
Խռովեցան սասանեցան որ- 27
պէս արբեալք, եւ ամենայն
ի-

իմաստութիւն ն՟ց ընկլաւ :
28 Աղաղակեցին առ տ՟ր 'ի նե-
ղութեան իւրեանց. 'ի վշտաց
ն՟ց կեցոյց զն՟ս :
29 Դարձոյց զմրրիկն յօդ՝ և դա-
դարեցին ալիք ն՟ր. ուրախ
եղեն զի դադարեցին. և ա-
ռաջնորդեաց նոցա 'ի նաւա-
հանգիստ կամաց իւրեանց :
30 Խոստովան եղիցին տ՟ն ողոր-
մութեանց նորա. սքանչելեաց
ն՟ր որդւք մարդկան :
31 Բարձր արասցեն զնա 'ի ժո-
ղովս ժողովրդոց. և յաթոռս
ծերոց օրհնեսցեն զնա :
32 Զի դարձոյց զգետս 'ի ցա-
մաք, և զգնացս ջուրց յեր-
կիր ծարաւուտ :
33 Արար զերկիր պտղաբեր՝
յաղտապտուկս, վ՟ն չարու-
թեան բնակչաց նոցա :
34 Արար զանապատն 'ի ճա-
հիճս ջուրց, և զերկիր ծա-
րա-

րաւուտ 'ի դնացս ջուրց։
Բնակեցոյց 'ի նմ̃ քաղցեալս․ 35
և շինեցին քաղաք բնակու-
թեն իւրեանց ։
Վարեցին արտս՝ և տնկեցին 36
այգիս․ և արարին պտուղ
արմտեաց իւրեանց ։
Օրհնեաց զնոսա՝ և բազմա- 37
ցան յոյժ․ և անասունք նո-
ցա ոչ նուազեցան ։
Նուազեցան նոքա և չարչա- 38
րեցան, 'ի նեղուէ̃ չարեաց
և 'ի վշտաց ։
Եկ̃ն անարգութ̃ի 'ի վերայ 39
իշխանաց նոցա․ մոլորեցոյց
զնոսա յանապատի՝ և ոչ 'ի
ճանապարհի ։
Օգնեաց անանկին յաղքա- 40
տութ̃է․ առաջնորդեաց որ-
պէս խաշին ազգի նց̃ ։
Տեսցեն ուղիղք, և ուրախ 41
եղիցին․ և ամ̃ անօրէն խցց-
ցէ զբերան իւր ։

ՈՂ

42 Ով է իմաստուն, որ պա-
հեսցէ զայս. և 'ի միտ առ-
ցէ զողորմութիւնս տն։

## ՍԱՂՄՈՍ. ՃԷ։

1 Օրհնութիւն սաղմոսաց 'ի
Դաւթի։

2 Պատրաստ է սիրտ իմ ած,
պատրաստ է սիրտ իմ
օրհնել՝ և սաղմոս ասել քեզ
փառօք իմովք։
3 Զարթիր փառք իմ, զար-
թիր՝ սաղմոսիւք և օրհնու-
թեամբ. և ես զարթեայց առա-
ւօտուց։
4 Խոստովան եղէց քեզ 'ի ժո-
ղովուրդս տր, և սաղմոս ա-
սացից քեզ յազգիս։
5 Մեծ եղև մինչև յերկինս
ողորմութիւն քո, մինչև յամպս
ճշմարտութիւն քո։
6 Բարձրեալ ես դու յերկինս
ած.

ա՛ծ. և յա՛մ երկրի են փառք
քո:
Որպէս փրկեցան սիրելիք 7
քո. կեցո՛ աջով քով՝ և լո՛ւր
մեզ:
Ա՛ծ խօսեցաւ ՚ի սրբութե՛ն 8
իւրում. բարձր եղէց՝ բաժա-
նեցայց զՍիկիմ, և զհո-
վիտն յարկաց չափեցից:
Իմ է Գաղաադ և իմ է Մա- 9
նասէ. եփրեմ հզօրիչ գլխոյ
իմոյ:
Յուդայ թագաւոր իմ. Մո- 10
վաբ աւազան յուսոյ իմոյ:
Յեդովմ ուղղեցից զգնացս 11
իմ, և ինձ այլազգիք հնա-
զանդ եղեն:
Ո՞ տարցէ զիս ՚ի քաղաք ա- 12
մուր. կամ ո՞ առաջնորդես-
ցէ ինձ մինչև յեդովմ:
Ո՛չ դու ա՛ծ, որ մեր- 13
ժեցեր զմեզ. և ո՛չ ելեր ա՛ծ
ընդ զօրս մեր:
Տո՛ւր

14 Տո՛ւր մեզ օգնութիւն 'ի նե-
ղութեան, զի սուտ է փրկու-
թիւն մարդոյ :
13 Աստուածով արասցո՛ւք զօ-
րութիւն. և նա յամօթ ա-
րասցէ զթշնամիս մեր :

## ՍԱՂՄՈՍ. ՃԸ:

1 'Ի կատարած. սաղմոս 'ի
Դաւիթ :

2 Ած օրհնութեան իմոյ մի՛ լռեր,
զի բերան մեղաւորի՝ բերան
նենգաւորի բացաւ 'ի վերայ
իմ:
3 Խօսեցան զինէն լեզուաւ
նենգաւորաւ. և բանիւ ա-
տելութե՛ պաշարեցին զիս :
4 Մարտեան ընդ իս 'ի տա-
րապարտուց. փոխանակ սի-
րոյ իմոյ մատնէին զիս, այլ
ես յաղօթս կայի:
5 Հատուցին ինձ չար փոխա-
նակ ընդ բարւոյ, ատելու-
թիւն

թիւն փոխանակ սիրոյ իմոյ։
Կացո՛ ’ի վերայ նորա մեղա- 6
ւոր, սատանայ կացցէ ընդ-
աջմէ նորա։
’Ի դատաստանէ ելցէ ել- 7
ցէ դատապարտեալ. և ա-
ղօթք նր ’ի մեղս դարձցին։
Եղիցին աւուրք նր նուազ. 8
և զայցելութիւն նր, զայն
այլ տարցի։
Եղիցին որդիք նր որբ, և 9
կին նորա այրի. սասանեսցին,
փոփոխեսցին, որդիք նորա
մուրողք եղիցին. և ելցեն
’ի բնակութէ իւրեանց։
Քննեսցէ փոխատու զամե- 10
նայն ինչս նորա. յափշտա-
կեսցեն օտարք զվաստակս
նորա։
Մի՛ գացի օգնական նմա. 11
և մի ոք ողորմեսցի ’ի վերայ
որբոց նորա։
Եղիցին որդիք նորա ’ի սա- 12
տա-

տակումն, և յազգէ ջնջեսցի անուն նր̃:

13 Յիշեսցին մեղք հօր նր̃ առաջի տն̃. և մեղք մօր նր̃ մի ջնջեսցին. և եղիցին առաջի տն̃ յամենայն ժամ:

14 Սատակեսցի յերկրէ յիշատակ նորա. փոխանակ զի ոչ յիշեաց առնել ողորմութիւն:

15 Հալածեաց զայր աղքատ և զտնանկ. սպանանել զայն, որ խոնարհ է սրտիւ:

16 Սիրեաց զանէծս՝ և եկեսցէ նմա. ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղիցի 'ի նմանէ:

17 Զգեցաւ զանէծս ոպ̃ հանդերձ. մտցէ որպէս ջուր 'ի փոր նորա. որպէս ձէթ ընդ ոսկերս նորա:

18 Եղիցի նմա որպս հանդերձ զի ագանի. որպէս գօտի՝ որ ածի հանապազ ը̃ մէջ:

Այս

Այս գործ է այնոցիկ, որ 19
չարախօս կային զինէն առ
տ̅ր, և ոյք խօսէին չար զանձ-
նէ իմմէ:

Այլ դու տ̅ր` տ̅ր` արա ը̅ 20
իս ըստ անուան քում, զի
քաղցր է ողորմութ̅ին քո. և
փրկեա զիս` զի աղքատ և
տնանկ եմ ես:

Սիրտ իմ խռովեցաւ 'ի փո- 21
րի իմում. և ես ո̅պ ստուէր
'ի խոստափել իմում պակա-
սեցայ. և թօթափեցայ որ-
պէս մարախ:

Ծունկք իմ տկարացան 'ի 22
պահոց. և մարմին իմ այ-
լագունեաց յիւղոյ:

Եղէ ես նախատ նոցա. տե- 23
սին զիս` և շարժեցին զ-
գլուխս իւրեանց:

Օգնեա ինձ տ̅ր ա̅ծ իմ, և 24
փրկեա զիս` ը̅ ողորմութ̅ն
քում:

Ծա

25 Ծանիցեն զի ձեռն քո այս
է, և դու տ̃ր արարեր զայս:
26 Նոքա անիծանիցեն, և դու
օրհնեսցես. որք յարուցեալ
են 'ի վերայ իմ՝ ամօթ կրես-
ցեն. այլ ծառայ քո ուրախ
եղիցի 'ի քեզ:
27 Զգեցցին զամօթ՝ որ չարա-
խօս կային զանձնէ իմմէ,
և արկցեն որ̃պս կրկնոց՝ զա-
մօթ իւրեանց զիւրեամբք:
28 Այլ ես խոստովան եղէց առ
տ̃ր յոյժ բերանով իմով. 'ի
մէջ բազմաց օրհնեցից զքեզ:
29 Զի եկաց նա ը̃ աջմէ տնան-
կին, փրկել զիս յայնցանէ,
որք հալածեն զանձն իմ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԹ:

1 'Ի կատարած. սաղմոս
'ի դաւիթ:

2 Ասաց տէր ց̃տր իմ, նիստ
ընդ աջմէ իմմէ, մինչև եդից
զթշ-

զթշնամիս քո պատուանդան
ոտից քոց:
Գաւազան զօրութեան առա- 3
քեսցէ քեզ Տէր 'ի Սիոնէ. և
տիրեսցես դու 'ի մէջ թշնա-
մեաց քոց:
Ընդ քեզ է ինձ սկիզբն ա- 4
ւուրց զօրութեան. 'ի վայել-
չութիւն սրբոց քոց՝ յարգան-
դէ յառաջ քան զարուսեակ
ծնայ զքեզ:
Երդուաւ Տէր՝ և ոչ ես զղջա- 5
ցի. թէ դու ես քահանայ
յաւիտեան ըստ կարգին Մել-
քիսեդեկի. և Տէր ընդ աջմէ
քումմէ:
Խորտակեսցէ յաւուր բար- 6
կութեան զթագաւորս. դա-
տի զհեթանոսս, և բազում
առնէ զհարուածս. և խոր-
տակեսցէ զգլուխս բազմաց
յերկրի:
Ջուրս 'ի ճանապարհի ար- 7

բուսցէ. վասն այսորիկ և
բարձր արասցէ զգլուխ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԺ:

Ալէլուիա:

1 Խոստովան եղէց քեզ Տէր՝
բոլորով սրտիւ իմով,
'ի խորհուրդս ուղղոց, 'ի
ժողովուրդս մեծ են գործք
Տն. և քննեալ են յամենայ-
նի կամք նորա:
2 Խոստովանութիւն և վայել-
չութիւն են գործք Նր. ար-
դարութիւն նորա մնայ յա-
ւիտեանս յաւիտենից:
3 Յիշատակ արար սքանչե-
լեաց իւրոց ուղղոց. ողոր-
մած գթած է տէր, կերա-
կուր ետ երկիւղածաց իւ-
րոց:
4 Յիշեաց յաւիտենից զուխտ
իւր. զզօրութիւն գործոց իւ-
րոց պատուիրեաց ժողովր-
դեան

գեան իւրում։

Տալ նոցա ժառանգու͞ն հե- 5
թանոսաց. և գործք ձեռաց
ն͞ր արդարութիւն և իրա-
ւունք են։

Հաւատարիմ են յամենայնի 6
պատուիրանք ն͞ր. հաստա-
տեալ են յաւիտեանս յաւի-
տենից. արարեալ են ճշմար-
տութ͞բ և ուղղութ͞բ։

Փրկութիւն առաքեաց տէր 7
ժողովրդեան իւրում. պատ-
ուիրեաց յաւիտենից զուխտ
իւր. սուրբ և ահեղ է ա-
նուն նորա։

Սկիզբն զգօնութ͞ե երկիւղ 8
տ͞ն. իմաստութի բարի ամե-
նեցուն՝ որ առնեն զնա. և
օրհնութիւն ն͞ր մնայ յաւի-
տեանս յաւիտենից։

# ՍԱՂՄՈՍ· ՃԺԱ:

Ալէլուիա. 'ի դարձոյ տարաշխա֊
րհէ, անգեայ և զաքարեայ:

1 Երանեալ է այր՝ որ երկնչի
'ի տ՟նէ. պատուիրանս ն՟ր
նա կամի յոյժ:
2 Զօր եղիցի յերկրի զաւակ
նորա. և ազգ ուղղոց օրհ֊
նեսցի:
3 Փառք և մեծութիւն են 'ի
տան նորա. արդարութիւն
ն՟ր մնայ յաւիտեանս յաւի֊
տենից:
4 Ծագեաց 'ի խաւարի լոյս
ուղղոց. ողորմած գթած՝ և
արդար է տ՟ր:
5 Քաղցր այր՝ ողորմի և տայ
փոխ, յօրինէ զբան իւր 'ի
դատաստանի. զի յաւիտեան
նա մի սասանեսցի:
6 Յիշատակ յաւիտենից եղի֊
ցի արդարն. 'ի համբաւէ չա֊
րէ

րէ նա մի երկիցէ։
Պատրաստ է սիրտ նր̅ յու- 7
սալ առ տ̅ծ։
Հաստատեալ է սիրտ նր̅․ 8
և նա մի երկիցէ մինչև տես-
ցէ ՚ի թշնամիս իւր։
Սփռեաց՝ և ետ աղքատաց․ 9
արդարութիւն նր̅ մնայ յա-
ւիտեանս յաւիտենից․ և
եղջիւր նորա բարձր եղիցի
փառօք։
Մեղաւորն տեսցէ՝ և բար- 10
կասցի․ զատամունս իւր
կրճտեսցէ, և հալեսցի․ և
ցանկութիւն մեղաւորաց կո-
րիցէ։

## ՍԱՂՄՈՍ․ ՃԺԲ։

Ալէլուիա։

Օրհնեցէք մանկունք՝ զտ̅ր, 1
և օրհնեցէք զանուն տ̅ն։
Եղիցի անուն տ̅ն օրհնեալ, 2
յայսմ հետէ մինչև յաւի-
տեան։

տեան :

3 Յարեւելից մինչեւ 'ի մուտս
արեւու՝ օրհնեալ է անուն տն :
4 Բարձր է 'ի վերայ ամ ազ-
գաց տր. եւ յերկինս են փառք
նորա :
5 Ո՞վ է որպէս տրած մեր 'ի
բարձունս բնակեալ. եւ զխո-
նարհս տեսանէ յերկինս եւ
յերկրի :
6 Յարուցանէ զաղքատ յերկ-
րէ. եւ բարձր առնէ զտառա-
պեալս յաղբեաց :
7 Նստուցանել զնա իշխանս՝ ընդ
իշխանս ժողովրդեան իւրոյ :
8 Բնակեցուցանէ զամուլն 'ի
տան ուրախամիտ, որպ մայր
որդւոց բերկրեալ :

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԳ.

Ալէլուիա :

1 Յելանելն իսրայէլի յեգիպ-
տոսէ. տանն յակոբայ 'ի

ժողովրդենէ այլազգեաց :
Եղեւ հրէաստան սրբութիւն 2
նորա, և Իսրայէլ իշխանու-
թիւն նորա :
Ծով ետես և փախեաւ, և 3
յորդանան անդրէն դարձաւ :
Լերինք ցնծացին ոպ̃ խոյք. 4
և բլուրք ոպ̃ գառինք մա-
քեաց :
Զի՞ է քեզ ծով, զո՞ տեսեր 5
և փախեար. կամ դու յոր-
դանան՝ զի՞ դարձար անդրէն :
Լերինք՝ ցնծացէք ոպ̃ խոյք, 6
և բլուրք ոպ̃ գառինք մա-
քեաց :
Յերեսաց տն̃ սասանեցաւ 7
երկիր. յերեսաց այ̃ յակով-
բայ :
Որ դարձոյց զվէմն 'ի վտակս 8
ջուրց, և զապառաժն յաղ-
բերակունս :
Մի՛ մեզ տր̃՝ մի՛ մեզ. այլ 9
անուան քում տուր զփառս,

վն ողորմուն և ճշմարտու֊
թեան քոյ ։
10 Մի՛ երբէք ասասցեն 'ի հե֊
թանոսս, թէ ո՛ւր է ած նց ։
11 Այլ մեր յերկինս և յերկրի,
զամ զոր ինչ կամեցաւ՝ և
արար ։
12 Կուռք հեթանոսաց ոսկի և
արծաթ են. ձեռագործ են
որդւոց մարդկան ·
13 Բերան ունին՝ և ո՛չ խօսին.
աչս ունին՝ և ո՛չ տեսանեն ։
14 Ականջս ունին՝ և ո՛չ լսեն.
ունչս ունին՝ և ո՛չ հոտոտին ։
15 Ձեռս ունին՝ և ո՛չ շօշա֊
փեն . ոտս ունին՝ և ո՛չ
գնան. և ո՛չ գոյ բարբառ 'ի
կոկորդս նոցա ։
16 Նման նոցա եղիցին, ոյք
արարին զնս. ամենեքեան որ
յուսացեալ են 'ի նս ։
17 Տուն իսրայէլի յուսացաւ 'ի
տր. օգնական ընդունելի է
նո֊

Նոցա:

Տուն ահարոնի յուսացաւ 18
'ի տէր. օգնական ընկերեալ
է նոցա:

Երկիւղածք տ̅ն յուսացան 19
'ի տ̅ր. օգնական և փրկիչ
է նոցա:

Յիշեաց զմեզ տ̅ր և օրհնեաց 20
զմեզ. օրհնեաց տ̅ր զտունն
իսրայէլի. օրհնեաց տ̅ր ըզ-
տունն ահարոնի:

Օրհնեաց տ̅ր զերկիւղածս 21
իւր, զփոքրկունս և զմեծա-
մեծս:

Յաւելցէ 'ի ձեզ տ̅ր, 'ի ձեզ՝ 22
և յորդիս ձեր:

Օրհնեալ էք դուք 'ի տ̅նէ, 23
որ արար զերկինս և զեր-
կիր:

Երկինք երկնից տ̅ն են. և 24
զերկիր ետ որդւոց մարդ-
կան:

Ո՛չ թէ մեռեալք օրհնեսցեն 25

ԸԶ

զքեզ և ոչ ամենեքեան՝ որ
իջանեն 'ի դժոխս:
26 Այլ կենդանիքս օրհնես֊
ցուք զտ՟ր. յայսմ հետէ մին֊
չև յաւիտեան:

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԳ:

Ալէլուիա:

1 Սիրեցի՝ զի լուիցէ տէր
զձայն աղօթից իմոց. խո֊
նարհեցոյց զունկն իւր ա֊
ռ իս, և ես յաւուրս իմ կար֊
դացի առ նա:
2 Շրջեցան զինև երկունք մա֊
հու. և վիշտք դժոխոց գտին
զիս:
3 Զնեղութիւն և զանձկութիւն
գտի, և զանուն տ՟ն կար֊
դացի:
4 Ո՞ տ՟ր՝ փրկեա զանձն իմ.
ողորմած ա՟ծ մեր ողորմի՝ և
պահէ զտղայս տ՟ր:
5 Ես խոնարհ եղէ՝ և տ՟ր կե֊
ցոյց

ցոյց զիս. դարձ անձն իմ
'ի հանգիստ քո. զի Տր օգ-
նեաց քեզ:
Փրկեաց զանձն իմ 'ի մահ 6
ուանէ, զաչս իմ յարտասու-
ուաց, եւ զոտս իմ 'ի գայ-
թագղութենէ, հաճոյ եղէց
առաջի Տն յերկրին կենդա-
նեաց:

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԵ:

### Ալէլուիա:

Հաւատացի զոր եւ խօսեցայ. 1
եւ ես խոնարհ եղէ յոյժ:
Ես ասացի 'ի զարմանալ ի- 2
մում, թէ ամ մարդ սուտ է:
Զի՞նչ տաց տրիտուր Տն ը 3
ամենայնի՝ զոր եւ ետ ինձ:
Բաժակ փրկութ ընկալայց, 4
եւ զանուն Տն կարդացից:
Զուխտս իմ Տն տաց՝ ա- 5
ռաջի ամենայն ժողովրդեան
նորա:

Պատ-

6 Պատուական է առաջի տ՟ն
մահ սրբոց իւրոց. ո՛ տ՟ր ես
ծառայ քո եմ, ծառայ և
որդի աղախնոյ քո:
7 Հատեր զկապանս իմ. քեզ
մատուցից պատարագ օրհ-
նութեան, և զանուն տ՟ն կար-
դացից:
8 Զաղօթս իմ տ՟ն տաց առա-
ջի ա՟մ ժողովրդեան նորա.
'ի գաւիթս տան տ՟ն, և 'ի
մէջ քո երուսաղէմ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԶ:
Ալէլուիա:

1 Օրհնեցէք զտ՟ր ա՟մ ազինք.
գովեցէք զնա ամենայն ժո-
ղովուրդք:
2 Զօրացաւ ողորմութիւն ն՟ր 'ի
վերայ մեր. Ճշմարտութիւն տ՟ն
մնասցէ յաւիտեան:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԺԸ:

## Ալէլուիա:

Խոստովան եղերուք Տն̃, 1
զի բարի է. զի յաւիտեան
է ողորմութ̃ի նորա:
Ասասցէ տուն Իսրայէլի՝ զի 2
բարի է. զի յաւիտեան է
ողորմութիւն նորա:
Ասասցէ տուն Ահարոնի՝ զի 3
յաւիտեան է ողորմութիւն
նորա:
Ասասցեն երկիւղածք Տն̃՝ զի 4
բարի է, զի յաւիտեան է ո-
ղորմութիւն նորա:
'Ի նեղութ̃ե կարդացի առ 5
Տր̃, և լուաւ ինձ յանդորր:
Տէր է իմ օգնական. և ես 6
ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ
մարդ:
Տէր է իմ օգնական. և ես 7
տեսից 'ի թշնամիս իմ:
Բարի է յուսալ 'ի Տէր՝ քան 8
յու-

յուսալ ՚ի մարդիկ. բարի
է յուսալ ՚ի Տէր՝ քան յու-
սալ յիշխանս:
9 Ամենայն ազգք շրջեցան զի-
նեւ, եւ անուամբ Տն յաղ-
թեցի նոցա:
10 Շրջելով շրջեցան զինեւ, պա-
շարեցին զիս ՚ի միասին. եւ
անուամբ Տն վանեցի զնս:
11 Շուրջ եղեն զինեւ որպս մե-
ղուք. վառեցան բորբոքեցան
որպէս փուշք ՚ի հուր. եւ
անուամբ Տն՝ մերժեցի զնս:
12 ՚Ի մերժելն դրդուեցայ, եւ
եղէ մերձ ՚ի գլորել. եւ Տէր
ընկալաւ զիս:
13 Զօրութի իմ՝ եւ օգնութի
իմ Տէր, եւ եղեւ ինձ ՚ի փրկ-
կութիւն:
14 Ձայն ցնծութե փրկութե՝
՚ի յարկս արդարոց:
15 Աջ Տն արար զօրութիւն.
աջ Տն բարձր արար զիս. եւ
աջ

աջ Տեառն արար զօրութիւն։
Ոչ մեռայց, այլ կեցից՝ և 16
պատմեցից զգործս Տեառն։
Խրատելով խրատեաց զիս 17
Տէր. և ՚ի մահ ոչ մատնեաց։
Բացէք ինձ զդրունս արդա֊ 18
րութեան, զի մտից ը̄ այն՝
և խոստովան եղէց Տեառն։
Այս դուռն տն̄ է, և ար֊ 19
դարք մտանեն ընդ սա։
Խոստովան եղէց քեզ Տէր, 20
զի լուար ինձ. և եղեր ինձ
՚ի փրկութիւն։
Վէմն՝ զոր անարգեցին շի֊ 21
նողքն, նա եղև գլուխ ան֊
կեան։
՚Ի տնէ եղև այս. և է սքան֊ 22
չելի առաջի աչաց մերոց։
Այս օր է՝ զոր արար Տէր. 23
եկայք ցնծասցուք և ուրախ
եղիցուք ՚ի սմա։
Ո՛վ Տէր փրկեա, ո՛վ Տէր առաջ֊ 24
նորդեա. օրհնեալ որ գա֊
լոցդ

լոցդ ես յանուն տեառն. և
օրհնեցաք զձեզ 'ի տանէ տն։
25 Տէր ած մեր երևեցաւ մեզ.
արարէք տօնս ուրախութե
կանխաւ, մինչև յանկիւնս
սեղանոյ։
26 Աստ իմ ես դու՝ խոստովան
եղէց քեզ. ած իմ ես դու՝
և բարձր արարից զքեզ։
27 Խոստովան եղէց քեզ տէր՝
զի լուար ինձ, և եղեր ինձ
'ի փրկութիւն։
28 Խոստովան եղերուք տեառն,
զի բարի է. զի յաւիտեան
է ողորմութիւն նորա։

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԸ։

Ալէլուիա։

1 Երանեալ են անբիծք 'ի
ճանապարհի, և որք գնան
յօրէնս տեառն։
2 Երանի, որք քննեն զվկայ-
ութիւն նր. բոլորով սրտից

իւ-

իւրեանց խնդրեսցեն զնա ։
Ո՛չ թէ ոյք գործեն զանօ֊ 3
րէնութիւն . 'ի ճանապարհս
նորա գնացեն ։
Դու պատուիրեցեր զպատ֊ 4
ուիրանս քո՝ 'ի պահել ինձ
յոյժ ։
Երանի՛ թէ յաջողեալէին 5
ինձ ճանապարհք իմ, 'ի պա֊
հել ինձ զարդարութիւնս քո ։
Յայնժամ ես ո՛չ ամաչէի, 6
'ի զգուշանալ ինձ 'ի պատ֊
ուիրանս քո ։
Խոստովան եղէց քեզ տէր 7
յուղղութիւն սրտի իմոյ, որ
ուսայց զիրաւունս արդա֊
րութե̅ քո ։
Զիրաւունս քո պահեցի. մի 8
թողուր զիս մինչ իսպառ ։
Ի՞ւ ուղղեսցէ երիտասարդ 9
զճանապարհս իւր, այլ 'ի
պահել զբանս քո ։
Բոլորով սրտիւ իմով խնդ֊ 10
րե

րեցի զքեզ. մի՛ մերժեր զիս
'ի պատուիրանաց քոց։
11 'Ի սրտի իմում թագուցի
զբանս քո, որպէս զի մի՛ մե-
ղայց քեզ։
12 Օրհնեալ ես դու Տէր. ուսո՛
ինձ զարդարութիւնս քո։
13 Շրթամբք իմովք պատմեցից
զամենայն իրաւունս բերանոյ քո։
14 'Ի ճանապարհս վկայութեանց
քոց զուարճացայ, որպէս
յամենայն 'ի մեծութեան։
15 'Ի պատուիրանս քո հոգա-
ցայ. և զգուշացայ 'ի ճա-
նապարհս քո։
16 Զիրաւունս քո խօսեցայ, և
ոչ մոռացայ զբանս քո։
17 Հատո՛ ծառայի քում, և
կեցից և պահեցից զբանս քո։
18 Զարթո՛ զաչս իմ, և նայե-
ցայց 'ի սքանչելիս օրինաց
քոց։
19 Պանդուխտ եմ ես յերկրի.

մի

մի՛ թաքուցաներ յինէն ըզ-
պատուիրանս քո ։
Փափագեաց անձն իմ, 'ի 20
ցանկալ ինձ յիրաւունս քո
յա՛մ ժամ։
Սաստեցեր ամբարտաւանից. 21
անիծեալ՝ որք խոտորեցան 'ի
պատուիրանաց քոց ։
'Ի բա՛ց արա յինէն զնախա- 22
տինս և զարհամարհանս. զի
զվկայութիւնս քո խնդրեցի։
Քանզի նստան իշխանք՝ և 23
չարախօսէին զինէն. այլ ծա-
ռայ քո խորհէր յիրաւունս
քո ։
Զի վկայութիւնք քո խօսք իմ 24
էին. և խորհուրդ իմ ար-
դարութիւն քո ։
Մերձեցաւ անձն իմ 'ի հող. 25
տէր կեցո՛ զիս ը͞ս բանի քում։
Զճանապարհս իմ պատմե- 26
ցի քեզ՝ և լուա՛ր ինձ. ուսո՛
ինձ զարդարութիւնս քո ։

'Ի

27 'Ի ճանապարհս արդարու-
թեանց քոց իմաստուն արա
զիս. եւ քննեցից զսքանչե-
լիս քո:
28 Տքնեցաւ անձն իմ առ 'ի
ձանձրանալ. հաստատեա զիս
'ի բանս քո:
29 Զճանապարհս մեղաց 'ի բաց
արա յինէն. եւ յօրէնս քո ո-
ղորմեա ինձ:
30 Զճանապարհս ճշմարտութեան
քո ընտրեցի. եւ զիրաւունս
քո ես ոչ մոռացայ:
31 Մերձեցայ ես 'ի վկայութիւնս
քո, Տէր մի յամօթ առներ
զիս:
32 'Ի ճանապարհս պատուիրա-
նաց քոց ընթացայ. զի ան-
դորր արարեր սրտի իմոյ:
33 Օրէնսգէտ արա զիս Տէր 'ի
ճանապարհս իրաւանց քոց.
եւ խնդրեցից զնա յամենայն
ժամ:

Իմաս-

Խելամուտ արա զիս, եւ քննե- 34
նեցից զօրէնս քո, եւ պահե-
ցից զնա բոլորով սրտիւ ի-
մով։

Առաջնորդեա ինձ 'ի շա- 35
ւիղս պատուիրանաց քոց.
զի ընդ նմին հաճեցայ։

Խոնարհեցո զսիրտ իմ 'ի 36
վկայութիւնս քո, եւ մի յա-
գահութիւն։

Դարձո զաչս իմ, զի մի տե- 37
սից զնանրութիւն. 'ի ճա-
նապարհս քո կեցո զիս։

Հաստատեա ծառայի քում՝ 38
զբան քո յերկիւղ քո։

Հան յինէն զնախատինս՝ զոր 39
եւ կարծեցի. զի դատաս-
տանք քո քաղցր են։

Ահա ցանկացայ պատուի- 40
րանաց քոց, յարդարութեան
քում կեցո զիս։

Եկեսցէ 'ի վերայ իմ ողոր- 41
մութիւն քո Տէր. եւ փրկու-
թիւն

թիւն քո ըստ բանի քում:
42 Տաց պատասխանի որք նա-
խատեն զիս բանիւք. զի ես
'ի բանս քո յուսացայ:
43 Մի 'ի բաց առներ 'ի բե-
րանոյ իմմէ զբան ճշմար-
տութեան մինչև յոյժ. զի յի-
րաւունս քո յուսացայ:
44 Պահեցից զօրէնս քո յամ
ժամ, յաւիտեան և յաւի-
տեանս յաւիտենից:
45 Գնայի ես յանդորրու. զի
զպատուիրանս քո խնդրեցի:
46 Խօսէի զվկայութիւնս քո առա-
ջի թագաւորաց, և ոչ ա-
մաչէի:
47 Խորհէի 'ի պատուիրանս քո,
զոր սիրեցի:
48 Համբարձի զձեռս իմ 'ի
պատուիրանս քո՝ զոր սիրե-
ցի. և խորհէի յարդարու-
թեան քում:
49 Յիշեա՛ զբան ծառայի քո,

յոր և յուսացուցեր զիս։

Սա մխիթարեսցէ զիս 'ի խո_ 50
նարհութեան իմում. զի բան
քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւե_ 51
ցան յիս յոյժ, այլ յօրինաց
քոց ես ոչ խոտորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յա_ 52
ւիտենից տէր, և մխիթարե_
ցայ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի 53
մեղաւորաց, և որք թողին
զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք 54
քո, 'ի տեղւոջ պանդխտու_
թեան իմոյ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն 55
քո տէր. և պահեցի զօրէնս
քո։

Սա եղև ինձ ճանապարհ 'ի 56
կեանս. զի զարդարութիւնս
քո խնդրեցի։

57 Բաժին իմ ես դու տէր,
ասացի պահել ինձ զօ-
րէնս քո:
58 Աղաչեցի զերեսս քո բոլո-
րով սրտիւ իմով. ողորմեա՛
ինձ ըստ բանի քում:
59 Խորհեցայ 'ի ճանապարհս
իմ. և դարձուցի զոտս իմ
'ի վկայութիւնս քո:
60 Պատրաստեցայ և ո՛չ խռո-
վեցայ. զի պահեցի զպատ-
ուիրանս քո:
61 Տոռունք մեղաց պատեցան
զինև. այլ զօրէնս քո ես
ո՛չ մոռացայ:
62 'Ի մէջ գիշերի յառնէի խոս-
տովան լինել առ քեզ, վասն
իրաւանց և արդարութե̃ քո:
63 Հաղորդ էի ես ամենայն եր-
կիւղածաց քոց. որոց պա-
հեալ է զպատուիրանս քո:
64 Ողորմութե̃ տ̃ն լի եղև եր-
կիր.

Տէր · զարդարութիւնս քո
ուսո ինձ :

Քաղցրութիւն արարեր ընդ 65
ծառայի քում Տէր, ըս̃ բանի
քում:

Քաղցրութիւն, զխրատ, եւ 66
զգիտութիւն ուսո ինձ · զի
'ի պատուիրանս քո ես հա-
ւատացի :

Մինչչեւ խոնարհեալ էի ես՝ 67
մեղայ · վն̃ այսորիկ զբանս
քո պահեցի յոյժ :

Քաղցր ես դու Տէր, եւ 68
քաղցրութ̃բ քով ուսո ինձ
զարդարութիւնս քո :

Բազմացան յիս անիրաւու- 69
թեք ամբարտաւանից · այլ
ես բոլորով սրտիւ իմով
քննեցի զպատուիրանս քո :

Մածեաւ ոպ̃ կաթն սիրտք 70
նց̃ · այլ ես զօրէնս քո խո-
կացայ :

Բարի է ինձ, զի խոնարհ 71
արա-

արարեր զիս. ո͞պ ուսայց
զարդարութիւնս քո:
72 Բարի են ինձ օրէնք բերա-
նոյ քո, քան զհազարս ոսկ-
ւոյ և արծաթոյ:
73 Ձեռք քո արարին՝ և ստեղ-
ծին զիս. իմաստուն արա
զիս՝ և ուսայց զպատուէ-
րանս քո:
74 Երկիւղածք քո տեսցեն զիս՝
և ուրախ եղիցին. զի ես 'ի
բանս քո յուսացայ:
75 Ծանեայ տէր զի արդարու͞թ
են դատաստանք քո. յիրա-
ւի խոնարհեցուցեր զիս:
76 Եղիցի ողորմու͞թ քո 'ի մխ-
թարել զիս. ը͞ս բանի քում,
զծառայս քո:
77 Եկեսցեն յիս գթութիւնք
քո՝ և կեցից. զի օրէնք քո
խօսք իմ էին:
78 Ամաչեսցեն ամբարտաւանք
որ 'ի տարապարտուց անի-
րաւե-

բռնեցան յիս. այլ ես խո-
կացայ 'ի պատուիրանս քո:

Խորտակեսցեն զիս երկիւ- 79
ղածք քո, և որք ճանաչեն
զվկայութիւն քո:

Եղիցի սիրտ իմ անբիծ յար- 80
դարութեան քում. զի մի ամա-
չեցից:

Կարօտացաւ անձն իմ 'ի 81
փրկութիւնս քո. զի ես 'ի
բանս քո յուսացայ:

Սպառեցին աչք իմ բանի 82
քում. ասացի՝ Ե՞րբ մխի-
թարեսցէ զիս:

Եղէ ես ոպ̄ տիկ 'ի պարզի. 83
զի զարդարութիւնս քո ես
ոչ մոռացայ:

Քանի՞ ինչ են աւուրք ծա- 84
ռայի քո. Ե՞րբ արասցես
ինձ իրաւունս 'ի հալածչաց
իմոց:

Պատմեցին ինձ անօրէնք 85
զխորհուրդս. այլ ոչ որպէս

զօրէնս քո ։
86 Ամենայն պատուիրանք քո
ճշմարիտ են . 'ի նանիր հա֊
լածեցին զիս , օգնեա ինձ ։
87 Փոքր մի եւ՝ և կորուսա֊
նէին զիս յերկրի . այլ ես
ոչ թողի զպատուիրանս քո ։
88 Ըստ ողորմութեան քում կեցո
զիս . և պահեցից զվկայու֊
թիւնս բերանոյ քո ։
89 Յաւիտեան տէր՝ բան քո կայ
յերկինս . ազգէ մինչև յազգ
է ճշմարտութիւն քո ։
90 Հաստատեցեր զերկիր՝ և
կայ ։
91 Հրամանի քում մնայ տիւ .
զի ամենայն ծառայ քո է ։
92 Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ
էին , կանխաւ ես արդեօք
կորուսեալ էի 'ի խոնարհու֊
թեան իմում ։
93 Յաւիտեան ոչ մոռացայց
զարդարութիւնս քո . զի նո֊
քօք

քօք կեցուցեր զիս:
Քո եմ ես, և կեցո զիս. 94
զի զարդարութիւնս քո խնդ-
րեցի:
Ինձ սպասեցին մեղաւորք ՚ի 95
կորուսանել. զի զվկայու-
թիւնս քո ես ՚ի միտ առի:
Յամենայն կատարածի տե- 96
սի զվախճան. յոյժ անդորր
էին ինձ պատուիրանք քո:
Որպէս սիրեցի զօրէնս քո. 97
զօրհանապազ խօսք իմ էին:
Քան զթշնամիս իմ իմաս- 98
տուն արարեր զիս ՚ի պատ-
ուիրանս քո. զի յաւիտեան
իմ էին:
Քան զամենայն ուսուցիչս 99
իմ իմաստուն եղէ. զի վկայ-
ութիւնք քո խօսք իմ էին:
Քան զծերս իմաստուն ե- 100
ղէ. զի զպատուիրանս քո
քննեցի:
Յամենայն ճանապարհաց 101
չար-

չարաց արգելի զոտս իմ. որպէս զի պահեցից զբանս քո:

102 Յիրաւանց քոց ես ո՛չ խոտորեցայ. զի դու օրէնսգէտ արարեր զիս:

103 Որպէս զի քաղցր են 'ի քիմս իմ բանք քո՝ քան ըզմեղր՝ բերանոյ իմոյ:

104 'Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի զա՟մ ճանապարհս չարաց. զի դու օրէնսդէտ արարեր զիս:

105 Ճրագ է բան քո ոտից իմոց, և լոյս տայ շաւղաց իմոց:

106 Երդուայ և հաստատեցի. զի պահեցից զա՟մ իրաւունս արդարութե՟ քո:

107 Խոնարհ եղէ մինչև յոյժ. տէր՝ կեցո՛ զիս ըստ բանի քում:

108 Ընդ կամս բերանոյ իմոյ հա-

հաճեա՛ տէր. և զիրաւունս
քո ուսո՛ ինձ:

Անձն իմ 'ի ձեռս քո յա՛մ 109
ժամ. և զօրէնս քո ես ոչ
մոռացայ:

Եդին ինձ մեղաւորք որո֊ 110
գայթ. 'ի պատուիրանաց
քոց ես ոչ մոլորեցայ:

Ժառանգեցի զվկայութիւնս 111
քո յաւիտեան. զի ցնծու֊
թիւն է սրտի իմոյ:

Խոնարհեցուցի զսիրտ իմ, 112
առնել զարդարութիւնս քո
յաւիտեանս, վ՛ հատուց֊
ման:

Զանօրէնս ատեցի, և զօ֊ 113
րէնս քո սիրեցի:

Օգնական և փրկիչ իմ 114
ես դու. և ես 'ի բանս քո
յուսացայ:

'Ի բաց եղերուք յինէն 115
չարք. և քննեցից զպատ֊
ուիրանս այ՛ իմոյ:

Օգ֊

116 Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, եւ կեցո՛ զիս. եւ մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ:

117 Օգնեա՛ ինձ, եւ ապրեցո՛ զիս. եւ խորհեցայց յիրաւունս քո յա՛մ ժամ:

118 Անարգեցեր զամենեսեան՝ որ ապստամբք եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութիւն էին խորհուրդք ն՟ց:

119 Յանցաւորս համարեցայ զա՛մ մեղաւորս երկրի. վ՟ն այսորիկ՝ սիրեցի զպատուիրանս քո:

120 Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ. զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ:

121 Արարի իրաւունս եւ արդարութիւն. մի՛ մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց:

Ըն-

Ընկա՛լ զծառայս քո ՚ի բա֊ 122
րի. զի մի՛ ամբարտաւանք
զրո՛եսցեն զիս:
Սպասեցին աչք իմ փրկու֊ 123
թեան քում տէր, և բանից
արդարութեան քո:
Արա՛ ընդ ծառայի քում 124
տէր ըստ ողորմութեան քում.
զարդարութիւնս քո ուսո՛ ինձ:
Ծառայ քո եմ ես, իմա֊ 125
ստուն արա զիս, և ծա֊
նեայց զվկայութիւնս քո:
Ժամ է պաշտել զտէր. խա֊ 126
փանեցին զօրէնս քո:
Վասն այսորիկ սիրեցի ըզ֊ 127
պատուիրանս քո, ք̃ զա̃մ
ոսկի և զտպազիոն:
Ամենայն պատուիրանք քո 128
յաջողեցան ինձ. զի ատե֊
ցի ես զճանապարհս չա֊
րաց:
Սքանչելի են վկայութիւնք 129
քո. վ̃ա այսորիկ սիրեաց

զն̃ս

զնա անձն իմ։

130 Յայտնութիւն բանից քոց
լուսաւոր եւ իմաստուն առ-
նէ զտղայս։

131 Զբերան իմ բացի, եւ առի
զհոգի. 'ի պատուիրանս
քո փափագեաց անձն իմ։

132 Նայեաց առ իս եւ ողորմեաց
ինձ, ըստ իրաւունս սիրո-
ղաց անուան քո։

133 Զճանապարհս իմ ուղիղ-
արա ինձ ըստ բանի քում.
եւ մի տիրեսցեն ինձ ամ
մեղք։

134 Փրկեա զիս 'ի զրպարտու-
թէ մարդկան. եւ պահե-
ցից զպատուիրանս քո։

135 Երեւեցո զերեսս քո 'ի ծա-
ռայս քո, եւ ուսո ինձ զար-
դարութիւնս քո։

136 Վտակս ջուրց իջին յաչաց
իմոց. զի ոչ պահեցին զօ-
րէնս քո։

Ար-

Արդար ես դու տէր, և 137
ուղիղ են դատաստանք քո :
Պատուիրեցեր զարդարու- 138
թիւն վկայութեանց քոց. և
ճշմարիտ են յոյժ :
Մաշեաց զիս նախանձ քո, 139
զի մոռացան զբանս քո
թշնամիք իմ :
Ընտրեալ է բան քո յոյժ, 140
և ծառայ քո սիրեաց զսա :
Մանուկ եմ ես և արհա- 141
մարհեալ. և զարդարու-
թիւնս քո ես ոչ մոռացայ :
Արդարութիւն քո՝ արդա- 142
րութիւն յաւիտենից. և
օրէնք քո ճշմարիտ են :
Նեղութիւնք և վիշտք գտին 143
զիս. և պատուիրանք քո
խօսք իմ էին :
Արդարութիւն են վկայութիւնք 144
քո յաւիտեան. իմաստուն
արա և կեցո զիս :
Կարդացի առ քեզ բոլո- 145
րով

րով սրտիւ իմով · լուր
ինձ տէր, զի զարդարութեանս
քո խնդրեցի:

146 Աղաղակեցի առ քեզ՝ և
փրկեա՛ զիս · և պահեցից
զվկայութիւնս քո:

147 Կանխեցի տարաժամու՝ ա-
ղաղակեցի · և ես 'ի բանս
քո յուսացայ:

148 Կանխեցին աչք իմ՝ առա-
ւօտու · 'ի խօսել ինձ ըզ-
բանս քո:

149 Զայնի իմում լուր տէր՝ ըստ
ողորմութեան քում · տէր յի-
րաւունս քո կեցո՛ զիս:

150 Մերձեցուցին յիս հալա-
ծիչք իմ զանօրէնութիւն · զի
յօրինաց քոց հեռի եղեն:

151 Մերձ ես դու տէր · և ամենայն
պատուիրանք քո ճշմարիտ
են:

152 Իսկզբանէ ծանեայ 'ի վը-
կայութեանց քոց · զի յաւի-
տեան

ուեան հաստատեցեր զնս ։
Տես զխոնարհութիւն իմ․ 153
և փրկեա զիս․ զի զօրէնս
քո ես ոչ մոռացայ ։
Դատեա զդատաստանս իմ, 154
և փրկեա զիս․ և ը̅ բա-
նի քում կեցո զիս ։
Հեռի է ՛ի մեղաւորաց փըր- 155
կութի̃, զի զիրաւունս քո
ոչ պահեցին ։
Գթութիւնք քո բազում են 156
տէր, և ըստ իրաւանց քոց
կեցո զիս ։
Բազում են, որ հալածեն 157
և նեղեն զիս․ ՛ի վկայուե̃ց
քոց ես ոչ խոտորեցայ ։
Հայէի յանարգորոյնս՝ և մա- 158
շէի, զի զպատուիրանս քո
ոչ պահեցին ։
Տես՝ զի զպատուիրանս քո 159
սիրեցի․ տէր՝ ողորմութ̃ք
քո կեցո զիս ։
Սկիզբն բանից քոց Ճշմար- 160

տութիւն է. յաւիտեան են ամ իրաւունք արդարութեան քո:

161 Իշխանք հալածեցին զիս ՚ի նանիր. և ՚ի բանից քոց երկեաւ սիրտ իմ:

162 Ցնծացայց ես ՚ի բանս քո, որպէս այն՝ որ գտանէ աւար բազում:

163 Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի:

164 Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ, վն իրաւանց և արդարութե քո:

165 Խաղաղութիւն բազում է այնոցիկ, որ սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ ՚ի նս գայթագղութիւն:

166 Սպասեցի փրկութե քում տէր, և զպատուիրանս քո սիրեցի:

167 Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց

զնոսա յոյժ ։

Պահեցի զպատուիրանս 168
և զվկայութիւնս քո. զի
ամենայն ճանապարհք իմ
առաջի քո են ։

Մերձեսցին խնդրուածք 169
իմ առաջի քո Տ̄ր. ը̄ս բանի
քում իմաստուն արա զիս ։

Մտցէ աղօթք իմ առաջի 170
քո տէր. և բանիւ քո փր֊
կեա զիս ։

Բղխեսցեն շրթունք իմ 171
զօրհնութիւն քո, յորժամ
ուսուսցես ինձ զարդա֊
րութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս 172
քո. զի ա̄մ պատուիրանք
քո արդարութ̄ի են ։

Եղիցի ձեռն քո 'ի կեցու֊ 173
ցանել զիս. զի զպատուի֊
րանս քո ընտրեցի ։

Ցանկացայ փրկութե̄ քում 174
տէր, և օրէնք քո խօսք իմ
են ։

էին ։

175 Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ ։

176 Մոլորեցայ ես ոպ̅ ոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ։

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Եսայեայ մարգարէին ։

1 Օրհնեցէք զա̅ծ յօրհնութիւն նոր. զի իշխանութիւն նր̅ 'ի բարձունս փառաւորի ։

2 Եւ անուն նր̅ փառաւորեալ է՝ 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի ։

3 Ոյք իջանէին 'ի ծով նաւուք. կղզիք և ամ̅ բնակիչք նոցա ընդ նոսա ։

4 Ո՛ւրախ եղիցի անապատն՝

և

և ամ՟ բնակիչք իւր ուրախ
եղիցին բանակք՝ և բակք
կեդարու . և ուրախ եղի֊
ցին բնակիչք վիմին :
'Ի գլխոց լերանց գոչեսցեն , 5
տայցեն զփառս ա՟յ . և զքա֊
ջութն՟ նր՟ կղզիք պատմեսցեն :
Տէր ա՟ծ զօրութե՟ց դիմեալ
գայ զարթուցանել զպատե֊ 6
րազմ , յարուցանել զնա֊
խանձ . փող հարկանել՝ և
գոչել 'ի վերայ թշնամեաց
իւրոց զօրութ՟բ բազմաւ :
Ուրախ եղիցին երկինք 'ի
վերուստ . և ամպք ցօղես֊ 7
ցեն զարդարութի՟ :
Բղխեսցէ երկիր զողորմու֊
թիւն և զարդարութիւն՝ 8
առ հասարակ բղխեսցէ :

Աղօթք յովնանու մարգարէին :

'Ի նեղութե՟ իմում ես առ 1
տէր կարդացի . լուաւ
ա՟ծ

ած յանդնդոց դժոխոց աղա-
ղակի իմում:
2 Լուր տէր ձայնի իմում, զի
ընկեցեր զիս 'ի խորս ծո-
վու. և շրջանք գետոց պա-
շարեցին զիս:
3 Ամենայն զբօսանք քո՝ և ա-
լիք քո անցին 'ի վերայ իմ.
և ասացի, թէ մերժեցայ
ուրեմն յերեսաց աչաց քոց:
4 Արդ՝ իցէ՞ թէ յաւելից հայ-
ել 'ի տաճար սուրբ քո.
զի հեղան զինև ջուրք մին-
չև յանձն իմ. և ան-
դունդք անհնարինք պաշա-
րեցին զիս:
5 Եմուտ գլուխ իմ ընդ փա-
պարս լերանց. իջի ես 'ի
խորս երկրի, և տեսի ըղ-
նիգս նորա, զի էին որպէս
աղխք յաւիտենից. և ելցեն
յապականութէ կեանք իմ:
6 Առ քեզ տէր ած իմ, 'ի
նուա-

նուէրագէտ անձին իմոյ կար-
դացի, և զքեզ տէր յիշեցի.
և մտցեն աղօթք իմ 'ի տա-
ճար սրբ. քո :

Զի դուք պահէին զունայ- 7
նութիւն և զստութիւն, յողոր-
մուէ իւրեանց մերժեցան :
Այլ ես 'ի ձայն օրհնութե 8
խոստովան եղէց քեզ. մա-
տուցից պատարագս տն. և
կատարեցից զուխտ իմ 'ի
փրկութե :

## ՄԱՂԹԱՆՔ :

Եկեսցեն աղօթք մեր 'ի տա-
ճար սրբ. քո. խոնարհես-
ցի ունկն քո 'ի խնդրուածս
մեր : Մարգա՛ :

Զքարոզն և զաղօթս 'ի Հերջն Մի
նախանձիր կանոնին գտցես 'ի
ՃՂԵ. Երեսն :



Ամենահարուստ բաշխումն Հոգւոյն սրբոյ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԺԹ:

Օրհնութիւն Աստիճանաց:

1 Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ
իմում ես առ Տէր
կարդացի, և լուաւ ինձ
Տէր. փրկեաց զանձն իմ 'ի
շրթանց նենգաւորաց, և
'ի լեզուէ չարէ:
2 Զի՞ տացի քեզ՝ կամ զի՞նչ
յաւելցի, լեզու նենգա-
ւոր:
3 Ո՟պ նետք հզօրի, զի սրեալ
են կայծակամբք կաղնեայ:
4 Վա՜յ ինձ զի ընդ երկար եղև
պանդխտութիւն իմ. զի
բնակեցայ ես 'ի վրանս կէ-
դարու:
5 Բազում անգամ բնակեաց
անձն իմ ը՟ այնոսիկ, որք
ատէին

ատէին զողջոյն։

Եւ էի խաղաղարար. յոր- 6
ժամ խօսէի, մարտնչէին
ընդ իս։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻ։

Օրհնութիւն Աստիճանաց։

Համբարձի զաչս իմ ՚ի լե- 1
րինս, ուստի եկեսցէ ինձ
օգնութիւն։

Օգնութիւն ինձ ՚ի Տեառնէ ե- 2
կեսցէ, որ արար զերկինս
և զերկիր։

Մի տար ՚ի սասանութիւն 3
զոտն քո. և մի ննջեսցէ
պահապան քո։

Որպէս ոչ ննջէ և ոչ ՚ի 4
քուն երթայ պահապան Իս-
րայէլի։

Տէր պահեսցէ զքեզ, և Տէր 5
ընկալցի աջով ձեռամբն իւ-
րով։

Արեգակն ՚ի տուէ քեզ մի 6
մե-

մեղիցէ, և մի լուսին 'ի գի-
շերի :
7 Տր պահեսցէ զքեզ յամ չա-
րէ. պահեսցէ Տր զանձն քո :
8 Տր պահեսցէ զմուտ և զել
քո՝ յայսմ հետէ մինչև յա-
ւիտեան :

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԱ:

### Օրհնութիւն Աստիճանաց :

1 Ուրախ եղէ ես՝ որք ասէին
ցիս, 'ի տուն Տն երթիցուք
մեք :
2 Հաստեալ կային ոտք մեր առ
դրունս քո Երուսաղէմ :
3 Երուսաղէմ շինեալ որպէս
քաղաք. և բնակութիւն նոր
շուրջ զնովաւ :
4 Անդ ելին ազգք՝ ազգ Տն.
վկայութիւն Իսրայէլի, խոս-
տովան լինել անուան Տն :
5 Անդ արկեալ էր աթոռ դա-
տաստանի. աթոռս արկեալ
'ի

'ի տան դաւթի:

Հարցէք զողջունէ զերու- 6
սաղեմի, և զշինութե՛ որք
սիրեն զնա:

Եղիցի խաղաղութիւն 'ի զօ- 7
րութե քում, և շինութիւն
յաշտարակս յամուրս քո:

Վասն եղբարց և ընկերաց 8
իմոց խօսեցայ զխաղաղութի.
վասն քոյ և վն տան տն այ
մերոյ խնդրեցաք զբարու-
թիւն 'ի քէն:

## ՍԱՂՄՈՍ· ՃԻԲ:

### Օրհնութիւն Աստիճանաց:

Առ քեզ տէր համբարձի 1
զաչս իմ, որ բնակեալդ ես
յերկինս:

Ո՟պ աչք ծառայի 'ի ձեռն 2
տն իւրոյ. որպէս աչք ա-
ղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւ-
րոյ:

Այնպէս են աչք մեր առ 3
քեզ

քեզ Տէր ած մեր. մինչեւ ո-
ղորմեսցի 'ի վերայ մեր:
4 Ողորմեա մեզ Տէր ողորմեա
մեզ. զի բազում լցաք ար-
համարհանօք:
5 Եւս առաւել լցան անձինք
մեր նախատանօք, որ նա-
խատէին զմեզ. եւ արհա-
մարհանօք ամբարտաւանից:

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԳ:
### Օրհնութիւն Աստիճանաց:

1 Եթէ ոչ Տէր էր առ մեզ,
ասասցէ Իսրայէլ, եթէ ոչ
Տէր էր առ մեզ:
2 Ընդ յառնել մարդկան 'ի
վր̄ մեր. կենդանւոյն կա-
մեցան կլանել զմեզ:
3 'Ի բարկանալ սրտմտութե̄
նր̄ 'ի վերայ մեր. ապա եւ
ջուրք ուրեմն ընկղմեցին
զմեզ:
4 Ընդ ուղխս անցին անձինք
մեր.

մեր. անցին անձինք մեր՝ ը̄ն
ուղխս անդադարս:
Օրհնեալ է տէր. որ ոչ ետ 5
զմեզ յորս ատամանց ն̄ց:
Անձինք մեր ապրեցան որ̄ 6
ճնճղուկ՝ յորոգայթէ որ-
սողաց:
Որոգայթք նոցա փշրեցան, 7
և մեք ապրեցաք:
Օգնութիւն է մեզ յանուա- 8
նէ տ̄ն, որ արար զերկինս
և զերկիր:

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԴ:

### Օրհնութիւն Աստիճանաց:

Ո յուսայ 'ի տէր, որ̄ լեառն 1
սիովն, մի՛ սասանեսցի յա-
ւիտեան՝ որ բնակեալն է
յերուսաղէմ:
Լերինք շուրջ են զնովաւ. 2
տէր շուրջ է զժողովրդեամբ
իւրով՝ յայսմ հետէ մինչև
յաւիտեան:

3 Ո՛չ թողու Տէր զգաւազան
մեղաւորաց 'ի վիճակս ար-
դարոց. եւ արդարք մի՛ ձգես-
ցեն զձեռս իւրեանց յանօ-
րէնութիւն։
4 Բարի արա Տէր բարեաց.
եւ այնոցիկ, որք ուղիղ են
սրտիւք։
5 Իսկ զթիւրեալսն յափշտա-
կութեան, տանի զնս Տէր ընդ-
այնոսիկ որք գործեն զանօ-
րէնութիւն. խաղաղութիւն
'ի վերայ Իսրայէլի։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԵ։

Օրհնութիւն Աստիճանաց։

1 Ի դարձուցանել Տէր զգե-
րութիւն Սիոնի, եւ ե-
ղաք մեք մխիթարեալք։
2 Յայնժամ լցաւ բերանք մեր
խնդութեամբ, եւ լեզուք մեր
ցնծութեամբ։
3 Յայնժամ ասասցեն 'ի հե-
թա-

թանոսս, մեծ արար տէր
զառնել իւր ընդ նմ̃. մեծ
արար տէր զառնել իւր ընդ
մեզ. և մեք եղաք բերկ-
րեալք։
Դարձո՛ տէր զգերութիւն մեր՝ 4
որպէս զուղխս 'ի հարաւոյ.
Որք վարէին արտասուօք,
ցնծութբ̃ հնձեսցեն։
Երթալով երթային՝ և լայ- 5
ին, որք բարձեալ տանէին
զսերմանս իւրեանց։
Գալով եկեսցեն՝ և ցնծաս- 6
ցեն, որք առեալ բերիցեն
զորայս իւրեանց։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԶ։

### Օրհնութի Աստիճանաց։

Եթէ ոչ տէր շինէ զտուն, 1
'ի նանիր վաստակին շինօղք
նորա։
Եթէ ոչ տէր պահէ զքաղաք, 2
ընդունայն տքնին պահա-
պանք

պանք նորա ։

3 'Ի նմին է ձեռն յառնել կանխաւ. արդ՝ արիք մինչչև էք ննջեցեալ, ոյք ուտէք զհաց ցաւոց ։

4 'Ի ժամանակի, որպէս տացէ քուն սիրելեաց իւրոց. ժառանգութիւն Տեառն՝ որդիք են. որոց վարձք իւր են, այն է պտուղ որովայնի իւրոյ ։

5 Որպէս նետք 'ի ձեռս հզօրի. այնպէս են և որդիքն թօթափելոց ։

6 Երանի, որ ելից զցանկութիւն իւր 'ի նոցանէ. մի ամաչեսցեն՝ յորժամ խօսեսցին թշնամիք նոցա ընդ նոսա առ դրանն ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԻԷ։
### Օրհնութիւն Աստիճանաց ։

1 Երանի ամենեցուն՝ ոյք երկնչին 'ի Տեառնէ, և գնան 'ի

Ճանապարհս նորա:

Զվաստակս ձեռաց քոց կե- 2
րիցես. երանի է քեզ, և
բարի եղիցի:

Կին քո ոպ̃ այգի վայելուչ 3
յանկիւնս տան քո. որդիք
քո ոպ̃ նորատունկ ձիթենե-
ւոյ՝ շուրջ զսեղանովդ քո:

Այսպէս օրհնեսցի այն 4
նայն մարդ, որ երկնչի 'ի
տ̃նէ. օրհնեսցէ զքեզ տէր 'ի
սիովնէ:

Եւ տեսցես դու զբարութի 5
յերուսաղէմ՝ զա̃մ աւուրս
կենաց քոց:

Տեսցես դու զորդիս որդ- 6
ւոց քոց. խաղաղութիւն 'ի
վերայ իսրայէլի:

## ՍԱՂՄՈՍ. ԾԻԸ:

### Օրհնութիւն Աստիճանաց:

Բազում անգամ մարտեան 1
ընդ իս 'ի մանկութենէ իմմէ,

աս

ասասցէ իսրայէլ:
2 Բազում անգամ մարտեան
ընդ իս 'ի մանկութենէ իմմէ,
և ինձ ոչ յաղթեցին:
3 Զթիկունս իմ հարին մե-
ղաւորք. ընդ երկար արա-
րին զանօրէնութիւս իւրեանց:
4 Տէր արդար է, և խորտա-
կէ զուլն մեղաւորաց:
5 Ամաչեսցեն և յետս դարձ-
ցին ամենեքեան՝ որք ատեն
զսիոն:
6 Եղիցին նոքա ոպ խոտ տա-
նեաց. որ մինչչև 'ի բուռն
եկեալ՝ չորացաւ:
7 Որում ոչ ելից զբուռն իւր
հնձօղն, և ոչ զգիրկս իւր՝
որ զորայն ժողովէր:
8 Ո՛չ ասացին ամենեքեան՝ որք
անցանէին առ նոքօք, թէ
օրհնութիւն տն ընդ ձեզ է.
և օրհնեցաք զձեզ յանուա-
նէ տն:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԻԹ.
## Օրհնութի Աստիճանաց ։

'Ի խորոց կարդացի առ քեզ 1
տէր՝ տէր՝ լո՛ւր ձայնի իմում։
Եղիցին ականջք քո 'ի լուր 2
ձայն աղօթից իմոց ։
Թէ զանօրէնութիւնս քննես 3
տէր՝ տէր, իսկ ո՞ կարէ կալ
առաջի քո. զի 'ի քէն է քա-
ւութիւն ։
Վասն անուան քո համբերի 4
տէր. համբեր անձն իմ բա-
նի քում. յուսացաւ անձն
իմ 'ի տէր ։
'Ի պահէ առաւօտու՝ մինչև 5
յերեկոյ. 'ի պահէ առաւօ-
տու՝ յուսացաւ իսրայէլ 'ի
տէր ։
'Ի տ̃նէ է ողորմութ̃ի բա- 6
զում. 'ի նմանէ է փրկութ̃ի.
և նա փրկեսցէ զիսրայէլ յամ̃
նեղութեանց նր̃ ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԼ։

### Օրհնութիւն Աստիճանաց։

1 Տէր ոչ բարձրացաւ սիրտ
իմ. և ոչ զբօսան աչք իմ։
2 Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս.
և ոչ ընդ այնոսիկ, որ սքան-
չելի եղեն քան զիս։
3 Բայց թէ խոնարհեցայ ես՝
ոգի մանուկ սարտուցեալ՝ի
ստենէ մօր իւրոյ. և դարձ
նր անդրէն՝ի նոյն։
4 Այլ թէ հպարտացուցի որ-
դեօք զանձն իմ, այսպէս
եղիցի հատուցումն անձին
իմոյ. յուսացաւ Իսրայէլ՝ի
տէր յայսմ հետէ մինչև յա-
ւիտեան։

## ՍԱՂՄՈՍ. ՃԼԱ։

### Երգ Լոճոց։

1 Յիշեա տէր զԴաւիթ, և
զամենայն հեզութիւն
նո-

Նորա ։

Որպէս երդուաւ տն՟. և 2
ուխտս եդ այ՟ յակովբայ ։
Թէ ոչ մտից 'ի յարկս տան 3
իմոյ. Թէ ելից յանկողինս
մահճաց իմոց ։
Թէ տաց քուն աչաց իմոց. 4
կամ նինջ արտեւանաց իմոց.
կամ հանգիստ երանաց ի֊
մոց. մինչև գտից տեղի յար֊
կի տն՟ այ՟ յակովբայ ։
Ահա լուաք զնմանէ յեփրա֊ 5
թայ. և գտաք զնա 'ի դաշտս
մայրեաց ։
Մտցուք 'ի յարկս նր՟. եր֊ 6
կիր պագցուք 'ի տեղւոջ՝
ուր կացեալ են ոտք նր՟ ։
Արի տէր 'ի հանգիստ քո՝ 7
դու և տապանակ կտակի
սրբութե՟ քո ։
Երիցունք քո զգեցցին զար֊ 8
դարութիւն. և սուրբք քո
ցնծալով ցնծասցեն ։

Վասն

9 Վասն դաւթի սիրելւոյ քո,
մի դարձուցաներ զերեսս քո
յօծելոյ քումմէ։
10 Երդուաւ տէր դաւթի ճըշ-
մարտութի̄՝ և ոչ ստեաց
նմա. և 'ի պտղոյ որովայնէ
քումմէ նստուցից յաթոռ
քո։
11 Թէ պահեսցեն որդիք քո
զօրէնս իմ. և զվկայութի̄ս
իմ, զոր ուսուցից նց̄։
12 Որդիք նոցա նստցին յաւի-
տեանս յաւիտենից յաթոռ
քո։
13 Հաճեցաւ տէր ընդ սիոնի.
և ընտրեաց բնակել 'ի նմա
ասէ՝ այս է հանգիստ իմ
յաւիտեանս յաւիտենից. 'ի
սմա բնակեցայց՝ զի հաճեցայ
ընդ սա։
14 Զորս սորա օրհնելով օրհնե-
ցից. և զաղքատս մի̄ լցու-
ցից հացիւ։

Երի-

Երիցանց նորա զգեցուցից 15
զփրկութիւն. եւ սուրբք ն՛ր
ցնծալով ցնծասցեն։
Անդ ծագեցից զեղջիւր ՚ի 16
Դաւիթ. պատրաստ արարից
զճրագ օծելոյ իմոյ։
Թշնամեաց ն՛ր զգեցուցից 17
զամօթ. այլ ՚ի վ՛ր ն՛ր ծաղ-
կեսցէ սրբութ՛ն իմ։

## ՍԱՂՄՈՍ. ՃԼԲ։

Երգ ուղ՛ոց։

Ո՛վ բարի, կամ զի՞ վայե- 1
լուչ, զի բնակեն եղբարք ՚ի
միասին։
Որպէս իւղ զի իջանէ ՚ի 2
գլուխ՝ եւ ՚ի մօրուսն ահա-
րոնի. ՚ի մօրուսացն իջանէ
՚ի գրպանս զգեստու ն՛ր։
Որպէս ցօղ՝ զի ցօղէ ՚ի Հեր- 3
մոնէ ՚ի վ՛ր լերին սիոնի։
Տ՛ր անդ պատրաստեաց զօրհ- 4
նութիւն, եւ զկեանս յաւի-
տե-

տենից :

## ՍԱՂՄՈՍ · ՃԼԳ ։

Երգ աստիճանաց :

1 Աստ օրհնեցէք զմ ծառայք
տն զՏէր . որ կայք 'ի տուն
տն , և 'ի գաւիթս այ մերոյ :
2 'Ի գիշերի համբարձէք զձեռս
ձեռս ձեր 'ի սրբութիւն . և
օրհնեցէք զՏէր :
3 Օրհնեսցէ զքեզ տէր 'ի սիովնէ . որ արար զերկինս և
զերկիր :

## ՍԱՂՄՈՍ · ՃԼԴ ։

Ալէլուիա :

1 Օրհնեցէք զանուն տն . օրհնեցէք ծառայք տն զՏէր ,
որ կայք 'ի տուն տն , 'ի գաւիթս այ մերոյ :
2 Օրհնեցէք զՏէր՝ զի բարի
է . սաղմոս ասասցէք անուան
նր՝ զի քաղցր է :

Զյա

Զյակոբ ընտրեաց իւր տր. 3
և զիսրայէլ ժառանգութիւն
իւր:
Ես ծանեայ՝ զի մեծ է տր. 4
և տր մեծ է քան զամ կուռս:
Զամենայն զոր ինչ կամե- 5
ցաւ՝ և արար տէր. յերկինս
և յերկրի՝ 'ի ծով և յամ
խորս:
Հանէ զամպս 'ի ծագաց եր- 6
կրէ. զփայլատականս իւր
յանձրեւս արար. և հանէ
զհողմ 'ի շտեմարանաց իւ-
րոց:
Եհար զամ անդրանիկս ե- 7
գիպտացւոց, 'ի մարդոյ մին-
չև յանասուն:
Առաքեաց զնշանս և զար- 8
ուեստս իւր 'ի մէջ քո ե-
գիպտոս, 'ի փարաւոն՝ և
յամենայն զօրս իւր:
Եհար զազգս բազումս. և 9
սպան զթագաւորս հզօրս:

Զսե-

10 Զսեհոնն Թագաւոր ամուր-
հացւոց, զովգ Թագաւոր
բասանու, և զամ Թագաւո-
րութիւնս քանանացւոց:
11 Ետ զերկիր նոցա ՚ի ժա-
ռանգութի. ժառանգութի
իսրայէլի ժողովրդեան իւ-
րոյ:
12 Տէր անուն քո յաւիտեան.
տէր՝ յիշատակ քո ազգէ մին-
չև յազգ:
13 Դատի տր զժողովուրդ իւր.
և ՚ի ծառայս իւր մխի-
թարի:
14 Կուռք հեթանոսաց ոսկի և
արծաթ են, ձեռագործք
են որդւոց մարդկան:
15 Բերան գոյ՝ և ոչ խօսին.
աչք են՝ և ոչ տեսանեն:
16 Ականջք են՝ և ոչ լսեն. և
ոչ գոյ շունչ ՚ի բերանս նց:
17 Նման նց եղիցին ոյք արա-
րին զնս. ամենեքեան ոյք
յու-

յուսացեալ են 'ի նս̃ ։
Տո՛ւն իսրայէլի օրհնեցէք 18
զտէր ․ տո՛ւն ահարոնի օրհ֊
նեցէ՛ք զտէր ։
Տո՛ւն ղեւեայ օրհնեցէ՛ք զտէր ․ 19
երկիւղածք տ̃ն օրհնեցէ՛ք
զտէր ։
Օրհնեալ տէր 'ի սիովնէ ․ որ 20
բնակեալն է յերուսաղէմ ։

## ՍԱՂՄՈՍ․ ՃԼԵ։

Ալէլուիա ։

Խոստովան եղերուք տ̃ն ․ 1
զի բարի է ․ զի յաւի֊
տեան է ողորմութի̃ն ն̃ր ։
Խոստովան եղերուք ա̃յն 2
աստուծոց ․ զի յաւիտեան
է ողորմութիւն ն̃ր ։
Խոստովան եղերուք տ̃ն տե֊ 3
րանց ․ զի յաւիտեան է ո֊
ղորմութիւն ն̃ր ։
Արար զսքանչելիս մեծա֊ 4
մեծս միայն ․ զի յաւիտեան
է

է ողոր:
5 Զերկինս արար իմաստու-
թե̄ իւրով. զի յաւիտեան
է ողոր:
6 Հաստատեաց զերկիր ՚ի վե-
րայ ջուրց. զի յաւիտեան
է ողոր:
7 Արար զլուսաւորս մեծա-
մեծս միայն. զի յաւիտեան
է ողոր:
8 Զարեգակն արար իշխանա-
կան տուընջեան, զի յաւի-
տեան է ողոր:
9 Զլուսին և զաստեղս իշխա-
նական գիշերոյ. զի յաւի-
տեան է ողոր:
10 Եհար զերկիրն եգիպտաց-
ւոց անդրանկօք իւրովք հան-
դերձ. զի յաւ:
11 Եւ եհան զիսրայէլ ՚ի միջոյ
նր̄. զի յաւիտեան է ողոր:
12 ՚Ի ձեռն բարձր՝ և ՚ի բա-
զուկ հզօր. զի յաւիտեան
է

է ողոր։

Եհերձ զծովն մեծ, և բա- 13
ժանեաց յերկուս մասունս.
զի յաւիտ։

Եւ անցոյց զիսրայէլ ընդ 14
մէջ նր. զի յաւիտեան է
ողոր։

Ընկղմեաց զփարաւոն և զզ- 15
զօրս իւր 'ի ծով կարմիր.
զի յաւիտ։

Եւ եհան զժողովուրդ իւր 16
յանապատ. զի յաւիտեան
է ողոր։

Եհար զազգս մեծամեծս 17
միայն. զի յաւիտեան է
ողոր։

Եւ սպան զթագաւորս հզ- 18
զօրս. զի յաւիտեան է ողոր։

Զսեհովն թագաւոր ամովր- 19
րհացւոց. զի յաւիտեան է
ողորմութիւն նր։

Զովգ թագաւոր բասա- 20
նու. զի յաւիտեան է ողոր։

Եւ

21 Ետ զերկիր նց 'ի ժառան-
գութե. զի յաւիտեան է ողոր:
22 Ժառանգութիւն Իսրայէլի
ծառայի իւրոյ. զի յաւի-
տեան է ողոր:
23 Յիշեաց զմեզ տր 'ի խոնար-
հութե մերում. զի յաւի-
տեան է ողոր:
24 Եւ փրկեաց զմեզ 'ի ձեռաց
թշնամեաց մերոց. զի յաւի-
տեան է ողոր:
25 Որ տայ կերակուր ամ կեն-
դանեաց. զի յաւիտեան է
ողոր:
26 Խոստովան եղերուք այ երկ-
նաւորի. զի յաւիտեան է
ողորմութի նորա:

## ՍԱՂՄՈՍ. ՃԼԶ:

'Ի Դաւիթ. 'ի ձեռն Երեմիայի.
աննշան յեբրայեցւոյն:

1 Առ. գետս բաբելացւոց,
անդ նստաք և լացաք. որ-
պէս

ղէս յիշեցաք մեք անդ զ-
սիովն :
՚Ի մէջ ուռեաց նց՝ կախե- 2
ցաք զկտակարանս մեր :
Անդ հարցանէին գերիչք 3
մեր զբանս օրհնութե . դե-
րեվարք մեր ստիպէին զմեզ՝
և ասէին :
Օրհնեցէք մեզ յօրհնութե 4
սիովնի . իսկ զիա՞րդ օրհ-
նեսցուք զօրհնութիւնս տն՝
յերկիր օտար :
Թէ մոռացայց զքեզ երու- 5
սաղէմ . մոռասցի զիս աջ
իմ :
Կցեսցի լեզու իմ ՚ի քիմս 6
իմ, թէ ոչ յիշեցից զքեզ .
թէ ոչ նախ նուագեցից զ-
քեզ երուսաղէմ , սկիզբն
ուրախութե իմոյ :
Յիշեա տր զորդիսն եդով- 7
մայ՝ յաւուրն երուսաղէմի :
Ոյք ասէին՝ քակեցէք քա- 8
կե-

կեցէք, մինչեւ 'ի հիմն հա-
տուցէք:
9 Դուստր բաբելացւոց թշ-
ուառական. երանի որ հա-
տոյց զհատուցումն քո, զոր
դու մեզ հատուցեր:
10 Երանի որ կալաւ զման-
կունս քո, եւ եհար զքարի:

## ՍԱՂՄՈՍ. ՃԼԷ:

Սաղմոս 'ի դաւիթ:

1 Խոստովան եղէց քեզ տէր՝
բոլորով սրտիւ իմով. առա-
ջի հրեշտակաց սաղմոս ա-
սացից քեզ:
2 Զի լուար զբանս բերանոյ
իմոյ. երկիր պագից 'ի տա-
ճար սբ քո. եւ խոստովան
եղէց անուան քում վասն
ողորմութեան եւ ճշմարտութեան
քոյ:
3 Մեծ արարեր յամի զանուն
սբ քո. յորում աւուր կար-

գամ՝ առ քեզ, վաղվաղակի
լուր ինձ. և բազում արաս-
ցես զօրութիւն յանձն իմ:
Խոստովան եղիցին առ քեզ 4
ամենայն թագաւորք երկրի,
զի լուան զբանս բերանոյ
քո. և օրհնեսցեն զճանա-
պարհս քո:
Մեծ են փառք Տն. բարձր 5
է Տր. զխոնարհս տեսանէ,
և զբարձունս 'ի հեռաստա-
նէ ճանաչէ:
Թէ գնացից ես 'ի մէջ նե- 6
ղութեց, կեցուսցես զիս 'ի
բարկութէ թշնամւոյն:
Ձգեցեր զձեռն քո՝ և փրկ- 7
կեաց զիս աջ քո. և Տէր
հատուսցէ ընդ իմ:
Տր ողորմութի քո յաւիտեան. 8
զգործս ձեռաց քոց մի ան-
տես առներ:

# ՍԱՂՄՈՍ. ՃԼԸ:

'Ի կատարած. սաղմոս
'Ի Դաւիթ:

1 Տր̄ փորձեցեր զիս՝ և ծանեար զիս. դու ծանեար զնստել իմ, և զյառնել իմ:

2 'Ի մտի առեր զխորհուրդս իմ 'ի հեռաստանէ. զշաւիղս իմ և զվիճակս իմ դու քննեցեր, և զամ ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր. զի ոչ գոյ նենգութիւն 'ի լեզուի իմում:

3 Ահա դու տէր՝ ծանեար զյետին իմ, և զառաջին իմ. դու ստեղծեր զիս. և եդիր ըզձեռն քո 'ի վր̄ իմ:

4 Սքանչելի եղև գիտութիւն քո յինէն. և զօրացաւ, և ոչ հանդարտեմ նմա:

5 Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ.

մէ. կամ՝ յերեսաց քոց ես
յո՞ փախեայց:
Թէ ելանեմ յերկինս, դու 6
անդ ես. և թէ իջանեմ ՚ի
դժոխս, և անդր մօտ ես:
Թէ առնից զթևս իմ ընդ ա֊ 7
ռաւօտս, և բնակեցայց յե֊
զերս ծովու:
Սակայն և անդ ձեռն քո ա֊ 8
ռաջնորդեսցէ ինձ, և աջ
քո ընկալցի զիս:
Ասացի՝ խաւար ուրեմն ար֊ 9
գելօք ծածկեաց զիս, կա՛մ գի֊
շեր փոխանակ լուսոյ փափ֊
կութ̃ն իմոյ:
Խաւարն ՚ի քէն ոչ խաւա֊ 10
րեսցի. և գիշերն ոպ̃ տիւ
լուսաւոր եղիցի. և խաւար
նր̃ ոպ̃ զլոյս նր̃:
Դու ստացար զերիկամունս 11
իմ. և ընկալար զիս յորո֊
վայնէ մօր իմոյ:
Խոստովան եղէց քեզ տէր, 12
զի

զի ահեղ և սքանչելի ես.
սքանչելի են գործք քո, և
անձն իմ սիրեաց յոյժ։
13 Ո՛չ թագեաւ ոսկր իմ 'ի
քէն՝ զոր արարեր 'ի ծա֊
ծուկ. և կայր զօրութ՟ իմոյ
ը՟ ստորինս երկրի։
14 Զանգործս իմ տեսին աչք
քո. և 'ի գիրս քո ամենե֊
քեան գրեցան։
15 'Ի տուէ մոլորեցան. և ոչ
ո՛ք էր որ առաջնորդէր նց՟։
16 Ինձ յոյժ մեծարոյ եղեն՝ բա֊
րեկամք քո ած՟. և յոյժ զօ֊
րացան իշխանք նց՟։
17 Թուեցի զնս՟՝ և քան զա֊
ւազ բազմացան. զարթեայ՝
և արդ ընդ քեզ եմ։
18 Թէ սպանանես զմեղաւորս՝
ած՟. արք արեան 'ի բաց ե֊
ղերուք յինէն։
19 'Ի հակառակութիւն և 'ի
նախանձ, առցեն 'ի նանիր

զքաղաքս քո։
Զատելիս քո տէր՝ ատեցի, 20
և 'ի վերայ թշնամեաց քոց
մաշեցայ։
Ատելութիւն կատարեալ ա- 21
տեցի զնոսա, և եղեն ինձ
թշնամիք։
Փորձեա՛ զիս ած՝ և ծանիր 22
զսիրտ իմ, քննեա՛ զիս՝ և
ծանիր զշաւիղս իմ. և տես
թէ իցեն անօրէնութիւնք 'ի
ճանապարհս իմ. և առաջ-
նորդեա՛ ինձ 'ի ճանապարհս
քո յաւիտենից։

## ՍԱՂՄՈՍ. ՃԼԹ։

'Ի կատարած. սաղմոս 1
'ի դաւիթ։

Փրկեա՛ զիս տէր 'ի մար- 2
դոյ չարէ. յառնէ անիրաւէ
փրկեա՛ զիս։
Խորհեցան զանօրէնութիւն 3
'ի սիրտս իւրեանց. զօր ա-
մե-

մ՛նայն պատրաստեցան 'ի
պատերազմ ։
4 Արեգին զլեզուս իւրեանց
որպէս զօձի. և թոյնք ի-
ժից 'ի ներքոյ շրթանց նց ։
5 Պահեա զիս տէր 'ի ձեռաց
մեղաւորի, և 'ի մարդոյ չա-
րէ փրկեա զիս ։
6 Խորհեցան խափանել զգ-
նացս իմ. թագուցին ամ-
բարտաւանք որոգայթ ինձ ։
7 Լարս ձգեցին որոգայթ ո-
տից իմոց. շուրջ զշաւղօք
իմովք եդին ինձ գայթագ-
ղութիւն ։
8 Ասացի՝ տէր ած իմ ես դու.
ունկն դիր տէր՝ ձայնի աղօ-
թից իմոց ։
9 Տր տէր զօրութիւն փրկութե
իմոյ. հովանի գլխոյ իմոյ
յաւուր պատերազմի ։
10 Մի մատներ զիս տէր 'ի
ցանկութենէ մեղաւորաց,

որք

դք խորհեցան վն իմ. մի՛ ը՟
վայր հարկանէր զիս:
Զի մի՛ երբէք բարձրասցին, 11
և խորհուրդք նց մի՛ կատա-
րեսցին. վախճան կատարա-
ծի նոցա՝ վաստակ շրթանց
իւրեանց ծածկեսցէ զնս:
Արկցես 'ի վր նց կայծա- 12
կունս հրոյ, և կործանես-
ցես զնս. 'ի տառապանաց
մի՛ կարասցեն կեալ:
Մարդոյ լեզուանւոյ մի՛ յա- 13
ջողեսցի 'ի վր երկրի. զայր
մեղաւոր՝ չարիք իւր որսա-
ցեն 'ի կորուստ:
Ծանեայ, զի առնես տէր՝ 14
դատաստան աղքատի, և ի-
րաւունս տնանկի:
Արդարք գոհասցին զան- 15
ուանէ քումմէ. և բնակես-
ցեն ուղիղք առաջի երեսաց
քոց:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԽ։

## Սաղմոս Դ. դաւթի։

1 Տէր կարդացի առ քեզ՝ և
լո՛ւր ինձ, նայեա՛ ՚ի ձայն
աղօթից իմոց՝ ՚ի կարդալ
իմում առ քեզ։
2 Ուղի՛ղ եղիցի՛ն աղօթք իմ
ո՛րպ խունկ առաջի քո տէր.
համբարձումն ձեռաց իմոց՝
պատարագ երեկոյի։
3 Դի՛ր տէր՝ պահապան բերա-
նոյ իմոյ. և դուռն ամուր
շրթանց իմոց. զի մի՛ խոտո-
րեսցի սիրտ իմ բանիւ՛ չա-
րութեան։
4 Պատճառել զպատճառս մե-
ղաց ը̄ մարդս, որ գործեն
զանօրէնութիւն. և ո՛չ եղէց
կցորդ ընտրելեաց նց̄։
5 Խրատեսցէ զիս արդարն ո-
ղորմութ̄բ՝ և յանդիմանս ա-
րասցէ. իւղ մեղաւորի մի
օծցէ

օծցէ զգլուխ իմ, և աղօթք
իմ 'ի կամս նորա:
Արգելան մերձ առ վիմին 6
դատաւորք նոցա. լուիցեն
բանից իմոց՝ և քաղցրասցին:
Որպէս թանձրութիւն հողոյ, 7
զի սփռեալ է 'ի վր երկրի.
ցրուեցին ոսկերք նց մերձ
'ի դժոխս:
Առ քեզ տէր տէր՝ են աչք 8
իմ. 'ի քեզ յուսացայ, մի
հաներ զհոգի յիմէն:
Պահեա զիս յորոգայթէ՝ որ 9
թագուցաւ ինձ, 'ի գայ-
թագղութէ գործողին զա-
նօրէնութիւն:
Անկցին 'ի ցանցս նց մեղա- 10
ւորք, միայն եմ ես՝ մինչև
անցից:

# ՍԱՂՄՈՍ. ՃԽԱ:

1 Իմաստութիւն ի Դաւիթ. Աղօթք,
ի ժամանակին՝ ուր էր նա յայրին
անդ:

2 Ձայնիւ իմով ես առ Տէր
կարդացի. ձայնիւ իմով
զՏէր աղաչեցի:
3 Սփռեցից առաջի Տեառն
զաղօթս իմ, և զնեղութիւնս
իմ առաջի նր պատմեցից:
4 Ի նուաղել յինէն հոգւոյ
իմոյ, դու Տէր ծանեար զշա-
ւիղս իմ. ի ճանապարհ յոր
և գնայի, թաքուցին ինձ
որոգայթ:
5 Հայէի յաջմէ՝ տեսանէի, և
ոչ ոք ճանաչէր զիս. կո-
րեաւ յինէն փախուստ իմ.
և ոչ գոյր խնդրող անձին
իմոյ:
6 Աղաղակեցի առ քեզ Տէր՝
և ասացի, դու ես յոյս և բա-
ժին

ժին իմ յերկրին կենդանեաց:
Նայեա՛ տէր յաղօթս իմ, զի 7
ես խոնարհ եղէ յոյժ. ապա-
րեցո՛ զիս 'ի հալածչաց ի-
մոց, զի հզօր եղեն քան զիս:
Տէր հան 'ի բանտէ զանձն 8
իմ. գոհանամ զանուանէ
քումմէ:
Ինձ սպասեն արդարք՝ մին- 9
չև հատուսցես ինձ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԲ:

Սաղմոս 'ի Դաւիթ, 'ի ժամանա- 1
կի զի հալածէր զնա աբիսողոմ
որդի նորա:

Տէր լո՛ւր աղօթից իմոց. 2
ունկն դիր խնդրուա-
ծոց իմոց ճշմարտութբ̅ քով:
Լո՛ւր ինձ արդարութբ̅ քով, 3
և մի՛ մտաներ 'ի դատաս-
տան ընդ ծառայի քում. զի
ո՛չ արդարանայ առաջի քո
ամ̅ կենդանի:

4 Հալածեաց թշնամին զանձն
իմ, խոնարհ արար յերկիր
զկեանս իմ. նստոյց զիս 'ի
խաւարի ո՛պ մեռեալ յաւի-
տենից։
5 Ձանձրացաւ յիս հոգի իմ.
և սիրտ իմ խռովեցաւ յիս։
6 Յիշեցի զաւուրսն զառա-
ջինս. խորհեցայ յա՛մ գործս
քո. յարարածս ձեռաց քոց
խորհեցայ, և համբարձի առ
քեզ զձեռս իմ։
7 Անձն իմ ո՛պ երկիր ծարա-
ւի է առ քեզ. վաղվաղակի
լուր ինձ տէր, զի նուաղեաց
յինէն հոգի իմ։
8 Մի դարձուցաներ զերեսս
քո յինէն. նմանիցեմ այնո-
ցիկ, որ իջանեն 'ի գուբ։
9 Լսելի արա ինձ առաւօտու
զողորմութիւնս քո. զի ես
'ի քեզ տէր յուսացայ։
10 Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր
գնա-

գնացից. զի առ քեզ տէր
համբարձի զանձն իմ:
Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց 11
իմոց տէր. զի զքեզ ապա-
ւէն ինձ արարի:
Ուսո՛ ինձ առնել զկամս քո. 12
զի դու ես ած իմ:
Հոգի քո բարի՝ առաջնոր- 13
դեսցէ ինձ յերկիր ուղիղ:
Վասն անուան քո տէր՝ կե- 14
ցուսցես զիս, արդարութբ
քով հանցես 'ի նեղութենէ
զանձն իմ:
Ողորմութբ քով սատակես- 15
ցես զթշնամիս իմ. կորուս-
ցես զամ նեղիչս անձին ի-
մոյ, զի ես ծառայ քո եմ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԳ:

'Ի Դաւիթ. առ Գողիաթ:

Օրհնեալ տէր ած իմ. որ 1
ուսոյց զձեռս իմ 'ի պատե-
րազմ, և զմատունս իմ 'ի

Ճակատամարտ :

2 Ողորմութիւն իմ և ապաւէն
իմ, օգնական իմ և փրկիչ
իմ, ապաւէն իմ, և ես յու-
սամ 'ի նա :

3 Ո հնազանդ առնէ զժողո-
վուրդս ը̅ ինև. տէր՝ ո՞վ է
մարդ՝ զի յայտնեցար դու
նմա . կամ որդի մարդոյ՝
թէ համարիս ինչ զնա :

4 Մարդ նանրութ̅ նմանեցաւ .
և աւուրք նորա ո՛ղ̅ հովանի
անցին :

5 Տէր խոնարհեցո՛ զերկինս՝ և
էջ . մերձեա՛ 'ի լերինս՝ և
ծխեսցին :

6 Փայլատակեա՛ զփայլատա-
կունս քո, և խռովեա՛ զն̅ն .
առաքեա՛ զնետս քո՝ և ցըր-
ռւեա՛ զնոսա :

7 Առաքեա՛ զձեռն քո 'ի բար-
ձանց, և փրկեա՛ զիս 'ի ջուրց
բազմաց, և 'ի ձեռաց որդ-
ւոց

ւոց օտարաց ։
Որոց բերանք իւրեանց խօ- 8
սեցան զնանրութիւն․ և աջ
նց աջ է մեղաց ։
Ած յօրհնութիւն նոր օրհնե- 9
ցից զքեզ․ տասնաղեաւ սաղ-
մոսարանաւ սաղմոս ասա-
ցից քեզ ։
Ո՛ տայէ զփրկութիւն թա- 10
գաւորաց մերոց․ որ փրկե-
լոյն էյէ զԴաւիթ ծառայ
իւր ՚ի սրոյ չարէ ։
Փրկեա՛ զիս՝ և ապրեցո՛ զիս 11
՚ի ձեռաց որդւոց օտարաց ։
Որոց բերանք իւրեանց խօ- 12
սեցան զնանրութիւն․ և աջ
նոցա աջ է մեղաց ։
Որոց ուստերք իւրեանց ոպ 13
նորատունկ հաստատուն են
՚ի մանկութենէ իւրեանց․
դստերք նց զարդարեալ՝ և
պաճուճեալ՝ ՚ի նմանութիւն
տաճարի ։

Շտե-

14 Շտեմարանք ն̃ց լի են՝ և
բղխեն 'ի միմեանս. խաշինք
ն̃ց բազմածինք են՝ և բազմա-
նան 'ի գնացս իւրեանց. և
անդէայք ն̃ց պարարտք են:
15 Ո՛չ գոյ խրամատութիւն ցան-
կոյ ն̃ց. և ո՛չ աղաղակ 'ի
հրապարակս ն̃ց:
16 Արդ երանեցի՛ց ժողովըր-
դեան՝ որոց այս այսպէս է.
նա երանի ժողովրդեան, ո-
րոյ տէր է ն̃ց:

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԴ:

### Օրհնութեանց Սաղմոս 'ի դաւթի:

1 Բարձր առնեմ զքեզ ա̃ծ
իմ, և թագաւոր իմ. և
օրհնեմ զանուն քո յաւի-
տեան՝ և յաւիտեանս յաւի-
տենից:
2 Զօրհանապազ օրհնեցի՛ց ըզ-
քեզ. և գովեցից զանուն

քո, յաւիտեան և յաւի-
տեանս յաւիտենից:
Մեծ է տէր՝ և օրհնեալ է 3
յոյժ. և մեծութեան նորա ոչ
գոյ չափ:
Ազգք՝ և ազգք՝ գովեսցեն 4
զգործս քո. և զզօրութիւնս
քո պատմեսցեն:
Զմեծ վայելչութիւն փա- 5
ռաց սրբութեան քո խօսես-
ցին. և զսքանչելիս քո պատ-
մեսցեն:
Զզօրութիւն ահի քո ասաս- 6
ցեն. և զմեծութիւն քո պատ-
մեսցեն:
Զյիշատակ բազում քաղց- 7
րութեան քո բղխեսցեն. և ար-
դարութեամբ քո ցնծասցեն:
Գթած ողորմած է տէր, եր- 8
կայնամիտ և բազումողորմ:
Քաղցր է տէր առ ամենե- 9
սեան, և գթութիւն նորա ՚ի
վերայ ամենայն արարածոց
իւ-

իւրոյ :

10 Խոստովան եղիցին առ քեզ
տէր՝ ամենայն գործք քո. և
սրբք քո օրհնեսցեն զքեզ:

11 Զփառս արքայութեան քո ա-
սասցեն, և զզօրութիւնս քո
պատմեսցեն :

12 Ծանուցանել որդւոց մարդկան
զզօրութիւնս քո. և զփառս
մեծվայելչութեան արքայու-
թեան քո :

13 Արքայութիւն քո արքայութիւն
յա՜մ յաւիտենից. և տէրութիւն
քո ազգէ մինչև յազգ :

14 Հաւատարիմ է տէր յա՜մ 'ի
բանս իւր, և արդար է յա՜մ
'ի գործս իւր :

15 Հաստատէ տէր զա՜մ գայ-
թագղեալս. և կանգնէ զա՜մ
գլորեալս :

16 Աչք ամենեցուն 'ի քեզ յու-
սան, և դու տաս կերակուր
նց՜ա 'ի ժամու :

Տաս

Տաս դու ն՟ջ և կերակրին. 17
բանաս զձեռն քո, և լցու-
ցանես զամենեսեան քաղց-
րութ՟բ կամօք քով:
Արդար է տէր յա՟մ ճանա- 18
պարհս իւր. և ս՟ր է յա՟մ
'ի գործս իւր:
Մերձ է տ՟ր առ ամենեսեան, 19
որ կարդան առ նա. առ ա-
մենեսեան՝ որ կարդան առ
նա ճշմարտութ՟բ:
Զկամս երկիւղածաց իւրոց 20
առնէ տէր. աղօթից ն՟ջ լսէ՝
և կեցուցանէ զն՟ս:
Պահէ տէր զամենեսեան որք 21
սիրեն զնա, և զա՟մ մեղա-
ւորս սատակէ տէր:
Զօրհնութիւնս տեառն խօ- 22
սեսցի բերան իմ. օրհնեսցէ
ա՟մ կենդանի զանուն ս՟ր նո-
րա յաւիտեան, և յաւի-
տեանս յաւիտենից:

ՍԱՂ.

# ՍԱՂՄՈՍ. ՃԽԵ։

Ալէլուիա. Անգեայ և
Զաքարեայ։

1 Օրհնեա՛ անձն իմ զՏէր.
օրհնեցից զտ̄ր 'ի կեանս
իմ. սաղմոս ասացից ա̄յ ի-
մոյ՝ մինչև եմ ես։
2 Մի՛ յուսայք յիշխանս՝ յոր-
դիս մարդկան. զի ո՛չ գոյ
փրկութիւն 'ի նոսա։
3 Ելցէ հոգի 'ի նոցանէ՝ և
դարձցին անդրէն 'ի հող. և
յայնմ աւուր կորիցեն ա̄մ
խորհուրդք նց̄։
4 Երանի՛ ազգի՝ որում տէր
ա̄ծ յակոբայ օգնական է
նմա. և յոյս նր̄ 'ի տէր ա̄ծ է։
5 Որ արար զերկինս և զեր-
կիր, զծով՝ և զա̄մ որ է 'ի նս̄։
6 Ո պահէ զճշմարտութիւն
յաւիտեան. և առնէ իրա-
ւունս զրկելոց։

Տա՛յ

Տայ հաց քաղցելոց. և ար- 7
ձակէ զկապեալս տէր:
Տէր բանայ զաչս կուրաց. և 8
կանգնէ զգլորեալս տէր:
Տէր սիրէ զարդարս. տէր 9
պահէ զպանդուխտս. զորբս՝
և զայրիս ընդունի տէր. և
զճանապարհս ամբարշտաց
կորուսանէ:
Թագաւորեսցէ տէր յաւի- 10
տեան, ա՟ծ քո սիոն՝ ազգէ
մինչև յազգ:

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԶ:

Ալէլուիա. Անգեայ և
Զաքարեայ:

Օրհնեցէք զտէր՝ զի բարի 1
են սաղմոսք. ա՟յ մերում
քաղցր եղիցի օրհնութիւն:
Շինէ զերուսաղէմ տէր. և 2
զցրուեալսն իսրայէլի ժո-
ղովէ:
Բժշկէ զբեկեալ սիրտս, և 3
պա-

պատէ զամենայն վէրս նց ։
4 Որ թուէ զբազմութիւն աստե-
ղաց․ և զամենեսեան՝ զնոսա
յանուանէ կոչէ ։
5 Մեծ է տէր, և մեծ է զօ-
րութիւն նորա․ իմաստութե
նորա ո՛չ գոյ բաւ ։
6 Ընդունի զհեզս տէր․ և խո-
նարհ առնէ զամբարտաւանս
մինչև յերկիր ։
7 Օրհնեցէք զտէր խոստովա-
նուբ̄․ սաղմոս ասացէք նմա
օրհնութբ̄ ։
8 Որ զգեցոյց զերկինս ամպովք
պատրաստ արար զանձրև
իւր յերկիր ։
9 Բուսոյց զխոտ 'ի լերինս,
զդալար՝ 'ի ծառայութիւն
մարդկան ։
10 Որ տայ անասնոց կերակուր․
ձագուց ագռաւուց՝ որ կար-
դան առ նա ։
11 Ո՛չ թէ ընդ զօրութիւն ձիոյ
կա-

կամեցաւ տէր . և ոչ ընդ ի-
րանս առն սկայի հաճեցաւ :
Այլ հաճեցաւ տէր ը̄ եր- 12
կիւղածս իւր . և ընդ այնո-
սիկ՝ որք յուսան յողորմու-
թիւն նորա :

## ՍԱՂՄՈՍ. ՃԽԷ:

Ալէլուիա . անգեայ և
զաքարեայ :

Գովեա՛ երուսաղէմ զտէր : 1
Եւ օրհնեա՛ զա̄ծ քո սիովն : 2
Զի զօրացոյց զնիգս դրանց 3
քոց , և օրհնեաց զորդիս քո
՚ի քեզ :
Որ եդ զսահմանս քո ՚ի խա- 4
ղաղութիւն . պարարտութե̄
ցորենոյ լցոյց զքեզ :
Առաքէ զբան իւր յերկիր . 5
վաղվաղ ընթանան պատ-
գամք նորա :
Դնէ զձիւն որպէս զասր , և 6
զմէգ ոմ̄ փոշի ցանեաց :

Ամ-

7 Արկանէ զսառն որպէս պա_
տառս. առաջի ցրտոյ նորա
ո՞ կարէ կալ։
8 Առաքէ զբան իւր՝ և հալէ
զնոսա. շնչեսցէ հողմ՝ և
գնասցեն ջուրք։
9 Պատմէ զբան իւր յակոբայ,
զարդարութիւն և զիրաւունս
իսրայէլի։
10 Ո՛չ այսպէս արար ամ ազգաց
տէր. և զդատաստանս իւր
ո՛չ յայտնեաց նց։

## ԱՂՕԹՔ

Ամբակումայ մարգարէի։

1 Տէր զլուր քո լուայ՝ և եր_
կեայ. տէր՝ հայեցայ 'ի
գործս քո և զարհուրեցայ։
2 'Ի մէջ երկուց կենդանեաց
ծանիցիս դու, 'ի մերձենալ
ամացն յայտնեսցիս, 'ի հա_
սա_

սանել ժամանակին երևես_
ցիս :
'Ի խռովել անձին իմոյ՝ 'ի 3
ժամանակի բարկութե՛, զո_
ղորմութիւն յիշեսցես :
Ա՟ծ 'ի հարաւոյ եկեսցէ, և 4
սուրբն 'ի փառան լեռնէ :
Յայտնեսցեն երկինք զվայ_ 5
ելչութի՛ փառաց նր՟ . և օրհ_
նութիւ՟ նր՟ լցան տիեզերք :
Ծառագայթք ոտ՟ զլոյս հա_ 6
տան 'ի նմանէ . և եղջիւրք
'ի ձեռին նորա դտան . և
անդ հաստատեցաւ զօրուն
փառաց նորա :
Յերեսաց նորա ելցեն հար_ 7
ուածք . և զհետ շաւղաց նր՟
երթիցեն մեծամեծք 'ի թռչ_
նոց :
Եկաց՝ և չափեաց զերկիր . 8
հայեցաւ և գիտեաց զհե_
թանոսս :
Լերինք հալեցին, և ան_ 9
տառք

տառք վառնեայցին · յուխաէ֊
նից Ճանապարհք՝ որ 'ի սկըզ֊
բանէ էին, կուրացին · և 'ի
նմանէ դողացի ա՛մ երկիր ։
10 Տեսի զբանակս քուշչացուոց ·
խռովեցան բնակիչք վրա֊
նացն մադիամու ։
11 Միթէ 'ի վր̅ գետոց բար֊
կացիս դու տէր · կամ սրտմը֊
տութն քո 'ի վր̅ գետոց · կամ
բարկութն քո 'ի վր̅ ծովու ։
12 Ելեր դու 'ի կառս քո · հե֊
ծելութիւն քո փրկութիւն
եղև յելանելդ քո ։
13 Զարթեաւ աղեղն քո · զնետս
կապարճից քոց արբուցեր,
զգետս ցրուեցեր · զերկիր
դողացուցեր՝ 'ի սաստկուէ
անձրևի, որ անցանէին ը̅ սա ։
14 Անդունդք աղաղակեցին մե֊
ծապէս · լոյս փայլումն ա֊
րեգական արդելաւ, և ծա֊
գումն լուսնին դադարեաց ։
Որ֊

Որպէս 'ի նշոյլս սլաքաց քոց 15
գնասցես, ո̄ղ 'ի լոյս փայ-
լատակման սրոյ քոյ ։
Բարկութ̄ զարթիցես 'ի վր̄ 16
երկրի. և դողութ̄ կասցես
զհեթանոսս ։
Երևեցար 'ի փրկութիւն ժո- 17
ղովրդեան քո, 'ի փրկել
զընտրեալս քո ։
Նետաձիգ եղեր 'ի գլուխս 18
մարդկան ամբարտաւանից.
մինչև յանդունդս ծովու ըն-
կղմեցան ։
Խնդրեցեր զվրէժ զօրութ̄ 19
քոյ՝ 'ի զօրագլխացն մեղա-
ւորաց, որք յուսացեալ էին
յանդգնունս իւրեանց. զի
կերան զաղքատն 'ի գաղտ-
նիս ։
Առաքեցեր 'ի վերայ ծովու 20
զերիվարս քո, խռովեցան
յաղթ ջուրք անդնդոց ։
Կացի ես՝ և գելան աղէք իմ 21
'ի

'ի ձայնէ բերանոյ իմոյ. ե-
մուտ գողումն յոսկերս իմ,
եւ ես յանձն իմ խռովեցայ:
22 Զայս պահեսցես յաւուրն նե-
ղութեան. ածել 'ի վ̃ր ազգի,
որ մարտնչին ընդ ժողովր-
դեան քում:
23 Թզենին ոչ տացէ պտուղ
իւր, եւ յայգւոյ բեր մի
գտցի. ձիթենիք ստասցին,
եւ երկիր մի բուսուսցէ ըզ-
դալարի:
24 Պակասեսցին հօտք 'ի ճա-
րակաց. եւ եզինք մի գտցին
առ մսուրս:
25 Ես 'ի տէր յուսացայ. ցնծա-
ցայց՝ եւ ուրախ եղէց յա̃ծ
փրկիչ իմ:
26 Տ̃ր տ̃ր եւ ինձ զօրութիւն,
եւ կացոյց զոտս իմ 'ի հաս-
տատութեան. 'ի վ̃ր պարա-
նոցի թշնամւոյն կացոյց զիս
եւ հանդոյց զիս երագ երագ:

ՄԱՂ-

# ՄԱՂԹԱՆՔ։

Լուր մեզ տէր լուր մեզ, ամենայն ողորմութիւն և գթութիւն քո խնայեա յարարածս քո ։

Մարդա'' ։

Զէարողն և պաղօնս 'ի Վերին Ո-ղորմեաց չանանին գպշէս 'ի 233. Երեւան ։

# ՍԱՂՄՈՍ. ՃԽԸ.

Ալէլուիա . անգէայ և զաքարեայ :

1 Օրհնեցէք զտէր յերկնից. օրհնեցէք զնա 'ի բար-
ձանց :
2 Օրհնեցէք զնա ամ հրեշ-
տակք նր . օրհնեցէք զնա
ամ զօրութիւնք նորա :
3 Օրհնեցէք զնա արեգակն և
լուսին . օրհնեցէք զնա ամ
աստեղք և լոյսք :
4 Օրհնեցէք զնա երկինք երկ-
նից . ջուրք որ 'ի վերոյ քան
զերկինս , օրհնեցէք զանուն
տեառն :
5 Զի նա ասաց՝ և եղեն , հրա-
մայեաց՝ և հաստատեցան :
6 Կացոյց զնոսա յաւիտեանս
յաւիտենից . սահման եդ՝
և ոչ անցանեն :

Օրհ

Օրհնեցէք զտէր յերկրէ՝ վի- 7
շապք և ամ խորք։
Հուր և կարկուտ՝ ձիւն և 8
սառն՝ հողմ և մրրիկ, որ
առնէք զբան նր։
Լերինք՝ և ամ բարձունք՝ 9
ծառք պտղաբերք՝ և ամ
մայրք։
Գազանք՝ և ամ անասունք. 10
սողունք, և ամ թռչունք
թևաւորք։
Թագաւորք երկրի և զօրք 11
խուժանց. իշխանք և ամ դա-
տաւորք երկրի։
Երիտասարդք և կուսանք, 12
ծերք և տղայք՝ օրհնեցէք
զանուն տն։
Բարձրացաւ անուն նր մի- 13
այն. խոստովանութիւն նմա
յերկինս և յերկրի։
Բարձր առնէ տէր զեղջիւր 14
ժողովրդեան իւրոյ. օրհ-
նութի յամ սրբոց նր. յորդ-
ւոցն

ւոյն իսրայէլի ժողովուրդ՝
որ մերձ է առ տէր։

# ՍԱՂՄՈՍ. ՃԽԹ.

Ալէլուիա. անգէայ և
զաքարեայ։

1 Օրհնեցէք զտէր յօրհնու-
թիւն 'ի նոր. օրհնութիւն
նմա յեկեղեցիս սրբոց։
2 Ուրախ եղիցի իսրայէլ յարա-
րիչ իւր. որդիք սիօնի ցըն-
ծասցեն 'ի թագաւորն իւ-
րեանց։
3 Օրհնեսցեն զանուն նորա
օրհնութբ. սաղմոսիւք և
օրհնութբ սաղմոս ասաս-
ցեն նմա։
4 Հաճի տէր ընդ ժողովուրդ-
ս իւր. և բարձր առնէ
զհեզս 'ի փրկութն։
5 Պարծեսցին սրբն փառօք՝ և
ցնծասցեն 'ի հանգիստս իւ-
րեանց. և բարձր արասցեն

զա̃ծ բերանոք խուրեանց ։
Սուր երկսայրի ետ 'ի ձեռս 6
նց̃ , առնուլ հատուցումն 'ի ,
հեթանոսաց , յանդիմանու-
թիւն ա̃մ ժողովրդոց ։
'Ի կապել զթագաւորս նց̃ 7
կապանօք ․ զզօրավարս նց̃
ձեռնակապօք երկաթեօք ։
Առնել նց̃ դատաստանս 'ի 8
գրոց ․ փառք այս են ա̃մ սր-
բոց նորա ։

## ՍԱՂՄՈՍ․ ՃԾ ։

Ալէլուիա ․ անգէայ և
զաքարիայ ։

Օրհնեցէք զա̃ծ 'ի սրբու- 1
թեան նր̃ ․ օրհնեցէք զնա 'ի
հաստատուե̃ 'ի զօրուե̃ նր̃ ։
Օրհնեցէք զնա 'ի զօրութե̃ 2
նր̃ ․ օրհնեցէք զնա 'ի բա-
զում մեծութե̃ նր̃ ։
Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհ- 3
նութեան ․ օրհնեցէք զնա
սաղ-

սաղմոսիւք և օրհնութ̄բ:
4 Օրհնեցէք զնա ցնծութ̄բ,
գովեցէք զնա ուրախութ̄բ:
5 Օրհնեցէք զնա 'ի բանս
քաղցր. գովեցէք զնա 'ի
բարբառ լսելի:
6 Օրհնեցէք զնա 'ի ձայն գո-
հութ̄ն. ամ̄ հոգիք օրհնե-
ցէք զտէր:

Այս սաղմոս ինքնագիր Դաւ-
թի արտաքոյ թուոյ: 'Ի ժամա-
նակին որ եւ նա նահատակէր ընդ-
դէմ Գողիաթու, առաջի Սա-
ւուղայ, և ամ̄ զօրացն Իսրայէլի:

1 Փոքր էի ես յեղբարս իմ,
և կրտսեր 'ի տան հօր
իմոյ. արածէի զխաշինս հօր
իմոյ:
2 Ձեռք իմ արարին սաղմո-
սարան. և մատունք իմ կազ-
մեցին գործի օրհնութ̄ն:

Իսկ արդ՝ ո՞ պատմեսցէ զայս 3
տ̃ն իմում. Ի՛նքնին տէր տ̃մի
լու՛իցէ զ̃մ:
Եւ առաքեաց տ̃ր զհրեշտակ 4
իւր. և համբարձ զիս 'ի
հօտէ խաշանց հօր իմոյ. և
օծ զիս յօծումն իւղոյ իւրոյ:
Եղբարք իմ մեծամեծք և գե- 5
ղեցիկք. և ո՛չ հաճեցաւ ը̃
նոսա տէր:
Ելի ես ը̃ առաջ այլազգ- 6
ւոյն, և նզովեցի զկուռս
նորա:
Հանի զսուսերն 'ի նմանէ, 7
և հատի զգլուխ նորին. և
բարձի զնախատինս յորդ-
ւոցն Իսրայէլի:

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Երից մանկանց։

Դանիէլի . Գ։

ՕՐՀՆԵԱԼ ԵՍ ՏԷՐ ա͞ծ հարցն մերոց . օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան ։

Յիրաւունս անցուցեր զայս ա͞մ ընդ մեզ . արդար ես դու տէր , և ամենայն գործք քո ճշմարիտ են ։

Ճանապարհք քո ուղիղ են , և ա͞մ դատաստանք քո արդար են ։

Դատաստան արդարութեան ածեր 'ի վ͞ր մեր . զ͞ի ա͞մի զոր ինչ ածեր 'ի վերայ մեր , և քաղաքի սրբոյ հարցն մերոց Երուսաղէմի ։

Արդարութ͞ե և յիրաւի ածեր զայս

զայս ած ’ի վերայ մեր՝ վասն
մեղաց մերոց ։

Անօրինեցաք՝ և յանցեաք ա-
պստամբ լինել ’ի քէն. մեղաք
յամի՝ և պատուիրանաց քոց
մեք ոչ անսացաք ։

Ոչ պահեցաք և ոչ արարաք՝
ոպ պատուիրեցեր դու մեզ,
զի բարիս գտցուք մեք ’ի քէն ։

Արդ՝ զամ զոր արարեր՝ և
զոր ինչ ածեր ’ի վր մեր, ար-
դար դատաստանաւ արարեր ։

Մատնեցեր զմեզ ’ի ձեռս թշ-
նամեաց մերոց . անօրինաց՝
խստաց և ապստամբողաց ։

’Ի ձեռս թագաւորի անօրինի
և չարի քան զամ երկիր, մատ-
նեցեր զմեզ ։

Եւ արդ՝ ոչ գոյ մեզ ժամ բա-
նալ զբերանս մեր. զի ամօթ
և նախատինք եղաք ծառայից
քոց պաշտօնէից ։

Այլ մի մատներ զմեզ իսպառ՝

վ՟ն անուան քո. մի՛ ցրեր զուխ-
տըս քո. և մի՛ 'ի բացեայ առ-
ներ զողորմութիւնս քո 'ի մէնջ:
Վ՟ն աբրահամու սիրելւոյ քո,
իսահակայ ծառայի քո, և Իս-
րայէլի սրբոյ քո:

Խոստացար նոցա՝ և ասացեր,
բազմացուցից զզաւակ ձեր որ-
պէս զաստեղս երկնից բազ-
մութե՟. և որպէս զաւազ առ-
եզր ծովու:

Եւ արդ տէր՝ նուաղեցաք մէք
քան զա՟մ ազգս. և եմք տառա-
պեալ յա՟մ երկրի այսօր՝ վասն
մեղաց մերոց:

Ո՛չ գոյ 'ի ժամանակի յայսմիկ՝
իշխան մարգարէ և առաջնորդ.
ո՛չ ողջակէզ պատարագաց, ո՛չ
խունկ օրինաց, և ո՛չ տեղի
պատարագս մատուցանելոյ ա-
ռաջի քո. և զողորմութե՟ն գտա-
նել 'ի քէն:

Այլ անձամբ խոնարհեալ՝ և

հոգ-

հոգւով տառապանաց, ընդու-
նելի լիցուք մեք ո͞պ զողջակէզս
խոյոց և զուարակաց, և որպէս
բիւրաւորս գառանց պարար-
տաց:

Այնպէս ընդունելի լիցին
պատարագ մեր այսօր առաջի
քո, զի կատարեալ գոյցուք
զկնի քո. և չիք ամօթ յուսա-
ցելոցս 'ի քեզ:

Եւ արդ՝ գամք զհետ քո ա͞մ
սրտիւք մերովք, երկնչիմք 'ի
քէն, և խնդրեմք զերեսս քո.
տէր մի յամօթ առներ զմեզ:
Այլ արա ընդ մեզ ը͞ս հեզուե͞
քում, և ըստ բազում ողոր-
մութե͞ քում. փրկեա զմեզ ը͞ս
սքանչելեաց քոց. և փառաւո-
րեսցի անուն քո յաւիտեան:
Յամօթ լիցին ամենեքեան, որ
չարչարեն զծառայս քո. ամա-
չեցեալ լիցին բռնութիք ն͞ց,
և ա͞մ զօրութիւք նոցա խորտա-

կես-

կեացին ։

Եւ ծանիցեն՝ զի դու ես տէր ա՟ծ միայն, որ փառաւորեալդ ես 'ի վ՟ր ա՟մ տիեզերաց ։

Օրհնեալ ես դու տէր ա՟ծ հարցն մերոց․ գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Եւ օրհնեալ է անուն ս՟ր փառաց քոց․ գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան ։

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբութե՟ քո․ գովեալ ։

Օրհնեալ ես 'ի վերայ աթոռոյ արքայութե՟ քո․ գովեալ ։

Օրհնեալ ես՝ որ նստիս 'ի քրովբէս՝ և հայիս յանդունդս․ գովեալ ։

Օրհնեալ ես 'ի վերայ հաստատութե՟ երկնից․ գովեալ ։

Օրհնեցէք ա՟մ գործք տ՟ն զ՟տր․ օրհնեցէք և բարձր արարէք

զնա

զնա յաւիտեան։
Օրհնեցէք երկինք զտէր. օրհ-
նեցէք և բարձր արարէք։
Օրհնեցէք հրեշտակք տեառն.
ջուրք որ ՚ի վերոյ երկնից զՏ՟ր.
օրհնե։
Օրհնեցէք զօրութիւնք տ՟ն. ա-
րեգակն և լուսին զՏ՟ր օրհնե։
Օրհնեցէք աստեղք երկնից՝
անձրևք և ցօղք զՏ՟ր. օրհնե։
Օրհնեցէք ա՟մ հողմք հուր և
ջեր զտէր. օրհնե։
Օրհնեցէք ցուրտ և տօթ, ցօղ
և ձիւնաբեր զտէր. օրհ։
Օրհնեցէք սառն և պաղ, ե-
ղեամն և ձիւն զտէր. օրհ։
Օրհնեցէք տիւք և գիշերք,
լոյս և խաւար զտէր. օրհ։
Օրհնեցէք ամպք և փայլատա-
կունք՝ և երկիր զտէր. օրհ։
Օրհնեցէք լերինք և բլուրք
և ամենայն բոյսք երկրի զտէր
օրհ։

Օրհ-

Օրհնեցէք աղբիւրք ծովք և գետք զտէր. օրհ։

Օրհնեցէք կէտք և ամ կայտառք, որ 'ի ջուրս, և թռչունք երկնից զտէր. օրհ։

Օրհնեցէք գազանք և անասունք, և որդիք մարդկան զտէր. օրհ։

Օրհնեսցէ իսրայէլ զտէր. օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեան։

Օրհնեցէք քահանայք զտէր. օրհնեցէք և բար։

Օրհնեցէք ծառայք տն զտէր. օրհնեցէք և բար։

Օրհնեցէք անձինք, և շունչք արդարոց զտէր. օրհնե։

Օրհնեցէք սբք՝ և խոնարհք սրտիւք զտէր. օրհնե։

Օրհնեցէք անանիա ազարիա և միսայէլ զտէր. օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

## Մարիամու ա̃ծածնի։

### Ղուկ. ա̃։

Մեծացուսցէ անձն իմ զտէր. և ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով։
Այց արար 'ի վերայ խոնարհութե̃ աղախնոյ իւրոյ. այսուհետև երանեսցեն ինձ ա̃մ ազգք։
Արար ընդ իս մեծամեծս Հզօրն. և ս̃բ է անուն նորա։
Ողորմութի̃ արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց. արար զօրութիւն բազկաւ իւրով։
Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց։
Զխոնարհս բարձրացոյց, զկա-

րօտս

տս ելից բարութե. և զմե_
ծատունս արձակեաց ունայնս:
Պաշտպանեաց իսրայէլի ծա_
ռայի իւրոյ, յիշելով զողոր_
մութիւն իւր:
Որպէս խօսեցաւ առ հարսն
մեր, ընդ աբրահամու, և զա_
ւակի նորա յաւիտեան:

Օրհնութիւն զաքարիայ հօրն յոհան_
նու Մկրտչի: Ղուկ. Ա:

Օրհնեալ տէր ած իսրայէլի,
որ յայց ել. և արար փրկու_
թիւն ժողովրդեան իւրոյ:
Յարոյց մեզ եղջիւր փրկութե
՚ի տանէ դաւթի ծառայի իւ_
րոյ. որպէս խօսեցաւ բերա_
նովք սրբոցն՝ որ յաւիտենից
մարգարէքն էին:
Փրկութիւն ՚ի թշնամեաց մե_
րոց, և ՚ի ձեռաց ամ ատելեաց
մերոց:
Առնել ողորմութի առ հարսն
մեր,

մեր , և յիշել զկտակարանս
սրբութեան իւրոյ :
Երդումն՝ զոր երդուաւ առ-
բրահամու հօր մերոյ . տալ մեզ
առանց երկիւղի զփրկութիւն
'ի թշնամեաց մերոց :
Պաշտել զնա սրբութ̅բ և ար-
դարութ̅բ առաջի Նորա , զա-
մենայն աւուրս կենաց մերոց :
Եւ դու մանուկ՝ մարգարէ
բարձրելոյն կոչեսցիր . գնաս-
ցես առաջի ա̅ն՝ պատրաստել
զճանապարհս Նորա :
Տալ զգիտութիւն փրկու̅ե ժո-
ղովրդեան իւրոյ . 'ի թողու-
թիւն ամենայն մեղաց մերոց :
Վասն գթոյ ողորմութ̅եց ա̅ն
ա̅յ մերոյ , որով երևեցաւ մեզ
արեգակն 'ի բարձանց , լուսա-
ւոր առնել զխաւար մեր :
Ծագել լոյս 'ի վերայ այնո-
ցիկ , որ նստէաք 'ի խաւարի ,
և 'ի ստուերս մահու . ուղղել
զոտս

զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան։

## Աղօթք Սիմէովնի ծերունւոյն։
## Ղուկ. Բ։

Արդ արձակես զծառայս քո Տէր՝ ըստ բանի քում ՚ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց։
Լոյս յայտնեցար հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայէլի։

# ԱՂՕԹՔ
## Մանասէի Թագաւորին ։

Տէր ամենակալ ա̄ծ աբրահա-
մու իսահակայ յակոբայ՝
և զաւակի նց̄ արդարոց. ամե-
նակալ տէր՝ թող զմեղս իմ։
Որ արարեր զերկինս՝ և զեր-
կիր, և զա̄մ զարդ նոցա. ա-
մենակալ տէր ։
Որ կապեցեր զծով բանիւ հրա-
մանաւ քո. փակեցեր զխորս,
կնքեցեր ահաւոր և փառաւո-
րեալ անուամբ քով. ամե ։
Որ ամենայն ինչ սարսէ և դո-
ղայ յերեսաց ահի զօրութեան
քո. ամենակալ տէր ։
Անբաւ է մեծվայելչութիւն
փառաց սրբութե̄ քո. սաստիկ
է բարկութի սպառնալեաց քոց

'ի

'ի վերայ մեղաւորաց. անչափ
և անքննելին են ողորմութիւնք
աւետեաց քոց. ամենակալ:

Դու տէր բարձրեալ՝ գթած,
երկայնամիտ, բազումողորմ.
և զղջանաս 'ի վերայ չարեաց
մարդկան. ամենակալ:

Դու տծ՝ ոչ եդիր ապաշխարութիւն վասն արդարոցն՝ աբրահամու իսահակայ և յակովբայ, որ ոչ մեղան քեզ. ամե:

Այլ եդիր ապաշխարութիւն վասն իմ մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, և բազմացան անօրէնութիւնք իմ. ամենակալ:

Չեմ արժանի հայել՝ և տեսանել զբարձրութիս երկնից, 'ի բազմութէ անօրէնութեան իմոյ. ամենակալ:

Կորացեալ եմ ես 'ի բռնութէ կապանաց երկաթեաց. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամե:

Բարկացուցի զողորմութիւն,
և չար առաջի քո արարի.
կանգնեցի պատկեր՝ և բազմա-
ցուցի զցասումն. ամենակալ:
Եւ արդ տէր՝ խոնարհեցուցա-
նեմ զծունր սրտի իմոյ, և
խնդրեմ 'ի քաղցրութ՟է քում-
մէ. ամենակալ:
Մեղայ՝ տէր մեղայ, և զանօ-
րէնութիւնս իմ ես ինձէն գի-
տեմ. ամենակալ:
Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝
թող ինձ տէր, թող ինձ. և մի
կորուսաներ զիս ընդ անօրէ-
նութ՟ե իմոյ. ամենակալ:
Մի յաւիտեան բարկանար ինձ տ՟ր,
և մի յիշեր զչարիս իմ. և մի
պարտաւորեր զիս ը՟ իջեալսն
'ի ներքոյ երկրի չարեօք. ամե:
Զի դու ա՟ծ՝ ա՟ծ ապաշխարո-
ղաց ես. և յիս ցոյց զբարե-
րարութիւնս քո, որ անարժան
եմ. ամենակալ:

Կե-

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութե՛ն քում. և օրհնեցից զքեզ զամենայն աւուրս կենաց իմոց . ամենակալ:

Զքեզ տէր՝ օրհնեն ա̃մ զուարթունք երկնից . և քո են փառք յաւիտեանս՝ ամէն:

Փառք հօր, և որդւոյ: Այժմ և միշտ և:

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն տ̃ր, թո՛ղ ինձ զմեղս իմ:

Բազումողորմ տէր, ողորմեա՛ ինձ:

Ա̃ծ՝ քաւեա՛ զիս զմեղաւորս 'ի մեղաց, և կեցո՛:

Արարիչ իմ և յոյս ա̃ծ, գթա՛ յիս 'ի մեղուցեալ ծառայս . և ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Ամենօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս ա̃ծածին մարիամ. բարեխօսեա՛ առ տէր վասն իմ մեղաւորիս:

Ամենայն սուրբք ա̃յ՝ բարեխօ-

սե-

ունիցէք առ Հայր 'ի յերկինս վ՟ն մեր մեղաւորացս ։

Ք՟ն որդի ա՟յ անոխակալ, ընկալ զաղաչանս մեր. զի 'ի քեզ են ապաւինեալ անձինք մեր ։

Յաղթօղ զօրութե՟՝ սուրբ և կենդանարար և պատուական խաչին քո տէր պահպանեա զմեզ ։

Առաքեա տէր զհրեշտակ խաղաղութե՟ քո. որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տան և 'ի գիշերի ։

Եւ մարդասիրութե՟ քո յիշեա զմեզ տ՟ր՝ յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութե՟ քո, և ողորմեա մեզ ։

Աւ

# ԱՂՕԹՔ

Իւրաքանչիւր անձին հաւատացելոց 'ի զբերանոյ ։

Զոր արարեալ է սբ̃յ տ̃ն Ներսեսի հայոց կաթողիկոսի ։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ, Հայր և Որդի՝ և Սուրբ Հոգի․ անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց․ ողորմեա քո արարածոց, և ինձ բազմամեղիս ։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական ս̃ր Երրորդութիւն և մի ա̃ծութիւն, արարիչ լուսոյ՝ և հալածիչ խա-

խաւարի. հալածեա՛մ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց՝ և զանդիտութեան. և լուսաւորեա՛մ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ 'ի հաճոյս, և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա՛մ ինձ բազմամեղիս:

Հա՛յր երկնաւոր ա̅ծ ճշմարիտ, որ առաքեցեր զորդին քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկա՛լ զիս ո̅պ զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. և ողորմեա՛ քո արարածոց, և ինձ բազմամեղիս:

Որդի՛ ա̅յ ա̅ծ ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն մարիամայ, վ̅ն մերոյ փրկութե̅. խաչեցար՝ և թաղեցար՝

ցար՝ և յարեար՝ 'ի մեռելոց՝ և
համբարձար առ Հայր. մեղայ
յերկինս և առաջի քո. յիշեա
զիս որպէս զաւազակն յորժամ
գաս արքայութբ̃ քով. և ողոր-
մեա:

Հոգի̃ այ̃ ած̃ ճշմարիտ, որ ի-
ջեր 'ի յորդանան և 'ի վերնա-
տունն, և լուսաւորեցեր զիս
մկրտութբ̃ նր̃ աւազանին. մե-
ղայ յերկինս և առաջի քո. մաք-
րեա զիս վերստին ածային
հրով քո՝ ոպ̃ հրեղէն լեզուօք
զառաքեալսն. և ողորմեա:

Անեղ բնութիւն, մեղայ քեզ
միօք իմովք, հոգւով և մարմ-
նով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ
զառաջինս՝ վս̃ անուանդ քում
սրբոյ. և ողորմեա:

Տեսօղ ամի̃, մեղայ քեզ խորհր-
դով բանիւ և գործով. ջնջեա
զձեռագիր յանցանաց իմոց, և
գրեա զանուն իմ 'ի դպրութե̃

կենաց. և ողորմեա՛:

Քննօղ դատաւորաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութ՟բ և անգիտութ՟բ. թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս. զի ՚ի ծննդենէ աւազանին մինչև ցայս֊օր՝ մեղուցեալ եմ առաջի ած֊ութե՟դ քո զգայարանօք իմովք, և ամենայն անդամովք մարմ֊նոյս, և ողորմեա՛:

Ամենախնամ Տէր, դիր պահա֊պան աչաց իմոց զերկիւղ քո ն՟ք՝ ոչ ևս հայել յարատ, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութ՟ն, և բե֊րանոյ իմոյ՝ ոչ խօսել զստու֊թի, և սրտի իմոյ ոչ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ ՚ի ճա֊նապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լի֊նել ըստ պատուիրանաց քոց

յա֊

յամենայնի. և ողորմեա՛:

Հո՛ւր կենդանի քս̅, զհուր սիրոյ քո՝ զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ. և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո 'ի սրտի իմում. և ողորմեա՛:

Իմաստութիւն հօր յս̅. տո՛ւր ինձ իմաստութիւն զբարիս խորհել՝ և խօսել՝ և գործել առաջի քո յամենայն ժամ. 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեա՛:

Կամեցող բարեաց տէր կամարար, մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա՛:

Արքա՛յ երկնաւոր, տո՛ւր ինձ

զար-

զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և տանել զկամս քո. և ողորմեա՛:

Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ 'նշանաւ խաչի քո՝ զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձութեանց դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց. և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմեա՛:

Պահապա՛ն ամենեցուն, աջ քո հովանի լիցի 'ի վերայ իմ, 'ի տուէ և 'ի գիշերի՝ 'ի նստել 'ի տան՝ և 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել. զի մի երբէք սասանեցայց. և ողորմեա՛:

Աստուա՛ծ իմ, որ բանաս զձեռն քո. և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ

և

և մարմնոյ իմոյ՝ յայսմ հետէ
մինչև յաւիտեան. և ողորմեա՛:
Գթարձուցիչ մոլորելոց, դար-
ձո՛ զիս 'ի չար սովորութենէ ի-
մոց 'ի բարի սովորութիւն. և
ընդունեա՛ յոգի իմ զսոսկալի օր
մահուան, և զերկիւղ գեհենին,
և զսէր արքայութեն. զի զղջա-
ցայց 'ի մեղաց, և գործեցից
զարդարութիւն. և ողորմեա՛:
Աղբիւր անմահութեն, աղբե-
րացո՛ 'ի սրտէ իմմէ զարտա-
սուս ապաշխարութեն՝ որպէս
պոռնկին. զի լուացից զմեղս
անձին իմոյ՝ յառաջ քան զելա-
նելն իմ յաշխարհէս. և ողոր-
մեա՛:
Պարգևիչ ողորմութեն, պար-
գևեա՛ ինձ ուղղափառ հաւա-
տով և բարի գործով. և ընդ
մարմնոյ և արեան քո հաղոր-
դութեն գալ առ քեզ. և ողոր-
մեա՛:

Բա-

Բարերա՛ր Տր̄, հրեշտակի բար-
ւոյ յանձն արասցես զիս, քաղց-
րութբ̄ աւանդել զհոգի իմ,
և անխռով անցուցանել ընդ-
չարութիւն այսոցն, որ են 'ի
ներքոյ երկնից. և ողորմեա:
Լո՛յս Ճշմարիտ Քս̄, արժանա-
ւորեա զհոգի իմ ուրախութբ̄
տեսանել զլոյս փառաց քոց 'ի
կոչման աւուրն, և հանգչել
յուսով բարեաց յօթևանս ար-
դարոց՝ մինչև յօր մեծի գալը-
տեան քո. և ողորմեա:
Դատաւո՛ր արդար, յորժամ
գաս փառօք հօր դատել զկեն-
դանիս և զմեռեալս, մի մտա-
ներ 'ի դատաստան ընդ ծա-
ռայիս քո, այլ փրկեա զիս 'ի
յաւիտենական հրոյն, և լսե-
լի արա ինձ զերանաւէտ կո-
չումն արդարոց՝ յերկնից ար-
քայութիւնդ. և ողորմեա:
Ամենողո՛րմ Տէր՝ ողորմեա ամ̄

հա-

հաստատեցելոց 'ի քեզ, իմոց և օտարաց՝ ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց ։ շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց ։ և դարձո՛ զնս՟ 'ի չարեաց, զոր ունին վասն իմ ։ զի ողորմութեան քում արժանի եղիցին ։ և ողորմեա՛ ։

Փառաւորեա՛լ տէր, ընկա՛լ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս իմ ։ բարեխօսութ՟բ սբ՟ ած՟ածնին, և յովհաննու մկրտչին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային ։ և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին ։ Եւ սրբոց առաքելոցն՝ և մարգարէիցն և մարտիրոսացն ։ և սըրբոց հայրապետաց՝ և ճգնաւորաց՝ և կուսանաց, և ամ՟ սըրբոց քոց՝ երկնաւորաց և երկրա.

րաւորաց ։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն՝ անբաժանելի ըն̃ երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

ՄԱՂ․

# ՄԱՂԹԱՆՔ

Զօրաւորք՝ արհաւրաց գիշերայնոյ։

Սբյն Գրիգորի Նարեկացւոյ
ասացեալ։ Բան. ծբ։

Ընկա՛լ քաղցրութբ տէր ած հզօր՝ զդառնացողիս զաղաչանս. մատի՛ր գթութբ առ պատկառեալս դիմօք։ Փարատեա՛ ամենապարգեւ՝ զամօթական տխրութնս. բարձ յինէն ողորմած՝ զանբերելի ծանրութնս. անջրպետեա՛ հնարաւոր՝ զմահացու կրթութիւնս. աւարեա՛ միշտ յաղթող՝ զխաբողին հաճութիւնս. բացադրեա՛ վերնոյին՝ զմոլելոյն մառախուղ. կնքեա՛ կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս. ցրուեա՛ ծածկա-

տեա՝

տես՝ զըմբռնողին չար դըրո-
մունս . խորտակեա՛ անքննելին՝
զմարտողին դիմեցմունս ։ Տե-
առնադրեա՛ քո անոճամբդ՝ ըղ-
լուսանցոյց երդ յարկիս . պար-
փակեա՛ քո ձեռամբդ՝ զառաս-
տաղ տաճարիս . գծագրեա՛ քո
արեամբդ զմուտս սեմոց սե-
նեկիս . կերպացո՛ զքո նշանդ՝
՚ի հետս ելից մաղթողիս . ամ-
րացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս
խշտի . մաքրեսցե՛ս ՚ի հաղբից՝
զծածկարան անկողնոյս . պա-
հեսցե՛ս քո կամօքդ՝ զտառա-
պեալ անձն ոգւոյս . անխար-
դա՛խ արասցես՝ զքո շնորհեալ
շունչ մարմնոյս . կացուցե՛ս
շրջափակ՝ զպար զօրուդ երկ-
նայնոյ . կարգեսցե՛ս ՚ի դիմի՝
ընդդէմ դիւացն դասու ։ Տո՛ւր
հանգիստ բերկրութեն մահա-
հանգոյնս նիրհմամբ՝ ՚ի խորու-
թե գիշերիս , բարեխօսութե՟
հայց.

հայցուածոց սրբոյ ծածանիդ՝
և ամենայն ընտրելոց: Ամփո-
փեալ պարուրեալ զպատուհան
տեսութեց զգայարանացս ի-
մաստից՝ անզարհուրելի զե-
տեղմամբ 'ի ծփական խռովու-
թեց, կենցաղական զբաղմանց,
անրջական երազոց, խօլակա-
նաց ցնորից, յիշատակաւ քո
յուսոյդ անվնասելի պաշտպա-
նեալ: Եւ սթափեալ վերստին
'ի ննջմանէ ծանրութե՝ ամենա-
զգաստ արթնութբ, հոգենորոգ
զուարթութբ 'ի քեզ արձանա-
ցեալ. զայս ձայն մաղթանաց՝
բուրմամբ հաւատոց, քեզ ա-
մենօրհնեալ Թագաւոր փառաց
անճառից՝ փառաբանողաց երկ-
նագումար խմբից երգակցեալ՝
յերկինս առաքել: Զի դու
փառաւորեալ ես յամենայն ա-
րարածոց՝ յաւիտեանս յաւի-
տենից: Ամէն:

# ԱՂՕԹՔ ԶՕՐԱՒՈՐ։

## Սրբոյն Հօրն Գրիգորի։

### Բան. խա։

Որդի այ կենդանւոյ օրհնեալ յաւէժ, հօրդ ահաւորի անքննելի ծնունդ. որ տկարանայ ու 'ի քէն և ոչ ինչ։ Որ 'ի ծագել անստուերն նշուլից ողորմութեան քոյ փառաց, հալին մեղք. հալածին դեւք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն, մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն.

մռայլն · սպառի աղջամուղջն ·
վերանայ մութն · գնայ գիշերն ·
տարագրի տագնապն · չքանան
չարիքն · հալածին յուսահա-
տութիւքն · և թագաւորէ ձեռն
քո ամենակալ քաւիչդ ամի ։
Որ ոչ եկիր կորուսանել ըղ-
մարդկան ոգիս՝ այլ կեցուցա-
նել · Թող ինձ զանթիւ չարիս
իմ՝ բազում ողորմութեդ · զի
դու միայն ես յերկնի անճառ ,
և յերկրի անզննին · 'ի տարր
դոյն՝ և յեղըս ծագաց աշխար-
հի · սկիզբն ամենայնի՝ և յա-
մենայնի, ամենայն ըոմամբ օրհ-
նեալ 'ի բարձունս ։ Եւ քեզ
ընդ հօր և հոգւոյդ սրբոյ վայե-
լէ փառք՝ յաւիտեանս ։
Ամէն ։

ՑԱՆԿ

# ՑԱՆԿ ՍԱՂՄՈՍԱՑ՝

Ըստ կարգի այբուբենից :

Աղաղակեցէք առ ած . կզ :
աղաղակեցէք առ տր . ղթ :
ապրեցո՛ զիս տր՝ զի նու . ժա :
ապրեցո՛ զիս տր , 'ի մար . ճլթ :
առ գետս բաբելացւոց . ճլզ :
առ քեզ տր կարդացի ած . իէ :
առ քեզ տէր համբարձի
    զանձն : իդ :
առ քեզ տէր համբարձի
    զաչս . ճիբ :
ասաց անզգամն 'ի սրտի . ժգ :
ասաց անզգամն 'ի սրտի . ծբ :
ասաց տր ցտր իմ, նիստ ը . ճթ :
ասացի թէ պահեցից . լը :
ասէ անօրէնն 'ի մեղանչել . լե :
ած ականջօք մերովք . խգ :
ածդ ած իմ ես առ քեզ . կբ :
ած ած իմ նայեա՛ց առ . իա :

ած

ած աստուծոց տր խօս. խթ:
ած եկաց 'ի ժողովս աս. ձա:
ած զիրաւունս քո ար. հա:
ած մեր ապաւէն, և զօ. խե:
ած մերժեցեր, և աւե. ծթ:
ած մոլին հեթանոսք 'ի. հը:
ած յանուան քում կեցո. ծգ:
ած յօգնել ինձ նայեաց. կթ:
ած ողորմեաց մեզ, և. կզ:
ած ո՛ քեզ նմանիցէ, մի. ձբ:
ած վրէժխնդիր, տր ած. ղգ:
ած օրհնութե իմոյ, մի. ճը:
աստ օրհնեցէք ամ ծա. ճլգ:
Բաղում անգամ մար. ճիը:
բայց միայն՝ այ հնազանդ. կա:
բանից իմոց ունկն դիր. ե:
բարի է խոստովան լինել. ղա:
բարձր առնեմ զքեզ ած. ճխդ:
բարձր առնեմ զքեզ տր. իթ:
բղխեսցէ սիրտ իմ զպատ. խդ:
Գոհացայց զքէն տէր. թ:
գովեա եէմ զտէր, և. ճխէ:
Դա՛տ արա ինձ ած, և. խբ:

դա՛տ

դատ արա ինձ տէր, զի. իէ։
դատեա՛ տէր զայնոսիկ. լդ։
Եթէ ոչ տէր էր առ. ճիգ։
Եթէ ոչ՝ տէր շինէ. ճիզ։
Եկա՛յք ցնծասցուք 'ի. ղդ։
Երանեալ են անբիծք. ճժը։
Երանեալ է այր, որ եր. ճժա։
Երանեալ է այր, որ ո՛չ գնաց. ա։
Երանի՛ ամենեցուն, որք. ճիէ։
Երանի որ 'խորհի զաղ. խ։
Երանի՛ ում թողութիւն. լա։
Երկինք պատմեն զփառս. ժը։
Զի՛ բարի, կմ զի՛ վայել. ճլը։
զի՛ պարծիցի 'ի չարու. ծա։
զողորմութիւնս քո տէր. ձը։
Ընդէ՛ր խռովեցան հեթա. բ։
ընդէ՛ր մերժեցեր տծ. հգ։
Թէ արդարև զարդա. ծէ։
Իբրև զի բարի է իէլի. հբ։
'ի դարձուցանել տն. ճիե։
'ի խորոց կարդացի. ճիթ։
'ի կարդալ իմում լուար. դ։
'ի նեղութեան իմում ես. ճժթ։

'ի

'Ի տէր յուսացայ, ո՛րպէս. Ժ:
'Ի քեզ տէր յուսացայ՝ մի. Լ:
'Ի քեզ տէր յուսացայ՝ մի. Հ:
Լուարուք զայս ամ. ԽԸ:
Լուիցէ քեզ տր յաւուր. ԺԹ:
Լուր ած աղօթից իմոց յա. ԿԴ:
Լուր ած աղօթից իմոց՝ և. Կ:
Լուր տէր արդարութե. ԺԶ:
Խոնարհեցո՛ տէր զունկն. ՁԵ:
Խոստովան եղերուք տն՝ և. ՃԴ:
Խոստովան եղերուք տն. ՃԺԷ:
Խոստովան եղերուք տն. ՃԼԵ:
Խոստովան եղերուք տն. ՃԵ:
Խոստովան եղերուք տն. ՃԶ:
Խոստովան եղէց քեզ բոլ. ՃԺ:
Խոստովան եղէց քեզ տր. ՃԼԷ:
Խոստովան եղիցուք ած. ՀԴ:
Ծափս հարէք ամ հե. ԽԶ:
Կեցո՛ զիս ած, զի հասին. ԿԸ:
Հաճեցար տէր զ երկիր. ՁԴ:
Համբարձի զաչս իմ. ՃԻ:
Համբերելով համբերեի. ԼԹ:
Հաւատացի զոր և խօ. ՃԺԵ:

Հի.

հիմունք նորա 'ի լերանս . ձզ :
Ձայնիւ իմով ես առ տր . հզ :
ձայնիւ իմով ես առ տր . ճխա :
Մատուցէք տն՝ որդիք . իը :
մեծ է տէր . և օրհնեալ . խէ :
մի նախանձիր ը չարս . լզ :
մինչև յերբ տր մոռանաս . ժբ :
Յայտնի է 'ի հրէաստա . հե :
յարիցէ տծ, և ցրուեսս . կէ :
յելանելն իէլի յեգիպ . ճժգ :
յիշեա տր զդաւիթ, և . ճլա :
յողորմութիւն և յիրաւունս . ճ :
Նայեցարուք ժողո . հէ :
Ողորմեա ինձ տծ . զի . ծե :
ողորմեա ինձ տծ, ողորմ . ծզ :
ողորմեա ինձ տծ՝ ըստ մեծի . ծ :
ո յուսայ 'ի տէր՝ որպէս . ճիդ :
ո բնակեալն է յօգնութեն . ղ :
որ հովուեսդ իէլի . հթ :
որչ սիրելի են յարկք . ձգ :
որպ փափաքէ եղջերու . խա :
ունկնդիր տծ աղօթից . ծդ :
ուրախ եղէ ես ոյք . ճիա :

Պա

Պաշտեմ զիս ած իմ, զի. ժէ:
պատրաստ է սիրտ իմ. ճէ:
Սիրեցի՝ զի լուիցէ տր. ճժզ:
սիրեցից զքեզ՝ տէր զօ. ժէ:
Տեառն է երկիր լրիւ. իդ:
տէր ապաւէն եղեր մեր. ձթ:
տէր ած իմ 'ի քեզ յուսա. է:
տէր ած փրկութե իմոյ. ձէ:
տէր՝ զի բազում եղեն. գ:
տէր թագաւորեաց, բար. ղը:
տէր թագաւորեաց, վայ. ղբ:
տէր թագաւորեաց. ցնծ. ղզ:
տէր՝ 'ի զօրութե քում. ի:
տէր լոյս իմ, և կեանք. իզ:
տէր լուր աղօթից իմոց՝. ճխբ:
տէր լուր աղօթից իմոց՝. ճա:
տէր՝ կարդացի առ քեզ. ճխ:
տէր հովուեսցէ զիս, և. իբ:
տէր՝ մի սրտմտութբ քով. լէ:
տէր՝ մի սրտմտութբ քով. զ:
տէր՝ ոչ բարձրացաւ: ճլ:
տէր՝ ով կացցէ 'ի խորա. ժդ:
տր տր մեր՝ զի՞ սքանչելի. ը:

տէր

տէր փորձեցեր զիս, և. ճլը:
Ցնծացէք առ ած, օգ. ձ:
ցնծացէք արդարք 'ի տէր. լբ:
Փրկեա զիս 'ի թշնա. ծը:
Քեզ վայելէ օրհնութի. կդ:
Օրհնեա անձն իմ զտէր. ճբ:
օրհնեա անձն իմ զտր, և. ճգ:
օրհնեա անձն իմ զտր. ճխե:
օրհնեալ տր ած իմ, որ. ճխգ:
օրհնեցէք զանուն տն. ճլդ:
օրհնեցէք զած 'ի սրբուե. ճծ:
օրհնեցէք զտէր ամ. ճժզ:
օրհնեցէք զտէր, զի. ճխզ:
օրհնեցէք զտր յերկնից. ճխը:
օրհնեցէք զտէր յօրհ. ճխթ:
օրհնեցէք զտէր յօրհնութի. ղէ:
օրհնեցէք զտր յօրհնութի. ղե:
օրհնեցէք մանկունք. ճժբ:
օրհնեցից զտր յամ ժամ. լգ:

ՕՐՀ-

# ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ։

Արդ՝ արձակեմ զծա· 479
Ես ասացի 'ի վերա· 346
զի հուր բորբոքեցաւ· 169
'ի գիշերաց կանխէ· 292
'ի նեղութե խմում ես· 404
ծաներուք և տեսէք, զի· 173
հաստատեցաւ սիրտ իմ· 228
մեծացուսցէ անձն իմ· 476
նայեցարուք երկինք· 103
տէր ամենակալ ա̃ծ· 480
տէր զլուր քո լուայ· 457
փոքր էի ես յեղբարս· 467
օրհնեալ ես տ̃ր ա̃ծ· 469
օրհնեալ տ̃ր ա̃ծ իսրայէլի· 477
օրհնեցուք զտէր, զի· 46
օրհնեցէք զա̃ծ յօրհ· 403

Եօթն աղօթք ապաշխարութեան :

Տէր, մի սրտմտութեամբ քով. Զ:
Երանի, ում թողութիւն. ԼԱ:
Տէր, մի սրտմտութեամբ քով. ԼԷ:
Ողորմեաց ինձ Ած, ըստ. Ծ:
Տէր, լուր աղօթից իմոց. ՃԱ:
'Ի խորոց կարդացի առ. ՃԻԹ:
Տէր, լուր աղօթից իմոց. ՃԽԲ: